

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ  
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2006-2020 ԹԹ.  
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ







ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

104608

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ  
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

2006-2020 ԹԹ. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ  
ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ

ՎԱՌՄ ՍՊԸ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2020



Տպագրվել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

*Գիրքը կազմել է՝*      ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ.գ.դ., պրոֆեսոր  
ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի  
2006-2020 թթ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության  
հիմնական արդյունքների մասին / կազմող՝ Վ. Հարությունյան, ՀՀ  
ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, -Եր.:  
2020, -480 էջ:

Հաշվետվությունը կազմվել է ինստիտուտի 2006-2020 թթ. տարեկան հաշ-  
վետվությունների նյութերի հիման վրա: Հաշվետվությունում փորձ է արվել  
հասարակական և գիտական շրջանակներին ընդհանրացված և համառոտ  
ձևով իրազեկել ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստի-  
տուտի 2006-2020 թթ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության  
հիմնական արդյունքներին և ինստիտուտի գիտական հրապարակումներին:

ISBN 978-9939-9214-3-3

© ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2020

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2007 թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքները .....	7
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2008 թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքները .....	19
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2009 թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքները .....	31
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2010 թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքները .....	44
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2011 թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքները .....	53
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2012 թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքները .....	62
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2013 թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքները .....	73
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2014 թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքները .....	86
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2015 թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքները .....	101
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2016 թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքները .....	112
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2017 թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքները .....	121
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2018 թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքները .....	128

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2019 թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքները .....	139
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2020 թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքները .....	149
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2006-2020 թթ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության առանձնահատկությունները .....	163
«Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում» խորագրով գիտաժողովը կանցկացվի 2021 թվականին .....	181
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2006-2020 թթ. հրատարակած աշխատությունները .....	184
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Հարությունյանի 2006-2020 թթ. գիտական գործունեությունը և հրապարակումները .....	193
<b>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ</b>	
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 1</b>	
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2007 թ. հրապարակումները .....	210
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 2</b>	
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2008 թ. հրապարակումները .....	222
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 3</b>	
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2009 թ. հրապարակումները .....	236
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 4</b>	
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2010 թ. հրապարակումները .....	244
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 5</b>	
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2011 թ. հրապարակումները .....	253
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 6</b>	
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2012 թ. հրապարակումները .....	263

ՀԱՎԵԼՎԱԾ 7	
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2013 թ. հրապարակումները.....	273
ՀԱՎԵԼՎԱԾ 8	
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2014 թ. հրապարակումները.....	282
ՀԱՎԵԼՎԱԾ 9	
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2015 թ. հրապարակումները.....	287
ՀԱՎԵԼՎԱԾ 10	
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2016 թ. հրապարակումները.....	295
ՀԱՎԵԼՎԱԾ 11	
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2017 թ. հրապարակումները.....	301
ՀԱՎԵԼՎԱԾ 12	
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2018 թ. հրապարակումները.....	311
ՀԱՎԵԼՎԱԾ 13	
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2019 թ. հրապարակումները .....	333
ՀԱՎԵԼՎԱԾ 14	
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2020 թ. հրապարակումները.....	348
<i>ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական     հրապարակումներն ըստ տարիների (2006-2020 թթ.) աղյուսակի տեսքով .....</i>	<i>365</i>
<i>2019 թ. մայիսին «Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը     Հայաստանի Հանրապետությունում» խորագրով անցկացված գիտաժողովի     հավելվածները .....</i>	<i>366</i>
ՀԱՎԵԼՎԱԾ 15	
Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության հիմնարար ուղենիշերը.....	366
<i>2019 թ. նոյեմբերին «Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները     Հայաստանի Հանրապետությունում» խորագրով անցկացված գիտաժողովի     հավելվածները.....</i>	<i>368</i>
ՀԱՎԵԼՎԱԾ 16	
ՑԱՆԿ, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կայքում և հաշվետվություններում 2007-2018 թթ. տեղադրված զրքերի .....	368

**ՀԱՎԵԼՎԱԾ 17**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի  
«Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները  
Հայաստանի Հանրապետությունում» խորագրով գիտաժողովի  
նյութերի և գիտական հոդվածների ժողովածուների  
հրապարակումներն ըստ տարիների ..... 375

**ՀԱՎԵԼՎԱԾ 18**

ՏԵՂԵԿԱՆՔ, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատողների գիտական հրապարակումների  
մասին ըստ տարիների (2007-2018 թթ.) ..... 380

**ՀԱՎԵԼՎԱԾ 19**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի  
վերջին 2007-2018 տարիների կարևորագույն գիտական և կիրառական  
արդյունքները ..... 384

*2020 թ. «Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում»  
խորագրով ժողովածուի հավելվածները..... 420*

**ՀԱՎԵԼՎԱԾ 20**

«Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում ..... 420

**ՀԱՎԵԼՎԱԾ 21**

Մեր հեղինակները..... 427

**ՀԱՎԵԼՎԱԾ 22**

Տեղեկություններ «Տնտեսական հրաշքներ» իրականացրած  
անձանց, նրանց զբաղեցրած պաշտոնների ու  
ժամանակաշրջանի մասին ..... 430

**ՀԱՎԵԼՎԱԾ 23**

«Տնտեսական հրաշքների» արտերկրյա փորձն ուսումնասիրող  
խմբերը և ուսումնասիրվող երկրները ..... 435

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի  
2006-2020 թթ. գիտակազմակերպչական գործունեության կերտողները,  
ուվքեր տարբերվել են իրենց ունեցած ներդրումով..... 437*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2020 թ.  
գիտական և գիտակազմակերպչական գործունեության  
հիմնական արդյունքների մասին ..... 470*

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2007 Թ.  
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ կառավարության կողմից 2007 թ. մարտի 7-ին ընդունվեց «Տնտեսագիտական ուղղվածությունն ունեցող գիտական կազմակերպությունների վերակազմակերպման մասին» թիվ 271-Ս որոշումը, որով խնդիր դրվեց ճյուղային ենթակայության 3 տարբեր ինստիտուտներ՝ Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ, Կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտ ու Գյուղատնտեսության էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտ ՊՈԱԿ-ները վերակազմակերպելու և միացնելու ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ ՊՈԱԿ-ին:

Զանդրադառնալով միացման գործընթացում ծագած խոչընդոտներին ու մանրամասներին՝ նշենք միայն, որ միացման գործընթացն իր ավարտին հասցվեց Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ ՓԲԸ-ը ՊՈԱԿ-ի վերածվելուց հետո ընդամենը մեկ ամսվա ընթացքում, և 2007 թ. հուլիսի 25-ին ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում այն ստացավ իր փաստաթղթային ձևակերպումը:

Հարկ է նշել, որ միացման արդյունքում ինստիտուտին ավելի շատ պարտավորություններ են փոխանցվել, քան ակտիվներ: Այսպես.

*Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտից փոխանցվել են.  
Ակտիվներ*

- 1) Ոչ ընթացիկ ակտիվների մասով՝ 8,0 հազ. դրամ հաշվեկշռային արժողությանը փոշեկուլ:
- 2) Ընթացիկ ակտիվների մասով՝
  - ա) 3222,5 հազ. դրամի պարտքեր, այդ թվում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունից (թեմատիկ ֆինանսավորման գծով)՝ 1179,0 հազ. դրամ և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից (բազային ֆինանսավորման գծով)՝ 2043,2 հազ. դրամ:
  - բ) 102,2 հազ. դրամի դեբիտորական պարտքեր, այդ թվում՝ ԱԱՀ-ի գծով՝ 1,1 հազ. դրամ և շահութահարկի գծով՝ 101,1 հազ. դրամ:
  - գ) Ինստիտուտի դրամարկղում և հաշվարկային հաշվում գտնվող 1590,4 հազ. դրամի գումար:
  - դ) «Նորմա Մերվիս» ՍՊԸ-ին տրված 20 հազ. դրամ գումարի կանխավճար:
  - ե) 5,8 հազ. դրամի բենզին (90 լ):

*Պարտավորություններ*

- 1) Աշխատողներին ունեցած աշխատավարձի գծով 2166.0 հազ. դրամի պարտք:
- 2) Պետական բյուջեի գծով պարտք՝ 293.6 հազ. դրամ:
- 3) Սոցապ վճարների գծով պարտք՝ 803.3 հազ. դրամ:
- 4) Ուսման վարձի գծով պարտք՝ 1706.0 հազ. դրամ, այսինքն՝ այդչափ ավել

գումար գանձվել ու ծախսվել է վճարովի ասպիրանտներից:

Վերոհիշյալ պարտավորություններից բացի, փոխանցվել են նաև 73 ասպիրանտների ու հայցորդների գործեր, այդ թվում՝ արտադրությունից կտրված՝ 14, արտադրությունից չկտրված՝ 12, հայցորդներ՝ 47:

*Կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտից փոխանցվել են Ակտիվներ*

- 1) Ոչ ընթացիկ ակտիվների մասով՝ հաշվեկշռային արժեք չունեցող 37 արժույթ, 20 երկաթյա պահարան, 6 դարակաշար (ստելյաժ), դահլիճի 8 արժույթ, հեռախոսի 4 ապարատ, 6 պահարան-պատվանդան (տումբա), 15 լրագրասեղան, 1 գայլիկոնող սարք, 2 համակարգիչ, 1 հատակմաքրիչ, 1 սառնարան, 2 օդորակիչ, 1 երաժշտական կենտրոն, 11 ֆոտոօբյեկտիվ, 1 ֆոտոապարատ, 1 պատճենահանման սարք, 1 էլեկտրական ջրատաքացուցիչ, 19 հին գրամեքենա, 2 ամբիոն, 28 բազկաթոռ, 13 գրասեղան, 2 խորհրդակցության սեղան, 18 պահարան, 2 պահարան-քարտարան, 1 չհրկիզվող պահարան, 1 տալիչ, 8 տաքացուցիչ:
- 2) Ընթացիկ ակտիվների մասով՝ 1438,2 հազ. դրամի դեբիտորական պարտքեր, այդ թվում՝ ուսման վարձի գծով՝ 1433,7 հազ. դրամ, ինտերնետային ծառայության գծով՝ 4,5 հազ. դրամ և հաշվարկային հաշվի մնացորդ՝ 24,2 հազ. դրամ:

*Պարտավորություններ*

- 1) Հաշվեկշռային վնաս՝ 285,6 հազ. դրամ:
- 2) Պարտավորություններ սոցալի գծով՝ 260,5 հազ. դրամ:
- 3) Պարտավորություններ ուսման վարձի գծով՝ 595,0 հազ. դրամ, այսինքն՝ ավել է գանձվել և ծախսվել:
- 4) Աշխատավարձի պարտք՝ 870,8 հազ. դրամ:
- 5) Պարտք բյուջեին՝ 21,7 հազ. դրամ:

Վերոհիշյալ պարտավորություններից բացի, փոխանցվել են նաև 72 ասպիրանտների ու հայցորդների գործեր, այդ թվում՝ արտադրությունից կտրված և չկտրված՝ 45, հայցորդներ՝ 27:

*Գյուղատնտեսության էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտից փոխանցվել են.*

*Ակտիվներ*

- 1) Ոչ ընթացիկ ակտիվների մասով՝
  - ա) 570 հազ. դրամ արժողությամբ սելեկտորային մեկ կապ,
  - բ) 2 համակարգիչ,
  - գ) 1 ցուցատախտակ (ստենդ),
  - դ) 4 նկար և 1875 հազ. դրամ արժողությամբ հին գրքեր, որոնք ժամանակին չեն ամորտիզացվել ու հաշվեկշռից դուրս չեն գրվել:
- 2) Ընթացիկ ակտիվների մասով՝
  - ա) 666,0 հազ. դրամի դեբիտորական պարտքեր՝ 22 կրթության և գիտության նախարարությունից թեմատիկ ֆինանսավորման մասով:

- բ) 4,0 հազ. դրամի դեֆիտորական պարտք շահութահարկի գծով:  
 գ) Ինստիտուտի հաշվարկային հաշվում գտնվող 472,0 հազ. դրամի գումար:

*Պարտավորություններ*

- 1) Մեքենաների և սարքավորումների ձեռքբերման գծով՝ 85,0 հազ. դրամ:
- 2) Տնտեսական գույքի գծով՝ 34,0 հազ. դրամ:
- 3) Մասնագիտական գրականության գծով (այլ հիմնական միջոցներ)՝ 451,0 հազ. դրամ:
- 4) Էլեկտրաէներգիայի և հեռախոսի պարտք՝ 40,0 հազ. դրամ:
- 5) Պարտք բյուջեին՝ 41,0 հազ. դրամ:
- 6) Աշխատավարձի պարտք՝ 820,0 հազ. դրամ:
- 7) Սոց. ապահովության գծով պարտք՝ 241,0 հազ. դրամ:

Վերոհիշյալ պարտավորություններից բացի, փոխանցվել են նաև 18 ասպիրանտների ու հայցորդների գործեր, այդ թվում՝ արտադրությունից կտրված՝ 6, արտադրությունից չկտրված՝ 5, հայցորդներ՝ 7: Ինստիտուտին փոխանցվել են նաև հաշվեկշռային արժեք չունեցող և հիմնականում ոչ արդիական ու հնացած 4906 գիրք, 578 սեղմագիր, 256 ատենախոսություն և 103 վիճակագրական ժողովածու, որոնց քանակները, ըստ ինստիտուտների, բերված են ստորև.

Անվանումը	Ատենախոսություններ	Սեղմագրեր	Գրքեր	Վիճակագրական ժողովածուներ
Կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտ	56	180	4250	-
Գյուղատնտեսության էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտ	-	148	256	103
Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ	200	250	400	-
Ընդամենը	256	578	4906	103

Ինստիտուտին փոխանցված հսկայական պարտավորությունների, նվազ ակտիվների ու հնացած գրականության մանրամասն ներկայացման կարիքը թերևս չէր լինի, եթե դրանք լուրջ խնդիրներ չառաջացնեին ինստիտուտի համար:

Առաջ անցնելով նշենք, որ ՀՀ ԳԱԱ ղեկավարության աջակցությամբ ինստիտուտի կողմից այդ խնդիրների հնարավոր լուծումները տրված են: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է.

- փոխանցված պարտավորությունների լրիվությամբ մարմանը (աշխատավարձերի, կրթաթոշակների, պ/բյուջեի պարտավորությունների և այլնի),
- օգտագործման համար պիտանի գույքի հիմնական մասի տեղափոխմանը և նոր գույքի ու տեխնիկայի, ինչպես նաև ավտոմեքենայի ձեռքբերմանը, որը հնարավոր եղավ ՀՀ ԳԱԱ ղեկավարության թույլտվության ու ֆինանսական աջակցության շնորհիվ,
- ասպիրանտների ու հայցորդների հետ, օրենքով սահմանված կարգով, պայմանագրերի կնքմանը, ուսման վճարների հետևողական գանձմանը, ասպիրանտների ու հայցորդների աշխատանքային պլանների կազմմանը և

նրանց անձնական գործերում առկա պակաս փաստաթղթերի լրացմանը (գործընթաց, որը շարունակվել է նաև հետագայում),

- թեմատիկ ֆինանսավորմամբ աշխատանքների մասով միացյալ հաստիքացուցակների կազմմանը, դրանցում ներգրավված աշխատակիցների աշխատավարձերի ժամանակին վճարմանը, իսկ այնուհետև՝ կատարված աշխատանքների ամփոփմանը, ինստիտուտի գիտխորհրդում քննարկելուն և սահմանված ժամկետում նյութերի ու փաստաթղթերի ողջ փաթեթը ՀՀ կրթության և գիտության նախարարություն ներկայացնելուն: 2007 թ. ինստիտուտի տնօրինության ու գիտական խորհրդի կազմակերպչական աշխատանքի ծանրաբեռնվածության մասին է վկայում այն փաստը, որ ինստիտուտը մինչև միացումը ունեցել է պայմանագրային 6 թեմա, իսկ միացումից հետո՝ 18,
- բազային ֆինանսավորմամբ աշխատանքների մասով միացյալ ինստիտուտի ժամանակավոր վարչակազմակերպչական կառուցվածքի ու հաստիքային ցուցակների կազմմանն ու միացյալ ինստիտուտի գիտական և գիտակազմակերպչական գործունեության շարունակականության ապահովմանը: Ընդ որում՝ աշխատողների ոչ մեծ թվով կրճատումներն ու միացման գործընթացն իրականացվել են առանց դժգոհությունների, որն առավել շատ պետք է կարևորել,
- միացյալ ինստիտուտի գիտական խորհրդի նորացված կազմի ձևավորմանը և հումանիտար բաժանմունքի բյուրոյի կողմից հաստատմանը,
- միացյալ ինստիտուտի 2008 թ. կառուցվածքը և խնդիրները ինստիտուտի գիտխորհրդում քննարկմանը և հաստատմանը:

Վերը նշված գիտակազմակերպչական աշխատանքներից բացի, հատուկ հիշատակության է արժանի այն փաստը, որ *ավելի քան 15 տարվա ընդմիջումից հետո՝ 2007թ. հոկտեմբերից, ինստիտուտում սկսեց գործել մասնագիտական խորհուրդ, որտեղ թեկնածուական ատենախոսությունների առաջին պաշտպանությունը կայացավ դեկտեմբերի 5-ին:*

Ինստիտուտի վերոնշյալ կառուցվածքային բարեփոխումների, տնօրինության կազմակերպչական ծանրաբեռնված աշխատանքներին ու կադրային ներուժի երիտասարդացմանը համընթաց 2007 թ. բնականոն ձևով շարունակվել է ինստիտուտի գիտական գործունեությունը.

1. Բազային ֆինանսավորմամբ 10 թեմաների գծով, որոնցից
  - ա) 4-ը ի սկզբանե եղել են ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտինը (ֆինանսական համակարգի կատարելագործման, տնտեսության իրական և արտաքին հատվածների և սոցիալ-ժողովրդագրական արդիական հիմնախնդիրների):
  - բ) 3-ը «Արտահանման աճի և տնտեսության մասնագիտացման հիմնախնդիրները» և «Մակրոտնտեսական քաղաքականության և տնտեսության զարգացման կանխատեսումների ձևավորման հիմնախնդիրները ՀՀ-ում», ինչպես նաև «Տարածքային միավորների զարգացման անհավասարաչափության գնահատումը, գործոնները և հաղթահարման ուղիները ՀՀ-ում», փոխանցվել են Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտից:

- գ) 1-ը՝ «Գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխումը և մասնագիտացումը ՀՀ մարզերում», փոխանցվել է Գյուղատնտեսության էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտից:
- դ) 2-ը՝ «Պետական գույքի կառավարման մասին ՀՀ օրենքի հիմնադրությունները» և «Պետական գույքի կառավարման մասին ՀՀ օրենքի հայեցակարգային դրույթները», փոխանցվել են Կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտից:
2. Թեմատիկ ֆինանսավորման 18 թեմաների գծով, որոնցից
- ա) 6-ը՝ «ՀՀ-ում սահմանամերձ և լեռնային բնակավայրերի ցանցի զարգացումը և տնտեսական անվտանգության ռազմավարությունը» (0770), «Տեխնոլոգիաների միջազգային փոխանակման և զարգացման ուղիները ՀՀ-ում» (0773), «Հայաստանի էներգահամակարգի սահմանակից երկրների հետ ինտեգրման և միջպետական միացյալ էներգահամակարգի (էլեկտրա- և գազամատակարարման) ձևավորման ու կառավարման տնտեսական հիմնահարցերը» (0774), «Գյուղացիական տնտեսությունների մասնագիտացման և չափերի օպտիմալացման հիմնահարցերը ՀՀ-ում» (0775), «Ծխելու և ավտոմեքենաներից արտազատվող գազերի վտանգավոր ազդեցության կրճատման էկոլոգատնտեսագիտական հիմնախնդիրները» (0997), «Մտավոր սեփականության կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում» (0790), ի սկզբանե եղել են ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի:
- բ) 1-ը՝ «Պետական սեփականության կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում», փոխանցվել է Կառավարման ու տնտեսական բարեփոխումների ինստիտուտից:
- գ) 8-ը՝ «Պետական կառավարման արդյունավետության գնահատում. մեթոդաբանական հիմքերը և մեթոդական մոտեցումները» (0993), «ՀՀ արդյունաբերական ձեռնարկություններում նորամուծությունների ուղղությունները և կիրառման հիմնախնդիրները» (0786), «ՀՀ տնտեսական անվտանգության ապահովման հիմնախնդիրները» (0771), «Բնօգտագործման ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և բնապահպանական հիմնախնդիրները ՀՀ հյուսիսային մարզերում (Շիրակ, Լոռի, Տավուշ)» (0787), «ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքների վերլուծում, ժողովրդագրական իրադրության վերագնահատում և բնակչության թվաքանակի միջնաժամկետ կանխատեսում (մինչև 2025 թ.)» (0769), «Գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնական ուղղությունների հիմնավորումը և արտադրանքի ծավալների կանխատեսումը ՀՀ մարզերում» (0302), «Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները, ռազմավարությունը և հեռանկարները երկարաժամկետ հատվածում» (0785), «ՀՀ աշխատանքի շուկան և կադրերի պատրաստման ու վերապատրաստման համակարգի բարեփոխման հիմնական ուղղությունները» (0788), փոխանցվել են Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտից:
- դ) 3-ը՝ «Արտադրանքի ինքնարժեքը և արտադրության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ գյուղացիական տնտեսություններում» (0362), «ՀՀ

անասնապահության և գյուղերի օպտիմալացման ուղիները» (0363), «Զբաղվածության բարձրացման ուղիները գյուղատնտեսության մեջ ոռոգման կազմակերպման նոր պայմաններում» (0365), փոխանցվել են Գյուղատնտեսության էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտից:

Հարկ է նշել, որ թեմատիկ ֆինանսավորմամբ վերոնշյալ 18 թեմաների ավարտական տարին համընկավ ինստիտուտների միացման գործընթացի հետ:

Սակայն, ի պատիվ միացյալ ինստիտուտի նորացված գիտխորհրդի, պետք է նշել, որ դրանք բոլորը հատ-հատ (նախապես գրախոսման ճանապարհով փորձաքննություն անցնելուց հետո) քննարկվել են ինստիտուտի գիտխորհրդում, և համապատասխան որոշումներ են կայացվել ու պահանջվող նյութերի հետ միասին սահմանված ժամկետում ներկայացվել պատվիրատուին:

*Հիմնարար ուսումնասիրությունների գծով ինստիտուտի 2007 թվականի գիտական գործունեության կարևորագույն արդյունքները*

*«Ֆինանսական համակարգի կատարելագործման հիմնախնդիրները» գիտական ուղղության մասով (գիտական ուղղության համակարգող և թեմայի ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր Վլադիմիր Լիպարիտի Հարությունյան)* կատարված հետազոտությունների արդյունքում առաջարկվել է.

- բյուջեի եկամուտները դասակարգել ըստ հարկ վճարողների խմբերի, հարկման օբյեկտների ու բազաների և ըստ ոլորտների, մոտեցումներ, որոնք հարկային օրենսդրությամբ դրված են հարկման մեխանիզմների հիմքում, սակայն չեն արտացոլվել «Բյուջետային համակարգի մասին» և յուրաքանչյուր տարի ընդունվող «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքներում,
- համապատասխան փոփոխություններ կատարել հարկային օրենսդրության մեջ, որոնք կոնկրետացված են ըստ առանձին հարկատեսակների, ինչպես նաև նոր մոտեցումներ բյուջետային միջոցների ծախսման արդյունավետության բարձրացման ուղիների վերաբերյալ:

*«Տնտեսության իրական հատվածի արդիական հիմնախնդիրները» գիտական ուղղության մասով (գիտական ուղղության համակարգող ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր Յուրի Միքայելի Մուվարյան)* կատարված հետազոտությունների արդյունքում տրվել է հանրապետության ընդերքի հարստությունների մետաղական օգտակար հանածոների պաշարների ու ռեսուրսների արժեքային գնահատականը (թեմայի ղեկավար՝ երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր Հրաչիկ Սարգսի Ավագյան)՝ ըստ օգտակար տարրերի, մարզերի ու հանքավայրերի հիմք ընդունելով օգտակար տարրերի՝ 2007թ. մարտ-ապրիլ ամիսներին միջազգային շուկայում գործող գները և «Պաշարների պետական հանձնաժողովի» կողմից հաստատված պաշարների ու ռեսուրսների ծավալները:

*«Մոցիալ-ժողովրդագրական արդիական հիմնախնդիրները» գիտական ուղղության մասով (գիտական ուղղության համակարգող՝ տնտեսագիտության դոկտոր Աշոտ Խաչատուրի Մարկոսյան)* կատարված հետազոտության արդյունքում.

- մշակվել են քայլեր, որոնց իրականացումը կրերի ՀՀ-ում աղքատության

մակարդակի նվազեցմանը,

- արվել են առաջարկություններ ՀՀ-ում տարվող զբաղվածության քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղիների վերաբերյալ:

«Տնտեսության արտաքին հատվածի արդիական հիմնախնդիրները» գիտական ուղղության մասով (գիտական ուղղության համակարգող՝ տնտեսագիտության դոկտոր Թորոս Շահենի Թորոսյան) հետազոտվել է ՀՀ արտաքին առևտրային համակարգը, վեր են հանվել արտահանման ու ներմուծման անհամամասնությունները և կոնկրետ առաջարկություններ են արվել արտահանման խրախուսման, ներմուծման փոխարինման ու ՀՀ առևտրային հաշվեկշռի ապրանքային և աշխարհագրական կառուցվածքների բարելավման ուղիների վերաբերյալ:

«ՀՀ-ում արտահանման աճի և տնտեսության մասնագիտացման հիմնախնդիրները» թեմայի (թեմայի ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու Արթուր Ռաֆիկի Թամազյան) մասով կատարված հետազոտության հիմնական արդյունքներից կարևորվել է այն, որ.

- ա) Հայաստանում արտահանման համակենտրոնացման ռիսկային աստիճանը բարձր է 2005 թ. և 2006 թ.՝ կազմելով համապատասխանաբար 0.500 և 0.450 (ըստ Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսի),
- բ) միջին ցուցանիշից բարձր է Հայաստանում ներճյուղային առևտրի ինդեքսը՝ 2006 թ. 0.546, ինչը խոսում է Հայաստանում այլ երկրների և արտասահմանյան խոշոր ձեռնարկությունների հետ ներարտադրական առևտուր կատարելու հնարավորությունների մասին,
- գ) հիմնավորվել է Հայաստանի արտաքին առևտրի զարգացման նպատակահարմար քաղաքականությունը, այն է՝ ներքին տնտեսությունում ավելացված մեծ արժեք ստեղծող և վերջնական ապրանքների արտադրությունների վրա հիմնված արտահանում,
- դ) կարճաժամկետում անհրաժեշտ է շեշտադրել արտահանմանը կողմնորոշված ցածր կամ միջին մասնագիտական աշխատուժ պահանջող աշխատատար ոլորտները, մասնավորապես՝ տեքստիլն ու հագուստեղենը, մեքենաներն ու էլեկտրական սարքավորումները, փայտյա կահույքը, ոսկերչական վերջնական արտադրանքը, վերամշակված ու պահածոյացված մրգերն ու բանջարեղենը, հանքային արդյունաբերությունն ու վերամշակումը: Երկարաժամկետում պետք է կենտրոնանալ այլընտրանքների՝ յուրահատուկ արժեքների ստեղծման գործում և ձևավորել ու զարգացնել դժվար կրկնօրինակվող մրցակցային, մասնավորապես՝ տեղեկատվական բարձր տեխնոլոգիաների, համակարգչային ծրագրային փաթեթների ու կիրառական գիտությունների, կառավարման համակարգերի և հատուկ որակավորում ու մասնագիտական ներուժ պահանջող այլ բնագավառներում՝ միաժամանակ որդեգրելով միջազգային ստանդարտները և, որ ամենակարևորն է, ստեղծելով մրցունակ ներքին գործարար միջավայր,
- ե) արտահանման ֆինանսավորման և ապահովագրության ինստիտուտների և մեխանիզմների զարգացման տեսակետից անփոխարինելի են արտահա-

նողներին ֆակտորինգային ծառայությունների տրամադրման ինստիտուտի կայացումն ու զարգացումը և արտաքին առևտրի ապահովագրման համակարգի ստեղծումը:

*«Պետական կառավարման արդյունավետության գնահատում. մեթոդաբանական հիմքերը և մեթոդական մոտեցումները» թեմայի (գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր Բենիամին Հովսեփի Եղիազարյան) հետազոտությամբ ստացված հիմնական արդյունքներն են.*

- ՀՀ սոցիալ-տնտեսական բնութագրերի և պայմանների փոփոխությունների կանխատեսման և միջնաժամկետ զարգացման ծրագրերի ձևավորման համակարգի ստեղծման շուրջ առաջարկությունների մշակումը,
- մակրոտնտեսական քաղաքականության ձևավորման, դրա իրականացման, կառավարման, մոնիտորինգի և վերահսկման համակարգ ստեղծելու շուրջ հայեցակարգային առաջարկությունների մշակումը:

*«ՀՀ տարածաշրջանների միավորների զարգացման անհավասարաչափության գնահատումը, գործոնները, հաղթահարման ուղիները» թեմայի (ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր Ավետիք Խաչատուրի Նազարյան) հետազոտությամբ ստացված հիմնական արդյունքներն են այն, որ. դեռևս հստակեցված չեն այն չափանիշները, որոնք անհրաժեշտ են մարզերի ընդհանուր զարգացման և առանձին ուղղությունների ընտրության և զարգացման գնահատման համար, որից ելնելով.*

ա) մշակվել են դրանց զարգացման գնահատման ամփոփ չափանիշներ, որոնք օգտագործվել են զարգացման մակարդակների առանձնահատկությունների գնահատման ժամանակ,

բ) մշակվել են տարածքային միավորների ֆինանսների ձևավորման ու կառավարման միջավայրերի ստեղծման մոտեցումները,

գ) բացահայտվել են զարգացման անհավասարաչափության առաջացման պատճառները, մշակվել են վերջիններիս վերացման միջոցառումները:

*«ՀՀ գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխումը և մասնագիտացումը ՀՀ մարզերում» թեմայի (գիտ. ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր Մերգեյ Գառնիկի Նազարյան) հետազոտությամբ ստացված հիմնական արդյունքներն են.*

- գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման մոտեցումների առաջարկումը ըստ մասնագիտացման ուղղությունների ու մարզերի,
- ջրօգտագործման և հողօգտագործման բարելավման ուղիների առաջարկումը:

*Ինստիտուտի թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված կարևորագույն արդյունքները*

*«Հայաստանի Հանրապետությունում սահմանամերձ և լեռնային բնակավայրերի ցանցի զարգացումը և տնտեսական անվտանգության ռազմավարությունը» թեմայի (գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր Վլադիմիր Եղիշի Խոջաբեկյան) հետազոտության արդյունքում.*

- բացահայտվել են առաջիկա 5-10 տարիների համար օրենսդրական հիմունքներով ժողովրդագրական քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը,
- առաջարկվել է ուսումնասիրվող գոտիներում ծննդաբերող կանանց նպաստի չափն ավելացնել ըստ ծնվող երեխաների և տարածքային բարձրությունների՝ ծովի մակերևույթից 1700-ից ու 1900-ից բարձր բնակվելու հաջորդականությամբ,
- կանխատեսվել են հանրապետության բնակչության, հատկապես վերոհիշյալ գոտիների ծննդի, մահվան, բնական աճի և գաղթի էլեմենտները երկարատև հեռանկարում՝ մինչև 2050-2060-ական թվականները:

*«Գյուղացիական տնտեսությունների մասնագիտացման և չափերի օպտիմալացման հիմնահարցերը ՀՀ-ում» թեմայի (գիտ. ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր Մամվել Մերյոժայի Ավետիսյան)* հետազոտության արդյունքում.

- բացահայտվել է ըստ մարզերի գյուղատնտեսության մասնագիտացման հիմնական ուղղությունները,
- առաջարկվել են գյուղացիական տնտեսությունների սահմանային մեծությունների հիմնավորման մեթոդական մոտեցումներ:

*«Ծխելու և ավտոմեքենաներից արտազատվող վտանգավոր ազդեցության կրճատման էկոլոգատնտեսագիտական հիմնախնդիրները» թեմայի (գիտ. ղեկավար՝ երկրաբանահանրաբանական գիտությունների դոկտոր Հրաչիկ Սարգսի Ավագյան)* հետազոտության արդյունքով հիմնավորվել է, որ

- սիգարետների ծխի հետ հեռացող և ծխողի ու շրջապատի մարդկանց թոքերն անցնող թունավոր ու քաղցկեղածին նյութերի (օրգանական և անօրգանական) պարունակությունը հնարավոր է կրճատել 100%-ով,
- հնարավոր է ցեոլիտների օգնությամբ ծխողների գերակշիռ մեծամասնությանը հետ պահել ծխելու խիստ վտանգավոր սովորությունից, էապես կրճատել ծխելու հետևանքով առաջացող հիվանդությունների և անժամանակ մահացության ղեպերի քանակը:

*«ՀՀ տնտեսական անվտանգության ապահովման հիմնախնդիրները» թեմայի (գիտ. ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր Վարդան Բաբկենի Բոստանջյան)* հետազոտության արդյունքում.

- բացահայտվել են հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման ոլորտում առկա հիմնախնդիրները և դրանց վրա ազդող գործոնները, դասակարգվել են տնտեսական անվտանգության սպառնալիքները, դրանց ազդեցության սահմանները և ձևերը,
- մշակվել են հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման հիմնական սկզբունքները, հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման ինստիտուցիոնալ միջոցառումները:

*«Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները, ռազմավարությունը և հեռանկարները երկարաժամկետ հատվածում» թեմայի (գիտ. ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու Արթուր Ռաֆիկի Թամազյան)* հետազոտության արդյունքում.

- մշակվել են մայրաքաղաքի սոցիալ-տնտեսական ներուժի գնահատման մեթոդաբանական մոտեցումներ,
- առաջարկվել են Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման, քննարկման, հաստատման, իրականացման ու վերահսկողության սկզբունքները և մեխանիզմները:

**Ինստիտուտի գիտական հրապարակումները**

Ինստիտուտի աշխատակիցների կողմից հրատարակվել են մենագրություններ և համահեղինակությամբ՝ 5 գիրք, 198 գիտական հոդվածներ (տե՛ս հավելված 1):

Արտասահմանում կազմակերպված գիտաժողովներին մասնակցել են ինստիտուտի 6 աշխատակիցներ, այդ թվում՝ 2-ը՝ ԱՄՆ-ում, 4-ը՝ Վրաստանում (որտեղ բոլոր ծախսերը հոգացել է հրավիրող կողմը), ինստիտուտում կազմակերպված գիտաժողովին մասնակցել են 33 աշխատակիցներ, ինստիտուտում եղել են արտադրությունից կտրված 44 ասպիրանտներ և այլն, որոնց վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են ստորև բերված թիվ 1-7 աղյուսակներում:

Աղյուսակ 1

2007 թ. ՀՀ ԳԱԱ թեմատիկայի ամփոփ տվյալները

Գիտական հիմնարկությունը	Թեմաների թիվը		
	բազային ֆինանսավորմամբ թեմաների թիվը	թեմատիկ ֆինանսավորմամբ թեմաների թիվը	տնտ. պայմանագիր
Տնտեսագիտության ինստիտուտ	10	18	-

Աղյուսակ 2

Ինստիտուտում անցկացված հանրապետական և միջազգային կոնֆերանսներ, սիմպոզիումներ և այլ գիտական միջոցառումներ

Միջոցառումներ	Անցկացման վայրն ու ժամանակը	Մասնակիցների թիվը	
		ընդամենը	այդ թվում՝ արտերկրներից
Գիտաժողով	Տնտ. ինստիտուտ, Գրիգոր Լուսավորչի, 15, 26.01. 2007	33	-

Աղյուսակ 3

ԳԱԱ աշխատակիցների արտասահմանյան, այդ թվում՝ ԱՊՀ երկրներ կատարած գործուղումները

Հիմնարկությունը	Երկիրը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
		գիտաժողովներին մասնակցելու համար	համատեղ գիտական աշխատանք կատարելու համար	բանակցությունների և խորհրդակցությունների համար
Տնտեսագիտության ինստիտուտ	ԱՄՆ	2	-	-
	Վրաստան	4	-	-

ԳԱԱ գիտաշխատողների՝ 2007 թ. հրատարակած աշխատությունների  
ընդհանուր քանակը

Հիմնարկությունը	Մենագրություն, ժողովածու և այլն		Ուսումնական ձեռ- նարկ, դասագիրք և այլն		Հոդվածներ, զեկուցում- ներ, թեզիսներ և այլն	
	հանրա- պետական	արտասահ- մանյան	հանրապե- տական	արտասահ- մանյան	հանրապե- տական	արտասահ- մանյան
Տնտեսագիտության ինստիտուտ	5	-	-	-	198	11


Ասպիրանտների թվաքանակը

Հիմնարկությունը	Ասպիրանտների քանակը (այդ թվում՝ կանայք) առ 01.01.2007 թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում՝ կանայք)	
	ա/կ	ա/չկ	ա/կ	ա/չկ
Տնտեսագիտության ինստիտուտ	44	59	3	8
	-	34	-	3

Տվյալներ մասնագիտացված գիտական խորհուրդների վերաբերյալ

Հիմնարկությունը	Ատենախոսության խորհրդի ծածկագիրը	Մասնագիտության ծածկագիրը և անվանումը	Խորհրդի նախագահ, մոտորատուր գիտություն	2007 թ. ինստիտուտի աշխատա- կիցների կողմից համապատաս- խան այլ խորհուրդներում և ինստիտուտի խորհրդում պաշտպանված ատենախոսու- թյունների թիվը	
				դոկտորական	թեկնածուական
Տնտեսագի- տության ինստիտուտ	008	Ը.00.02. «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագի- տություն և կառա- վարում» Ը.00.03-«Ֆինանսներ, դրամաշրջանա- ռություն և վարկ»	տ. գ. դ. Վ. Լ. Հարությունյան  տ. գ. թ. Կ. Հ. Առաքելյան	-	11

809 XOIY  
7104608



## ԳԱԱ աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներ

Հիմնարկու- թյունը	Աշխատողների ընդհանուր թիվը (այդ թվում՝ կանայք)	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը (այդ թվում՝ կանայք)	ԳԱԱ ակա- դեմիկոսներ (այդ թվում՝ կանայք)	Գիտության դոկտորներ (այդ թվում՝ կանայք)	Գիտության թեկնածուներ (այդ թվում՝ կանայք)
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	115 41	99 20	1 -	21 1	48 9

*Տեղեկություններ ինստիտուտի աշխատակիցների վերաբերյալ*

- ա) Ինստիտուտում մինչև 35 տարեկան գիտաաշխատողների թիվը կազմել է 32, այդ թվում՝ 13-ը եղել են կանայք:
- բ) Ինստիտուտ ընդունվել են 10 երիտասարդ մասնագետներ, որոնցից 2-ը եղել են կանայք:
- գ) Ինստիտուտի 35 տարեկանից բարձր աշխատակիցները եղել են 83 հոգի:
- դ) Ինստիտուտի աշխատողների ընդհանուր թվից, այսինքն՝ 115-ից 73-ը կամ 64,0%-ը հիմնական աշխատողներ են եղել, իսկ 42-ը կամ 36%-ը՝ համատեղողներ:
- ե) Ինստիտուտում աշխատել են ՀՀ ԳԱԱ մեկական ակադեմիկոս և թղթակից անդամ:

Աշխատողների ընդհանուր թվից 99-ը կամ 86,1%-ը եղել են գիտաաշխատողներ, որոնցից 20-ը՝ կանայք: Գիտաաշխատողներից 21-ը եղել են գիտությունների դոկտորներ, իսկ 48-ը՝ տնտեսագիտության թեկնածուներ:

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2008 Թ. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

*Գիտակազմակերպչական գործունեության արդյունքները*

Թարմացվել է ինստիտուտի նյութատեխնիկական բազան, և ձեռք է բերվել.

- 11 գրասեղան, 16 համակարգչային սեղան, 40 աթոռ, 10 գրապահարան, 6 համակարգչային լրակազմ, 3 տպիչ և այլն (ինստիտուտի միջոցներով):
- ՀՀ ԳԱԱ նախագահության ֆինանսական աջակցությամբ ձեռք է բերվել 3 համակարգիչ և 2-ական մոնիտոր ու տպիչ, բազմացնող սարք:
- ՀՀ կառավարության մարդասիրական հանձնաժողովից որպես նվիրատվություն ստացել ենք 2-ական համակարգիչ ու մոնիտոր և 1 գունավոր տպիչ:
- ՀՀ ԳԱԱ գրադարանի կողմից նվիրատվության կարգով ստացել ենք 1 համակարգիչ և 1 սքաներ:

Ինստիտուտում ստեղծվել է համակարգչային տեղային ցանց, որը միացվել է ինտերնետին:

Ինստիտուտը սերտ կապեր է հաստատել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հետ և վերջինիս հետ 2008 թ. կնքել է համագործակցության պայմանագիր, որի արդյունքում նրա հետ համատեղ նոյեմբերին Երևանում կազմակերպվել և անցկացվել է միջազգային գիտաժողով՝ Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարանի մասնակցությամբ: Այս գիտաժողովում իրենց գիտական հոդվածներով հանդես են եկել ինստիտուտի տասը գիտաշխատողներ:

Ինստիտուտի և համալսարանի համագործակցությունը միայն այս համատեղ գիտաժողովով չի սահմանափակվել. կնքված համագործակցության պայմանագրի արդյունքում ինստիտուտի առանձին գիտաշխատողներ նաև դասավանդում են համալսարանում: Դեռ ավելին, ինստիտուտի առանձին գիտաշխատողներ ընդգրկված են համալսարանի մասնագիտական խորհրդում և հակառակը: Այլ կերպ ասած՝ այս երկու հաստատությունները սերտորեն համագործակցում և փոխլրացնում են միմյանց: Համագործակցության որոշակի տարրեր առկա են նաև ԵՊՀ-ի տնտեսագիտության ֆակուլտետի, Հայաստանի պետական ագրարային համալսարանի ու Ռուս (Սլավոնական)-հայկական համալսարանի հետ, ինչն իր դրսևորումն է ստացել ուսումնական գործընթացների կազմակերպման մեջ ինստիտուտի գիտաշխատողների ներգրավմամբ և այլն:

Հիշատակության է արժանի 2008 թ. Աբել Ադանբեգյանի անվան կորպորատիվ կառավարման բարձրագույն դպրոցի հետ ինստիտուտի ակտիվ համագործակցությունը՝ կապված «Միջազգային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա», «Ֆինանսական գործիքների կիրառման արդի վիճակը ՀՀ-ում», «Ինչպես է զարգանում կորպորատիվ կառավարման մշակույթը ՀՀ-ում» թեմաներով կլոր սեղանների կազմակերպման, ինչպես նաև դպրոցի ուսում-

նամերթոդական գործընթացներում ինստիտուտի գիտաշխատողների ներգրավման հետ:

2008 թ. սեպտեմբերին ինստիտուտում կազմակերպվել և անց է կացվել հանրապետական գիտաժողով՝ նվիրված հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրներին, որի նյութերը մեծածավալ ժողովածուի ձևով հրատարակվել և առաքվել են հանրապետության տնտեսագիտական բուհերի գրադարաններին, հանրային գրադարանին, ֆինանսատնտեսական նախարարություններին ու գերատեսչություններին, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտներին, ՀՀ ԳԱԱ նախագահություն, հանրապետության օրենսդիր ու գործադիր մարմինների ղեկավարներին, այսինքն՝ բոլոր նրանց, ում կարող է հետաքրքրել ինստիտուտը, նրա գործունեությունը և գործունեության արդյունքները: Բացի այդ, ժողովածուն հատկացվել է բոլոր հողվածագիրներին, այսինքն՝ այն մասսայականացվել է, իսկ գործունեության արդյունքները հրապարակայնացվել են: Դեռ ավելին, ինստիտուտի կողմից կազմակերպված հանրապետական գիտաժողովը լուսաբանվել է «Երևան» հեռուստաընկերության «Դպրության ղողանջներ» հաղորդաշարով՝ 2 օր 10-ական րոպե տևողությամբ, և եղել են հետաքրքրաշարժ ու ուշագրավ արձագանքներ: Մրանք միջոցառումներ են, որոնք քայլ առ քայլ, կաթիլ առ կաթիլ բարձրացնում են ինստիտուտի ու նրա գիտական կոլեկտիվի վարկն ու հեղինակությունը, դերն ու նշանակությունը:

Եվ պատահական չէ, որ տնտեսագիտության ինստիտուտը հայտնվել է հանրապետության կառավարության ուշադրության կենտրոնում, իսկ ինստիտուտի տնօրենը 2008 թ. ընդգրկվել է ՀՀ կառավարության մշտապես գործող ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի կազմում, որի նիստերին մասնակցում է յուրաքանչյուր շաբաթվա հինգշաբթի օրը և ինստիտուտի մասնակցությունն է բերում հանրապետության կառավարության կողմից մշակվող ռազմավարական ու հայեցակարգային փաստաթղթերի մշակմանը:

Այս համատեքստում ինստիտուտի կողմից արված առաջարկություններն ու դիտողությունները, ի պատիվ հանրապետության վարչապետի, շահագրգիռ քննարկման և ուշադրության են արժանացել և մասամբ իրենց արտացոլումն են գտել այդ փաստաթղթերի լրամշակված տարբերակներում: Այդ առաջարկներն ու դիտողությունները վերաբերել են ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեում քննարկված հետևյալ ռազմավարական ու հայեցակարգային փաստաթղթերին.

- Հայաստանի Հանրապետության հարկային վարչարարության 2008-2011 թթ. ռազմավարությանը (տնտ. դոկտ. Վ. Հարությունյան, տնտ. թեկն. Դ. Հարությունյան),
- ՀՀ-ում տեղական հարկերի հայեցակարգին (տնտ. դոկտ. Վ. Հարությունյան),
- «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի նախագծին (տնտ. դոկտ. Վ. Հարությունյան),
- Հայաստանի կապիտալի շուկայի զարգացման շրջանակում հարկային խթանների իրականացման հայեցակարգին (տնտ. թեկն. Դ. Հախվերդյան),

- կենսաթոշակային համակարգի բարեփոխումների ծրագրին (տնտ. դոկտ. Ա. Մարկոսյան):
- աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին (տնտ. դոկտ. Ա. Մարկոսյան, տնտ. թեկն. Դ. Հախվերդյան, տնտ. դոկտ. Ս. Ղազարյան և այլք):

2008 թ. հուլիսին հանրապետության վարչապետին հետաքրքրեց ինստիտուտի գիտական հետազոտությունների թեմատիկան, որի ներկայացումից հետո «հրատապության կարգով» պահանջվեցին երկու թեմաների՝ «Պետական բյուջեի հարկային եկամուտների ավելացման ու հարկային օրենսդրության բարելավման ուղիների» և «ՓՄՁ-ների զարգացման հարկային ու վարկային խթանների» վերաբերյալ եզրակացություններն ու առաջարկությունները:

Ներկայացված բազմաթիվ առաջարկություններից էր «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի ուժը կորցրած ճանաչելու փաստարկված հիմնավորումներով առաջարկը, որի արդյունքում օգոստոսի վերջին այն ՀՀ ԱԺ կողմից ուժը կորցրած ճանաչվեց 2009 թ. հունվարի 1-ից:

2008 թ. ՀՀ կառավարությանն են ներկայացվել եզրակացություններ և առաջարկություններ նաև այլ հետազոտվող թեմաների գծով: Դրանք, մասնավորապես, վերաբերում են.

- հանրապետությունում ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ու արդյունաբերության զարգացման հիմնախնդիրներին (ակադ. Վ. Խոջաբեկյան),
- համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանն ու ֆինանսական հիմնախնդիրների լուծմանը (տնտ. դոկտ. Վ. Հարությունյան, տնտ. թեկն. Ա. Թամազյան),
- ՀՀ հանքահումքային ռեսուրսների օգտագործման արդի վիճակին և արդյունավետության բարձրացման ուղիներին (երկր. հանք. գիտ. դոկտ. Ն. Ավագյան),
- ՀՀ ներդրումային գործունեության տնտեսական խթաններին (տնտ. թեկն. Գ. Վարդանյան),
- մակրոտնտեսական քաղաքականության և տնտեսության զարգացման կանխատեսումների ձևավորման հիմնախնդիրներին (տնտ. դոկտ. Բ. Եղիազարյան),
- գյուղացիական տնտեսությունների զարգացման հիմնախնդիրներին (տնտ. դոկտ. Ս. Ղազարյան),
- Հայաստանի և Եվրամիության միջև առևտրատնտեսական հարաբերությունների վիճակի գնահատմանը (տնտ. դոկտ. Թ. Թորոսյան),
- Հայաստանի և Եվրամիության միջև արժույթաֆինանսական հարաբերությունների վիճակի գնահատմանը (տնտ. թեկն. Կ. Առաքելյան):

2008 թ. թեմաների հետազոտության արդյունքների ներկայացումը ՀՀ կառավարությանը և վերջինիս կողմից արդյունքների հաշվառումը պայմանավորված են հետևյալ հանգամանքներով.

*Առաջին՝* ինստիտուտում առկա գիտական ներուժով: Բնաստիտուտն ունի

115 աշխատող, որից 101-ը գիտաշխատողներ են: Ինստիտուտում աշխատում են մեկ ակադեմիկոս և մեկ թղթակից անդամ, 17 դոկտորներ և 65 գիտության թեկնածուներ:

*Երկրորդ*՝ ինստիտուտի կողմից որդեգրված հինգ գիտական ուղղությունների՝ ֆինանսական համակարգի կատարելագործման, տնտեսության իրական հատվածի, սոցիալ-ժողովրդագրական, տնտեսության արտաքին հատվածի և տնտեսագիտության տեսության արդիական հիմնախնդիրների շրջանակներում 2008թ. ընտրված թեմաները բխում են հանրապետության կառավարության գործունեության քառամյա ծրագրի ելակետային դրույթներից, և ի սկզբանե ակնկալվում էր, որ դրանք պետք է ունենան տեսագործնական ուղղվածություն ու հիմնված պետք է լինեն համաշխարհային առաջավոր փորձի ուսումնասիրության, յուրաքանչյուր ոլորտի տեսական հետազոտությունների, հայաստանյան իրականության գնահատման և դրանց հենքի վրա արվող առաջարկությունների վրա:

Այդ տրամաբանությամբ է կազմվել և ինստիտուտի գիտական խորհրդի կողմից հաստատվել յուրաքանչյուր հետազոտվող թեմայի աշխատանքային պլանը: Եվ վատահորեն կարող ենք նշել, որ տնտեսագիտության ինստիտուտի գիտական արդյունքներն ապրանքայնացվում են երկու ճանապարհով.

1. Տարեսկզբին ինստիտուտին տրված բյուջետային ֆինանսավորման դիմաց տարվա ընթացքում կամ հաջորդ տարվա սկզբում (կախված հետազոտության արդյունքների պատրաստվածության աստիճանից) կառավարությանն են ներկայացվում հետազոտության արդյունքում ծնված եզրակացություններն ու առաջարկությունները, որոնք իրենց կիրառությունն են ստանում կառավարության կողմից մշակվող և ընդունվող ռազմավարական ու հայեցակարգային փաստաթղթերում:
2. Վճարովի ասպիրանտների ու հայցորդների հետբուհական կրթությունն իրենց միջոցներով ինստիտուտում կազմակերպելով՝ տնտեսության տարբեր ճյուղերի և բուհական համակարգի համար պատրաստվում են որակյալ մասնագետներ, որոնց մտավոր պատրաստվածությունը նոր մտավոր արդյունքի և նոր որակի աշխատանքի հիմքն է, որի «ասպրանք-արդյունքի գինը» չափման չի ենթարկվում, քայքայ մուլտիպլիկատորի դրական արդյունք է ապահովում:

*Երրորդ*՝ հանգամանքը, որով պայմանավորված են ինստիտուտի 2008 թ. ձեռքբերումները, ինստիտուտի գիտական անձնակազմի երիտասարդացումն է:

Բավական է նշել, որ 2008 թ. ինստիտուտում աշխատանքի են ընդունվել մինչև 35 տարեկան 20 մասնագետներ, որոնք տիրապետում են նաև օտար լեզուների և համակարգչային տեխնիկային: Եվ հենց այդ երիտասարդներն են մասնակցել արտասահմանում կազմակերպված 2 միջազգային գիտաժողովների, այդ թվում՝ 2 գիտաշխատող՝ ԱՄՆ-ում, իսկ 4-ը՝ Վրաստանում, որտեղ բոլոր ծախսերը հոգացել է հրավիրող կողմը: Դեռ ավելին, ինստիտուտում 2008 թ. սեպտեմբերին կազմակերպված հանրապետական գիտաժողովի զեկուցողների գերակշիռ մասը կազմել են երիտասարդ մասնագետները, հայցորդներն ու

ասայիրանտները, որոնց մի մասը ներգրավված է ինստիտուտի կողմից իրականացվող հետազոտական աշխատանքներում:

2008 թ. ինստիտուտի կողմից որդեգրված 5 գիտական ուղղությունների շրջանակներում կատարվել և հիմնականում ավարտվել են բազային ֆինանսավորմամբ հետևյալ 19 թեմաները.

1. «Ֆինանսական համակարգի կատարելագործման հիմնախնդիրները» ուղղությամբ.
  - Պետական եկամուտների հավաքագրման մակարդակի բարձրացման ուղիները ՀՀ-ում.
  - Վարկային շուկայի հուսալիության աստիճանի բարձրացման և տոկոսադրույքների նվազեցման հիմնախնդիրները ՀՀ-ում.
  - Պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի ներդրման ուղիները ՀՀ-ում.
  - Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հարկային և վարկային խթանները ՀՀ-ում:
2. «Տնտեսության իրական հատվածի արդիական հիմնախնդիրները» ուղղությամբ.
  - Ներդրումային գործունեության տնտեսական խթանները ՀՀ-ում (արդյունաբերության և ինովացիաների օրինակով).
  - ՀՀ-ում գյուղացիական տնտեսությունների զարգացման հիմնախնդիրները.
  - ՀՀ-ում արտահանման աճի և տնտեսության մասնագիտացման հիմնախնդիրները.
  - ՀՀ տարածքային միավորների զարգացման անհամաչափության գնահատումը, գործոնները, հաղթահարման ուղիները.
  - Մակրոտնտեսական քաղաքականության և տնտեսության զարգացման կանխատեսումների ձևավորման հիմնախնդիրները ՀՀ-ում.
  - Մետաղական օգտակար հանածոների պաշարների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները:
3. «Սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրները» ուղղությամբ.
  - Բնակչության սոցիալական պաշտպանվածության կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում.
  - ՀՀ բնակչության բնական աճի հիմնահարցերը և դրանց լուծման ուղիները.
  - Սոցիալական երաշխիքների և սոցիալական ապահովության համակարգը ՀՀ-ում:
4. «Տնտեսության արտաքին հատվածի արդիական հիմնախնդիրները» ուղղությամբ.
  - Հայաստանի և Եվրամիության միջև առևտրատնտեսական հարաբերությունների վիճակի գնահատում.
  - Հայաստանի և Եվրամիության միջև արժույթաֆինանսական հարաբերությունների վիճակի գնահատում:
5. «Տնտեսագիտության տեսության և հայ տնտեսագիտական մտքի պատմության» ուղղությամբ.

- Հայ տնտեսագիտական մտքի պատմություն (Ա. Ջիվելեզով)։
- Ֆինանսական համակարգի զարգացման օրինաչափությունները (Էվոլյուցիոն ինստիտուցիոնալ տեսություն)։

Բացի վերոնշյալից, 2008 թ. սկսվել է թեմատիկ ֆինանսավորմամբ ստորև բերված 9 գիտական թեմաների հետազոտումը, որը ավարտվել է 2010 թվականին։

Այդ թեմաներն են.

1. Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ու պետական աջակցության համալիր միջոցառումների իրականացումը ՀՀ գյուղատնտեսության ոլորտում.
2. Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ) ՀՀ անդամակցության պարտավորությունների շրջանակներում գյուղատնտեսական գործունեության հարկման և պետական աջակցության հիմնախնդիրները.
3. ՀՀ քաղցրահամ ջրերի ռեսուրսները, պաշարները և կենցաղում ու գյուղատնտեսության մեջ դրանց արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները.
4. ՀՀ մեքենաշինության զարգացման ուղղությունները և հիմնահարցերը.
5. Հայաստանի Հանրապետության բնակչության կենսամակարդակի և կյանքի որակի բարձրացման ուղիները.
6. Հայաստանի Հանրապետության բարձրադիր գոտիներում բնակչության զբաղվածության բարելավման հիմնախնդիրները.
7. ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերում բնօգտագործման և բնապահպանության տնտեսագիտական հիմնախնդիրները.
8. Տնտեսության ստվերային մասի կրճատման ուղիները ՀՀ-ում.
9. Հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում:

2008 թ. բազային և թեմատիկ ֆինանսավորմամբ թեմաների հետազոտության արդյունքում ինստիտուտի կողմից, ֆինանսավորման տարբեր աղբյուրների հաշվին, հրատարակվել են.

- գիտական հոդվածների 1 ժողովածու՝ նվիրված հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրներին: Այն ներառել է 77 հոդված, իսկ ծավալը կազմել է 60 տպագիր մամուլ,
- 9 գիրք և 1 ուսումնական ձեռնարկ,
- 339 հոդվածներ, այդ թվում՝ 12-ը արտասահմանում:

2008 թ. ինստիտուտում զգալի աշխատանքներ են կատարվել գիտական կադրերի պատրաստման ուղղությամբ: Բավական է նշել, որ ինստիտուտում գործող մասնագիտական խորհրդում պաշտպանվել են 1 դոկտորական և 40 թեկնածուական ատենախոսություններ:

Ինստիտուտի գործունեության կարևորագույն արդյունքները:

*«Ֆինանսական համակարգի կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում»* թեմայի (գիտ. դեկ՝ տ. գ. դ. Վ. Հարությունյան) շրջանակներում ստացված կարևորագույն արդյունքներն այն են, որ հիմնավորվել և առաջարկվել է.

1. մինչև 30%-ի հասցնել հարկեր/ՀՆԱ տոկոսային հարաբերակցության ցուցա-

նիշը և այն դիտարկել որպես մակրոտնտեսական ցուցանիշ,

2. հրաժարվել հարկային օրենսդրության մեջ հաճախակի ու մասնակի փոփոխություններ կատարելու պրակտիկայից և կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք կնպաստեն.
- ա) անուղղակի և ուղղակի հարկերի հարաբերակցության փոփոխմանը՝ հօգուտ երկրորդի, քանի որ անուղղակի հարկերը ներառվում են ապրանքների ու ծառայությունների գների մեջ՝ հարկային բեռը տեղափոխելով սպառողների վրա, որի գերակշռող մասն ազգաբնակչությունն է,
- բ) պրոգրեսիվ հարկման մոտեցումների գործնականում կիրառմանը, մոտեցումներ, որոնք իրենց կիրառությունն են ստացել զարգացած երկրներում,
- գ) միասնական հարկի ձևավորման ու գործնականում կիրառման ճիշտ մոտեցումների արմատավորմանը, բայց ոչ այնպես, ինչպես կատարվել է այսպես կոչված «պարզեցված հարկի» և հաստատագրված վճարների պարագայում, որոնցում դրված մոտեցումները չեն բխում հարկման արտերկրյա փորձից ու հարկման տեսություններից,
- դ) հարկային բեռի ինչպես արդարացի, այնպես էլ համաչափ բաշխմանը: Վերջինս ենթադրում է օրենքի առաջ հարկատուների հավասարության սկզբունքի ֆիսկալային կենսագործում: Ընդ որում՝ հարկային բեռի բաշխման հիմքում անհրաժեշտ է դնել ֆիզիկական անձանց պարագայում՝ ընտանիքի անդամների, իսկ իրավաբանական անձանց պարագայում՝ վերջիններիս համախառն եկամուտը:

Ինստիտուտի կիրառական մշակումների արդյունքները: «Ֆինանսական համակարգի կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի (գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Վ. Հարությունյան) շրջանակներում ստացված արդյունքներն իրենց արտացոլումն են ստացել օրենսդրական և ենթաօրենսդրական սեկտորում: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է.

- «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի ուժը կորցրած ճանաչելու հիմնավորումներին, որ ՀՀ կառավարություն էր ներկայացվել 2008 թ. հուլիսին, իսկ օգոստոսի վերջին այն ԱԺ-ի կողմից ուժը կորցրած է ճանաչվել 2009 թ. հունվարի 1-ից:
- Տեղական հարկերի տեսակների ու դրանց հայեցակարգի գծով կատարված առաջարկություններին, որոնք իրենց արտացոլումն են ստացել ՀՀ կառավարության որոշմամբ ընդունված «ՀՀ-ում տեղական հարկերի հայեցակարգում»:

Ինստիտուտի՝ բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտությունների արդյունքները: «Ֆինանսական համակարգի կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի (գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Վ. Հարությունյան) շրջանակներում առաջարկվել է. մինչև 30%-ի հասցնել հարկեր/ՀՆԱ %-ային հարաբերակցության ցուցանիշը, այն դիտարկել որպես մակրոտնտեսական ցուցանիշ և հարկային օրենսդրության մեջ կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք կնպաստեն անուղղակի և ուղղակի հարկերի հարաբերակցության փոփոխմանը հօգուտ

ուղղակի, պրոգրեսիվ հարկման մոտեցումների կիրառմանը, միասնական հարկի ճիշտ մոտեցումների արմատավորմանը, հարկային բեռի արդարացի բաշխմանը: Այդ առումով եկամտահարկի մասով կարևորվել են հարկատուի վճարունակությունը, շահութահարկի մասով՝ հարկադրույքների տարբերակումը, ակցիզային հարկի և գույքահարկի մասով՝ հարկման օբյեկտների շրջանակի ընդլայնումը, ԱԱՀ-ի մասով՝ հարկային հաշիվները խիստ հաշվառման փաստաթուղթ դիտարկելը և այլն:

Քննական վերլուծության են ենթարկվել ՓՄՁ-ների դասակարգման ցուցանիշները, ներկայացվել են մոտեցումներ դրանց վերանայման ուղիների վերաբերյալ, ինչպես նաև արվել են առաջարկություններ ՓՄՁ-ների գործունեությունը խթանող հարկային և վարկային խթանների վերաբերյալ:

Հրատարակվել են Վ. Հարությունյանի և Ա. Թամազյանի «Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման և ֆինանսական հիմնախնդիրների լուծման ուղիները», ինչպես նաև Վ. Հարությունյանի և Ա. Ազիզյանի «Ֆինանսական համահարթեցման հիմնախնդիրները» գրքերը:

Փորձագիտական եզրակացություններ են տրվել հինգ օրենսդրական և ենթօրենսդրական ակտերի նախագծերի, այդ թվում՝ «ՀՀ հարկային վարչարարության 2008-2011 թթ. ռազմավարության», «ՀՀ-ում տեղական հարկերի հայեցակարգի», «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի, «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» և այլնի վերաբերյալ:

ՀՀ կառավարություն առաջարկություններ են ներկայացվել «Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ու ֆինանսական հիմնախնդիրների լուծման ուղիներին», «ՓՄՁ-ների զարգացման հարկային ու վարկային խթանների», «Պետական բյուջեի հարկային եկամուտների ավելացման և հարկային օրենսդրության բարեփոխման ուղիներին» վերաբերյալ:

«Տնտեսության իրական հատվածի արդիական հիմնախնդիրները» թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Յու. Սուվարյան) շրջանակներում բացահայտվել են գյուղացիական տնտեսությունների զարգացումը խոչընդոտող գործոնները, և մշակվել են կոնկրետ միջոցառումներ բացահայտված հիմնախնդիրների լուծման ուղղությամբ:

Բացահայտվել են արտահանման աճի հիմնախնդիրները, և արվել են կոնկրետ առաջարկություններ դրանց լուծման ուղիների վերաբերյալ: Հետազոտվել են Սյունիքի և Վայոց ձորի մարզերի մետաղական օգտակար հանածոների օգտագործման արդի վիճակը և դրանց արդյունավետության բարձրացման հնարավորություններն ու ուղիները:

Հրատարակվել է Հ. Ավագյանի «ՀՀ ընդերքի հարստությունների մետաղական օգտակար հանածոների գնահատումն ըստ մարզերի» գիրքը:

ՀՀ կառավարություն առաջարկություններ են ներկայացվել «ՀՀ հանքահումքային ռեսուրսների օգտագործման արդի վիճակի և արդյունավետության բարձրացման ուղիներին», «Գյուղացիական տնտեսությունների զարգացման հիմնախնդիրներին», «ՀՀ ներդրումային գործունեության տնտեսական խթանների» վերաբերյալ:

«Սոցիալ-ժողովրդագրական արդիական հիմնախնդիրները» թեմայի (գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Ա. Մարկոսյան) շրջանակներում առաջարկվել են գործուն մոտեցումներ սոցիալական ծրագրերի հասցեականության ապահովման ու տեղեկատվական բազայի բարելավման, միգրացիային առնչվող օրենսդրական դաշտի կատարելագործման ուղիների վերաբերյալ:

Հրատարակվել է Մ. Մարկոսյանի «Բնակչության դրամական եկամուտների ձևավորման և բաշխման հիմնախնդիրները ՀՀ-ում» գիրքը:

ՀՀ կառավարությունն առաջարկություններ են ներկայացվել «Ժողովրդագրական իրավիճակի բարելավման և արդյունաբերության զարգացման հիմնախնդիրների» վերաբերյալ:

Փորձագիտական եզրակացություն է տրվել «Կենսաթոշակային համակարգի բարեփոխումների ծրագրի մասով»:

«Տնտեսության արտաքին հատվածի արդիական հիմնախնդիրները» թեմայի (գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Թ. Թորոսյան) շրջանակներում տրվել է Հայաստանի և Եվրամիության միջև առևտրատնտեսական և արժուրաֆինանսական հարաբերությունների վիճակի գնահատականը, և այն ներկայացվել է ՀՀ կառավարություն:

«Տնտեսագիտության տեսության և հայ տնտեսագիտական մտքի պատմության» թեմայի (գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Ռ. Սարինյան) շրջանակներում ներկայացվել են գիտելիքաստեղծ գործունեության հիմնական ուղղությունները, և առաջարկությունները ներկայացվել են ՀՀ կառավարություն:

Հրատարակվել են Գ. Վարդանյանի «Գիտելիքահենք տնտեսություն (ինարավորություններ և մարտահրավերներ)» և Ռ. Սարինյանի «Ալեքսեյ Ջիվելեգովի տնտեսագիտությունը» մենագրությունները:

Ինստիտուտի թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտությունների արդյունքները: «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ու պետական աջակցության համալիր միջոցառումների իրականացումը ՀՀ գյուղատնտեսության ոլորտում» թեմայի (գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Ս. Ղազարյան) շրջանակներում հետազոտվել են ՓՄՁ-ների գործունեության արդի վիճակը, նրանց զարգացմանը նպաստող իրավական դաշտի ձևավորման հիմնահարցերը, տրվել են ՓՄՁ-ների արդյունավետ չափերի որոշման մեթոդական մոտեցումները:

«ՀՀ քաղցրահամ ջրերի ռեսուրսները, պաշարները և կենցաղում ու գյուղատնտեսության մեջ դրանց արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները» թեմայի (գիտ. դեկ.՝ ե. հ. գ. դ. Հ. Ավագյան) շրջանակներում գնահատվել են ՀՀ քաղցրահամ ջրերի պաշարները և ռեսուրսները:

«ՀՀ բարձրարդի գոտիներում բնակչության զբաղվածության բարելավման հիմնախնդիրները» թեմայի (գիտ. դեկ.՝ ակադ. Վ. Խոջաբեկյան) շրջանակներում բացահայտվել են Հայաստանի Հանրապետության բարձրարդի գոտիներում բնակչության զբաղվածության բարելավման հիմնախնդիրները:

«Տնտեսության ստվերային մասի կրճատման ուղիները ՀՀ-ում» թեմայի (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Ա. Թամազյան) շրջանակներում ընտրվել է Հայաստանում ստվերային տնտեսության ծավալների գնահատման նպատակով ու կիրառման

տեսանկյունից նպատակահարմար մեթոդիկան, և հստակեցվել են դրա տեղայնացման պայմաններն ու մեխանիզմները:

**Ինստիտուտի գիտական հրապարակումները**

Ինստիտուտի աշխատակիցների կողմից հրատարակվել են 10 գիրք և 200 գիտական հոդվածներ (տե՛ս հավելված 2):

2008 թ. ինստիտուտում կազմակերպված գիտաժողովին մասնակցել են 125 աշխատակից, եղել են արտադրությունից կտրված 15 ասպիրանտներ և այլն, որոնց վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև բերված թիվ 1-6 աղյուսակներում:

Աղյուսակ 1

2008 թ. ՀՀ ԳԱԱ թեմատիկայի ամփոփ տվյալները

Կազմակերպությունը	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (n) և ֆինանսավորման ծավալները (X հազ. դր)		
	բազային	թեմատիկ	տնտ. պայմանագիր
Տնտեսագիտության ինստիտուտ	5 թեմա 64805,8 հազ. դր.	9 թեմա 19748,3 հազ. դր.	-

Աղյուսակ 2

Ինստիտուտի անցկացրած հանրապետական և միջազգային կոնֆերանսները, սիմպոզիումները և այլ գիտական միջոցառումներ

Միջոցառումները	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
		ընդամենը	այդ թվում՝ արտ. երկրներից
Գիտական ժողով	Ք. Երևան, Գ.Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 22-24 սեպտեմբերի, 2008	125	-
Հանրապետական գիտաժողով	Ք. Գյումրի, ՀՊՏՀ Գյումրիի մասնաճյուղ	61	-
Միջազգային գիտաժողով	Ք. Երևան, Նալբանդյան 128, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարան, 13-14 նոյեմբերի, 2008	80	17

ԳԱԱ գիտաշխատողների՝ 2008 թ. հրատարակությունների ընդհանուր քանակը

Կազմակերպությունը	Մենագրություն, ժողովածու և այլն		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք և այլն		Հոդվածներ, գեկուցումներ		Թեզիսներ	
	հանրապետական	արտասահմանյան	հանրապետական	արտասահմանյան	հանրապետական	արտասահմանյան	հանրապետական	արտասահմանյան
Տնտեսագիտության ինստիտուտ	10	-	1	-	188	12	-	-

Ասպիրանտների թվաքանակը

Կազմակերպությունը	Ասպիրանտների քանակը (այդ թվում՝ կանայք) առ 1.01.2008 թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում՝ կանայք)	
	ա/կ	ա/չկ	ա/կ	ա/չկ
Տնտեսագիտության ինստիտուտ	15(0)	60(34)	5(0)	10(6)

Տվյալներ մասնագիտացված գիտական խորհրդի վերաբերյալ

Կազմակերպությունը	Ատենախոսության խորհրդի ծածկագիրը	Մասնագիտության ծածկագիրը և անվանումը	Խորհրդի նախագահ, քարտուղար (գիտ. աստիճան, ազգանուն, անուն, հայրանուն)	2008 թ. ինստիտուտի աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսությունների թիվը	
				դոկտորական	թեկնածուական
Տնտեսագիտության ինստիտուտ	Ը.008	Ը.00.02 - «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում»  Ը.00.03 - «Դրամաշրջանառություն և վարկ»	տ. գ. դ., պրոֆ. Վ. Լ. Հարությունյան  տ. գ. թ., Կ. Հ. Առաքելյան	1	10

ՀՀ ԳԱԱ աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներ առ 01.01.2009 թ.

Կազմակերպությունը	Աշխատողների ընդհանուր թիվը	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
Տնտեսագիտության ինստիտուտ	115	101	1	1	17	65

Հարկ է նշել նաև, որ 2008 թ. հոկտեմբերի 28-ին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ընդհանուր ժողովում լսվել և քննարկվել է «Ինստիտուտի 2007-2008 թթ. գիտակազմակերպչական գործու-

նեության մասին» հաշվետվությունը<sup>1</sup>, և քննարկման արդյունքում ընդհանուր ժողովը որոշում է կայացրել դրական գնահատել ինստիտուտի՝ 2007-2008 թթ. գիտակազմակերպչական գործունեությունը՝ նշելով տնօրենի հետևողական ու բարեխիղճ աշխատանքը, որի մասին նշվեց նաև ընդհանուր ժողովի մասնակիցների ելույթներում<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2007-2009 թթ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետվություն (հավելվածներ 1-3):

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2009 Թ.  
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

*I. Գիտակազմակերպչական գործունեության  
արդյունքները*

Ինչպես արդեն նշվել է, 2008 թ. հոկտեմբերի 28-ին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ընդհանուր ժողովում քննարկվել է «Տնտեսագիտության ինստիտուտի 2007-2008 թթ. գիտակազմակերպչական գործունեության հաշվետվությունը», որի արդյունքում ընդհանուր ժողովը դրական է գնահատել ինստիտուտի գործունեությունը՝ նշելով նաև ինստիտուտի տնօրենի հետևողական ու բարեխիղճ աշխատանքը: Բացի դրանից, ընդհանուր ժողովը հավանության է արժանացրել ինստիտուտի կողմից գործնական նշանակություն ունեցող հետազոտությունների կարևոր արդյունքները ՀՀ կառավարություն ներկայացնելու պրակտիկային, և ինստիտուտին հանձնարարվել է.

- երկու ամսվա ընթացքում ձևավորել ինստիտուտի կառուցվածքը՝ համապատասխան բաժիններով, և ներկայացնել բաժանմունքի բյուրոյի հաստատմանը,
- գիտահետազոտական աշխատանքներին հաղորդել առավել գործնական ուղղվածություն,
- ընդլայնել մասնակցությունը միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող հետազոտական ծրագրերին, վերլուծական աշխատանքներին, գիտաժողովներին և այլ տեսագործնական միջոցառումներին:

Հարկ է նշել, որ ընդհանուր ժողովի որոշմամբ ինստիտուտին տրված բոլոր հանձնարարականները կատարվել և շարունակելու են կատարվել: Խոսքը շարունակականության առումով, մասնավորապես, վերաբերում է գիտահետազոտական աշխատանքներին առավել գործնական ուղղվածություն հաղորդելուն և գիտաժողովներին ու այլ տեսագործնական միջոցառումներին մասնակցության ընդլայնմանը:

Նշենք, որ 2009 թ. գիտահետազոտական աշխատանքներն ունեցել են գործնական ուղղվածություն, և առաջարկությունների փաթեթ է ուղարկվել ՀՀ կառավարություն՝ կապված հակաճգնաժամային միջոցառումների արտերկրյա փորձի, ՀՀ հակաճգնաժամային միջոցառումների խնդիրների և այլնի հետ, ինչպես նաև հրապարակվել են ճգնաժամին ու դրա հաղթահարման ուղիներին նվիրված գրքեր ու գիտական հոդվածների ժողովածուներ:

2009 թ. ինստիտուտում կազմակերպվել և անցկացվել է հանրապետական մեկ գիտաժողով, ինչպես նաև ինստիտուտն իր մասնակցությունն է բերել ՀՊՏՀ-ում «Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության տնտեսությունները տնտեսական ճգնաժամի պայմաններում. խնդիրներ և զարգացման

հեռանկարներ» թեմայով միջազգային գիտաժողովին: Բացի դրանից, ինստիտուտը մասնակցել է Ռուսաստանի Սոցիալական զարգացման միջազգային գիտահետազոտական ինստիտուտի կողմից «Սոցիալական ապահովագրության մոդելները, բնակչության սոցիալական աջակցությունը հետխորհրդային համակարգում. ԱՊՀ երկրների փորձի համեմատական վերլուծություն» թեմայով գիտական նյութերի նախապատրաստմանը՝ ՀՀ մասով, և նույն ինստիտուտի հետ հիմնադրել է «Միջազգային հետազոտություններ և հրապարակումներ» միջազգային գիտական բարեգործական հիմնադրամը:

Ի կատարումն ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի 2008 թ. հոկտեմբերի 28-ի ընդհանուր ժողովի որոշման 3.1. կետի՝ ինստիտուտի գիտխորհրդի 2008 թ. դեկտեմբերի 10-ի նիստով փոփոխվել են բազային ֆինանսավորմամբ իրականացվող գիտական հետազոտությունների ուղղությունները, և հաստատվել է ինստիտուտի գիտակազմակերպչական կառուցվածքը:

Սկսած 2009 թվականից՝ ինստիտուտի բազային ֆինանսավորմամբ իրականացվող գիտական հետազոտությունների ուղղություններն են.

- I. «Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ»*՝ ներառյալ մակրոտնտեսական վերլուծությունների, հարկաբյուջետային, դրամավարկային քաղաքականության, ֆինանսական շուկաների հիմնախնդիրների հետազոտումը.
- II. «Տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ»*՝ ներառյալ տնտեսական զարգացման, տնտեսության կառուցվածքային, հանքահումքային հատվածի, արտաքին տնտեսական գործունեության, մրցակցային, ագրարային և պարենային անվտանգության հիմնախնդիրների հետազոտումը.
- III. «Ծառայությունների ոլորտի զարգացում և սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ»*՝ ներառյալ սոցիալական ոլորտի զարգացման ու ժողովրդագրական իրավիճակի բարելավման և ծառայությունների ոլորտի զարգացման հիմնախնդիրների հետազոտումը.
- IV. «Տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն»:*

Սկսած 2009 թվականից՝ ինստիտուտի գիտակազմակերպչական կառուցվածքը, ըստ գիտական ուղղությունների, հետևյալն է.

- I. ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ*
- II. «Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ»*
  1. Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության բաժին
  2. Մակրոտնտեսական վերլուծությունների և ֆինանսական շուկաների բաժին
- III. «Տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ»*
  3. Գյուղատնտեսության և արդյունաբերության բաժին
  4. Բնօգտագործման և բնապահպանության բաժին
  5. Արտաքին տնտեսական կապերի բաժին
- IV. Ծառայությունների ոլորտի զարգացում և սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ»*
  6. Սոցիալ-ժողովրդագրական բաժին

7. Ծառայությունների ոլորտի զարգացման բաժին

*V. «Տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն»*

8. Տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմության բաժին

*VI. Վարչակազմակերպական բաժիններ*

9. Հաշվապահություն

10. Կադրերի բաժին

11. Ասպիրանտուրայի բաժին

12. Ընդհանուր բաժին

Նորացված կառուցվածքով ինստիտուտում ըստ բաժինների հետազոտվել են հետևյալ 20 թեմաները.

*I. Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության բաժին*

1. «Հարկման բարելավման հայեցակարգային մոտեցումները ՀՀ-ում» (թեմայի ղեկ. տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Լ. Հարությունյան):

2. «Ֆինանսական ճգնաժամի բացասական ազդեցությունների նվազեցման միջոցառումների ծրագրի մշակում» (թեմայի ղեկ. տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Լ. Հարությունյան):

3. «Բյուջետային գործընթացի բարելավման հայեցակարգային մոտեցումները ՀՀ-ում» (թեմայի ղեկ. տնտեսագիտ. թեկնածու Գ. Ֆ. Կիրակոսյան):

4. «Վարկային շուկայի հուսալիության աստիճանի բարձրացման և տոկոսադրույքների նվազեցման հիմնախնդիրները ՀՀ-ում» (թեմայի ղեկ. տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Հ. Բայադյան):

*II. Մակրոտնտեսական վերլուծությունների և ֆինանսական շուկաների բաժին*

5. «Մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծություններ: Փոփոխության միտումներ և կանխատեսումներ» (թեմայի ղեկ. տնտեսագիտ. թեկնածու Վ. Վ. Խաչատրյան):

6. «Արժեթղթերի առաջնային շուկայի զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» (թեմայի ղեկ. տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Բ. Սալնազարյան):

7. «Մրցակցային միջավայրի բարելավման ուղիները ՀՀ-ում» (թեմայի ղեկ. տնտեսագիտ. թեկնածու Ա. Ռ. Թամազյան):

*III. Գյուղատնտեսության և արդյունաբերության բաժին*

8. «Հայաստանի Հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների զարգացման հիմնախնդիրները» (թեմայի ղեկ. տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր Է. Ս. Ղազարյան):

9. «ՀՀ մշակող արդյունաբերության ձեռնարկությունների վերականգնման և գործարկման հիմնախնդիրները» (թեմայի ղեկ. տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Խ. Նազարյան):

*IV. Բնօգտագործման և բնապահպանության բաժին*

10. «ՀՀ մետաղական օգտակար հանածոների գնահատումն ըստ մարզերի» (թեմայի ղեկ. երկրաբանահանքաբանական գիտ. դոկտոր Հ. Ս. Ավագյան):

*V. Արտաքին տնտեսական կապերի բաժին*

11. «Հայաստանի Հանրապետության և Եվրամիության երկրների միջև առևտրատնտեսական կապերի կատարելագործումը ֆինանսական ճգնաժամի պայմաններում» (թեմայի ղեկ.՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր Թ. Շ. Թորոսյան):

*VI. «Սոցիալ-ժողովրդագրական բաժին»*

12. «Բնակչության սոցիալական պաշտպանվածության կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում» (թեմայի ղեկ.՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Խ. Մարկոսյան):

13. «Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում» (թեմայի ղեկ.՝ տնտեսագիտ. թեկնածու Դ. Ն. Հախվերդյան):

14. «Նվազագույն աշխատավարձի սահմանման հայեցակարգային մոտեցումները ՀՀ-ում» (թեմայի ղեկ.՝ տնտեսագիտ. թեկնածու Ա. Գ. Մինասյան):

*VII. «Ծառայությունների ոլորտի զարգացման բաժին»*

15. «Ինտերնետ ծառայությունների զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» (թեմայի ղեկ.՝ տնտեսագիտ. թեկնածու Հ. Ա. Մարկոսյան):

*VIII. «Տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմության բաժին»:*

16. «ՀՀ ազգային ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները» (թեմայի ղեկ.՝ տնտեսագիտ. թեկնածու Ա. Շ. Մարգարյան):

17. «Գիտելիքահենք տնտեսության կառուցման հայեցակարգային մոտեցումները ՀՀ-ում» (թեմայի ղեկ.՝ տնտեսագիտ. թեկնածու Գ. Բ. Վարդանյան):

18. «Բազմակողմ գիտակցված գործունեության հասարակություն. գաղափարը և ձևավորման հիմնախնդիրները» (թեմայի ղեկ.՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր Բ. Հ. Եղիազարյան):

19. «XX դարի նշանավոր տնտեսագետների տողանը (գիտակենսագրական ուրվագծեր) տեղեկատուի կազմում (թեմայի ղեկ.՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռ. Ն. Սարինյան):

20. «Հայ տնտեսագետների տողանը (գիտակենսագրական ուրվագծեր) տեղեկատուի կազմում» (թեմայի ղեկ.՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռ. Ն. Սարինյան):

*II. Ինստիտուտի գործունեության կարևորագույն արդյունքները*

«Ֆինանսական ճգնաժամի բացասական ազդեցությունների նվազեցման միջոցառումների ծրագրի մշակում» թեմայի (գիտ. ղեկ.՝ տնտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Լ. Հարությունյան) շրջանակներում.

ա) վեր են հանվել ֆինանսական ճգնաժամի փուլերը, առանձնահատկությունները, ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացման պատճառները, բացասական դրսևորումները և պատմական դասերը,

բ) հետազոտվել է հակաճգնաժամային միջոցառումների արտերկրյա փորձն ըստ միջոցառումների բնույթի, ազդեցության ոլորտների ու գործիքների, վեր

են հանվել հակաճգնաժամային միջոցառումների արտերկրյա փորձի դասերը,

զ) վեր են հանվել ՀՀ-ում իրականացվող հակաճգնաժամային միջոցառումները և առաջարկություններ են արվել դրանց բարելավման ուղիների վերաբերյալ:

Հրատարակվել են «Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ. պատճառներ, հակաճգնաժամային միջոցառումներ և դասեր» մենագրությունը (Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, 146 էջ)՝ տնտ. դոկտ., պրոֆեսոր Վ. Լ. Հարությունյանի հեղինակությամբ, և «Ֆինանսատնտեսական ճգնաժամը Հայաստանում և աշխարհում» գիտական հոդվածների ժողովածուն (Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, 225 էջ)՝ տնտ. դոկտ., պրոֆեսոր Վ. Լ. Հարությունյանի խմբագրությամբ:

«Հարկման բարելավման հայեցակարգային մոտեցումները ՀՀ-ում» թեմայի (գիտ. ղեկ.՝ տնտ. դոկտ., պրոֆեսոր Վ. Լ. Հարությունյան) շրջանակներում.

ա) վեր են հանվել հարկման սկզբունքների կիրառման ժամանակակից մոտեցումները, հարկերի հաշվարկման մեթոդական մոտեցումները և առանձնահատկությունները արտերկրում,

բ) բացահայտվել են ՀՀ-ում հարկային պարտավորությունների հաշվարկման օրենսդրական ու մեթոդաբանական թերություններն ու բացթողումները, և արվել են առաջարկություններ դրանց վերացման ուղիների վերաբերյալ:

Հրատարակման փուլում է «Հարկեր և հարկազանձում. անցյալը, ներկան և ապագան» շուրջ 500 էջանոց գիրքը՝ տնտ. դոկտ., պրոֆեսոր Վ. Լ. Հարությունյանի, տնտ. գիտ. թեկնածուներ Տ. Վ. Հարությունյանի ու Դ. Վ. Հարությունյանի հեղինակությամբ:

Ինստիտուտի գործունեության կիրառական մշակումների արդյունքները: ՀՀ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության կատարելագործման ու հակաճգնաժամային միջոցառումների համատեքստում կիրառական նշանակություն և օգտակարություն կարող են ունենալ.

- «Ֆինանսական ճգնաժամի բացասական ազդեցությունների նվազեցման միջոցառումների ծրագրի մշակում» թեմայի (գիտ. ղեկ.՝ տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Լ. Հարությունյան) շրջանակներում ՀՀ հակաճգնաժամային միջոցառումների բարելավման ուղիների վերաբերյալ արված առաջարկությունները, որոնք ուղարկվել են ՀՀ կառավարություն:
- «Հարկման բարելավման հայեցակարգային մոտեցումները ՀՀ-ում» թեմայի (գիտ. ղեկ.՝ տնտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Լ. Հարությունյան) շրջանակներում ՀՀ-ում հարկային պարտավորությունների հաշվարկման կատարելագործման ուղղությամբ արված առաջարկությունները, որոնք ուղարկվել են ՀՀ կառավարություն:

Ինստիտուտի բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտությունների արդյունքները:

«Ֆինանսական ճգնաժամի բացասական ազդեցությունների նվազեցման միջոցառումների ծրագրի մշակում» թեմայի (գիտ. ղեկ.՝ տնտ. դոկտոր, պրոֆե-

սոր Վ. Լ. Հարությունյան) շրջանակներում առաջարկություններ են արվել ՀՀ հակաճգնաժամային միջոցառումների բարելավման ուղիների վերաբերյալ, որոնք ուղարկվել են ՀՀ կառավարություն:

Հրատարակվել են «Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ պատճառներ, հակաճգնաժամային միջոցառումներ և դասեր» մենագրությունը տնտ. դոկտ., պրոֆեսոր Վ. Լ. Հարությունյանի հեղինակությամբ, «Ֆինանսատնտեսական ճգնաժամը Հայաստանում և աշխարհում» գիտական հոդվածների ժողովածուն՝ տնտ. դոկտ., պրոֆեսոր Վ. Լ. Հարությունյանի խմբագրությամբ, ինչպես նաև շուրջ 10 գիտական հոդվածներ հանրապետական և միջազգային գիտաժողովների ժողովածուներում և գիտական ամսագրերում:

«Հարկման բարելավման հայեցակարգային մոտեցումները ՀՀ-ում» թեմայի (գիտ. դեկ. տնտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Լ. Հարությունյան) շրջանակներում առաջարկություններ են արվել ՀՀ-ում հարկային պարտավորությունների հաշվարկման կատարելագործման ուղիների վերաբերյալ, որոնք ուղարկվել են ՀՀ կառավարություն:

Հրատարակվել է 3 հոդված և հրատարակման փուլում է «Հարկեր և հարկագանձում. անցյալը, ներկան և ապագան» շուրջ 500 էջանոց գիրքը՝ տնտ. դոկտ., պրոֆեսոր Վ. Լ. Հարությունյանի, տնտ. թեկնածուներ Տ. Վ. Հարությունյանի և Դ. Վ. Հարությունյանի հեղինակությամբ:

«Բյուջետային գործընթացի բարելավման հայեցակարգային մոտեցումները ՀՀ-ում» թեմայի (գիտ. դեկ. տնտ. թեկն. Գ. Ֆ. Կիրակոսյան) շրջանակներում առաջարկություններ են արվել բյուջետային գործընթացի կատարելագործման ուղիների վերաբերյալ, որոնք ուղարկվել են ՀՀ կառավարություն: Հրատարակվել է մեկ հոդված:

«Վարկային շուկայի հուսալիության աստիճանի բարձրացման և տոկոսադրույքների նվազեցման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի (գիտ. դեկ. տնտ. դոկտ., պրոֆեսոր Ա. Ն. Բայադյան) շրջանակներում հստակեցվել են մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման մեթոդաբանական մոտեցումները վարկային շուկայի վրա, և առաջարկություններ են արվել տոկոսադրույքների նվազեցման ուղիների վերաբերյալ:

«Մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծություններ: Փոփոխության միտումներ և կանխատեսումներ» թեմայի (գիտ. դեկ. տնտ. թեկն. Վ. Վ. Խաչատրյան) շրջանակներում տրվել է մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծությունը, և վեր են հանվել փոփոխության միտումները, ինչպես նաև առաջարկվել է ՀՀ-ում կիրառել այն երկրների հակաճգնաժամային միջոցառումների փորձը, որոնք «հակաճգնաժամային արդյունավետության ինդեքսի» վարկանիշային աղյուսակում գրավում են դրական դիրքեր: Հիմնավորվել է ՀՀ տնտեսության սցենարային երեք ռազմավարությունների (լավատեսական, վատատեսական, մեկից մյուսին արագ անցման) մշակման անհրաժեշտությունը և այլն, որոնց վերաբերյալ առաջարկությունները ներկայացված են ՀՀ կառավարություն:

«Արժեթղթերի առաջնային շուկայի զարգացման հարցերը Հայաստանի Հանրապետությունում» թեմայի (գիտ. դեկ. տնտ. դոկտ., պրոֆեսոր Ա. Բ. Սալ-

նագարյան) շրջանակներում բացահայտվել են առաջնային շուկայի հիմնահարցերը՝ կապված դրա կենտրոնացվածության, ոչ բանկային ինստիտուցիոնալ ներդրողների բացակայության, արժույթային ռիսկերի հետ և այլն, որոնց բացասական ազդեցությունների նվազեցման ուղղությամբ կատարվել են համապատասխան առաջարկություններ ու ներկայացվել ՀՀ կառավարություն:

«Մրցակցային միջավայրի բարելավման ուղիները ՀՀ-ում» թեմայի (գիտ. դեկ. տնտ. թեկն. Ա. Ռ. Թամազյան) շրջանակներում բացահայտվել են մրցակցային միջավայրի հիմնախնդիրները, և առաջարկություններ են արվել դրանց բարելավման ուղիների վերաբերյալ, որոնք ներկայացվել են ՀՀ կառավարություն: Հրատարակման փուլում է նույն վերնագրով գիրքը:

«Հայաստանի Հանրապետության գյուղացիական տնտեսությունների զարգացման հիմնախնդիրները» թեմայի (գիտ. դեկ. տնտ. դոկտ., պրոֆեսոր Է. Ս. Ղազարյան) շրջանակներում տրվել են մելիորացիայի զարգացման էկոլոգատնտեսագիտական հիմնախնդիրների լուծման հայեցակարգային մոտեցումները, արտադրության մասնագիտացման հիմնական ուղիներն ըստ մարզերի, առաջարկություններ են արվել կերային մշակաբույսերի ցանքատարածությունների ընդլայնման և օգտագործման արդյունավետության բարձրացման ուղիների վերաբերյալ և այլն: Հրատարակվել է 6 հոդված:

«ՀՀ մշակող արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնման և գործարկման հիմնախնդիրները» թեմայի (գիտ. դեկ. տնտ. դոկտ., պրոֆեսոր Ա. Խ. Նազարյան) շրջանակներում մշակվել է մշակող արդյունաբերության համաչափ զարգացման մեթոդաբանություն: Հրատարակվել է 2 հոդված:

«ՀՀ մետաղական օգտակար հանածոների գնահատումն ըստ մարզերի» թեմայի (գիտ. դեկ. երկրաբան. հանք. գիտ. դոկտ. Հ. Ս. Ավագյան) շրջանակներում տրվել է մետաղական օգտակար հանածոների պաշարների ու ռեսուրսների գնահատականը, և առաջարկություններ են արվել դրանց օգտագործման արդյունավետության բարձրացման ուղիների վերաբերյալ, որոնք ուղարկվել են ՀՀ կառավարություն: Հրատարակվել են 1 գիրք և 4 հոդված:

«Հայաստանի Հանրապետության և Եվրամիության երկրների միջև առևտրատնտեսական կապերի կատարելագործումը ֆինանսական ճգնաժամի պայմաններում» թեմայի (գիտ. դեկ. տնտ. դոկտ., պրոֆեսոր Թ. Շ. Թորոսյան) շրջանակներում բացահայտվել են ՀՀ և ԵՄ առևտրային կապերի թերությունները, և առաջարկություններ են արվել դրանց բարելավման ուղիների վերաբերյալ՝ տալով նաև արժույթաֆինանսական հարաբերությունների վիճակի գնահատականը: Հրատարակվել է մեկ գիրք:

«Բնակչության սոցիալական պաշտպանվածության կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի (գիտ. դեկ. տնտ. դոկտ., պրոֆեսոր Ա. Խ. Մարկոսյան) շրջանակներում ուսումնասիրվել է սոցիալական վերափոխումների արտերկրյա փորձը, և առաջարկություններ են արվել ՀՀ-ում դրա կիրառման նպատակահարմարության վերաբերյալ: Հրատարակվել է 2 հոդված:

«Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի (գիտ. դեկ. տնտ. թեկն. Դ. Ն. Հախվերդյան) շրջանակներում վեր

են հանվել բնակչության միգրացիայի հիմնական առանձնահատկությունները, տրվել է ներկա վիճակի գնահատականը, և արվել են համապատասխան առաջարկություններ աշխատուժի միջազգային միգրացիային Հայաստանում պետական կանոնակարգվածություն և համակարգվածություն հաղորդելու ուղղությամբ, որոնք ներկայացվել են ՀՀ կառավարություն:

«Նվազագույն աշխատավարձի սահմանման հայեցակարգային մոտեցումները ՀՀ-ում» թեմայի (գիտ. դեկ. տնտ. թեկն. Ա. Գ. Մինասյան) շրջանակներում գնահատվել և խմբավորվել են նվազագույն աշխատավարձի որոշման մոտեցումները, վեր են հանվել դրանցից յուրաքանչյուրի առավելություններն ու թերությունները, և ՀՀ-ում նվազագույն աշխատավարձի սահմանման համար նախապատվությունը տրվել է գործոնային վերլուծության մոտեցմանը:

«Ինտերնետ ծառայությունների զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» թեմայի (գիտ. դեկ. տնտ. թեկնածու Հ. Ա. Մարկոսյան) շրջանակներում կարևորվել է ինտերնետ ծառայությունների որակի բարելավման հիմնախնդիրը՝ վեր հանելով վերջինիս թերությունները, կարևորելով օրենսդրական դաշտի կատարելագործման, ինտերնետային կայքի իրավական կարգավիճակի հստակեցման, ինտերնետային էջի արտապատկերի նոտարական վավերացման, էլեկտրոնային առևտրի հարկման հստակեցման անհրաժեշտությունը և այլն:

«ՀՀ ազգային ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները» թեմայի (գիտ. դեկ. տնտ. թեկնածու Ա. Շ. Մարգարյան) շրջանակներում կարևորվել է գիտության ֆինանսավորման ծրագրանպատակային ուղղության փոփոխությունը, նորամուծային հիմնադրամների ստեղծումը, գիտության բնագավառի աշխատողների աշխատավարձերի բարձրացումը և այլն, որոնց վերաբերյալ արված առաջարկությունները ներկայացվել են ՀՀ կառավարություն: Հրատարակվել է 5 հոդված:

«Գիտելիքահենք տնտեսության կառուցման հայեցակարգային մոտեցումները ՀՀ-ում» թեմայի (գիտ. դեկ. տնտ. թեկնածու Գ. Ի. Վարդանյան) շրջանակներում գառուսյան նորմալ բաշխման կորի հիման վրա բացահայտվել է ՀՀ մտավոր ներուժը, և առաջարկվել է այն լիարժեք իրացնելու չորս ուղի: Մշակվել են ՀՀ ազգային նորաստեղծական համակարգի հայեցակարգային մոտեցումները և այլն, որոնք ներկայացվել են ՀՀ կառավարություն: Հրատարակվել է 2 հոդված:

«Բազմակողմ գիտակցված գործունեության հասարակություն. գաղափարը և ձևավորման հիմնախնդիրները» թեմայի (գիտ. դեկ. տնտ. դոկտ., պրոֆեսոր Բ. Հ. Եղիազարյան) շրջանակներում վեր է հանվել «գիտակցված գործունեության» հասկացության էությունը, հիմնավորվել է նրա քանակական գնահատման և ներքին սահմանի նորմավորման անհրաժեշտությունը, և առաջարկություններ են արվել դրանց որոշման մեթոդական մոտեցումների և հանրապետությունում համապատասխան համակարգերի ձևավորման ուղղությամբ, որոնք ներկայացվել են ՀՀ կառավարություն: Հրատարակվել է 3 հոդված, իսկ 5-ը ընդունված են հրատարակման:

«XX դարի նշանավոր տնտեսագետների տողանը (հետքեյնսյան շրջան), գի-

տակենսագրական ուրվագծեր» թեմայի (գիտ. ղեկ.՝ տնտ. դոկտ., պրոֆեսոր Ռ. Ն. Սարինյան) շրջանակներում հրատարակվել է նույնանուն վերնագրով գիրք, որում ընդգրկված տնտեսագետներից յուրաքանչյուրի վերաբերյալ ուրվագծերի ձևով ներկայացված են կյանքի ու գործունեության փուլերը:

«Հայ տնտեսագետների տոհմանը. գիտակենսագրական ուրվագծեր» թեմայի (գիտ. ղեկ.՝ տնտ. դոկտ., պրոֆեսոր Ռ. Ն. Սարինյան) շրջանակներում 2010 թ. կիրատարակվի նույնանուն վերնագրով գիրք, որում ընդգրկվելու են հայագի դոկտոր տնտեսագետներից յուրաքանչյուրի վերաբերյալ կյանքի ու գործունեության փուլերը, նրանց գիտական հրապարակումների ուրվագծերը:

**Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարվող հետազոտությունների արդյունքները:** «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ու պետական աջակցության համալիր միջոցառումների իրականացումը ՀՀ գյուղատնտեսության ոլորտում» թեմայի (գիտ. ղեկ.՝ տնտ. դոկտ., պրոֆեսոր Ս. Գ. Ղազարյան) շրջանակներում առաջարկություններ են արվել ագրարային ոլորտում ապահովագրության և ռիսկերի կառավարման բարելավման ուղիների, ՓՄՁ-ների մարքեթինգային ծառայությունների ակտիվացման և այլնի վերաբերյալ: Հրատարակվել է 2 հոդված:

«Առևտրի համաշխարհային կազմակերպությանը ՀՀ անդամակցության պարտավորությունների շրջանակներում գյուղատնտեսական գործունեության հարկման և պետական աջակցության հիմնախնդիրները» թեմայի (գիտ. ղեկ.՝ տնտ. դոկտ., պրոֆեսոր Ս. Ս. Ավետիսյան) շրջանակներում բացահայտվել են գյուղատնտեսության հետագա զարգացման հիմնախնդիրները, և առաջարկություններ են արվել դրանց լուծման ուղիների վերաբերյալ՝ կապված հարկման տարբերակված մոտեցման ու սուբսիդավորման, մեծածախ շուկաների ձևավորման և այլնի հետ: Հրատարակվել է 3 հոդված:

«ՀՀ քաղցրահամ ջրերի ռեսուրսները, պաշարները և կենցաղում ու գյուղատնտեսության մեջ դրանց արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները» թեմայի (գիտ. ղեկ.՝ երկ. հանք. գիտ. դոկտ. Հ. Ս. Ավագյան) շրջանակներում տրվել է քաղցրահամ ջրերի պաշարների գնահատականը, և առաջարկություններ են արվել դրանց արդյունավետ օգտագործման ուղղությամբ, որոնք ուղարկվել են ՀՀ կառավարություն: Հրատարակվել է մեկ հոդված:

«ՀՀ մեքենաշինության զարգացման ուղղությունները և հիմնահարցերը» թեմայի (գիտ. ղեկ.՝ տնտ. դոկտ., պրոֆեսոր Ա. Խ. Նազարյան) շրջանակներում հիմնավորվել են մեքենաշինության հատվածի ձեռնարկությունների վերագործարկման անհրաժեշտությունը և շահույթով աշխատելու մոտեցումները՝ կապված ինովացիոն նախագծերի մշակման, արտադրանքի իրացման շուկաների ձևավորման և այլնի հետ:

«ՀՀ բնակչության կենսամակարդակի և կյանքի որակի բարձրացման ուղիները» թեմայի (գիտ. ղեկ.՝ տնտ. դոկտ., պրոֆեսոր Ա. Խ. Մարկոսյան) շրջանակներում վեր են հանվել հասարակության զարգացվածության մակարդակը բնութագրող համաթվերի հաշվարկման մեթոդաբանության թերությունները, և այդ մասով արվել են համապատասխան առաջարկություններ, մշակվել է բնակչու-

թյան աղքատության հաղթահարմանը նպաստող առաջարկությունների փաթեթ  
և այլն:

«ՀՀ բարձրադիր գոտիներում բնակչության զբաղվածության բարելավման  
հիմնախնդիրները» թեմայի (գիտ. դեկ. ակադեմիկոս Վ. Ե. Խոջաբեկյան) շրջա-  
նակներում առաջարկվել է բարձրադիր գոտիներում խրախուսել բնա- և հողա-  
կլիմայական առանձնահատկություններից բխող գյուղատնտեսության տնտե-  
սապես գերադասելի մասնագիտացումը, ապահովել գյուղատնտեսական մեքե-  
նա-մեխանիզմներով, նպաստել արտադրական ենթակառուցվածքների ձևավոր-  
մանը և այլն:

«ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերում բնօգտագործման և բնապահպանու-  
թյան տնտեսագիտական հիմնահարցերը» թեմայի (գիտ. դեկ. տնտ. թեկն., պրո-  
ֆեսոր Է. Ա. Բաբայան) շրջանակներում հիմնավորվել է էկոլոգատնտեսական  
հաշվառման ժամանակակից համակարգի ձևավորման անհրաժեշտությունը,  
որը հնարավորություն կտա գնահատել և հսկել զարգացման էկոլոգացման  
ընթացքը մակրոտնտեսական ցուցանիշների օգնությամբ, կարևորվել է այդ  
ոլորտում գանձվող հարկերի ու վճարների բարձրացման անհրաժեշտությունը`  
օրենսդրական փոփոխություններ կատարելու և հատուկ ֆոնդեր ձևավորելու  
ճանապարհով: Հրատարակվել է 6 հոդված:

«Տնտեսության ստվերային մասի կրճատման ուղիները ՀՀ-ում» թեմայի  
(գիտ. դեկ. տնտ. թեկնածու Ա. Ռ. Թամազյան) շրջանակներում ակնկալվում է  
բացահայտել անցումային տնտեսության և «ստվերային» հատվածի միջև առկա  
կապը և նախանշել տնտեսության ստվերային մասի կրճատման ռազմավարա-  
կան ուղղությունները:

«Հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները»  
թեմայի (գիտ. դեկ. տնտ. դոկտ., պրոֆեսոր Վ. Բ. Բոստանջյան) շրջանակներում  
ակնկալվում է գնահատել հարկային վարչարարության դերը պետական  
եկամուտների հավաքագրման գործընթացում, մշակել հարկային վարչարարու-  
թյան գնահատման ու կատարելագործման մոտեցումներ:

### *III. Ինստիտուտի գիտական հրապարակումները*

Ինստիտուտի կողմից հրատարակվել են 8 գիրք և 136 գիտական հոդվածներ  
(տե՛ս հավելված 3):

Ինստիտուտում կազմակերպվել և անցկացվել է «Մոցիալ-տնտեսական  
զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թե-  
մայով հանրապետական գիտաժողով` նվիրված ակադեմիկոս Արտաշես Առա-  
քելյանի ծննդյան 100-ամյակին:

Գիտաժողովի նյութերը հրատարակվել են 69,5 տպագրական մամուլ ծավալով:

Հրատարակվել է նաև «Ֆինանսատնտեսական ճգնաժամը Հայաստանում և  
աշխարհում» գիտական հոդվածների ժողովածուն` 14 տպագրական մամուլ  
ծավալով:

Ինստիտուտն իր մասնակցությունն է ունեցել ՀՊՏՀ-ում «Ռուսաստանի  
Դաշնության և Հայաստանի Հանրապետության տնտեսությունները տնտեսական  
ճգնաժամի պայմաններում. հիմնախնդիրներ և զարգացման հեռանկարները»

թեմայով կազմակերպված միջազգային գիտաժողովին ներկայացնելով ֆինանսատնտեսական ճգնաժամին վերաբերող գիտական հոդվածներ:

Ինստիտուտի գիտական ներուժին, աշխատողների թվաքանակին և այլնին վերաբերող տեղեկությունները ներկայացված են ստորև բերված թիվ 1-7 աղյուսակներում:

Աղյուսակ 1

2009 թ. թեմատիկայի ամփոփ տվյալները

Գիտական հիմնարկներ	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (n) և ֆինանսավորման ծավալը (X հազ. դր.)		
	բազային	թեմատիկ	տնտ. պայմանագիր
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	20 թեմա 64805,8	9 թեմա 19748,3	-

Աղյուսակ 2

Ինստիտուտի անցկացրած հանրապետական և միջազգային կոնֆերանսները, սիմպոզիումները և այլ գիտական միջոցառումները

Միջոցառումներ	Անցկացման վայրն ու ժամանակը	Մասնակիցների թիվը	
		ընդամենը	այդ թվում՝ արտ. երկրներից
Հանրապետական գիտաժողով «Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով	Ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ, 27-28 ապրիլի, 2009	125	-

Աղյուսակ 3

Ինստիտուտի աշխատակիցների արտասահմանյան, այդ թվում՝ ԱՊՀ երկրներ կատարած գործուղումները

Կազմակերպությունը	Երկիրը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
		գիտաժողովներին մասնակցելու համար	համատեղ գիտական աշխատանք կատարելու համար	բանակցությունների և խորհրդակցությունների համար
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	ԱՄՆ	1	-	-
	Ուկրաինա	2	-	-
	Չինաստան	1	-	-

Աղյուսակ 4

ԳԱԱ գիտաշխատողների 2009 թ. հրապարակումների ընդհանուր քանակը

Կազմակերպությունը	Մենագրություն, ժողովածու և այլն		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք և այլն		Հոդվածներ, զեկուցումներ, թեզիսներ և այլն	
	հանրապետական	արտասահմանյան	հանրապետական	արտասահմանյան	հանրապետական	արտասահմանյան
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	7	-	1	-	134	2

Ասպիրանտների թվաքանակը

Կազմակերպությունը	Ասպիրանտների քանակը (այդ թվում՝ կանայք) առ 1.01.2009 թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում՝ կանայք)	
	ա/կ	ա/չկ	ա/կ	ա/չկ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	11(0)	47(27)	3(0)	-

Տվյալներ մասնագիտացված գիտական խորհրդի վերաբերյալ

Կազմակերպությունը	Ատենախոսության խորհրդի ծածկագիրը	Մասնագիտության ծածկագիրը և անվանումը	Խորհրդի նախագահ, քարտուղար (գիտ. աստիճան, ազգանուն, անուն, հայրանուն)	2009 թ. ինստիտուտի աշխատակիցների կողմից համապատասխան այլ խորհուրդներում և ինստիտուտի խորհրդում պաշտպանված ատենախոսությունների թիվը	
				դոկտորական	թեկնածուական
Տնտեսագիտության ինստիտուտ	008	Ը.00.02. «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» Ը.00.03. «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ»	տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ. <i>Հարությունյան Վլադիմիր Լիպարիտի</i>  տնտեսագիտ. թեկնածու <i>Առաքելյան Կարապետ Հովհաննեսի</i>	-	20

Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներ առ 01.01.2010 թ.

Կազմակերպությունը	Աշխատողների ընդհանուր թիվը	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	112	98	1	1	16	59

IV. Տվյալներ ինստիտուտի ղեկավարության մասին

Տնօրեն՝ *Վլադիմիր Լիպարիտի Հարությունյան*  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Փոխտնօրեն՝ *Մերգեյ Գառնիկի Ղազարյան*  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Գիտական քարտուղար՝ *Ալվարդ Թևոսի Զատիկյան*  
տնտեսագիտության թեկնածու

E-mail: arakeliankarapet@yahoo, fr, [nasic@sci.am](mailto:nasic@sci.am)

### *V. Տվյալներ կադրերի վերաբերյալ*

- ա) մինչև 35 տարեկան մեկ տղամարդ գիտաշխատող զբաղեցրել է ղեկավար պաշտոն,
- բ) հաշվետու տարում ընդունվել են 2 երիտասարդ մասնագետներ, այդ թվում՝ 1 կին, ազատվածներ չկան,
- գ) մինչև 35 տարեկան գիտաշխատողների թվաքանակը կազմել է 24, 35-ից 60 տարեկան՝ 19, 60 տարեկանից բարձր՝ 12:

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2010 Թ. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

*I. Կարևորագույն արդյունքները*

«Ֆինանսական ճգնաժամի բացասական ազդեցությունների նվազեցման միջոցառումների ծրագրի մշակում» թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Վլադիմիր Հարությունյան) շրջանակներում հետազոտվել են համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամերի փոխանցման մեխանիզմների մեթոդաբանական հիմքերը, ինչը հնարավորություն է տալիս նախօրոք բացահայտել ազդեցությունների հնարավոր ոլորտները, ինչպես նաև կանխատեսումների գործիքակազմ կիրառելով և հստակ մշակված ծրագրեր կազմելով՝ կառավարության միջոցառումները նպատակաուղղել բացասական ազդեցությունների նվազեցմանը:

Հրատարակվել է Վ. Լ. Հարությունյանի, Վ. Վ. Խաչատրյանի «Ճգնաժամ. մակրոտնտեսական իրավիճակն աշխարհում և Հայաստանում» գիրքը:

«Հարկման արտերկրյա փորձը» թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Վլադիմիր Հարությունյան) շրջանակներում ուսումնասիրվել է էլեկտրոնային հաշվետվությունների ներդրման արդյունքում հարկային հաշվետվությունների լրացման ժամանակային, վարչական ծախսերի կրճատման հնարավորությունները՝ նպաստելով հարկման արդյունավետության բարձրացմանը:

Հրատարակվել է Վ. Լ. Հարությունյանի, Դ. Վ. Հարությունյանի, Տ. Վ. Հարությունյանի «Հարկեր և հարկագանձում» գիրքը:

«Հայաստանի Հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների զարգացման հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանի կողմից կատարած հետազոտությունները հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման, փոքր և միջին ձեռնարկատիրության խթանման, գյուղացիական տնտեսությունների խոշորացման և մի շարք այլ ուղղություններով ունեցել են կիրառական նշանակություն և հաշվի են առնվել ՀՀ տնտեսության ագրարային հատվածի քաղաքականությանն առնչվող մասով իրավական ակտերի նախագծերի, ինչպես նաև վերլուծությունների ու առաջարկությունների ներկայացման գործընթացում:

Հրատարակվել է Հ. Ս. Ավագյանի «Հայաստանի Հանրապետության քաղցրահամ ջրերը» գրքույկը, որում տրվել են Հայաստանի քաղցրահամ ջրերի արտեզյան ավազանների և ինքնահոս բեռնաթափվող աղբյուրների ռեսուրսները և պաշարների՝ պետական հանձնաժողովների կողմից հաստատված պաշարները, վերջիններիս օգտագործման արդի վիճակը, և արվել են դրանց արդյունավետ օգտագործմանն ուղղված առաջարկություններ:

*II. Բազային ֆինանսավորմամբ ստացված հիմնական արդյունքները*

1. «Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ» ուղղության հետազոտվող թեմաներից են.

*«Ֆինանսական ճգնաժամի բացասական ազդեցությունների նվազեցման միջոցառումների ծրագրի մշակում»* թեմայում (գիտ. դեկ. տ. գ. դ. Վլադիմիր Հարությունյան) տրվել է ճգնաժամերի կանխատեսման մեթոդաբանությունն ըստ առանձին փոփոխականների, որի արդյունքում բացահայտվել են ճգնաժամային իրավիճակների ի հայտ գալու նախանշանները: Հետազոտվել են համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամերի փոխանցման մեխանիզմների մեթոդաբանական հիմքերը, մշակվել է հետճգնաժամային զարգացման ծրագիր:

*«Հանրային ծառայությունների պետական կարգավորման համակարգի կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում»* թեմայում (գիտ. դեկ. տ. գ. թ. Արթուր Թամազյան) ուսումնասիրվել են հանրային ծառայությունների տեսական և մեթոդաբանական հիմքերը, տրվել են հիմնական հասկացությունների շուրջ կիրառական բնույթ ունեցող սահմանումները: Հետազոտվել է ֆրանչայզինգային հարաբերությունների արմատավորման և գնային արտոնագրերի աճուրդի մեթոդները:

*«Ներդրումային գրավչության բարձրացման և ներդրումային գործունեության խթանման ուղիները ՀՀ-ում»* թեմայում (գիտ. դեկ. տ. գ. թ. Գևորգ Կիրակոսյան) մշակվել են հանրապետությունում ներդրումների ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործմանն ուղղված առաջարկությունները, բացահայտվել են ներդրումային միջավայրի բարելավման հիմնական մոտեցումները:

2. *«Տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրները»* ուղղության հետազոտվող թեմաներից են.

*«ՀՀ գյուղատնտեսության արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները»* թեմայում (գիտ. դեկ. տ. գ. դ. Էդուարդ Ղազարյան) մշակվել են գյուղատնտեսական կազմակերպությունների մրցունակության կառավարման և արդյունավետության բարձրացման մեթոդական և հայեցակարգային կոնկրետ մոտեցումներ գործուն համակարգի ներդրման բարենպաստ օրենսդրական և տնտեսական դաշտի ձևավորման, ապահովագրական համակարգի կայացման ուղղությամբ:

*«Լեռնահանքային արդյունաբերության հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը»* թեմայում (գիտ. դեկ. երկր. հանք. գիտ. դոկ. Հրաչիկ Ավագյան) Զանգեզուրի և Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատների օրինակով պարզվել է դրանց աշխատանքի ցածր արդյունավետությունը. թողարկվող խտանյութերը հիմնականում արտահանվում են ցածր գներով: Թերկորգման հետևանքով յուրաքանչյուր տարի պոչամբարներ են թափվում հազարավոր տոննաներով ծանր մետաղներ և թունավոր տարրեր:

3. *«Ծառայությունների ոլորտի զարգացման և սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ»* ուղղության հետազոտվող թեմաներից է *«Հայաստանի ժողովրդագրական իրավիճակի բարելավման ուղիները»* (գիտ. դեկ. տ. գ. թ. Արծվիկ Մինասյան): Թեմայում ուսումնասիրվել է Հայաստանի առկա ժողովրդագրական իրավիճակը, նշվել են այն ուղիներն ու եղանակները, որոնք բարերար ազդեցություն կունենան այդ հիմնախնդիրները լուծող և ժողովրդագրական կայուն զարգացում ապահովող գործընթացի վրա:

4. «Տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն» ուղղության հետազոտվող թեմաներից են.

«Բազմակողմ գիտակցված գործունեության հասարակություն (ԲԳԳՀ). գաղափարը, բնութագրերը, ձևավորման հիմքերը» թեմայում (գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Բենիամին Եղիազարյան) առաջարկվել է այդպիսի բնութագրման հիմք ընդունել ՄՀ հիմնական սուբյեկտի՝ մարդու մտածելու և գործելու բնատուր հատկությունը: Առաջարկվել է մշակել ՄԳԳ կառուցվածքավորման մոտեցումների պաշտոնապես հանձնարարվող մեթոդական ցուցումներ, սահմանել դրանց օգտագործման հսկողություն:

«Հետազոտական և ինովացիոն գործունեության մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանական հիմնահարցերը գիտելիքահենք տնտեսության պայմաններում» թեմայում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Ատոմ Մարգարյան) կատարվել է գիտահետազոտական և ինովացիոն գործունեության արդյունքների մոնիթորինգի և գնահատման միջազգային պրակտիկայում հիմնական մոտեցումների, մոդելների ու ստանդարտների ուսումնասիրություն: Մշակվել է ամբողջական մեթոդաբանություն՝ մտավոր սեփականության և ինովացիոն գործունեության արդյունքների վիճակագրական գնահատման ու հաշվառման վերաբերյալ:

### III. Թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված հիմնական արդյունքները

«Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ու պետական աջակցության համալիր միջոցառումների իրականացումը ՀՀ գյուղատնտեսության ոլորտում» թեմայում (գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Սերգեյ Ղազարյան) մշակվել է հայեցակարգ՝ ՀՀ գյուղատնտեսությունում ապահովագրության և ռիսկերի կառավարման բարելավմանն ուղղված հիմնախնդիրների լուծման վերաբերյալ՝ ընդգրկելով փոքր և միջին ձեռնարկատիրության ու գյուղացիական տնտեսությունների ոլորտները և դրանց զարգացման ուղիները:

«Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ) ՀՀ անդամակցության պարտավորությունների շրջանակներում գյուղատնտեսական գործունեության հարկման և պետական աջակցության հիմնախնդիրները» թեմայում (գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Սամվել Ավետիսյան) ներկայացվել են առաջարկություններ՝ ուղղված գյուղատնտեսությունում կոռպերացիայի խթանմանը, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման մեխանիզմների ներդրմանը, տեղեկատվական համակարգի բարելավմանը, մեծածախ շուկաների համակարգի, տոնավաճառների կազմակերպման ծրագրի իրականացմանը և այլն:

«ՀՀ քաղցրահամ ջրերի ռեսուրսները, պաշարները և կենցաղում ու գյուղատնտեսության մեջ դրանց արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները» թեմայում (գիտ. դեկ.՝ երկր. հանք. գ. դ. Հրաչիկ Ավագյան) գնահատվել են ՀՀ քաղցրահամ ջրերի 20 Վ/կլ-ից ավելի դեբիտով աղբյուրների պաշարները և դրանց կանխատեսումային ռեսուրսները: Բացահայտվել է, որ կենցաղում և գյուղատնտեսության մեջ (ոռոգման բնագավառում) օգտագործվող ջրերի ավելի քան 80%-ը կորստի է մատնվում և չի ծառայում իր նպատակներին: Այս կապակցությամբ արվել են առաջարկություններ:

*«ՀՀ մեքենաշինության զարգացման ուղղությունները և հիմնահարցերը»* թեմայում (գիտ. դեկ. տ. գ. դ. Ավետիք Նազարյան) հիմնավորվել է մեքենաշինության վերականգնման համար ձեռնարկությունների վերակառուցումն ու վերագործարկումը, որոնք կարող են իրագործվել այդ ձեռնարկությունների և արտասահմանյան զարգացած երկրների ֆիրմաների հետ ինտեգրացման, նորամուծության և թողարկվող արտադրանքի արդիականացման միջոցով:

*«Հայաստանի Հանրապետության բնակչության կենսամակարդակի և կյանքի որակի բարձրացման ուղիները»* թեմայում (գիտ. դեկ. տ. գ. դ. Աշոտ Մարկոսյան) բացահայտվել են բնակչության եկամտի կամ սպառման մակարդակի հաշվարկման մեթոդաբանական բարդությունները, տրվել են դրանց հաղթահարման ուղիները, և ներկայացվել է ներկա վիճակը ըստ դեցիլային, քվանտիլային, «աղբատ», «միջին» և «հարուստ» խմբերի:

*«Հայաստանի Հանրապետության բարձրադիր գոտիներում բնակչության զբաղվածության բարելավման հիմնախնդիրները»* թեմայում (գիտ. դեկ. ակադեմիկոս Վլադիմիր Խոջաբեկյան) հիմնավորվել են բնակչության նորմալ շարժունակության, հաղորդակցության, ինչպես նաև գյուղացիական տնտեսությունների կողմից գյուղատնտեսական մթերքների իրացման շուկաների հասանելիության, ինչպես նաև խմբային սեփականությամբ խոշոր ֆերմերային տնտեսություններ կազմավորելու գաղափարի իրագործման հարցերը:

*«ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերում բնօգտագործման և բնապահպանության տնտեսագիտական հիմնախնդիրները»* թեմայում (գիտ. դեկ. աշխ. գ. թ. Էբա Բաբայան) ուսումնասիրված են Վայոց ձորի և Սյունիքի մարզերում արտանետված վնասակար նյութերի, թափոնների շարժը և տեսակարար ցուցանիշները, օդային և ջրային ավազան վնասակար արտանետումների քանակների և դրանց համար վճարների բաշխվածությունը և այլն:

*«Տնտեսության ստվերային մասի կրճատման ուղիները ՀՀ-ում»* թեմայում (գիտ. դեկ. տ. գ. թ. Արթուր Թամազյան) բացահայտվել են ստվերային տնտեսության տեսական ու մեթոդաբանական հիմքերը, ՀՀ-ում մեթոդիկաների գործնական կիրառելիության մակարդակները: Մասնակի մոդիֆիկացված մեթոդի կիրառմամբ հաշվարկվել են ՀՀ-ում ստվերային տնտեսության ծավալները, մշակվել են ստվերայնության կրճատման հիմնական ուղիները:

*«Հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում»* թեմայում (գիտ. դեկ. տ. գ. դ. Վարդան Բոստանջյան) ուսումնասիրվել են հարկային վարչարարության իրականացման կազմակերպական և օրենսդրաիրավական հիմքերը, բացահայտվել են դրա արդյունավետությունը նվազեցնող գործոնները, մշակվել է արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը, վերլուծվել են նաև ցուցանիշների կատարելագործման ուղիները:

#### *IV. Կիրառական մշակումների արդյունքները*

*«Ֆինանսական ճգնաժամի բացասական ազդեցությունների նվազեցման միջոցառումների ծրագրի մշակում»* թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Վլադիմիր Հարությունյան) շրջանակներում առաջարկություններ են արվել ֆինանսատնտեսա-

կան ճգնաժամի բացասական ազդեցությունների նվազեցման, հետճգնաժամային զարգացումների ծրագրի մշակման ուղղությամբ:

*«ՀՀ գյուղատնտեսության արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները»* թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Սերգեյ Ղազարյան) շրջանակներում մշակվել և ներկայացվել են միջոցառումներ՝ ուղղված ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների վերացմանը ՀՀ գյուղատնտեսության ոլորտում:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանի ուսումնասիրությունները և արված առաջարկությունները՝ *«ՀՀ գյուղատնտեսության ոլորտում կոոպերացիայի խթանման, պետական աջակցության ընդլայնման և մեխանիզմների ներդրման»* ուղղությամբ, հաշվի են առնվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակված «Գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թթ. կայուն զարգացման ռազմավարության» և «Հայաստանի Հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների խոշորացման հայեցակարգի» նախագծերում:

2010 թ. Կառավարությանն են հանձնվել երկր. հանր. գիտ. դոկտ. Ն. Ավագյանի *«ՀՀ լեռնահանքային արդյունաբերության հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը»* թեմայով կատարված հետազոտությունների եզրակացություններն ու առաջարկությունները: «Կանխել մեր ընդերքի հարստությունների փոշիացումը», որն առնչվում է Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրում պոչամբարներ թափվող պիրիտ հանքանյութի հետ թափվող և կորստի մատնվող ոսկուն և արծաթին: Վերջիններիս պարունակությունը պիրիտի մեջ կազմում է՝ ոսկունը՝ 1-ից մինչև 30 գ/տ, արծաթինը՝ 400 գ/տ:

ՀՀ քաղցրահամ ջրերի արդյունավետ օգտագործման նպատակով, կորուստները մեղմելու, գյուղատնտեսական մշակաբույսերին խոնավությամբ ապահովելու, սակավաջուր բնակավայրերին խմելու ջրով ապահովելու, տնտեսված ջրերի մի մասը սակավաջուր երկրներին տրամադրումով վաճառելու գործին ուղղված՝ արվել են մի շարք առաջարկություններ:

#### *V. Բնատիտուտի գիտական հրապարակումները*

Բնատիտուտի կողմից հրատարակվել են 7 գիրք և 138 գիտական հոդվածներ (տե՛ս հավելված 4):

#### *VI. Տվյալներ ինստիտուտի ղեկավարության մասին*

Տնօրեն՝ Վլադիմիր Լիպարիտի Հարությունյան  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Փոխտնօրեն՝ Սերգեյ Գառնիկի Ղազարյան  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Գիտական քարտուղար՝ Ալվարդ Թևոսի Զատիկյան  
տնտեսագիտության թեկնածու

E-mail: arakeliankarapet@yahoo, fr, [nasic@sci.am](mailto:nasic@sci.am)

*VII. Տվյալներ կադրերի վերաբերյալ*

- ա) մինչև 35 տարեկան երկու տղամարդ գիտաշխատող զբաղեցրել է ղեկավար պաշտոն,
- բ) հաշվետու տարում ընդունվել են 13 երիտասարդ մասնագետներ, այդ թվում՝ 3 կին, և ազատվել են երկու տղամարդ,
- գ) մինչև 35 տարեկան գիտաշխատողների թվաքանակը կազմել է 50, 35-ից 60 տարեկան՝ 26, և 60 տարեկանից բարձր՝ 25:

*VIII. Հաշվետու տարում պաշտպանված դոկտորական և թեկնածուական թեզերի քանակը*

- դոկտորական՝ 1
- թեկնածուական՝ 32

*IX. Տեղեկություններ հաշվետու տարում պատվավոր կոչումների և պարգևատրումների արժանացած գիտնականների մասին*

Սերգեյ Գառնիկի Ղազարյանը պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ վաստակագրով, նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական նվաճումների համար» ոսկե մեդալով:

*X. Գիտության և կրթության ոլորտում համագործակցությունը ՀՀ բուհերի և այլ կազմակերպությունների հետ, համատեղողների թվաքանակը, համատեղ հրապարակումներ յուրաքանչյուր կազմակերպության հետ*

Ինստիտուտը համագործակցել է Երևանի պետական, Հայաստանի պետական տնտեսագիտական, Հայաստանի պետական ճարտարագիտական, Ան. Շիրակացի միջազգային հարաբերությունների համալսարանների, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի հետ:

Համատեղողների թվաքանակը՝ 30:

Համատեղ հրապարակումներ.

*ՀՊՃՀ-ի հետ*

Սարինյան Ռ. Ն. Հարությունյան Վ. Լ., Աղայան Ս. Կ., «Հայ տնտեսագետներ (գիտակենսագրական ուրվագծեր)», Եր., «Գիտություն», 2010, 336 էջ:

*Ան. Շիրակացի միջազգային հարաբերությունների համալսարանի հետ*

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» (գիտական հոդվածների ժողովածուներ), Եր., 2010, 1(5), 298 էջ, 2(6), 260 էջ, 3(7), 444 էջ և 4(8), 419 էջ:

*ՀՊՏՀ-ի հետ*

«ՌԴ և ՀՀ տնտեսությունները ճգնաժամի պայմաններում. հիմնախնդիրներ և զարգացման հեռանկարները» (միջազգային գիտական հոդվածների ժողովածու), Եր., 2010,

«Կրթության, գիտության և արտադրության ինտեգրումը որպես տնտեսական աճի ապահովման ռազմավարական ուղղություն» (միջազգային գիտական հոդվածների ժողովածու), Եր., 2010:

Արտոնագրային ցուցանիշներ

№	Կազմակերպությունը	Արտոնագրերի հայտերի թիվը	Դրական որոշումների թիվը	Ստացված արտոնագրերի թիվը
1	2	3	4	5
	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-

2010 թ. թեմատիկայի ամփոփ տվյալները

№	Գիտական հիմնարկներ	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (ո) և ֆինանսավորման ծավալը (X հազ. դրամ.)		
		բազային	թեմատիկ	տնտ. պայմանագիր
1	2	3	4	5
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	1 թեմա 83325,0	9 թեմա 21954,8	-

Ինստիտուտի անցկացրած հանրապետական և միջազգային կոնֆերանսները, սիմպոզիումները և այլ գիտական միջոցառումներ

№	Միջոցառումներ	Անցկացման վայրն ու ժամանակը, կանգնակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում՝ արտ. երկրներից
1	2	3	4	5
1	Միջազգային գիտաժողով «ՌԴ և ՀՀ տնտեսությունները համաշխարհային ճգնաժամի պայմաններում. հիմնախնդիրներ և զարգացման հեռանկարներ»	Ք. Երևան, Նալբանդյան 128, ՀՊՏՀ և ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարան, 25-26 մարտի, 2010	150	15
2	Հանրապետական գիտաժողով «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում»	Ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 26-27 մայիսի, 2010	125	-
3	Միջազգային գիտաժողով «Կրթության, գիտության և արտադրության ինտեգրումը որպես տնտեսական աճի ապահովման ռազմավարական ուղղություն»	Ք. Երևան, Նալբանդյան 128, ՀՊՏՀ և ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 21-22 հոկտեմբերի, 2010	170	20

Աշխատակիցների արտասահմանյան, այդ թվում՝ ԱՊՀ երկրներ կատարած գործուղումները

№	Կազմակերպությունը	Երկիրը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
			գիտաժողովների մասնակցելու համար	համատեղ գիտական աշխատանք կատարելու համար	բանակցությունների և խորհրդատվության համար
1	2	3	4	5	6
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	ՌԲ	1	-	-
		Վրաստան	7	-	-

Արտասահմանյան գիտնականների ընդունելություն ՀՀ ԳԱԱ հիմնարկություններում

№	Կազմակերպությունը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
		գիտաժողովների մասնակցելու համար	համատեղ գիտական աշխատանքներ կատարելու համար	բանակցությունների և խորհրդակցության համար
1	2	3	4	5
	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ	-	-	-

ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների միջազգային դրամաշնորհներ

№	Կազմակերպությունը	Թեմայի անվանումը	Հիմնադրամի կամ այլ կազմակերպության անվանումը	Դրամաշնորհի ժամկետը		Ֆինանսական ծավալը		Թեմայի ղեկավարը
				սկիզբ	ավարտ	ընդհանուր	2010 թ. համար	
1	2	3	3	4	5	6	7	8
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ	-	-	-	-	-	-	-

Կազմակերպության 2010 թ. ֆինանսավորման ծավալները

№	Կազմակերպությունը	Բյուջե, հազ. դրամ	Արտաբյուջե, հազ. դրամ	Դրամաշնորհներ		
				արտարժույթ (\$, €, քրճ.)	արժույթի կուրսը	դրամ
1	2	3	4	5	6	7
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ	123344.60	19432.50	-	-	-

Աղյուսակ 8

ՀՀ ԳԱԱ գիտաշխատողների 2010 թ. հրապարակումների ընդհանուր քանակը

№	Կազմակերպությունը	Մենագրություն, ժողովածու		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք		Հոդվածներ, գեկուցումներ		Թեզիսներ	
		հանրապետական	արտասահմանյան	հանրապետական	արտասահմանյան	հանրապետական	արտասահմանյան	հանրապետական	արտասահմանյան
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	7	-	-	-	136	2	-	-

Աղյուսակ 9

Ասպիրանտների թվաքանակը

Կազմակերպությունը	Ասպիրանտների քանակը (այդ թվում կանայք) առ 01.01.2011 թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրան ընդունվել (այդ թվում կանայք)	
	ա/կ	ա/չկ	ա/կ	ա/չկ
1	2	3	4	5
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	15(0)	23(10)	7(0)	4(3)

Աղյուսակ 10

Տվյալներ մասնագիտացված գիտական խորհրդի վերաբերյալ

Կազմակերպությունը	Ատենախոսության խորհրդի ծածկագիրը	Մասնագիտության ծածկագիրը և անվանումը	Խորհրդի նախագահ, քարտուղար (գիտ.աստիճան, ազգանուն, անուն, հայրանուն)	2010 թ. կազմակերպության ախատակիցների կողմից պաշտպանված ատենախոսությունների թիվը	
				դոկտորական	թեկնածուական
1	2	3	4	5	6
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	008	Ը.00.02. «Տնտեսություն, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» Ը.00.03. «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ»	տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր <i>Հարությունյան Վլադիմիր Լիպարիտի</i> տնտ. գիտ. թեկնածու <i>Մարկոսյան Հայկ Աշոտի</i>	-	4

Աղյուսակ 11

Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներ առ 01.01.2011 թ.

№	Կազմակերպությունը	Աշխատողների ընդհանուր թիվը	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
1	2	3	4	5	6	7	8
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	113	101	1	1	14	56

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2011 Թ. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

*I. Կարևորագույն արդյունքները*

«Հարկման արտերկրյա փորձը և դրա կիրառման հնարավորությունները ՀՀ-ում» թեմայի (գիտ. դեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ. գ. դ. Վ. Հարությունյան) շրջանակներում ուսումնասիրվել են աշխարհում գործող հարկերի բովանդակությունը տնտեսական հարաբերությունների համակարգում, վերլուծվել են հարկային հարաբերությունների ձևավորման առանձնահատկությունները արտերկրում և ՀՀ-ում, հիմնավորել են օֆշորային բիզնեսի հարկման առավելությունները:

Հրատարակվել է Ա. Ա. Հարությունյանի և Ք. Յու. Բաղդասարյանի «Հարկման արտերկրյա առաջավոր մոտեցումները և դրանց կիրառման հնարավորությունները ՀՀ-ում» գիրքը:

Յու. Մ. Մուվարյանի, Վ. Լ. Հարությունյանի, Վ. Ա. Սարգսյանի, Վ. Վ. Խաչատրյանի «Գիտակրթական համակարգը և տնտեսական զարգացումը» գրքում ներկայացվել են տնտեսական զարգացման և գիտակրթական համակարգի ներազդեցության գնահատման մեթոդաբանությունը, կրթության ու գիտության, ՀՀ տնտեսական զարգացման համակարգի փոխադարձ կապը:

Ռ. Ն. Սարիկյանի, Լ. Կ. Հարությունյանի «Էջեր հայ տնտեսագիտական մտքի պատմությունից» աշխատության մեջ լուսաբանվել են XX դարասկզբի հայ հասարակական և տնտեսագիտական մտքի հայտնի ներկայացուցիչների հայացքները: Ուրվագծվել են նոր տիրույթներ, ընդլայնվել են հայ տնտեսագիտական մտքի առնչությունները համաշխարհային տնտեսագիտական մտքի հետ:

Հ. Ս. Ավագյանի «Լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունների զարգացման ուղղություններն ու հեռանկարները ՀՀ-ում» գրքում նշվել է, որ Հայաստանում թողարկվում են միայն կիսաարտադրանքներ՝ մետաղական օգտակար հանածոների խտանյութեր, որոնց մեծ մասը էժան գներով վաճառվում են արտասահմանյան երկրներին: Խտանյութեր անցած հարակից տարրերը չեն գնահատվում, ինչի հետևանքով էլ լեռնահանքային ձեռնարկությունները կրում են զգալի վնասներ: Հիմնավորվել է մետալուրգիական գործարաններ ունենալու անհրաժեշտությունն ու դրանց արդյունավետությունը:

*II. Բազային ֆինանսավորմամբ ստացված հիմնական արդյունքները*

1. «Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ» ուղղության հետազոտվող թեմաներն են.

«Հակաձգնաժամային միջոցառումներն աշխարհում և Հայաստանում» թեմայում (գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Վլադիմիր Հարությունյան), վերլուծելով «պարտքային ձգնաժամի» առաջացման հնարավոր սցենարները, ներկայացվել է առանձին

տարածաշրջանների տնտեսությունների անկայունության հավանական ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա:

*«Հարկման արտերկրյա փորձը և դրա կիրառման հնարավորությունները ՀՀ-ում»* թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Վլադիմիր Հարությունյան) շրջանակներում ընդհանրացված ձևով ներկայացվել են տարբեր երկրներում ձևավորված հարկային համակարգերի առանձնահատկությունները և ՀՀ-ում հարկային ռազմավարության մշակման ուղիները:

*«ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների բարելավման հիմնախնդիրները ֆինանսական ճգնաժամի պայմաններում»* թեմայում (գիտ. դեկ. տ. գ. թ. Վիլեն Խաչատրյան) կարևորվել է կանխարգելող տնտեսական քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը՝ հիմնված տնտեսական զսպողական քաղաքականության սկզբունքների վրա:

2. *«Տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրները»* ուղղության հետազոտվող թեմաներն են.

*«ՀՀ գյուղատնտեսության արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները»* թեմայում (գիտ. դեկ. տ.գ.դ. Էդուարդ Ղազարյան) ուսումնասիրվել են գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման հիմնահարցերը: Ներկայացվել է վերամշակող ձեռնարկությունների հայեցակարգը, ուսումնասիրվել են ազատ տնտեսական գոտու ստեղծման անհրաժեշտությունը ՀՀ-ում, վերլուծվել է երկրի պարենային անկախության մակարդակը:

*«ՀՀ լեռնահանքային արդյունաբերության հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը»* թեմայում (գիտ. դեկ. երկրաբանահանքաբանական գ. դ. Հրաչիկ Ավագյան) հետազոտվել են Սոթքի և Մեղրաձորի ոսկեհանքերի շահագործման հետևանքով միջավայր թափված ծանր մետաղների և թունահարույց տարրերի քանակները. տրվել են վերջիններիս վտանգավոր ազդեցության գնահատականները:

*«Հայ-թուրքական առևտրատնտեսական կապերը և հնարավոր հեռանկարային զարգացումները»* թեմայի (գիտ. դեկ. տ.գ.դ. Թորոս Թորոսյան) շրջանակներում ուսումնասիրվել են երկու երկրների միջև արտաքին առևտրի համակարգում հիմնական թերությունները, քննարկվել են Եվրամիության ինտեգրման հետ առնչվող հարցերը և հայ-թուրքական սահմանի վերաբացումից ակնկալվող օգուտներն ու ռիսկերը:

3. *«Մոնիթինգային և ժողովրդագրական զարգացումները ՀՀ-ում»* թեմայի (գիտ. դեկ. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ.գ.դ. Գրիգորի Ղարիբյան) շրջանակներում ուսումնասիրվել են տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամտի, վերջնական սպառման ծախսերի և խնայողությունների փոփոխման միտումները, նախագծվել է ժողովրդագրական զարգացման հիմնախնդիրը:

4. *«Տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն»* ուղղության հետազոտվող թեմաներն են.

*«Բազմակողմ գիտակցված գործունեության հասարակություն (ԲԳԳՀ). Գաղափարը, բնութագրերը, ձևավորման հիմքերը»* թեմայում (գիտ. դեկ. տ. գ. դ. Բենիամին Եղիազարյան) բացահայտվել են ՄՀ ձևավորման հիմք հանդիսացող

պայմանները, աստիճանական զարգացումը և կուտակված գիտելիքի փոխանցումը այլ հանրություններին: Առաջարկվել է ապագա ՄՀ նոր՝ բազմակողմ գիտակցված գործունեության հասարակություն անվանումը:

*«Հետազոտական և ինովացիոն գործունեության պետական կարգավորման ինստիտուցիոնալ և մակրոտնտեսական մեխանիզմների ձևավորումը»* թեմայի (գիտ. դեկ. տ. գ. թ. Ատոմ Մարզարյան) շրջանակներում շեշտը դրվել է ցանցային և կլաստերային կառուցվածքների ձևավորմանը, մակրոտնտեսական և ինստիտուցիոնալ քաղաքականության խրախուսմանը: Ազգային նորամուծային համակարգի զարգացման ծրագրի շրջանակներում տրվել է փոքր ու միջին բիզնեսի պետական աջակցության հայեցակարգը:

*«Արդի հայ տնտեսագիտության տեսություն»* թեմայում (գիտ. դեկ. տ. գ. դ. Ռոբերտ Սարիսյան) ուսումնասիրություններն իրականացվել են հայ տնտեսագիտական մտքի նոր և նորագույն շրջանների շրջանի կտրվածքով:

### **III. Թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված հիմնական արդյունքները**

*«ԳՊԿ-ՀՀԲՀՀ-2011»* մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված *«ՀՀ և Բելառուսի շուկաների սուբյեկտների գործունեության միջազգայնացումը ուղղված երկու երկրների տնտեսական համակարգերում նոր տեխնոլոգիաների ներգրավմանը, ադապտացմանը և ներդրմանը»* գիտական թեմայի իրականացման ընթացքում, համաձայն օրացուցային պլանի, կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. կատարվել է ժամանակակից պայմաններում շուկայի սուբյեկտների գործունեության միջազգայնացման տեսամթոթղական հիմքերի ուսումնասիրություն: Հետազոտության մեթոդաբանությունն ընդգրկում է համակարգային և իրավիճակային մեթոդների համադրման, համեմատական, փորձնական և վիճակագրական, կառուցվածքաբանական վերլուծության, ինդեքսային գնահատումների, մաթեմատիկական մոդելավորման, խաղերի տեսության և էվոլյուցիոն մոդելավորման ու մի շարք այլ մեթոդաբանական մոտեցումներ, հետազոտական այլ հնարքներ ու եղանակներ:

2. Իրականացվել է տեխնոլոգիաների փոխանցման միջազգային շուկայի միտումների վերլուծություն ու այն համադրվել ՀՀ և Բելառուսի պայմանների հետ, առանձնացվել և դասակարգվել են այդ գործընթացի առավել բնորոշ մեխանիզմները:

3. Կատարվել է Հայաստանի Հանրապետության ինովացիոն-տեխնոլոգիական փոխանցման ներուժի վերլուծություն և գնահատում, նշվել են նրա արդյունավետացման առավել ռացիոնալ ուղղությունները:

4. Ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն ոլորտի կարգավորման օրենսդրական խնդիրները, վերլուծվել են համապատասխան օրենսդրական և ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրման միջոցով միջազգային չափանիշներին համապատասխանող մրցակցային քաղաքականության արմատավորման և հակամենաշնորհային օրենսդրության կիրառության ուղիները:

5. Ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության հետազոտական և ինովացիոն ոլորտի քանակական գնահատման մեթոդներն ու ցուցանիշները:

Հրատարակվել է երեք հոդված:

#### ***IV. Կիրառական մշակումների արդյունքները***

«Հարկման արտերկրյա փորձը և դրա կիրառման հնարավորությունները ՀՀ-ում» թեմայի (թեմ. դեկ.՝ տ. գ. դ., պրոֆ. Վ. Լ. Հարությունյան) շրջանակներում գործնականում հիմնավորվել են ստվերային եկամուտների ձևավորման աղբյուրները ՀՀ-ում՝ ըստ հարկ վճարողների առանձին խմբերի և տարածաշրջանների, և դրանց ստոխաստիկ (հավանականային) կախվածությունը հարկերից խուսափելու հնարավորությունից:

2011 թ. կառավարությանն են ներկայացվել երկր. հանք. գիտ. դոկտ. Ն. Ավագյանի «Մետաղական օգտակար հանածոների արդյունավետ օգտագործման ուղղությամբ ընդերքի հարստությունների փոշիացման կանխման ուղիները», «ՀՀ քաղցրահամ ջրերի ռեսուրսները, պաշարները և կենցաղում ու գյուղատնտեսության մեջ դրանց արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները», տնտ. գիտ. դոկ. Ա. Նազարյանի «ՀՀ մեքենաշինության զարգացման հիմնական ուղիները», աշխարհ. գիտ. թեկն. Է. Բարայանի «ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերում բնօգտագործման և բնապահպանության տնտեսագիտական հիմնախնդիրները» գիտական թեմաների շրջանակներում ստացված եզրակացությունները և առաջարկությունները, որոնք օգտակար կարող են լինել ՀՀ-ում իրականացվող հակաձգնաժամային միջոցառումների և նորացվող տնտեսական քաղաքականության համատեքստում:

Հաշվետու ժամանակահատվածում կիրառություն գտած արդյունքներից կարելի է առանձնացնել տնտ. գիտ. դոկտ. Ն. Ծպնեցյանի, Վ. Ազոյանի գիտական ուսումնասիրությունների արդյունքների դրույթների ներառումը ՀՀ նախագահի կողմից արդեն հաստատված «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը», «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» «Հայաստանի Հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների խոշորացման հայեցակարգը» մշակումներում:

#### ***V. Ինստիտուտի գիտական հրապարակումները***

Ինստիտուտի կողմից հրատարակվել են 12 գիրք և 160 գիտական հոդվածներ (տե՛ս հավելված 5):

#### ***VI. Տվյալներ ինստիտուտի մասին***

տնօրեն՝ Վլադիմիր Լիպարիտի Հարությունյան  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր

փոխտնօրեն՝ Ալվարդ Թևոսի Զատիկյան  
տնտեսագիտ. թեկնածու

գիտական քարտուղար՝ *Քրիստինե Յուրիի Բաղդասարյան*  
տնտեսագիտ. թեկնածու

*E-mail info@economics.sci.am*

### *VII. Տվյալներ կադրերի վերաբերյալ*

- ա) մինչև 35 տարեկան երկու տղամարդ գիտաշխատող զբաղեցրել է ղեկավար պաշտոն,
- բ) հաշվետու տարում ընդունվել են 21 երիտասարդ մասնագետներ, այդ թվում՝ 4 կին, և ազատվել են 2 կին,
- գ) մինչև 35 տարեկան գիտաշխատողների թվաքանակը կազմել է 57, 35-ից 60 տարեկան՝ 22, 60-ից բարձր տարիքի 19:

### *VIII. Հաշվետու տարում պաշտպանված դոկտորական և թեկնածուական թեզերի քանակը*

դոկտորական՝ -  
թեկնածուական՝ 9

### *IX. Տեղեկություններ հաշվետու տարում պատվավոր կոչումների և պարգևատրումների արժանացած գիտնականների մասին (ազգանուն, անուն, հայրանուն, պարգևը)*

Հաշվետու տարում կոչումների և պարգևատրումների արժանացած գիտնականներ չկան:

### *X. Գիտության և կրթության ոլորտում համագործակցությունը ՀՀ բուհերի և այլ կազմակերպությունների հետ, համատեղողների թվաքանակը, համատեղ հրատարակումներ յուրաքանչյուր կազմակերպության հետ*

Ինստիտուտը համագործակցել է Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական, Հայաստանի պետական ճարտարագիտական, Անանիա Շիրակացի միջազգային հարաբերությունների համալսարանների, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի հետ:

*«Եվրասիա համագործակցություն հիմնադրամ»-ի հետ*

«Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ Լյու Յորքի «Carnegie Corporation»-ի ֆինանսավորմամբ՝ «Հետձգնաժամային զարգացումները Հայաստանում» թեմայով (կատարողներ՝ տնտեսագիտ. թեկնածուներ Վ. Վ. Խաչատրյան, Հ. Տ. Թերզյան, ասպիրանտ՝ Ա. Ռ. Մակարյան):

*«Բաց հասարակության ինստիտուտ» - Հայաստան*

1. «Ճգնաժամի ազդեցությունը Հայաստանի վրա. սոցիալական ազդեցություն» (կատարողներ՝ տնտեսագիտ. թեկնածու Վ. Վ. Խաչատրյան, կրտսեր գիտ. աշխ. Ա. Ռ. Մակարյան),

2. «Տնտեսական ճգնաժամը և դրա ազդեցությունը Հայաստանի վրա. մակրո-

տնտեսական և սոցիալական ազդեցությունները» (կատարող՝ կրտսեր գիտ. աշխ. Ա. Ռ. Մակարյան):

*Նորվեգիայի միջազգային հարաբերությունների ինստիտուտի հետ.*

Նորվեգիայի կառավարության ֆինանսավորմամբ՝ «ՀՀ գյուղական համայնքների տնային տնտեսությունների ճգնաժամի հաղթահարման ռազմավարությունները և սոցիալական ապահովության համակարգի ծրագրերի դերը կարճաժամկետ և միջնաժամկետ ժամանակահատվածում» (կատարող՝ կրտսեր գիտ. աշխ. Ա. Ռ. Մակարյան)

Համատեղությունների թվաքանակը՝ 56:

Համատեղ հրապարակումներ.

1. Սուվարյան Յու. Մ., Հարությունյան Վ. Լ., Սարգսյան Վ. Ա., Խաչատրյան Վ. Վ., Գիտակրթական համակարգը և տնտեսական զարգացումը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 150 էջ:

*ՀՊՃՀ-ի հետ*

2. Սարինյան Ռ. Ն., Հարությունյան Լ.Կ., Էջեր հայ տնտեսագիտական մտքի պատմությունից, Եր., «Ճարտարագետ» հրատ., 2011, 288 էջ:
3. Սարինյան Ռ. Ն., Արդի հայ տնտեսագիտության տեսություն, գիրք 3, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 192 էջ:

*ՀՊՏՀ-ի հետ*

4. Մաթևոսյան Ա., Ֆինանսական կառավարման հիմնախնդիրները ՀՀ արդյունաբերական կազմակերպություններում, Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2011, 368 էջ:
5. «ՀՀ և ՌԴ տնտեսությունների նորաստեղծական զարգացման հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի հողվածների ժողովածու, Եր., 2011:

*ԵՊՀ-ի հետ*

6. Ղարիբյան Գ., Հակոբջանյան Ա., Բնակչության եկամուտների բաշխման և վերաբաշխման հարաբերությունները Հայաստանի Հանրապետության անցումային տնտեսությունում, Եր., ԵՊՀ հրատ., 2011, 142 էջ:
7. Կապիտալի նախասկզբնական կուտակման, հարստության ու եկամուտների բևեռացման առանձնահատկությունները և կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության անցումային տնտեսությունում, գիտական հետազոտական խմբի ղեկավար՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., գիտության վաստակավոր գործիչ Գ. Ղարիբյան, Եր., ԵՊՀ հրատ., 2011, 84 էջ:

*«Անանիա Շիրակացի» ՄՀՀ,-ի հետ*

8. Габриелян Б., Управление персоналом в организациях, учебное пособие, Ер., ред. УМО «Анания Ширакаци», 2011, 306 с.
9. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» գիտական հողվածների ժողովածուներ (2011 թ.)՝ 1(9) - 334 էջ, 2(10)-310 էջ, 3(11) - 307 էջ, 4(12) -370 էջ:

Արտոնագրային ցուցանիշներ

№	Կազմակերպությունը	Արտոնագրերի հայտերի թիվը	Դրական որոշումների թիվը	Ստացված արտոնագրերի թիվը
1	2	3	4	5
	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ	-	-	-

2011 թ. թեմատիկայի ամփոփ տվյալներ

№	Կազմակերպությունը	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (ո) և ֆինանսավորման ծավալը (X հազ. դր.)		
		բազային	թեմատիկ	տնտ. պայմանագրեր
1	2	3	4	5
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ	1 110221.2	1 2800.0	-

Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային գիտական միջոցառումները

№	Միջոցառումները	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում արտ. երկրներից
1	2	3	4	5
1	Հանրապետական գիտաժողով՝ «Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում»	Ք. Երևան, Գր. Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ, 23-24 հունիսի, 2011, ՏԻ և ՀՊՏՀ	125	-
2	Միջազգային գիտաժողով՝ «ՀՀ և ՌԴ տնտեսությունների նորաստեղծական զարգացման հիմնախնդիրներ»	Աղվերան, 28-30 հունիսի, 2011, ՀՊՏՀ և ՏԻ	50	10
3	Հանրապետական գիտաժողով՝ «Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում»	Ք. Երևան, Գր. Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ, 5-6 դեկտեմբերի, 2011, ՏԻ և ՀՊՏՀ	120	-

Աշխատակիցների արտասահման, այդ թվում՝ ԱՂՀ երկրներ կատարած գործուղումները

№	Կազմակերպությունը	Երկիրը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
			գիտաժողովների մասնակցելու	համատեղ գիտական աշխատանք կատարելու	բանակցությունների և խորհրդակցությունների համար
1	2	3	4	5	6
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ	Ղազախստան	1	-	-
		Գերմանիա	-	-	1
		Նորվեգիա	1	-	-

Արտասահմանյան գիտնականների ընդունելություն ԳԱԱ կազմակերպություններում

№	Կազմակերպությունը	Երկիրը	Ընդունված գիտնականների թվաքանակը		
			գիտաժողովների մասնակցելու	համատեղ գիտական աշխատանք կատարելու	բանակցությունների և խորհրդակցությունների համար
1	2	3	4	5	6
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-

ԳԱԱ գիտական կազմակերպությունների միջազգային դրամաշնորհներ

№	Կազմակերպությունը	Թեմայի անվանումը	Հիմնադրամի կամ կազմակերպության անվանումը	Դրամաշնորհի ժամկետը		Ֆինանսավորման ծավալը (\$, €, դր., քց՝.)		Թեմայի ղեկավարը
				սկիզբ	ավարտ	ընդհանուր	2011 թ. համար	
1	2	3	4	5	6	7	8	9
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ	-	-	-	-	-	-	-

Կազմակերպության 2011 թ. ֆինանսավորման ծավալները

№	Կազմակերպությունը	Բյուջե	Արտաբյուջե	Դրամաշնորհներ		
				արտառժույթ (\$, €, քց՝.)	արժույթի կուրսը	դրամ
1	2	3	4	5	6	7
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	113021.2	9645.1	-	-	-

Գիտաշխատողների 2011 թ. հրապարակումների ընդհանուր քանակը

№	Կազմակերպությունը	Մենագրություն, ժողովածու		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք		Հոդվածներ, գեկուցումներ		Թեզիսներ	
		հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան ՏԻ	11	-	1	-	158	2	-	-

Ասպիրանտների թվաքանակը

Կազմակերպությունը	Ասպիրանտների քանակը (այդ թվում՝ կանայք) առ 01.01.2012 թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում՝ կանայք)	
	ա/կ	ա/չկ	ա/կ	ա/չկ
1	2	3	4	5
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	9 (0)	19 (10)	-	3 (3)

Տվյալներ մասնագիտացված գիտական խորհուրդների վերաբերյալ

Կազմակերպությունը	Ատենախոսության խորհրդի ծածկագիրը	Մասնագիտության ծածկագիրը և անվանումը	Խորհրդի նախագահ, գիտքարտուղար (գիտ. աստիճան, ազգանուն, անուն, հայրանուն)	2011 թ. կազմակերպության աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսությունների թիվը	
				դոկտորական	թեկնածուական
1	2	3	4	5	6
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-	-

Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներն առ 01.01.2012 թ.

№	Կազմակերպությունը	Աշխատողների ընդհանուր թիվը	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
1	2	3	4	5	6	7	8
	ՀՀ ԳԱԱ Մ. քոթանյանի անվան ՏԻ	112	98	2	2	10	61

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2012 Թ. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

*I. Կարևորագույն արդյունքները*

«Հարկման արտերկրյա փորձը և դրա կիրառման հնարավորությունները ՀՀ-ում» թեմայում (գիտ. դեկ. տ. գ. դ. Վլադիմիր Հարությունյան) անուղղակի և ուղղակի հարկերի վերլուծության արդյունքներով հիմնավորվել են հարկային բեռի օպտիմալացման և ստվերային տնտեսության նվազեցման փոխազդեցությունը՝ կանխատեսելով տնտեսվարող սուբյեկտների հարկերի վճարումից խուսափելու վարքագծի դրսևորումը հարկային վարչարարության բարձրացման և բիզնես միջավայրի բարելավման համատեքստում:

Հրատարակվել է Ռ. Սարինյանի և Վ. Հարությունյանի «Նշանավոր տնտեսագետների տողանը (մինչքեյնսյան շրջան)» Գիտակենսագրական ուրվագծեր» գիրքը:

Ս. Ղազարյանի և Է. Ղազարյանի «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և պետական աջակցության համալիր միջոցառումների իրականացումը ՀՀ գյուղատնտեսության ոլորտում» աշխատանքում հստակեցվել են ՓՄՁ սուբյեկտների դասակարգման գործող սկզբունքները, Եվրամիության չափորոշիչներին մոտեցման և ոլորտը բնութագրող ցուցանիշների համադրելիության ապահովման խնդիրները:

Թ. Թորոսյանի խմբագրությամբ լույս տեսած «Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներում» գրքում տրված է մակրոտնտեսական և արտաքին առևտրի բնութագիրը, քննարկված են հայ-թուրքական առևտրատնտեսական կապերը:

Դ. Հարությունյանի «Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշռի կառավարման հիմնախնդիրները» մենագրության մեջ ուսումնասիրվել են երկրի վճարային հաշվեկշռի էությունը և կառուցվածքը, վերլուծվել են դրա կարգավորման սկզբունքների և մեթոդների արդյունավետության բարձրացման հեռանկարները:

Վ. Խաչատրյանի և Ա. Մակարյանի «Ֆինանսատնտեսական ճգնաժամի կարճաժամկետ սոցիալական ազդեցության գնահատականը Հայաստանում» գրքում փորձ է արվել ընդհանրացված ու համառոտ ուսումնասիրելու ՀՀ-ում ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով առաջացած սոցիալական իրավիճակի կարճաժամկետ փոփոխությունները:

*II. Բազային ֆինանսավորմամբ ստացված հիմնական արդյունքները*

1. «Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ» ուղղության հետազոտվող թեմաներն են.

«Հակաճգնաժամային միջոցառումներն աշխարհում և Հայաստանում» թեմայում (գիտ. դեկ. տ. գ. դ. Վլադիմիր Հարությունյան) հիմնավորվել է, որ համաշ-

խարհային տնտեսության զարգացումներն իրենց բացասական ազդեցությունն են թողնում ԱՊՀ և ՀՀ տնտեսությունների զարգացման տեմպերի վրա: Ներկայացվել է հակաճգնաժամային միջոցառումների համալիր ցանկ՝ ուղղված սոցիալական ապահովության համակարգի և մասնավոր հատվածի նախատեսված ծրագրերի ներդրման համար: Հիմնավորվել է առանձին սոցիալական ապահովության ծրագրային փաթեթների մշակումը, դրանց իրագործման համար համապատասխան ենթակառուցվածքների ձևավորումը:

*«Հարկման արտերկրյա փորձը և դրա կիրառման հնարավորությունները ՀՀ-ում»* թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Վլադիմիր Հարությունյան) շրջանակներում հարկման արտերկրյա փորձի վերլուծությամբ հիմնավորվել է, որ ՀՀ տնտեսության զարգացումն ու ինստիտուցիոնալ բարեփոխումների ուշացումը խորացրին ճգնաժամի բացասական հետևանքները և նպաստեցին արտաքին պարտքի ավելացմանը, հարկային վարչարարության վատթարացմանը, տնտեսության մեջ ներքին խզումների խորացմանը, ՀՀ-ում հարկային մուտքերի տեսակարար կշռի նվազեցմանը:

*«Ձեռնարկատիրության արդի հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում»* թեմայում (գիտ. դեկ. տ. գ. թ. Արթուր Թամազյան), հաշվի առնելով ձեռնարկատիրության զարգացման ժամանակակից միտումները, գործարարության միջավայրը բաժանվել է 13 խոշոր մասերի՝ առանձնացնելով այդ միջավայրի սոցիալ-տնտեսական, մակրոտնտեսական, ինստիտուցիոնալ, քաղաքական, օրենսդրաիրավական, արտաքին տնտեսական և այլ բաղադրիչները:

Ձեռնարկատիրությունն իր վրա կրում է բազմաթիվ գործոնների ազդեցությունը, որոնցից հիմնականները կարելի է բաժանել առանձին խմբերի, որոնք ազդում են ոչ միայն գործարարության և միմյանց վրա, այլև արտադրության գործոնների բաշխվածության և անհատների ու ողջ հասարակության վրա:

*«Ծրագրային բյուջետավորման հիմնախնդիրները ՀՀ-ում»* թեմայում (գիտ. դեկ. տ. գ. թ. Գևորգ Կիրակոսյան) մշակվել և ներդրվել է բյուջետային միջոցների բաշխման համակարգ ըստ տնտեսական և սոցիալական կարևոր հիմնախնդիրների լուծմանն ուղղված ճյուղային ոլորտային և գերատեսչական ծրագրերի: Նման խնդրի լուծումը պահանջում է մշակել ծրագրերի և դրանց իրականացման արդյունավետության գնահատման մեխանիզմներ, ինչը հնարավորություն կտա կողմնորոշվել բյուջետային միջոցների բաշխումը պլանավորելու հարցում: Նշվել է, որ բյուջետային ծախսերի կառավարման հիմնական նպատակներն են բյուջետային կարգապահության պահպանումը, ծախսերի բաշխման, ինչպես նաև տեխնիկական (գործառնական) արդյունավետության ապահովումը:

*«ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի բարելավման հիմնախնդիրները՝ հակաճգնաժամային արդյունավետ մեխանիզմների մշակման համատեքստում»* թեմայում (գիտ. դեկ. տ. գ. թ. Վիլեն Խաչատրյան) գնահատական է տրվել իրականացվող սոցիալ-տնտեսական քաղաքականությանը, ինչպես նաև հարցումների միջոցով հիմնավորվել է հակաճգնաժամային արդյունավետ ռազմավարություններ ընտրելու մոտեցումները: Ուսումնասիրվել է տնտեսական ճկունության ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը, և գնահատվել են դրա փոփոխու-

թյան միտումները: ՀՀ տնտեսության համար մշակվել են հակաճգնաժամային և տնտեսական բացասական երևույթները կլանող «ադադրերներ» (կլանիչներ)՝ արդյունավետ մեխանիզմներ՝ համաշխարհային փորձի, դրանց տեղայնացման հնարավոր մոտեցումների և ուղղությունների տեսանկյունից:

2. *«Տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրները»* ուղղության հետազոտվող թեմաներն են.

*«ՀՀ գյուղատնտեսության արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները»* թեմայում (գիտ. դեկ. տ. գ. դ., պրոֆեսոր Ա. Բալայան) ուսումնասիրվել են գյուղատնտեսական արտադրության զարգացման աջակցության հիմնահարցերը՝ հիմնավորելով, որ գյուղացիական տնտեսություններում արդյունավետության բարձրացման ուղին ինտենսիվացման մակարդակի աճն է:

Առաջարկություններ են արվել գյուղատնտեսական գործունեություն իրականացնող տնտեսվարողներին արտոնյալ վարկերի տոկոսադրույքների նպատակային սուբսիդավորման մեխանիզմներ ստեղծելու վերաբերյալ:

Ուսումնասիրվել է գյուղատնտեսության մեջ կոոպերատիվների ձևավորման խթանման և դրանց կարողությունների ուժեղացման հիմնահարցը, հումք արտադրողների ու գյուղատնտեսական մթերք վերամշակողների միջև պայմանագրային հարաբերությունների զարգացման անհրաժեշտությունը:

*«ՀՀ լեռնահանքային արդյունաբերության հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը»* թեմայի (գիտ. դեկ. երկր. հանքաբանական գ. դ. Հրաչիկ Ավագյան) շրջանակներում հետազոտական աշխատանքները կատարվել են 5 ոսկի-բազմամետաղային կազմավորման հանքավայրերի գծով՝ Շահումյանի, Արմանիսի, Ագատեկի, Գլաձորի և Կաքավասարի, ընդ որում՝ դրանցից այժմյան դրությամբ շահագործվում են առաջին երկուսը, իսկ մյուս 3-ը պատրաստվում են շահագործման:

Կատարված հետազոտական աշխատանքների արդյունքով պարզվել է, որ գործող լեռնահանքային ձեռնարկություններն աշխատում են շատ ցածր արդյունավետությամբ: Հաշվարկները ցույց են տալիս, որ նշված ձեռնարկությունների կրած վնասը տարեկան կազմում է սպասվող հասույթի 65-70 %-ը:

Խտանյութերի վաճառքի պարագայում հիմնական օգտակար տարրերը գնահատվում են 53-56 տոկոսի չափով. մյուս հարակից բաղադրիչները, որոնք զուգակցված են հիմնական տարրերին (սելենը, տելուրը, քիամուտը և այլն) չեն գնահատվում և անվճար տրվում են օտար գնորդներին: Օգտակար տարրերի թերկորզման հետևանքով յուրաքանչյուր տարի բնական միջավայր (պոչամբարներ) են թափվում հազարավոր տոննաներով ծանր մետաղներ և թունահարույց տարրեր:

*«Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային ինտեգրման գործընթացները»* թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ., պրոֆեսոր Թորոս Թորոսյան) շրջանակներում վերլուծվել է ՀՀ բնաոչստարածային և մակրոտնտեսական իրավիճակը, տրվել են հանրապետության արտաքին առևտրի զարգացման միտումները, կառուցվածքային տեղաշարժերը, քննարկվել են այդ ոլորտների զարգացման հնարա-

վորությունները սահմանի բացման պարագայում, մշակվել են նաև առաջարկություններ ՀՀ տնտեսական ռիսկերը նվազեցնելու և Թուրքիայի հետ հնարավորինս արդյունավետ համագործակցելու վերաբերյալ:

**3. «Օտարությունների ոլորտի զարգացում և սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ»** ուղղության հետազոտվող թեմաներն են.

*«Էկեկտրոնային ձեռնարկատիրական գործունեության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում»* թեմայի (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Հայկ Մարկոսյան) շրջանակներում հիմնավորվել է ինտերնետից օգտվողների հասկացության հստակ սահմանման կարևորությունը, առաջնահերթ նշանակություն է տրվել ՀՀ տարածքում տեղակայված տվյալների կենտրոնների ստեղծմանը: Հիմնավորվել է, որ Հայաստանում պետական քաղաքականությունը պետք է ուղղված լինի ինտերնետ կապի արագությանն և հուսալիությանը, այսինքն՝ որակի բարձրացմանը:

*«Սոցիալական և ժողովրդագրական զարգացումները ՀՀ-ում»* (գիտ. դեկ. ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, տ. գ. դ. Գրիգորի Ղարիբյան): Հետազոտության արդյունքները վկայում են, որ անցումային 20 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության սոցիալական ծանր իրավիճակը գործազրկություն, աղքատություն, եկամուտների աննախադեպ բևեռացումը, մեծ արտագաղթ և այլն, անդրադարձել են ժողովրդագրական զարգացումների վրա: Առաջնային խնդիրն է հետազոտել 2015 թ. մարդահամարի արդյունքները և բացահայտել վերջին 10 տարիներին ՀՀ ժողովրդագրական զարգացման հիմնական միտումները:

**4. «Տնտեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմության»** ուղղության հետազոտվող թեմաներն են.

*«Ապագա մարդկային հասարակության էության բնութագրումը և ձևավորման մոտեցումները»* (գիտ. դեկ.՝ տ. գ. դ., պրոֆ. Բենիամին Եղիազարյան): Հետազոտությունում հիմնավորվել է, որ ՄՀ հիերարխիկ համակարգում ձևավորվում և գործում են մի շարք կարևորագույն ենթահասարակություններ, որոնց կազմն ու թվաքանակը, ինչպես և էության բնութագրերը զգալիորեն կարող են տարբեր լինել երկու տարածաշրջաններում, հետևաբար հազիվ թե հնարավոր է միջազգային ընդգրկումով ընդհանրական ՄՀ:

Մանրամասնորեն դիտարկվել են գիտական ապահովման համակարգը և դրա զարգացման խնդիրները, մասնավորապես՝ տրվել է տնտեսագիտության (ՏԳ) համակարգի տեսակավորման ցանկ, և նշվել են այդ համակարգի բարեփոխումների մի շարք ուղղություններ:

*«ՀՀ տնտեսության երկարաժամկետ ինտվացիոն-տեխնոլոգիական արդիականացումը ինստիտուցիոնալ տրանսֆորմացիայի պայմաններում»* թեմայում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Ասոմ Մարգարյան) հետազոտվել են վերջին երկու տասնամյակների ընթացքում ՀՀ տնտեսության մեջ կատարված տեխնոլոգիական փոփոխությունները, գնահատվել են կատարված ինստիտուցիոնալ ռեֆորմների ազդեցությունները տնտեսության գիտական, նորարարական և տեխնոլոգիական կառուցվածքների վրա: Կատարվել է ՀՀ տեխնոլոգիական փոխանցման ներուժի

վերլուծություն և գնահատում: Ուսումնասիրվել են ՀՀ-ում ազատ տնտեսական գոտիների ձևավորման ու զարգացման հնարավորությունները: Վերլուծվել են տեխնոլոգիական մշակումների և դրանց առևտրայնացման գործընթացի վրա ինստիտուցիոնալ կառուցվածքների ու ընթացակարգերի երկարաժամկետ ազդեցությունները: Քննարկվել է ՀՀ ապրանքային նշանների շուկայում տիրող իրավիճակը, բացահայտվել են դրա հետ կապված հիմնախնդիրները, և առաջարկվել են համապատասխան լուծումներ:

*«Արդի հայ տնտեսագիտության տեսություն»* թեմայի (գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Ռոբերտ Սարինյան) շրջանակներում փորձ է արվել համառոտ հանրագիտարանական բառարանի սկզբունքով պատկերացում տալ համաշխարհային և հայ տնտեսագիտական մտքի վերաբերյալ:

Հրատարակվել է Ռ. Սարինյանի և Վ. Հարությունյանի *«Նշանավոր տնտեսագետների տողանը (մինչքեյնսյան շրջան). գիտակենսագրական ուրվագծեր»* գիրքը: Աշխատության մեջ ընդգրկված տնտեսագետների գիտակենսագրական ուրվագծերը՝ անձնականացված 75 անունների մեջ, արտացոլում են մինչքեյնսյան տնտեսագիտական մտքի էվոյուցիան:

### *III. Թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված հիմնական արդյունքները*

*«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՀՀ ԲՀՀ»* 2011թ. մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված *«ՀՀ և Բելառուսի շուկաների սուբյեկտների գործունեության միջազգայնացումը՝ ուղղված երկու երկրների տնտեսական համակարգերում նոր տեխնոլոգիաների ներգրավմանը, ադապտացմանը և ներդրմանը»* գիտական թեմայի իրականացման ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. հետազոտվել ու բացահայտվել են տեխնոլոգիաների միջազգային փոխանցման համակարգում շուկայի սուբյեկտների փոխներգործությունների տեսամեթոդական հիմքերը: Հետազոտության մեթոդաբանությունն ընդգրկում է համակարգային և իրավիճակային մեթոդների համադրման, համեմատական, փորձնական և վիճակագրական, կառուցվածքաբանական վերլուծության, ինդեքսային գնահատումների, մաթեմատիկական մոդելավորման, խաղերի տեսության և էվոյուցիոն մոդելավորման ու մի շարք այլ մեթոդաբանական մոտեցումներ, հետազոտական այլ հնարքներ ու եղանակներ:

2. Ուսումնասիրվել և ընդհանրացվել է նոր տեխնոլոգիաների ստեղծման ու փոխանցման (առևտրայնացման) բնագավառում համաշխարհային և հայրենական փորձը, առանձնացվել ու դասակարգվել են այդ գործընթացներին առավել բնորոշ մեխանիզմները:

3. Հետազոտվել և գնահատվել են Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության տեխնոլոգիաների փոխանցման ներուժը ու նրա արդյունավետ իրացման առավել ռացիոնալ ուղղությունները:

4. Ուսումնասիրվել են ՀՀ-ում և Բելառուսում տեխնոլոգիաների փոխանցման քաղաքականության իրականացման պայմանները և գործոնները:

5. Կատարվել է գիտահետազոտական և ինովացիոն գործունեության արդյունքների դիտարկման (մոնիթորինգի) և գնահատման միջազգային պրակտի-

կայում առկա հիմնախնդիրների և այդ ասպարեզում հաստատված հիմնական մոտեցումների, մոդելների ու ստանդարտների ուսումնասիրություն, դրանց համեմատություն ու համադրում, ինչպես նաև այդ ենթատեքստում Հայաստանի Հանրապետության պայմաններում իրականացվող հետազոտական գործունեության արդյունքների գնահատման նկատմամբ համապատասխան մոտեցումների մշակում:

6. Գիտական հետազոտությունների, մտավոր սեփականության օբյեկտների և ինովացիոն գործունեության արդյունքների գնահատման հիմնական տեսական-մեթոդաբանական մոտեցումների հիման վրա առաջարկվել է ՀՀ տնտեսության ձեռնարկատիրական միջավայրի զարգացման համար առավել ընդունելի մեթոդաբանական սկզբունքների ու չափանիշների փաթեթ:

7. Ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն ոլորտի կարգավորման օրենսդրական խնդիրները, վերլուծվել են համապատասխան օրենսդրական և ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրման միջոցով միջազգային չափանիշներին համապատասխանող մրցակցային քաղաքականության արմատավորման և հակամենաշնորհային օրենսդրության կիրառության ուղիները:

8. Ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության հետազոտական և ինովացիոն ոլորտի քանակական գնահատման մեթոդներն ու ցուցանիշները:  
Հրատարակվել է 12 հոդված:

#### *IV. Կիրառական մշակումների արդյունքները*

*«Հարկման արտերկրյա փորձը և դրա կիրառման հնարավորությունները ՀՀ-ում»* թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ., պրոֆ. Վլադիմիր Հարությունյան) շրջանակներում հիմնավորվում է, որ սովերային տնտեսական հարաբերությունների «մեղմացման» պայմաններում տնտեսության պետական կարգավորման լծակների գործադրման արդյունքում հնարավոր է կանխել դրա առաջացման պատճառները և օբյեկտիվորեն գնահատել սովերային տնտեսության սպառնալիքները՝ հասցնելով ՀՆԱ-ի 5-10%-ի (ըստ համաշխարհային ստանդարտի), ինչը կնպաստի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը և գործարարակտիվության աշխուժացմանը:

2012 թ. կառավարությանն են ներկայացվել երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր Հրաչիկ Ավագյանի *«Լեռնահանքային արդյունաբերության հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը»*, *«Բնական ջեոլիտների կիրառման հիմնախնդիրները»* և տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Բենիամին Եղիազարյանի *«ՀՀ-ում ձևավորվելիք ապագա հասարակության էության, անվանումի և հիմնադրույթների պարզորոշմանն ուղղված»* գիտական թեմաների շրջանակներում ստացված եզրակացությունները և առաջարկությունները, որոնք օգտակար կարող են լինել ՀՀ-ում իրականացվող հակաձգնաժամային միջոցառումների և նորացվող տնտեսական քաղաքականության համատեքստում:

*V. Ինստիտուտի գիտական հրատարակումները*

Ինստիտուտի կողմից հրատարակվել են 8 գիրք և 138 գիտական հոդվածներ (տե՛ս հավելված 6):

*VI. Տվյալներ ինստիտուտի ղեկավարության մասին*

Տնօրեն՝ *Վլադիմիր Լիպարիտի Հարությունյան*  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Փոխտնօրեն՝ *Ալվարդ Թևոսի Զատիկյան*  
տնտեսագիտության թեկնածու

Գիտական քարտուղար՝ *Քրիստինե Յուրիի Բաղդասարյան*  
տնտեսագիտության թեկնածու

E-mail: info@economics.sci.am

*VII. Տվյալներ կադրերի վերաբերյալ*

- ա) մինչև 35 տարեկան 4 գիտնական զբաղեցրել է ղեկավար պաշտոն, որոնցից 2-ը՝ կին,
- բ) հաշվետու տարում ընդունվել են 7 երիտասարդ մասնագետներ, այդ թվում՝ 1 կին, և ազատվել է 8 երիտասարդ մասնագետ, որոնցից 3-ը՝ կին,
- գ) մինչև 35 տարեկան գիտաշխատողների թիվը կազմել է 43, 35-ից 60 տարեկան՝ 16, և 60-ից բարձր տարիքի՝ 20:

*VIII. Հաշվետու տարում պաշտպանված դոկտորական և թեկնածուական թեզերի քանակը*

- դոկտորական՝ -
- թեկնածուական՝ 10

*IX. Տեղեկություններ հաշվետու տարում պատվավոր կոչումների և պարգևատրումների արժանացած գիտնականների մասին*

Հաշվետու տարում կոչումների և պարգևատրումների արժանացած գիտնականներ չկան:

*X. Գիտության և կրթության ոլորտում համագործակցությունը ՀՀ բուհերի և այլ կազմակերպությունների հետ, համատեղողների թվաքանակը, համատեղ հրատարակումներ յուրաքանչյուր կազմակերպության հետ*

Ինստիտուտը համագործակցել է Երևանի պետական (6 աշխատակից դասավանդել են), Հայաստանի պետական տնտեսագիտական (7), Հայաստանի

պետական ճարտարագիտական (4), Անանիա Շիրակացի միջազգային հարաբերությունների (2), Հայաստանի ազգային ագրարային (2) համալսարանների հետ:

*«Եվրասիա համագործակցություն հիմնադրամ»-ի հետ*

«Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ Լյու Յորքի «Carnegie Corporation»-ի» ֆինանսավորմամբ «Հետճգնաժամային զարգացումները Հայաստանում» թեմայով (կատարողներ՝ տնտեսագիտ. թեկնածուներ Վ. Վ. Խաչատրյան, Ն. Տ. Թերզյան, ասպիրանտ Ա. Ռ. Մակարյան):

*«Բաց հասարակության ինստիտուտ»-Հայաստան*

«Տնտեսական ճգնաժամը և դրա ազդեցությունը Հայաստանի վրա. մակրոտնտեսական և սոցիալական ազդեցությունները» (կատարող՝ կրտսեր գիտ. աշխ. Ա. Ռ. Մակարյան):

Համատեղողների թվաքանակը՝ 33:

Համատեղ հրատարակումներ

1. *ՀՊՃՀ-ի հետ*

Սարինյան Ռ. Ն. Հարությունյան Վ. Լ., «Նշանավոր տնտեսագետների տողանը (մինչքեյնսյան շրջան). Գիտակենսագրական ուրվագծեր», Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, 280 էջ:

2. *ՀՊՏՀ-ի հետ*

Թորոսյան Թ., Գալոյան Դ., Հովականյան Ն., Կոտիկյան Լ., Սարգսյան Լ., «Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներում», Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, 240 էջ:

3. *ՀԱԱՀ-ի հետ*

Ղազարյան Ս. Գ., Ղազարյան Է. Գ. «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և պետական աջակցության համալիր միջոցառումների իրականացումը ՀՀ գյուղատնտեսության ոլորտում», Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, 176 էջ:

4. *«Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան»* կազմակերպությունից ստացված հետազոտական դրամաշնորհների շրջանակներում՝ «Ֆինանսատնտեսական ճգնաժամի կարճաժամկետ սոցիալական ազդեցության գնահատականը Հայաստանում», Վ. Խաչատրյան, Ա. Մակարյան, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, 184 էջ:

5. *«Անանիա Շիրակացի» ՄՀՀ-ի հետ՝*

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» (գիտական հոդվածների ժողովածուներ), Եր., 2012, 1(13), 306 էջ, 2(14), 377 էջ, 3(15), 304 էջ:

6. 2012 թ. ապրիլին Ա. Մակարյանի և Ա. Զատիկյանի «Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունների հաղթահարման ռազմավարությունները հայկական գյուղական տնային տնտեսություններում» վերնագրով գեկույցը տեղադրվել է Նորվեգական միջազգային հարաբերությունների ինստիտուտի կայքում:

Արտոնագրային ցուցանիշները

№	Կազմակերպությունը	Արտոնագրերի հայտերի թիվը	Դրական որոշումների թիվը	Մտացված արտոնագրերի թիվը
1	2	3	4	5
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-

2012 թ. թեմատիկայի ամփոփ տվյալներ

№	Կազմակերպությունը	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (ո) և ֆինանսավորման ծավալը (X հազ. դր.)			
		նպատակային ֆինանսավորում	բազային ֆինանսավորում	թեմատիկ ֆինանսավորում	տնտ. պայմանագրեր
1	2	3	4	5	6
	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ	-	1 10221,2	1 4000,0	-

Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային գիտական միջոցառումները

№	Միջոցառումները	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում՝ արտերկրներից
1	2	3	4	5
1.	Հանրապետական գիտաժողով «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում»	Ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ, ՀՊՏՀ	115	-
2.	Հանրապետական գիտաժողով «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում»	Ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ և ՀՊՏՀ	100	-

Աշխատակիցների արտասահման, այդ թվում՝ ԱՊՀ երկրներ կատարած գործուղումները

№	Կազմակերպությունը	Երկիրը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
			գիտաժողովների և մասնակցելու	համատեղ գիտական աշխատանք կատարելու	բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
1.	Տնտեսագիտության ինստիտուտ	Ղազախստան	1	-	-
		Բելառուս	1	-	-
		Մեծ Բրիտանիա	-	-	1

Արտասահմանյան գիտնականների ընդունելություն կազմակերպությունում

№	Կազմակերպությունը	Երկիրը	Ընդունված գիտնականների թվաքանակը		
			գիտաժողովների մասնակցելու համար	համատեղ գիտական աշխատանք կատարելու համար	բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-

Կազմակերպության միջազգային դրամաշնորհներ

№	Կազմակերպությունը	Թեմայի անվանումը	Հիմնադրամի կամ կազմակերպության անվանումը	Դրամաշնորհի ժամկետը		Ֆինանսավորման ծավալը (\$, €, դր., քց.)		Թեմայի ղեկավարը
				սկիզբ	ավարտ	ընդհանուր	2012 թ. համար	
1	2	3	4	5		6	7	8
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-	-	-	-

Կազմակերպության 2012 թ. ֆինանսավորման ծավալները

№	Կազմակերպությունը	Բյուջե	Արտաբյուջե	Դրամաշնորհներ		
				արտարժույթ (\$, €, քց.)	արժույթի կուրսը	դրամ
1	2	3	4	5	6	7
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	127471,0	4989,1	-	-	-

ԳԱԱ գիտաշխատողների 2012 թ. հրապարակումների ընդհանուր քանակը

№	Կազմակերպությունը	Մենագրություն, ժողովածու		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք		Հոդվածներ, զեկուցումներ		Թեզիսներ	
		հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.
		3	4	5	6	7	8	9	10
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	8	-	-	-	124	10	-	-

Ասպիրանտների թվաքանակը

№	Կազմակերպությունը	Ասպիրանտների քանակը (այդ թվում՝ կանայք) առ 01.01.2013 թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում՝ կանայք)	
		ա/կ	ա/չկ	ա/կ	ա/չկ
1	2	3	4	5	6
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	9 (1)	14 (7)	2 (1)	3 (2)

Տվյալներ մասնագիտական խորհուրդների վերաբերյալ

№	Կազմակերպությունը	Ատենախոսության խորհրդի ծածկագիրը	Մասնագիտության ծածկագիրը և անվանումը	Խորհրդի նախագահը, գիտքարտուղարը (գիտ. աստիճան, անուն, ազգանուն)	2012 թ. կազմակերպության աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսությունների թիվը	
					դոկտորական	թեկնածուական
1	2	3	4	5	6	7
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-	-

Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներն առ 01.01.2013 թ.

№	Կազմակերպությունը	Աշխատողների ընդհանուր թիվը	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
1	2	3	4	5	6	7	8
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	94	78	1	2	12	46

## *I. Կարևորագույն արդյունքները*

«Հարկման և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում» թեմայում (գիտ. դեկ. ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ. գ. դ. Վ. Հարությունյան) հիմնավորվել են հարկային ներուժի գնահատման մոտեցումները հարկային բեռի օպտիմալացման տեսանկյունից՝ հիմք ընդունելով տնտեսվարող սուբյեկտների՝ հարկերից խուսափելու նվազեցման ուղիները: Հարկային ներուժի վերաբերյալ անհրաժեշտ է իրականացնել նաև խոր և հիմնարար ուսումնասիրություններ՝ հաշվի առնելով տնտեսական, սոցիալական, պատմական և քաղաքական գործոններն ու դրանց դրսևորման առանձնահատկությունները, որոնք կնպաստեն հարկման և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանը ՀՀ-ում:

Հրատարակվել են Յու. Մուվարյանի, Վ. Հարությունյանի, Վ. Սարգսյանի, Վ. Խաչատրյանի «Գիտակրթական համակարգի կառավարման ռազմավարությունը», Վ. Հարությունյանի գիտ. խմբ. «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտ. հետազոծի և ապագայի ուրվագծեր, արդի հիմնահարցեր», Ռ. Սարինյանի «Հայ տնտեսագիտական մտքի հիմնական հոսանքները» գրքերը: Հ. Ավագյանի «ՀՀ լեռնահանքային արդյունաբերության հանքահարքստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը» մենագրությունում քննարկվել են շահագործվող (և շահագործման պատրաստվող) հանքավայրերում օգտակար տարրերի կորզումների և շրջակա միջավայր թափվող ծանր մետաղների հետ կապված հիմնախնդիրները: Ա. Բայադյանի «ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» աշխատությունում ուսումնասիրված են գյուղատնտեսության ոլորտում վերամշակվող հումքի մթերման արդյունաբերական կազմակերպությունների և ինտեգրացիոն հարաբերությունների, արդյունաբերության զարգացման և բարելավման հիմնական ուղիները: Դ. Հարությունյանի «Վճարային հաշվեկշռի պետական կարգավորման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» մենագրությունում քննարկվում են մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունը երկրի վճարային հաշվեկշռի վրա և հավասարակշռելու ժամանակակից մեթոդների առավելություններն ու խոցելի կողմերը:

## *II. Բազային ֆինանսավորմամբ ստացված հիմնական արդյունքները*

1. «Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ» ուղղության հետազոտվող թեմաներն են.

1) «Հակաճգնաժամային միջոցառումներն աշխարհում և Հայաստանում» թեմայում (գիտ. դեկ. ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, տ. գ. դ. Վ. Հարությունյան) բացա-

հայտվել է, որ համաշխարհային տնտեսության մեջ իրականացած և այժմ էլ դեռևս իրականացվող հակաճգնաժամային միջոցառումները տվել են որոշակի արդյունքներ, սակայն առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք, այնուամենայնիվ, կարող են ռիսկային լինել համաշխարհային տնտեսության համար և իրենց բացասական ազդեցությունը թողնել զարգացող ու փոքր բաց տնտեսություն ունեցող երկրների վրա:

Բացահայտվել է նաև, որ ԱՄՆ-ի տնտեսության մեջ ահագնացող պարտքային դեֆոլտի վտանգը և դրա արդեն իսկ նկատելի բացասական ազդեցությունը, ԵՄ-ում պետական պարտքերի աճը և, հատկապես, ՌԴ տնտեսությունում տեղի ունեցող աճի տեմպերի դանդաղեցումն իրենց բացասական ազդեցությունը կթողնեն ՀՀ տնտեսության զարգացման տեմպերի վրա: Այդ իսկ պատճառով կարևորվել են ՀՀ-ում կառավարության կողմից որդեգրված ծրագրային դրույթների և գերակայությունների իրականացումը, ինչպես նաև դրանց ճիշտ և ժամանակին հակապարբերաշրջանային ուղղվածություն տալու հանգամանքը՝ սոցիալական ապահովության ծրագրերի մշակման, տնտեսական ցնցումների և ճգնաժամերի սոցիալական բացասական ազդեցության չեզոքացմանն ուղղված լինելու համատեքստում:

2) *«Հարկման և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում»* թեմայի (գիտ. դեկ. ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ. գ. դ. Վ. Հարությունյան) շրջանակներում վերլուծվել են պետության սուբյեկտների հարկային ներուժի գնահատման ժամանակակից մեթոդները, ինչպես նաև առանձնացվել են դրանց մեթոդաբանական մշակման յուրովի մոտեցումները՝ հարկային եկամուտների օպտիմալացման և հարկային վարչարարության բարելավման տեսանկյունից: Գնահատելով հարկային ներուժի վրա ազդող գործոնների համակարգը՝ ներկայացվել են հարկային ներուժի դինամիկայի և բաշխման առանձնահատկությունները:

3) *«ձեռնարկատիրության արդի հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում»* թեմայում (գիտ. դեկ. տ. գ. թ. Ա. Թամազյան) ուսումնասիրվել են Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության արտաքին միջավայրը ձևավորող հիմնական գործոնները, կատարվել է դրանց մանրամասն վերլուծություն, քննարկվել են ձեռնարկատիրության տարածաշրջանային ինտեգրացիայի, օրենսդրական, տեղեկատվական ապահովվածության և պետական կարգավորման կատարելագործման հիմնահարցերը, քննադատական վերլուծության են ենթարկվել ինովացիաների և վենչուրային ձեռնարկատիրության կարգավորման ծրագրային և օրենսդրական հիմքերը Հայաստանում՝ մշակելով այս խնդիրների լուծման ուղիներ և միջոցառումներ: Ուսումնասիրությունների ընթացքում պարզվել է, որ ՀՀ-ում ներքին շուկայի տարողունակությունը, հատկապես վերամշակման բարձր մակարդակ պահանջող ապրանքների գծով, շարունակում է մնալ ցածր մակարդակի վրա: Ներկայումս տեղեկատվական տեխնոլոգիաներին հատկացվող մեծ դերն ավելի շատ պայմանավորված է որոշակի ներուժի առկայությամբ, քան թե դրա իրական օգտագործմամբ, ձեռնարկատիրության տեղեկատվական ապահովվածությունը գտնվում է բավականին ցածր

մակարդակի վրա, ինչը թույլ չի տալիս ձեռնարկատերերին ժամանակին և ճկուն կերպով արձագանքել շուկայի տարբեր ազդակներին և համարժեք ձևով ճշգրտել իրենց ձեռնարկությունների զարգացման ռազմավարությունն ու մարտավարությունը:

4) «*Հարկային բեռի գնահատման հիմնահարցերը և հավասարաչափ բաշխման խնդիրները ՀՀ-ում*» թեմայում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Գ. Կիրակոսյան) գնահատվել է հարկային համակարգի դերը տնտեսության զարգացման գործում, բացահայտվել են հարկային քաղաքականության առանձնահատկությունները զարգացող և զարգացած տնտեսությունների պայմաններում, ուսումնասիրվել է հարկային բեռի տնտեսագիտական բովանդակությունը, քննարկվել են դրա բաշխման խնդիրները, և գնահատվել է ազդեցությունը տնտեսության վրա, վերլուծության են ենթարկվել պետական եկամուտների ձևավորման և դրանց հավաքագրման խնդիրները, ինչպես նաև հարկային մոտրքերի ապահովման տնտեսական նախադրյալները, ուսումնասիրվել են ՀՀ-ում հարկային բեռի բաշխման առանձնահատկությունները, դրա վրա ազդող գործոնները, հարկային համակարգի գործունեությունը կանոնակարգող օրենսդրական դաշտը, բացահայտվել են դրա բացթողումները և թերությունները, քննարկվել են հարկային բեռի հավասարաչափ բաշխման խնդիրը և դրա լուծման ընդհանուր մոտեցումները, դիտարկվել են հարկային բեռի գնահատման եղանակները, իրականացվել է տարբեր երկրների կտրվածքով հարկային բեռի մակարդակի համեմատական վերլուծություն:

5) «*ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի բարելավման հիմնախնդիրները՝ հակաճգնաժամային արդյունավետ մեխանիզմների մշակման համատեքստում*» թեմայում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ., դոցենտ Վ. Խաչատրյան) բացահայտվել են Հայաստանի տնտեսական ներուժն ու ճկունությունն (դիմացկունություն) ավելացնելու քաղաքականությանն ուղղված մոտեցումներ և մեխանիզմներ: Հարցումների արդյունքների վերլուծության շնորհիվ գնահատական է տրվել ՀՀ-ում իրականացված սոցիալ-տնտեսական քաղաքականության, ինչպես նաև տնային տնտեսությունների կողմից հակաճգնաժամային արդյունավետ ռազմավարությունների ընտրությանը:

Հիմնավորվել են ՀՀ-ում ՓՄՁ-ների կողմից ճգնաժամի հաղթահարման մրցունակ ռազմավարությունների մշակման անհրաժեշտությունը, մրցակցային առավելությունների կատարելագործմանն ուղղված քաղաքականության շարունակականության ապահովումը, ինչպես նաև Հայաստանի տնտեսական քաղաքականության հիմնական վեկտորին դեպի Ասիա ուղղվածություն տալու և Մաքսային միության շրջանակներում առավել մրցունակ դիրք գրավելու տնտեսական հնարավորությունները:

2. «*Տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրները*» ուղղության հետազոտվող թեմաներն են.

1) «*ՀՀ ագրարային ոլորտի արտադրական գործընթացների տնտեսվարման ձևերի կարգավորման հիմնախնդիրների լուծման ուղիները*» թեմայում (գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Ա. Բայադյան) ուսումնասիրվել են գյուղատնտեսական կոոպե-

րատիվների ձևավորման սկզբունքները, կարգավորման խնդիրները, գործող կո-  
ռապերատիվների գործունեությունը, ուղղվածությունը, կազմավորմանը խոչըն-  
դոտող գործոնները, հաղթահարման հնարավորությունները: Մանրամասն  
վերլուծության է ենթարկվել կոռապերատիվների զարգացմանն ուղղված աջակ-  
ցությունը, որի շնորհիվ այժմ գործում են 148 գյուղացիական կոռապերատիվներ,  
որոնց նպատակը արտադրության զարգացման խթանումն է:

Արվել են մի շարք առաջարկություններ համայնքների տնտեսական զար-  
գացմանն ուղղված աջակցությունների ապահովման, սուբսիդավորման միջոցով  
մատչելի վարկավորման, խորհրդատվության խորացման, մարքեթինգի զար-  
գացման վերաբերյալ:

2) *«Լեռնահանքային արդյունաբերության հանքահարստացման թափոնների  
և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը»* թեմայում (գիտ. դեկ.՝ երկր.  
հանք. գ. դ. Չ. Ավագյան) ներգրավվել են 10 մետաղական օգտակար հանածոների  
հանքավայրեր և հանքավայրերի խմբեր, որոնցից 7-ը այժմ շահագործվում են,  
իսկ 3-ը պատրաստվում են շահագործման:

Այժմ շահագործվող հանքավայրերից թողարկվում են միայն կիսաարտադ-  
րանքներ՝ մետաղների խտանյութեր, որոնց գերակշիռ մասը, մետալուրգիական  
գործարաններ չունենալու պատճառով, վաճառվում է արտասահմանյան երկրնե-  
րին էժան գներով:

Խտանյութերի արտադրության գործընթացներում ուշադրության են արժա-  
նացվում միայն ու միայն հիմնական մետաղները, որոնք էլ հանքաքարերից  
խտանյութերի մեջ կորզվում են շատ ցածր տոկոսներով՝ հիմնականում 60-70,  
բացառիկ դեպքերում՝ 80: Այդպիսի թերկորզման հետևանքով էլ բնական միջա-  
վայր (պոչամբարներ) են թափվում հարյուրավոր ու հազարավոր տոննաներով  
ծանր մետաղներ և թունահարույց հատկություններով տարրեր, որոնք ստեղծում  
են էկոլոգիական աղետով սպառնացող միջավայր:

3) *«ՀՀ տարածաշրջանային ինտեգրման գործընթացները (Հայաստանի Հան-  
րապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև առևտրատնտե-  
սական կապերի գնահատականը և հետագա զարգացման միտումները)»* թեմայի  
(գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Թ. Թորոսյան) շրջանակներում ներկայացվել են Իրանի Իսլա-  
մական Հանրապետության (ԻԻՀ) բնառեսուրսային կարողությունները, տրվել է  
դրանց տնտեսական գնահատումը արտաքին առևտրի զարգացման տեսանկյու-  
նից:

Հատուկ ուշադրություն է դարձվել ԻԻՀ մակրոտնտեսական ցուցանիշների  
փոփոխության միտումների բացահայտման վրա վերջին 10 տարվա կտրված-  
քով առանձնացնելով երկրի մակրոտնտեսական իրավիճակը մինչև միջազգա-  
յին կառույցների կողմից տնտեսական պատժամիջոցների կիրառումը և դրանից  
հետո:

Ուսումնասիրվել է ԻԻՀ ներդրումային միջավայրը, հետազոտվել է օտար-  
երկրյա ներդրումների շարժը, դրանց կառուցվածքը երկրների կտրվածքով: Վեր-  
լուծվել է ԻԻՀ արտաքին առևտուրն աշխարհի տարբեր երկրների հետ: Ընդ  
որում՝ արտաքին առևտուրը դիտարկվել է նաև ապրանքային կառուցվածքի

կտրվածքով: Յույց են տրվել ԻԻՀ տնտեսության այն ոլորտները, որոնք արտահանման տեսանկյունից ունեն բացահայտված համեմատական առավելություններ:

Ուսումնասիրվել են նաև բնակչության և աշխատանքային ռեսուրսների միգրացիոն փոփոխությունները, որոնք հատկապես դրսևորվել են ԻԻՀ-ից արտահոսքի տեսքով որպես հետևանք միջազգային կառույցների կողմից տնտեսական պատժամիջոցների կիրառման:

**3. «Օտարությունների ոլորտի զարգացում և սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ»** ուղղության հետազոտվող թեմաներն են.

1) *«Էլեկտրոնային պետության և տեղեկատվական հասարակության ձևավորման տնտեսական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում»* թեմայում (գիտ. դեկ. տ. գ. թ. Ն. Մարկոսյան) ուսումնասիրվել են տեղեկատվական հասարակության զարգացման և էլեկտրոնային պետության ձևավորման հայեցակարգային մոտեցումները և սկզբունքները, դրա հիմքում ընկած օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Վերլուծվել է տեղեկատվական հասարակության և էլեկտրոնային պետության հասկացության և բովանդակության ընդգրկման շրջանակը և արտերկրյա առաջադեմ փորձը: Տրվել է նախորդ դարի 60-ական թվականներից ձևավորված հասարակական հարաբերությունների սկզբունքներն նոր հայեցակարգ, որը բնութագրվում է որպես տեղեկատվական հասարակություն: Էլեկտրոնային պետությունը ներկայացվել է որպես տեղեկատվական հասարակության զարգացման նոր փուլ և մակարդակ, որը հնարավորություն է տալիս ոչ միայն բարձրացնել պետական կառավարման համակարգի արդյունավետությունը, այլև նոր հնարավորություններ է ընձեռում տնտեսական գործունեության զարգացման և միջազգայնացման համար:

2) *«Սոցիալական և ժողովրդագրական անվտանգության ապահովման նախադրյալները ՀՀ-ում»* թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Թ. Մանասերյան) շրջանակներում ուսումնասիրվել են անհատ-ընտանիք-հասարակություն-պետություն կապը և դրա էվոլյուցիան անկախության տարիներին, բացահայտվել են բնակչության կենսամակարդակի վրա ազդող երևույթներն ու գործոնները, դրա բարելավման հնարավոր ուղիները: Վերլուծության են ենթարկվել միգրացիոն գործընթացները Հայաստանում անկախության երկու տասնամյակներում: Ներկայացվել են բնակչության կազմի փոփոխությունները և դրանք ծնող պատճառները: Տնտեսական վերլուծություններով հիմնավորվել են զբաղվածության ավելացման միջոցով աղքատության կրճատման հնարավորությունները:

**4. «Տնտեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմության»** ուղղության հետազոտվող թեմաներն են.

1) *«Կանաչ տրանսֆերտային տնտեսությունների առաջնային զարգացումը որպես հասարակության զարգացման և աղքատության հաղթահարման կարևորագույն ուղիներ»* թեմայում (գիտ. դեկ. տ. գ. դ. Բ. Եղիազարյան) թեմայում հիմնավորվել է, որ «կանաչ տնտեսության» մոդելը ունի մի շարք դրական կողմեր: Աստիճանական անցում կատարելով «կանաչ տնտեսության» մարդկությունը

ստանում է իրական տնտեսական, սոցիալական օգուտներ, որոնք շոշափելի կլինեն ոչ միայն այժմյան սերունդների, այլև ապագա սերունդների կենսագործունեության համար: Շրջակա միջավայրի պահպանությունը դառնում է այս համակարգի հիմնական առանձնահատկություններից մեկը: Առանձնացված են մի քանի դրույթներ.

- «Կանաչ տնտեսությանն» անցումը չի կարող լինել ակնթարթային: Այս գործընթացն ունի աստիճանական բնույթ, պայմանավորված է առաջին հերթին տարբեր երկրների առանձնահատկություններով:

- ՀՀ-ում «կանաչ տնտեսությանն» անցումը պետք է սկսել էներգետիկ, ջրային ռեսուրսների, ձկնաբոլորության, զբոսաշրջության և տրանսպորտային համակարգի ոլորտներից, որոնք համարվում են ՀՀ տնտեսության հենասյուները, և այստեղ ավելի հեշտ կլինի իրականացնել անցումը, քանի որ եկամուտների մեծ մասը կուտակվում է այս ոլորտներում: ՀՀ-ում պետք է հատուկ ուշադրություն դարձնել գյուղատնտեսության կանաչացմանը, որը կնպաստի գյուղական բնակչության զբաղվածության ապահովմանը, աղքատության հաղթահարմանը, և դրանով իսկ կկրճատվի զանգվածային արտագաղթը սահմանային գյուղերից:

- Կարևորվել է գիտահետազոտական աշխատանքների իրականացումը, այսինքն՝ յուրաքանչյուր ոլորտի «կանաչացումից» առաջ հարկավոր է փնտրել և գտնել առավել նպաստավոր ճանապարհները: Մա կնպաստի առավել արդյունավետ ձևով անցում կատարել տնտեսական նոր համակարգին:

- Ուսումնասիրվել է տնտեսության կանաչացման գործում փոքր և միջին բիզնեսի ներգրավվածությունը: ՀՀ-ում հնարավոր է ներդնել Grameen Energy ընկերության փորձը: Այստեղ առանձնացվել է նաև թափոնների օգտագործման բիզնեսը:

2) «*Հայ տնտեսագիտական մտքի հիմնական հոսանքները 19-րդ դարի 70-90-ական թթ.*» թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Ռ. Սարինյան) շրջանակներում լույս է տեսել Ռ. Սարինյանի «Հայ տնտեսագիտական մտքի հիմնական հոսանքները» մենագրությունը: Աշխատության մեջ 19-րդ դարի 70-90-ական թվականների հայ տնտեսագիտական միտքը հետազոտվել է ազատամտական, ազգային-պահպանողական և նարոդնիկական հոսանքների ամբողջության, դրանց հայացքների համակարգը միացնող և բաժանող տիրույթների մեջ, ընդլայնվել են խնդրի գիտական շրջանակների վերաբերյալ պատկերացումները: Հարցերն իրենց վերլուծական դրվածքով բազմաթիվ ընդհանրություններ են գծում արդի տնտեսական փոխակերպության հետ:

### *III. Թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված հիմնական արդյունքները*

1) «ՀՀ և Բելառուսի շուկաների սուբյեկտների գործունեության միջազգայնացումը՝ ուղղված երկու երկրների տնտեսական համակարգերում նոր տեխնոլոգիաների ներգրավմանը, ադապտացման և ներդրմանը» (11ԲԵ-009) ավարտված թեմայի (գիտ. դեկ. տ. գ. թ. Ա. Մարգարյան) շրջանակներում ուսումնասիրվել ու բացահայտվել են տեխնոլոգիաների միջազգային փոխանցման համակարգում

շուկայի սուբյեկտների փոխներգործությունների տեսամթոնողական հիմքերը, հետազոտվել և ընդհանրացվել են նոր տեխնոլոգիաների ստեղծման ու փոխանցման բնագավառում համաշխարհային և հայրենական փորձը, առանձնացվել ու համակարգվել են համաշխարհային տնտեսության մեջ վերջին տասնամյակների ընթացքում ձևավորված միտումներն ու մարտահրավերները, որոնք առաջիկա տասնամյակների ընթացքում պայմանավորելու են ազգային տնտեսությունների նորաստեղծական համակարգերի վարքագիծը, սահմանվել են ՀՀ և ԲՀ գիտության և տեխնոլոգիաների ոլորտներին բնորոշ ուժեղ և թույլ կողմերը, հետազոտվել և գնահատվել են Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության տեխնոլոգիաների փոխանցման ներուժը ու նրա արդյունավետ իրացման առավել նպատակահարմար ուղղությունները, ուսումնասիրվել են ՀՀ-ում և Բելառուսում տեխնոլոգիաների փոխանցման բնագավառում արդյունավետ քաղաքականության իրականացման պայմանները և գործոնները:

Առանձնացվել է տեխնոլոգիաների այն հիմնական շրջանակը, որի գծով Հայաստանի Հանրապետությունը, հաշվի առնելով երկրի ռեսուրսային հնարավորություններն ու սահմանափակումները, առաջիկա երկու տասնամյակների ընթացքում ի գործու է ապահովել նշանակալի զարգացումներ: Այդ համատեքստում փորձ է արվել գնահատել երկրում ստեղծվելիք արտադրատեսակների հիմնական տեխնիկատնտեսական չափորոշիչները և դրանց իրացման շուկաների հնարավոր շրջանակը:

Կատարվել է ՀՀ տնտեսության ձեռնարկատիրական միջավայրի ուսումնասիրություն հիմնական չափանիշ ունենալով գործարար հանրության կողմից նորագույն տեխնոլոգիաներ ստեղծելու կամ արտաքին միջավայրից փոխառելու պատրաստակամությունն ու շահագրգռությունները: Նորաստեղծական ձեռնարկատիրության համատեքստում դիտարկվել են այն հիմնական գործոնները, որոնք խոչընդոտում են նորագույն տեխնոլոգիաների ու բաժրտեխնոլոգիական պրոդուկտների ստեղծմանն ու արմատավորմանը: Մասնավորապես, վերլուծության են ենթարկվել այն հիմնական ինստիտուցիոնալ գործոնները, որոնք նոր տեխնոլոգիաների ստեղծման, ադապտացման ու ներդրման հարցում ունեն համակարգաստեղծ նշանակություն:

Բացահայտվել են տեխնոլոգիական արդիականացման առավել հեռանկարային ուղղությունները, դրանց հիման վրա առաջարկվել է Հայաստանի Հանրապետության տնտեսության նոր տեխնոլոգիական պլատֆորմի նախագիծ՝ ելնելով տնտեսությունը նորաստեղծական տնտեսական աճի պարադիգմի փոխադրելու անհրաժեշտությունից, մշակվել են Հայաստանի Հանրապետության ինովացիոն քաղաքականության և ներքին շուկայում տեխնոլոգիական փոխանցման հիմնական ուղղություններն ու դրանց հիմնական գործիքները:

Հրատարակվել են 30 հոդված և 1 մենագրություն: Բելառուսական կողմի հետ համատեղ նախապատրաստվել ու գիտական ամսագրերում հրատարակվել են 16 համատեղ հոդվածներ, որոնցից 6-ը արտերկրյա գիտական մամուլում:

2) «Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման

*ուղիները Հայաստանի Հանրապետությունում»* թեմատիկ ֆինանսավորմամբ թեմայում (գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Ա. Բայադյան) ուսումնասիրվել են պետական պարտքի և դրա կառավարման ժամանակակից հայեցակարգային մոտեցումները, կառավարման նպատակները, սկզբունքները, ռազմավարությունը և գնահատման մեթոդաբանական խնդիրները, պետական պարտքի հետ կապված ռիսկերն ու դրանց գնահատման եղանակները: Վերլուծվել և համակարգվել են պետական պարտքի կառավարման արտերկրյա փորձը, հետճգնաժամային ժամանակաշրջանում դրա կառավարման անհրաժեշտությունը և մոտեցումները, պետական պարտքի կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման խնդիրները: Ցույց է տրվել, որ ՀՀ պետական պարտքի կառավարման արդյունավետության անհրաժեշտությունը հատկապես սրվել է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներից սկսած, ինչն առավել քան հրատապ է դարձնում փոխառու միջոցների տնտեսապես հիմնավորված աղբյուրների փնտրման և կառավարման մոտեցումների մշակման անհրաժեշտությունը:

#### *IV. Կիրառական մշակումների արդյունքները*

*«Հարկման և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում»* թեմայի (գիտ. դեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ. գ. դ. Վ. Հարությունյան) շրջանակներում մշակվել են հարկային վարչարարության բարելավմանը նպաստող ուղիներ, ինչպես նաև պետության և տնտեսվարող սուբյեկտների հարկային ներուժի գնահատման համալիր մեթոդներ, և առաջարկվել է վերջինիս կարճաժամկետ մոդել՝ ստվերային տնտեսության նվազեցման համատեքստում, ինչը կնպաստի ՀՆԱ-ի 5-10% ավելացմանն ու 1,5-2% ստվերայության կրճատմանը ՀՀ տնտեսական բարեփոխումների արդի փուլում:

2013 թ. կառավարությանն են ներկայացվել երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր Հրաչիկ Ավագյանի *«ՀՀ լեռնահանքային արդյունաբերության հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը»* գիտական թեմայի շրջանակներում ստացված եզրակացությունները և առաջարկությունները, որոնք օգտակար կարող են լինել ՀՀ-ում իրականացվող հակաճգնաժամային միջոցառումների և նորացվող տնտեսական քաղաքականության համատեքստում, ՀՀ լեռնահանքային արդյունաբերության աշխատանքների արդյունավետության բարձրացման, ինչպես նաև շրջակա միջավայրի մաքրության պահպանման գործում:

#### *V. Ինստիտուտի գիտական հրապարակումները*

Ինստիտուտի կողմից հրատարակվել են 13 գիրք և 113 գիտական հոդվածներ (տե՛ս հավելված 7):

#### *Տվյալներ ինստիտուտի ղեկավարության մասին*

Տնօրեն՝ *Վլադիմիր Լիպարիտի Հարությունյան*  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Փոխսնօրեն՝

*Ալվարդ Թևոսի Զատիկյան*  
տնտեսագիտության թեկնածու

Գիտական քարտուղար՝

*Քրիստինե Յուրիի Բաղդասարյան*  
տնտեսագիտության թեկնածու

Ինստիտուտի էլեկտրոնային փոստը՝ E-mail: [info@economics.sci.am](mailto:info@economics.sci.am).

Ինտերնետային կայքը՝ [economics.sci.am](http://economics.sci.am).

#### *VI. Տվյալներ կադրերի վերաբերյալ*

- ա) մինչև 35 տարեկան 4 գիտնական զբաղեցրել է ղեկավար պաշտոն, որոնցից 2-ը՝ կին,
- բ) հաշվետու տարում ընդունվել են 11 երիտասարդ մասնագետներ, այդ թվում՝ 4 կին, և ազատվել են 5 երիտասարդ մասնագետներ, որոնցից 2-ը՝ կին,
- գ) մինչև 35 տարեկան գիտաշխատողների թվաքանակը կազմել է 34, 35-ից 60 տարեկան՝ 20, և 60-ից բարձր՝ 16:

#### *VII. Հաշվետու տարում պաշտպանված դոկտորական և թեկնածուական թեզերի քանակը*

- դոկտորական՝ 1
- թեկնածուական՝ 15

#### *VIII. Տեղեկություններ հաշվետու տարում պատվավոր կոչումների և պարգևատրումների արժանացած գիտնականների մասին*

ՀՀ ԳԱԱ 70-ամյակի կապակցությամբ, գիտության և կրթության բնագավառում մատուցած ակնառու ծառայությունների համար ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Վլադիմիր Հարությունյանը պարգևատրվել է Մովսես Խորենացու անվան մեդալով:

ՀՀ նախագահի հովանու ներքո «Տնտեսագիտություն և իրավագիտություն» ոլորտում իրականացված երիտասարդ գիտնականների մրցույթում Մ. Գոշի անվան մրցանակների են արժանացել ինստիտուտի ավագ գիտաշխատողներ Դ. Հարությունյանը (1-ին կարգի մրցանակ) և Վ. Խաչատրյանը (2-րդ կարգի մրցանակ):

ՀՀ ԳԱԱ, Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության և ՀՀ սփյուռքի նախարարության հետ համատեղ հայտարարված «Լավագույն գիտական աշխատանք» (ՀՀ ԳԱԱ 70-ամյակին նվիրված) երիտասարդ գիտնականների համահայկական մրցանակաբաշխության «Տնտեսագիտություն» անվանակարգում մրցանակների արժանացան ավագ գիտաշխատողներ Դավիթ Հարությունյանը (1-ին) և Վիլեն Խաչատրյանը (2-րդ):

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2013» մրցույթի հաղթող է ճանաչվել ինստիտուտի ավագ

գիտաշխատող Դավիթ Վլադիմիրի Հարությունյանը «Պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով:

*IX. Գիտության և կրթության ոլորտում համագործակցությունը ՀՀ բուհերի և այլ կազմակերպությունների հետ, համատեղողների թվաքանակը, համատեղ հրատարակումներ յուրաքանչյուր կազմակերպության հետ*

Ինստիտուտը համագործակցել է Երևանի պետական (6 աշխատակից դասավանդել են), Հայաստանի պետական տնտեսագիտական (7), Հայաստանի պետական ճարտարագիտական (2), Անանիա Շիրակացի միջազգային հարաբերությունների (1), Հայաստանի ազգային ագրարային (3) համալսարանների հետ:

Ինստիտուտի ավագ գիտաշխատող Վ. Խաչատրյանը համահեղինակ է «Արդյունաբերական զարգացումը Հայաստանում» գեկույցի «Արդյունաբերական զարգացումը Սևծովյան տարածաշրջանում» շրջիկ ցուցահանդեսի կատալոգում:

Ինստիտուտի ասպիրանտ Աննա Մակարյանը նոյեմբերի 4-15-ին մասնակցել է Համաշխարհային բանկի ինստիտուտի և Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից կազմակերպվող «Գործիքներ և քաղաքականություններ ընդգրկուն (ներառական) աճի համար» վերապատրաստման դասընթացների, որը տեղի է ունեցել Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում և ֆինանսավորվել է Ավստրիայի ֆինանսների նախարարության կողմից:

*Համատեղողների թվաքանակը` 38:*

*Համատեղ հրատարակումներ*

1. *ՀՊՃՀ-ի հետ`* Սարինյան Ռ. Ն., Հայ տնտեսագիտական մտքի հիմնական հոսանքները (XIX դարի 70-90-ական թվականներ), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, 224 էջ:
2. *ՀՊՏՀ-ի հետ`*
  - ա) Յու. Մ. Սուվարյան, Վ. Լ. Հարությունյան, Վ. Ա. Սարգսյան, Վ. Վ. Խաչատրյան, Գիտակրթական համակարգի կառավարման ռազմավարությունը Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», հրատ., 2013, 232 էջ:
  - բ) Յու. Սուվարյան, Վ. Միրզոյան, Հանրային կառավարման տեսություն և պատմություն, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, 368 էջ:
3. *«Անանիա Շիրակացի» ՄՀՀ-ի հետ`* «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» (գիտական հոդվածների ժողովածուներ), Եր., 2013, 1(17), 290 էջ, 2(18), 346 էջ, 3(19), 266 էջ:

Արտոնագրային ցուցանիշներ

№	Կազմակերպությունը	Արտոնագրի հայտերի թիվը	Դրական որոշումների թիվը	Ստացված արտոնագրերի թիվը
1	2	3	4	5
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-

2013 թ. թեմատիկայի ամփոփ տվյալներ

№	Կազմակերպությունը	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (ո) և ֆինանսավորման ծավալը (X հազ. դր.)			
		նպատակային ֆինանսավորում	բազային ֆինանսավորում	թեմատիկ ֆինանսավորում	տնտ. պայմանագրեր
1	2	3	4	5	6
	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	1 118357,828	1 4827,000	-

Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային գիտական միջոցառումները

№	Միջոցառումները	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում՝ արտերկրներից
1	2	3	4	5
1.	Հանրապետական գիտաժողով «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում»	Ք. Երևան, Գր. Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ, 24-25 հունիսի, 2013, ՏԻ և ՀՊՏՀ	115	-
2.	Հանրապետական գիտաժողով «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում»	Ք. Երևան, Գր. Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ, 16-17 դեկտեմբերի, 2013, ՏԻ և ՀՊՏՀ	110	-

Աշխատակիցների արտասահման, այդ թվում՝ ԱՊՀ երկրներ կատարած գործուղումները

№	Կազմակերպությունը	Երկիրը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
			գիտաժողովների և մասնակցելու	համատեղ գիտական աշխատանք կատարելու	բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	Բելառուս	-	1	-
		Թուրքմենիա	1	-	-
		Ավստրիա	-	-	1

Աղյուսակ 5

Արտասահմանյան գիտնականների ընդունելություն կազմակերպությունում

№	Կազմակերպությունը	Երկիրը	Ընդունված գիտնականների թվաքանակը		
			գիտաժողովների և մասնակցելու	համատեղ գիտական աշխատանք կատարելու	բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-

Աղյուսակ 6

Կազմակերպության միջազգային դրամաշնորհներ

№	Կազմակերպությունը	Թեմայի անվանումը	Հիմնադրամի կամ կազմակերպության անվանումը	Դրամաշնորհի ժամկետը		Ֆինանսավորման ծավալը (\$, €, դր., քցճ.)		Թեմայի ղեկավարը
				սկիզբ	ավարտ	ընդհանուր	2013 թ. համար	
1	2	3	4	5		6	7	8
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-	-	-	-

Աղյուսակ 7

Կազմակերպության 2013 թ. ֆինանսավորման ծավալները

№	Կազմակերպությունը	Բյուջե	Արտաբյուջե	Դրամաշնորհներ		
				արտաբյուջյի (\$, €, քցճ.)	արժույթի կուրսը	դրամ
1	2	3	4	5	6	7
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	132019,7	7447,000	-	-	-

Աղյուսակ 8

ԳԱԱ գիտաշխատողների 2013 թ. հրապարակումների ընդհանուր քանակը

№	Կազմակերպությունը	Մենագրություն, ժողովածու		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք		Հոդվածներ, զեկուցումներ		Թեզիսներ	
		հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	12	-	-	-	93	20	-	-

Ասպիրանտների թվաքանակը

№	Կազմակերպությունը	Ասպիրանտների քանակը (այդ թվում՝ կանայք) առ 01.01.2014 թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում՝ կանայք)	
		ա/կ	ա/չկ	ա/կ	ա/չկ
1	2	3	4	5	6
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	6 (1)	11 (9)	4 (0)	-

Տվյալներ մասնագիտական խորհուրդների վերաբերյալ

№	Կազմակերպությունը	Ատենախոսության խորհրդի ծածկագիրը	Մասնագիտության ծածկագիրը և անվանումը	Խորհրդի նախագահը, գիտաբարտուղարը (գիտ. աստիճան, անուն, ազգանուն)	2013 թ. կազմակերպության աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսությունների թիվը	
					դոկտորական	թեկնածուական
1	2	3	4	5	6	7
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-	-

Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներն առ 01.01.2014 թ.

№	Կազմակերպությունը	Աշխատողների ընդհանուր թիվը	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
1	2	3	4	5	6	7	8
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	89	72	1	1	12	30

### *I. Կարևորագույն արդյունքները*

«Հարկման և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում» թեմայում (գիտ. դեկ. ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ. գ. դ. Վ. Հարությունյան) գնահատվել են հարկային վարչարարության արդյունավետության մակարդակի բարձրացման համար հարկային բարեփոխումների «արժեքը» և նպատակը՝ հարկային ստուգումների իրականացման գործընթացներում: Խթանող հարկային քաղաքականությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում պետության և հարկ վճարողի միջև: Հիմնավորվել է հարկերի հավաքագրելիության, հարկ վճարողների և հարկային մարմինների փոխազդեցության արդյունքը: Հաշվի է առնվել, որ խոշոր հարկ վճարողների մոտ հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման խնդիրը նպաստում է մրցունակ հարկային համակարգի ձևավորմանը ՀՀ-ում, ինչպես նաև հարկային պարտավորությունների կատարողականությանը:

Հրատարակվել են Յու. Սուվարյանի «Տնտեսություն, գիտություն, կրթություն», Ռ. Մարինյանի «Ուրվագիծ հայ տնտեսագիտական մտքի պատմության» (1-ին և 2-րդ մասեր) գրքերը: Թ. Մանասեթյանի «Տնտեսական անվտանգություն. ռազմավարության ուրվագծեր» մենագրության մեջ վերլուծվել են երկրի տնտեսական անվտանգության ապահովման ռազմավարության հիմնահարցերը՝ ներառյալ ազգային շահերը, պետության դերը համարժեք ռազմավարության մշակման և կիրարկման գործում: Տ. Հարությունյանի «Հարկման և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում» գրքում առաջին անգամ ամբողջական ձևով դիտարկվում են տարբեր երկրներում ձևավորված հարկման և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման հիմնական մոտեցումները, դրանց վերաբերյալ կիրառվող հարկաբյուջետային քաղաքականության առանձնահատկությունները, հարկային բեռի բաշխման և դրանց տեղափոխման առանձնահատկություններն ու թերությունները: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Վ. Հարությունյանի խմբագրությամբ՝ Ա. Զատիկյանի, Ա. Դանիելյանի «Փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության կարգավորման ուղիները ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում» գրքում հետազոտվել են ՓՄՁ-ների գործունեության հայեցակարգային և մեթոդաբանական հիմնախնդիրները, առաջարկվել են հակաճգնաժամային կառավարման արդյունավետության բարձրացման գիտականորեն հիմնավորված կառուցակարգեր, արվել են առաջարկություններ ՓՄՁ-ների գործունեության կառավարման և հմտությունների կատարելագործման արդյունավետության բարձրացման ուղղությունների վերաբերյալ:

## II. Բազային ֆինանսավորմամբ ստացված հիմնական արդյունքները

1. «Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ» ուղղության հետազոտվող թեմաներն են.

1) «Հակաճգնաժամային միջոցառումներն աշխարհում և Հայաստանում» թեմայում (գիտ. դեկ. ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ. գ. դ. Վ. Հարությունյան) բացահայտվել է, որ համաշխարհային տնտեսության մեջ առկա են մի շարք տնտեսական և քաղաքական ռիսկեր, որոնք ազդում են առանձին տարածաշրջանների, ինչպես նաև երկրների տնտեսության վրա:

Համաշխարհային տնտեսությունն առաջիկա տարիներին մինչև 2020 թ. կգարգանա դանդաղ տեմպերով, դեռ ավելին սպասվում են նաև մի շարք բացասական զարգացումներ՝ պայմանավորված Ռուսաստանի Դաշնության դեմ ԵՄ-ի, ԱՄՆ-ի և Ճապոնիայի կողմից Ուկրաինայի հարցում կիրառված պատժամիջոցների հետ:

Մյուս կողմից՝ թերթաքարային նավթի և գազի արդյունահանման և էներգետիկայի բնագավառում տեղի ունեցող հեղափոխության, ինչպես նաև մի շարք արաբական երկրներում առկա պատերազմական իրավիճակի և OPEC-ի կողմից նավթի գների անկման անկառավարելիության արդյունքում աշխարհում նավթի գները կտրուկ անկում են ապրում: Վերջինս կազդի ՌԴ տնտեսության վրա, որի տնտեսական աճը 2014 թ. կկազմի 0.2%, իսկ 2015 թ.՝ 0.5%՝ ըստ ԱՄՀ կանխատեսումների: Սա հանգեցնելու է նաև ՀՀ տնտեսության մեջ աճի տեմպերի անկման և մի շարք բացասական զարգացումների, ինչը կարող է փոխհատուցվել միայն ԵԱՏՄ անդամակցության դրական զարգացումների արդյունքում: Այս համատեքստում չնայած չի խոսվում լուրջ և ահազնացող ճգնաժամային երևույթների մասին, բայց, այնուամենայնիվ, մի շարք տնտեսական ցուցանիշներ կրկնում են 2008-2009 թթ. միտումները, ինչը փաստում է նախաճգնաժամային իրավիճակի, ինչպես նաև դրանց դեմ տարվող հակաճգնաժամային կանխարգելիչ միջոցառումների անհարժեշտության մասին:

2) «Հարկման և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում» թեմայում (գիտ. դեկ. ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ. գ. դ. Վ. Հարությունյան) հաշվարկվել է հարկային վարչարարության ցածր մակարդակը, որը նպաստում է ՀՀ-ում ստվերի առաջացմանը: Ներկայացվել են գործարար միջավայրին խոչընդոտող գործոնները, մասնավորապես՝ հիմնավորվել է հարկային դրույքաչափերի նվազեցման անհրաժեշտությունը ԵՏՄ ինտեգրացիոն գործընթացներում, առաջարկվել է ՀՀ հարկային համակարգում ներդնել հարկային ներդաշնակեցման քաղաքականություն՝ ըստ հարկատեսակների, հարկային դրույքաչափերի, ինչպես նաև վերանայել ՓՄՁ-ների հարկման մեխանիզմները: Թեմայի վերաբերյալ հրատարակվել է մեկ գիրք:

3) «Ձեռնարկատիրության արդի հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» թեմայում (գիտ. դեկ. տ. գ. թ. Ա. Թամազյան) ամփոփված են գիտական հետազոտությունների արդյունքները՝ նվիրված ձեռնարկատիրական գործունեության, ինչպես նաև այդ գործունեության երկու կարևոր բաղադրիչների՝ մրցակցության և ձեռնարկատիրական ռիսկի տեսական և մեթոդաբանա-

կան հիմնախնդիրների լուսաբանմանն ու վերլուծությանը: Քննադատական մոտեցում ցուցաբերելով մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետներին՝ մի շարք հարցերի շուրջ ներկայացվել են նաև մոտեցումներ՝ կապված ձեռնարկատիրության, մրցակցության և ձեռնարկատիրական ռիսկի հետ՝ հիմնարար հասկացությունների սահմանումների և տնտեսական օրենքների ու օրինաչափությունների մեկնաբանության հարցում, ինչպես նաև մշակվել ու առաջարկվել է ձեռնարկատիրական ռիսկի քանակական ու որակական գնահատման ամփոփ մեթոդաբանություն: Թեմայի վերաբերյալ հրատարակվել է մեկ մենագրություն:

4) *«Հարկային բեռի գնահատման հիմնահարցերը և հավասարաչափ բաշխման խնդիրները ՀՀ-ում»* թեմայում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Գ. Կիրակոսյան) քննարկվել են հարկային քաղաքականության մշակման և իրականացման, հարկային վարչարարության կազմակերպման, ինչպես նաև հարկային բեռի արդարացի և հավասարաչափ բաշխման հիմնահարցերը: Ներկայացվել են այն սկզբունքները և հիմնադրույթները, որոնք պետք է ընկած լինեն հարկային համակարգի ձևավորման հիմքում: Վերջին տարիներին ՀՀ-ում իրականացված հարկային փոփոխությունների վերլուծության հիման վրա բացահայտվել են դրանց միտումներն ու առանձնահատկությունները: Գնահատվել է հարկային բեռի ազդեցությունը տնտեսության վրա, և ներկայացվել են դրա հավասարաչափ և արդարացի բաշխման մոտեցումները: Թեմայի վերաբերյալ լույս է տեսել մեկ գիրք:

5) *«ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի բարելավման հիմնախնդիրները՝ հակաճգնաժամային արդյունավետ մեխանիզմների մշակման համատեքստում»* թեմայի (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Վ. Խաչատրյան) շրջանակներում մշակվել է «Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի մակրոտնտեսական ազդեցություն՝ խոցելիություն սկզբնական պայմանների առկայությամբ» հայեցակարգային մոդել: Առաջարկված մոդելի շրջանակում անդրադարձ է կատարվել դեպի ՀՀ իրական հատված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի փոխանցման հինգ մեխանիզմներին՝ արտահանման ապրանքների հիմնական խմբեր, ուղղակի օտարերկրյա ներդրումներ, ընթացիկ պետական կառավարման տրանսֆերտներ, գործուսային եկամուտներ, ընթացիկ մասնավոր տրանսֆերտներ և զբոսաշրջություն: Վերլուծության արդյունքների հիման վրա առաջարկվել է բարձրացնել տնտեսության ճկունության աստիճանը՝ տնտեսական հիմքի բազմազանության ապահովման միջոցով, առաջնությունը տալ թեթև արդյունաբերությանը և այլ աշխատատար, ցածր տեխնոլոգիական ոլորտների զարգացմանը՝ մի շարք սոցիալական խնդիրներ լուծելու նպատակով, խրախուսել և իրականացնել այնպիսի միջոցառումներ որոնք կհանգեցնեն տեղական արտադրանքի սպառման ծավալների աճին, ինչպես նաև նպաստել ցածր տեխնոլոգիական ոլորտներում «արդյունավետություն փնտրող» օտարերկրյա ընկերությունների ներգրավմանը:

2. *«Տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրները»* ուղղության հետազոտվող թեմաներն են.

1) *«ՀՀ ագրարային ոլորտի արտադրական գործընթացների տնտեսվարման*

*ձևերի կարգավորման հիմնախնդիրների լուծման ուղիները»* թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Ա. Բայադյան) շրջանակներում մի քանի տարիների կտրվածքով վերլուծության են ենթարկվել վերամշակող կազմակերպությունների արտադրական կարողությունները և դրանց ենթակառուցվածքների զարգացման հնարավորությունները: Վերլուծության արդյունքները վկայում են, որ աճել է հիմնական գյուղատնտեսական արտադրանքների արտադրությունը, ինչն իր հերթին մեծացնում է վերջիններիս առաջարկը ներքին շուկայում առանձին արտադրանքների համար՝ ստեղծելով արտահանման հնարավորություններ, ինչպես նաև ներմուծվող արտադրանքները փոխարինել հայրենական արտադրանքով, քանի որ Հայաստանն ունի մի շարք ոլորտներում սննդամթերք արտադրող մրցունակ դառնալու ներուժ՝ կապված տարբեր արտադրատեսակների (միրգ, բանջարեղեն, կաթնամթերք, ալկոհոլային խմիչքներ, բուսական թեյեր և այլն) հետ, որոնք ունեն պահանջարկ ԱՊՀ և այլ երկրներում:

Ըստ ուսումնասիրությունների՝ պարզվել է նաև, որ անհրաժեշտ է պետական հովանավորությամբ գործող կազմակերպություններին տալ արտահանման խթանման հետազոտությունների կատարման կարևոր դերը՝ համայնքներում տեղական բիզնեսի զարգացման նպատակով: Հատկապես համայնքային և միջհամայնքային կոոպերացիայի միջոցով փոքր հզորությամբ վերամշակող, մատակարարող և այլ սպասարկումներ իրականացնող կոոպերատիվների և ասոցիացիաների ստեղծումը այսօր խիստ օգտակար է և այժմեական: Գյուղական կոոպերատիվների զարգացման միջոցով օժանդակություն են ստացել անասնապահությամբ զբաղվող տնտեսությունները, կատարվել են բիզնես ներդրումներ և կազմակերպվել են թարմ կաթի հավաքման միավորումներ:

Հանրապետությունում ագրարային ոլորտի կարգավորման գործում կարևոր տեղ ունի նաև օրգանական գյուղատնտեսությունը, որը զարգացնելու համար անհրաժեշտ են.

- պետական ծրագրերում, մասնավորապես՝ ագրարային ոլորտի առաջնային ուղղություններում օրգանական գյուղատնտեսության կայուն դիրքի պահպանում և պետական աջակցության շրջանակներում դրանց ներառում,
- նպատակային վարկերի կիրառմամբ օրգանական գյուղատնտեսության զարգացման խթանում,
- ագրարային ոլորտում իրականացվող վարկային ծրագրերում օրգանական գյուղատնտեսության զարգացման բաղադրիչների նախատեսում և կիրառում,
- օրգանական գյուղատնտեսության արտադրանքի իրացման երաշխավորված մեխանիզմների ստեղծում,
- միջպետական մակարդակով էկոլոգիական գյուղատնտեսության արտադրանքի արտահանման հնարավորությունների ստեղծում:

Անհրաժեշտ է լայնորեն օգտագործել պետական ռեսուրսները, միջազգային դոնոր կազմակերպությունների դրամաշնորհները, իսկ ներգրավված փոխառու միջոցները ուղղել գյուղացիական տնտեսություններին, կոոպերատիվներին տրամադրվելիք վարկային և այլ տիպի ֆինանսավորման հնարավորությունների ընդլայնմանը:

Թեմայի վերաբերյալ լույս է տեսել 7 հոդված:

2) «Հազվագյուտ տարրերն ու հողատարրերը Հայաստանի Հանրապետության հանքավայրերում, դրանց արդյունահանման ու տնտեսական արդյունավետության հիմնախնդիրները» թեմայում (գիտ. դեկ.՝ երկր. հանքաբանական գ. դ. Չ. Ավագյան) հետազոտվել են մետաղական օգտակար հանածոների 34 հանքավայր-հանքաերևակումներ:

Հետազոտության արդյունքներով պարզվել է, որ ՀՀ մետաղական հանքավայրերը հարուստ են ինչպես հազվագյուտ տարրերով, այնպես էլ հազվագյուտ հողատարրային մետաղներով՝ լանտանոիդներով: Վերջիններս, բացառությամբ սկանդիումից, հիմնականում տարածված են երկաթաքարային հանքավայրերում ու հանքաերևակումներում, որոնցից ոչ մեկը դեռևս չի շահագործվում:

Սկանդիում հողատարրային շատ թանկարժեք մետաղը կորզելի քանակներով հայտնաբերված է նաև Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրում, սակայն հանքավայրի շահագործման և հանքահարստացման գործընթացներում այդ շատ թանկարժեք մետաղը չի կորզվում և ամբողջությամբ թափվում է պոչամբարներ՝ թունավորելով բնական միջավայրը և վտանգելով մեր բնակչության կյանքը:

ՀՀ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերում հայտնաբերված են 27 հազվագյուտ տարրեր և 14 հազվագյուտ հողատարրեր:

Շահագործվող և շահագործման պատրաստվող հանքավայրերում առկա 41 հազվագյուտ տարրերի և հողատարրային մետաղների արժեքը (մեկ տարվա կտրվածքով) կազմում է 24 մլրդ 69,99 մլն դոլար, որոնցից 14 հողատարրային մետաղներինը՝ 17 մլրդ 297,7 մլն դոլար: Նշենք, որ նշված հազվագյուտ տարրերի գերակշիռ մասը շահագործվող հանքավայրերում փոշիացվում է (չի կորզվում և թափվում է պոչամբարներ): Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից տարեկան փոշիացման ենթարկվող սկանդիումի քանակը 2013 թ. կազմել է 96,48 տ, որի արժեքը 2011 թ. գներով կազմել է 503,3 մլն դոլար:

Հաշվարկները ցույց են տալիս, որ ՀՀ շահագործվող և շահագործման պատրաստվող հանքավայրերի բարբարոսաբար շահագործման հետևանքով տարեկան ունենում ենք (կունենանք) ավելի քան 31 մլրդ դոլարի կորուստ, և դա էլ այն պարագայում, երբ հաշվի չեն առնվում հիմնական օգտակար տարրերի (պղնձի, մոլիբդենի, ոսկու, արծաթի) թերկորզման հետևանքով տեղի ունեցող կորուստները:

Հետազոտվող թեմայի վերաբերյալ հրատարակվել է մեկ մենագրություն:

3) «Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային ինտեգրման գործընթացները (ՀՀ Մաքսային միություն)» թեմայի (գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Ա. Թավադյան) շրջանակներում ներկայացվել են Մաքսային միությունը Հայաստանի անդամակցության ընձեռած հնարավորություններն ու մարտահրավերները:

Հատուկ ուշադրություն է դարձվել այն հանգամանքին, որ ընդամենը երեք տարվա պատմություն ունեցող Մաքսային միությունը միտում ունի վերածվելու Եվրասիական տնտեսական միության: Այս համատեքստում, տնտեսական

շահերը հաշվի առնելով, Հայաստանը կարող է լինել Մաքսային միությունը ձևավորողների և նախաձեռնողների շարքում, քանի որ այդ շրջանակներում ինտեգրացիային ակտիվ մասնակցությունը, որպես համահիմնադիր, անհամեմատ ավելի նախընտրելի է, քան հետագայում ձևավորված միության պահանջներին արձագանքելը: Մյուս կողմից եվրասիտեգրման գործընթացը ոչ միայն չի հակասում Մաքսային միության շահերին, այլև, հակառակը, կարող է օգնել ավելի լավ իրացնելու երկրների մրցակցային առավելությունները, այդ թվում՝ ԵՄ շուկաներում, և էլ ավելի ուժեղացնել դիրքերը միջազգային ասպարեզում:

Ուսումնասիրվել է նաև ԵՄ-ի և նրա առանձին անդամների հետ տնտեսական և քաղաքական հարաբերությունների ամրապնդման հարցը, որը հնարավոր է հատկապես չօգտագործված հնարավորություններն իրացնելու միջոցով: Ուշադրություն է դարձվել զարգացած և զարգացող երկրների քաղաքական և տնտեսական պայմանների տարբերություններին, ինչը վերջիններին հնարավորություն չի տալիս ոչ միայն իրականացնել իրենց մրցակցային առավելություններն արտաքին շուկաներում, այլև հաջող մրցակցել դրսից եկող սուբսիդավորված ապրանքների և ծառայությունների արհեստականորեն իջեցված գների հետ: Հատուկ ուսումնասիրության առարկա են դարձել այն գործոնները, որոնք որոշում են հետխորհրդային երկրների դերը համաշխարհային տնտեսությունում՝ միջազգային առևտրի փոփոխվող պայմաններում, և որոնք հրատապ են դարձել նոր տնտեսակարգի ձևավորման հարցում:

*3. «Ծառայությունների ոլորտի զարգացում և սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ»* ուղղության հետազոտվող թեմաներից են.

*1) «Էլեկտրոնային կառավարման համակարգի և տեղեկատվական հասարակության զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները ՀՀ-ում»* թեմայում (գիտ. դեկ. տ. գ. թ. Հ. Մարկոսյան) ուսումնասիրվել են էլեկտրոնային ծառայությունների զարգացման ժամանակակից միտումները, հասարակության և պետության տեղեկատվական զարգացման և պատրաստվածության գնահատման հիմնահարցերը, էլեկտրոնային ծառայությունների օգտագործման ինտենսիվության բնութագրերը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ, ըստ էության, գոյություն չունի տեղեկատվական հասարակության կայացվածության գնահատման համընդհանուր ընդունելի մեթոդաբանություն: Որպես այդպիսին կիրառվել է կայացած տեղեկատվական հասարակության պայմաններում տարբեր ինտերնետ ծառայությունների օգտագործման ինտենսիվությունը, ինչը հնարավորություն է տալիս համեմատման միջոցով գնահատել կայացման փուլում գտնվող հասարակության կայացվածությունը: Պարզվել է, որ կայացած հասարակության պայմաններում հանրության շուրջ 61%-ն օգտվում է օնլայն բանկային ծառայություններից, 71%-ը կատարում է օնլայն գնումներ, 25%-ը մասնակցում է բարեգործական ակցիաներին, 67%-ը օգտվում է էլեկտրոնային կառավարման ռեսուրսներից, 27%-ը իշխանության հետ շփումներում օգտագործում է էլեկտրոնային կապի միջոցները, 14%-ը վարում է սեփական էջը, բլոգը կամ կայքը, իսկ 55%-ը մասնակցություն է ցուցաբերել ինտերնետ մեդիա բովանդակության ստեղծմանը: Նախնական ուսումնասիրությունների համաձայն

նշված ցուցանիշների մեծությունը ՀՀ-ում 3-5 անգամ փոքր է, ինչը ցույց է տալիս զարգացման մեծ բացի մասին: Էլեկտրոնային կառավարման պատրաստվածության գնահատման համար կիրառվում են տարբեր չափանիշներ և ցուցանիշներ: Չնայած վերջին տարիներին Հայաստանում էլեկտրոնային կառավարման ներդրման ոլորտում ձեռնարկվել են զգալի քայլեր, Հայաստանը 190 երկրների շարքում էլեկտրոնային կառավարման պատրաստվածության 0.4997 ցուցանիշով գրավում է 94-րդ հորիզոնականը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նույնիսկ հետխորհրդային երկրների շարքում Հայաստանի դիրքերը բավականին թույլ են, քանի որ Հայաստանից ցածր վարկանիշ ունեն այնպիսի երկրները, ինչպիսիք են Ադրբեջանը, Ղրղզստանը, Տաջիկստանը և Թուրքմենիան: Դա նշանակում է, որ այդ քայլերը դեռևս բավարար չեն համաշխարհային մասշտաբով բարձր դիրքեր արձանագրելու համար:

2) «Սոցիալական և ժողովրդագրական անվտանգության ապահովման նախադրյալները ՀՀ-ում» թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Թ. Մանասերյան) շրջանակներում ներկայացվել են Հայաստանում սոցիալական և ժողովրդագրական անվտանգության ապահովման նախադրյալները, որոնց ձևավորումը պայմանավորված է սոցիալական և տնտեսական բարեփոխումների անհրաժեշտությամբ: Ըստ այդմ՝ հաշվի է առնվել բարեփոխումների բովանդակությունը, ինչպես նաև դրանցում առկա հետևյալ գործոնները.

- բնակչության ծերացումը (ՄԱԿ-ի դասակարգմամբ Հայաստանը համարվում է աշխարհի արագ ծերացող երկրներից մեկը: Եթե 1990 թ. ՀՀ-ում 65 և բարձր տարիք ունեցող բնակչության թվաքանակը կազմել է 11%, ապա 2020 թ. այն կկազմի 19,6%, իսկ 2050 թ.՝ 27,9% (աղբյուրը՝ 1998 թ. սեպտեմբերի 15-22-ին Իսրայելում տեղի ունեցած «Կենսաթոշակային բարեփոխումներ» սեմինարի նյութեր),
- սեփականաշնորհման (ներառյալ նաև սոցիալական ոլորտի) նկատմամբ աճող հետաքրքրությունը,
- շուկայի զարգացումը, որն առաջ է բերել աշխատուժի նկատմամբ մեծ ուշադրություն,
- այսպես կոչված «ոչ ֆորմալ ոլորտի» աճը, որն անպաշտպան է թողնում բնակչության մեծ մասին:

Կենսաթոշակային ապահովության համակարգի բարեփոխումներն ուսումնասիրելիս հաշվի են առնվել նշված գործոնները: Կենսաթոշակային ապահովության համակարգի հիմնական խնդիրն է երաշխավորել համարժեք փոխհատուցում այն աշխատողներին, որոնք, ելնելով իրենց տարիքից, եկամուտ ստանալու համար այլևս չեն կարող աշխատել: Կենսաթոշակային համակարգի գործունեությունը կարող է կա՛մ նպաստել, կա՛մ էլ, ընդհակառակը, խոչընդոտել տնտեսության երկարատև զարգացմանը, որն էլ իր հերթին, պայմանավորում է ինչպես աշխատող բնակչության, այնպես էլ թոշակառուների ապագա եկամուտները:

Ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանում գործող կենսաթոշակային ապահովության գործող համակարգը գնահատվում է որպես անար-

դյունավետ և թանկարժեք: Կենսաթոշակների վճարման համար կատարված ծախսերի բարձր մակարդակն առաջ է բերում մտահոգություն, քանի որ այն հանգեցնում է աշխատավարձից կատարվող հատկացումների ավելացման և, համապատասխանաբար, ձգտում թաքցնելու զբաղվածների թվաքանակը: Այսինքն՝ չնայած իրականացվող բարեփոխումներին՝ կենսաթոշակային ապահովության առումով հանրապետությունում իրավիճակը դեռևս մնում է լարված: Հայաստանում միջին կենսաթոշակը կազմում է հանրապետության միջին աշխատավարձի 24%-ը և կենսամիջոցների նվազագույնի, կամ այսպես կոչված սպառողական զամբյուղի ընդամենը 10%-ը:

4. «Տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմության» ուղղության հետազոտվող թեման է «Հայ տնտեսագիտական մտքի արդի ընթացքի ուրվագծեր: Հայ տնտեսագետներ» (գիտ. դեկ. տ. գ. դ. Ռ. Սարինյան), որի շրջանակներում վերջին տասնամյակների ընթացքում պարբերաբար անդրադարձ է կատարվել արդի հայ տնտեսագիտական մտքի կացությանը, «տեսություն» կոչված ակնարկների ձևով ուրվագծվել են կատարվող տեղաշարժերը: Բնականաբար ժամանակի հոսքի մեջ փոխվել են նրանում կատարվող արժարժումների շրջանակները: Սկզբում ավելի շատ, այսպես կոչված, շուկայական տնտեսության «մուտքի» և շարժման ուղղության, ավելի ուշ վրիպումների ու եթե-ների և իրողությունների ու ինքնաճանաչման հարցերն էին: Կատարվող տարընթաց գործընթացները տեղադրվում են հին ու նոր տեսություններում՝ այդպես էլ չամբողջանալով որպես որոշակի համակարգ, մարելով հայացքների բազմազանության ոլորտներում: Որոշումները խճճված են, ինչպես և սրանից երկու տասնամյակ առաջ: Տնտեսական կյանքի արդի կացությունը, նոր տնտեսաձևերի ու գործառույթների ներհոսքը պայմանավորեցին բեկման շրջանին՝ բնորոշ նոր թեմատիկ ոլորտների ուսումնասիրության անհրաժեշտությունը՝ փորձելով հասարակության տնտեսական պահվածքը ընթերցել նորագույն ուղղությունների մեկնություններում: Սակայն տնտեսագիտական միտքը միշտ չէ որ ուղղություն է տալիս տնտեսական տեղաշարժերին, պայմանավորում նրանում կատարվող փոփոխությունները:

Թեմայում վերլուծվող նյութը որոշակի պատկերացում է տալիս նորագույն շրջանի հայ տնտեսագիտական մտքի՝ այդ դեռևս չուսումնասիրված ոլորտի դիտակետերի, նոր որոշումների, սահմանազատումների ու շարժման ընթացքի վերաբերյալ: Թեմայի վերաբերյալ հրատարակվել է երկու գիրք:

### **III. Թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված հիմնական արդյունքները**

1) «Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Ա. Բայադյան) շրջանակներում իրականացվել է ինչպես համախառն, այնպես էլ ներքին և արտաքին պետական պարտքերի ժամանակագրական վերլուծություն՝ առանձնացնելով պետական պարտքի կառավարումն անկախությունից հետո և արդի ժամանակաշրջանում: Վերլուծության են ենթարկվել ՀՀ պետական պարտքի և պետական բյուջեի փոխկապակցվածությունները, ՀՀ պետական

պարտքի կանխատեսման հնարավորությունը: Քննարկվել են ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի ձևավորման ու զարգացման տնտեսական նախապայմաններն ու իրավական հիմքերը, մասնավորապես՝ պետական պարտատոմսերի շուկայի առանձնահատկությունները և դրա գնահատման մոտեցումները: Ցույց է տրվել, որ վերջին տարիներին ներքին պետական պարտքի կառուցվածքում արձանագրվող հիմնական միտումը միջնաժամկետ պետական պարտքի մասնաբաժնի աճն է, ինչը կարող է հանգեցնել նաև պետական պարտքի անկայունությանը: Արտաքին պետական պարտքի կառուցվածքում կարևորագույն միտումը ճգնաժամային տարիներին երկկողմանի վարկերի մասնաբաժնի ավելացումն է, ինչը հանգեցնում է առանձին երկրներից կախվածության մեծացման: Մյուս կողմից՝ միջազգային կառույցների կողմից տրամադրվող վարկային միջոցները, որպես կանոն, արտոնյալ պայմաններով են տրամադրվում, ինչը նվազեցնում է դրանց սպասարկման բեռը: Առաջարկվել է պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներում մեծացնել ներքին փոխառու միջոցների տեսակարար կշիռը, ուշադրության կենտրոնում պահել ներքին և արտաքին պարտքի ձևավորման ու դրանց ժամկետային մարման ռիսկերի կառավարումը, ներդնել ռիսկերի գնահատման համակարգ, որով հնարավորություն կընձեռվի անմիջապես ճանաչել պետական պարտքին բնորոշ ռիսկերը, ինչպես նաև համապատասխան աշխատողների մոտ ռիսկերի կառավարման գիտելիքների և դրանց կիրառման կարողությունների զարգացումը.

Հրատարակվել է 6 գիտական հոդված:

2) *«Արբենային անվտանգության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում»* թեմայի (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Գ. Հարությունյան) իրականացման շրջանակներում կատարվել են վերլուծություններ համաշխարհային, ՀՀ և ԼՂՀ պարենային ապրանքների գների վիճակագրական ցուցանիշների հիման վրա, որոնց արդյունքում հստակ ներկայացվել են առկա խնդիրները, բացահայտվել է միջազգային գների ազդեցությունը ՀՀ և ԼՂՀ գների վրա, և ըստ այդմ՝ ներկայացվել են առկա խնդիրների լուծման ուղիները: Հաշվի առնելով ներկայիս սոցիալ-տնտեսական խնդիրները, հատկապես այն հանգամանքը, որ ՀՀ-ում առկա են պարենային ապահովության խնդիրներ, և տարբեր երկրներից ներկրվում է պարենի լայն տեսականի՝ ներքին պահանջարկը բավարարելու նպատակով, շատ է կարևորվում առաջին սպառման պարենային ապրանքների գների մասով իրականացված հետազոտությունը, որը փաստում է թեմայի արդիական լինելու հանգամանքը: Համաշխարհային շուկայում առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների արտադրության և արտահանման վիճակագրական ցուցանիշների հիման վրա կատարվել են վերլուծություններ, որոնց արդյունքում բացահայտվել են պարենի հիմնական խոշոր արտադրող և արտահանող երկրները, դրանց կողմից արտահանման համար սահմանվող գները: Հաշվի առնելով ՀՀ-ում սոցիալ-տնտեսական իրավիճակը՝ սոցիալական վիճակի բարելավման գործում մեծ տեղ է հատկացվել երկրում գյուղատնտեսության պոտենցիալի զարգացման հիմնախնդիրներին, հատկապես բուսաբուծության և անասնապահության ճյուղերի զարգացմանը, մասնավորապես, բուսաբուծության մասով, բարձր

մթերատու սորտերով առկա ցանքատարածությունների, ինչպես նաև բերքատու այգիների բերքատվության բարձրացմանը: Կարևորվել է ջերմոցային տնտեսությունների զարգացումը ՀՀ-ում, և ներկայացվել են առաջարկներ ու տեխնիկական լուծումներ: Անասնապահության ճյուղի վերաբերյալ ներկայացվել են առաջարկներ՝ առկա անասնազվիաբանակը ավելացնելու և մթերատվությունը բարձրացնելու նպատակով նոր բարձր մթերատու կենդանիներ ներկրել ՀՀ:

Թեմայի շրջանակում հրապարակվել են մի շարք գիտական հոդվածներ:

#### *IV. Կիրառական մշակումների արդյունքները*

«Հարկման և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում» թեմայի (գիտ. դեկ. ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ. գ. դ. Վ. Հարությունյան) շրջանակներում ԵՏՄ-ի ինտեգրացիոն գործընթացում հաշվարկվել են գործարար միջավայրի վրա ազդող հարկային վարչարարության ընթացակարգերի նվազեցման հնարավորությունները՝ մաքսային սահմանի վրա ԱԱՀ-ի դադարեցման համատեքստում: Բացի այդ, գնահատելով ԵՏՄ ԱԱՀ-ից ստացվող օգուտները, հաշվարկվել է, որ ՀՀ պետական բյուջե է ներառվելու 1,3 մլրդ դրամ:

2014 թ. կառավարությանն են ներկայացվել երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր Հ. Ավագյանի «Պիրիտ հանքանյութը դիտարկել որպես մետաղական օգտակար հանածո», «ՀՀ բնական ջեոլիտները որպես կայունատվության բարձրացման խթանիչ», «Մետալուրգիական գործարանների կառուցման անհրաժեշտությունը ՀՀ-ում», «ՀՀ Քաջարանի պղնձամոլիբդենային կազմավորման հանքավայրի շահագործման արդյունավետության հիմնախնդիրները», «ՀՀ լեռնահանքային արդյունաբերության և հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը», տ. գ. դ. Ա. Բայադյանի «ՀՀ ագրարային ոլորտի արտադրական գործընթացների և տնտեսվարման ձևերի կարգավորման հիմնախնդիրների լուծման ուղիները», տ. գ. թ. Ա. Թամազյանի «Ձեռնարկատիրության արդի հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում», տ. գ. թ. Գ. Կիրակոսյանի «Հարկային բեռի գնահատման հիմնահարցերը և հավասարաչափ բաշխման խնդիրները ՀՀ-ում» գիտական թեմաների շրջանակներում ստացված եզրակացությունները և առաջարկությունները, որոնք կարող են օգտակար լինել ՀՀ-ում իրականացվող հակաճգնաժամային միջոցառումների և նորացվող տնտեսական քաղաքականության համատեքստում:

#### *V. Ինստիտուտի գիտական հրապարակումները*

Ինստիտուտի կողմից հրատարակվել են 14 գիրք և 55 գիտական հոդվածներ (տե՛ս հավելված 8):

#### *VI. Տվյալներ ինստիտուտի ղեկավարության մասին*

Տնօրեն՝ **Վլադիմիր Լիպարիտի Հարությունյան**  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Փոխտնօրեն՝

*Ալվարդ Թևոսի Չատիկյան*  
տնտեսագիտության թեկնածու

Գիտական քարտուղար՝

*Քրիստինե Յուրիի Բաղդասարյան*  
տնտեսագիտության թեկնածու

Էլեկտրոնային փոստը՝

E-mail: [info@economics.sci.am](mailto:info@economics.sci.am).

Ինտերնետային կայքը՝

[economics.sci.am](http://economics.sci.am).

*VII. Տվյալներ կադրերի վերաբերյալ*

- ա) մինչև 35 տարեկան 4 գիտնական զբաղեցրել է դեկավար պաշտոն, որոնցից 2-ը՝ կին,
- բ) հաշվետու տարում ընդունվել են 9 երիտասարդ մասնագետներ, այդ թվում՝ 5 կին, և ազատվել են 11 երիտասարդ մասնագետ, որոնցից 2-ը՝ կին,
- գ) մինչև 35 տարեկան գիտաշխատողների թվաքանակը կազմել է 21, 35-ից 60 տարեկան՝ 17, և 60-ց բարձր տարիքի՝ 13:

*VIII. Հաշվետու տարում պաշտպանված դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների քանակը*

- դոկտորական՝ -
- թեկնածուական՝ 9

*IX. Տեղեկություններ հաշվետու տարում պատվավոր կոչումների և պարգևատրումների արժանացած գիտնականների մասին*

Հաշվետու տարում ոչ մի գիտնական պատվավոր կոչում կամ պարգևատրում չի ստացել:

*X. Գիտության և կրթության ոլորտում համագործակցությունը ՀՀ բուհերի և այլ կազմակերպությունների հետ, համատեղողների թվաքանակն ըստ կազմակերպությունների, յուրաքանչյուր կազմակերպության հետ համատեղ հրատարակումները*

Ինստիտուտը համագործակցել է Երևանի պետական (1 աշխատակից դասավանդել է), Հայաստանի պետական տնտեսագիտական (3), Հայաստանի պետական ճարտարագիտական (2), Անանիա Շիրակացի միջազգային հարաբերությունների (1), Հայաստանի ազգային ազրարային (1) համալսարանների հետ:

Ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Վլադիմիր Հարությունյանն ընդգրկվել է համառուսական գիտապրակտիկ "Региональные проблемы преобразования экономики" ամսագրի գիտախմբագրական խորհրդի կազմում:

Ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ. գ. թ. Վիլեն Խաչատրյանը 2014 թվականի օգոստոսի 3-5-ին Տուլչայում (Ռուսիան) մասնակցել է «Պետություն-մասնավոր հատված համագործակցություն: ՓՄՁ-ների վերապատ-

րաստման դասընթաց» խորագրով գիտաժողովին՝ որպես ՓՄՁ-ների տնտեսական հարցերով փորձագետ:

Ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Ալբերտ Հայրապետյանը 1914 թվականի մարտի 13-17-ին մասնակցել է ՄԱԿ-ի՝ Իտալիայի Հանրապետության նախագահի, Իտալիայի ԱԳՆ-ի և ՄԱԿ-ի Հռոմի գրասենյակի բարձր հովանու ներքո Հռոմ քաղաքում անցկացված «ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ժողովրդավարացումը» թեմայով համաժողովին:

1914 թվականի մայիսի 21-ին Աստանայում տ. գ. թ. Վիլեն Խաչատրյանը և կրտսեր գիտաշխատող Ալբերտ Հայրապետյանը մասնակցել են երիտասարդ գիտնականների «Ղազախստանի ինովացիան տնտեսությունը կայուն զարգացման գլոբալիզացիայի պայմաններում» խորագրով միջազգային գիտական նստաշրջանին: Վ. Խաչատրյանը հանդես է եկել «Տնտեսության և գիտության ինովացիոն զարգացման կոնցեպտուալ հիմունքները», Ա. Հայրապետյանը՝ «Ինովացիայի դերն առևտրային կազմակերպություններում» թեմաներով:

Ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Ա. Մակարյանը Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան ֆինանսական օժանդակության շնորհիվ «Հանրային քաղաքականության կրթաթոշակներ նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում ստացված դրամաշնորհի միջոցներով 2014 թ. հոկտեմբերից մինչև 2015 թ. մայիսն ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետազոտություն «Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության տնտեսական ազդեցության գնահատականը Հայաստանի տնտեսության վրա» թեմայով:

**Համատեղողների թվաքանակը՝ 19:**

**Համատեղ հրատարակումներ**

1. *ՀՊՃՀ-ի հետ*՝ Սարինյան Ռ. Ն., «Ուրվագիծ արդի հայ տնտեսագիտական մտքի պատմության», Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ, 2013, 224 էջ:

**2. «Այլընտրանք» հետազոտական կենտրոնի հետ**

Թ. Ն. Մանասերյան, «Տնտեսական անվտանգության ռազմավարության ուրվագծեր», ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ, «Այլընտրանք» հետազոտական կենտրոն, Եր., 2014, 836 էջ:

3. *«Անանիա Շիրակացի» ՄՀՀ-ի հետ*՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» (գիտական հոդվածների ժողովածուներ), Եր., 2014, 1(21), 294 էջ:

Աղյուսակ 1

**Արտոնագրային ցուցանիշներ**

№	Կազմակերպությունը	Արտոնագրերի հայտերի թիվը	Դրական որոշումների թիվը	Ստացված արտոնագրերի թիվը
1	2	3	4	5
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-

2014 թ. թեմատիկայի ամփոփ տվյալներ

№	Կազմակերպությունը	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (ո) և ֆինանսավորման ծավալը (X հազ. դր.)			
		նպատակային ֆինանսավորում	բազային ֆինանսավորում	թեմատիկ ֆինանսավորում	տնտ. պայմանագրեր
1	2	3	4	5	6
	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	380,0	129617,7	9161,0	-

Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային գիտական միջոցառումները

№	Միջոցառումները	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում՝ արտ. երկրներից
1	2	3	4	5
1.	Հանրապետական գիտաժողով «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով	ՀՀ, Կոտայքի մարզ, Արզական, ՀՀ ԳԱԱ գիտաժողովների տուն, հուլիսի 4-7, 2014, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ և ՀՊՏԻ	30	-
2.	Գիտաժողով «Զարգացման ժամանակակից մարտահրավերներ» խորագրով	Ք. Երևան, Նալբանդյան 128, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, հոկտեմբերի 29-31, 2014, ՀՊՏՀ և ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ	200	-

Աշխատակիցների արտասահման, այդ թվում՝ ԱՊՀ երկրներ կատարած գործուղումները

№	Կազմակերպությունը	Երկիրը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
			գիտաժողովներին մասնակցելու	համատեղ գիտական աշխատանք կատարելու	բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	Ղազախստան	2	-	-
		Իտալիա	1	-	-
		Ռումինիա	1	-	-

Արտասահմանյան գիտնականների ընդունելություն կազմակերպությունում

N°	Կազմակերպությունը	Երկիրը	Ընդունված գիտնականների թվաքանակը		
			գիտաժողովների և մասնակցելու	համատեղ գիտական աշխատանք կատարելու	բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-

Կազմակերպության միջազգային դրամաշնորհներ

N°	Կազմակերպությունը	Թեմայի անվանումը	Հիմնադրամի կամ կազմակերպության անվանումը	Դրամաշնորհի ժամկետը		Ֆինանսավորման ծավալը (\$, €, դր., քց.)		Թեմայի ղեկավարը
				սկիզբ	ավարտ	ընդհանուր	2014 թ. համար	
1	2	3	4	5		6	7	8
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ							

Կազմակերպության 2014 թ. ֆինանսավորման ծավալները

N°	Կազմակերպությունը	Բյուջե	Արտաբյուջե	Դրամաշնորհներ		
				արտաբյուջե (\$, €, քց.)	արժույթի կուրսը	դրամ
1	2	3	4	5	6	7
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	147868,2	5936,6	-	-	-

ԳԱԱ գիտաշխատողների 2014 թ. հրապարակումների ընդհանուր քանակը

N°	Կազմակերպությունը	Մենագրություն, ժողովածու		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք		Հոդվածներ, զեկուցումներ		Թեզիսներ	
		հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.
1	2	3	4	5	6	7	8	9	10
	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	12	-	-	-	45	6	-	-

Ասպիրանտների թվաքանակը

№	Կազմակերպությունը	Ասպիրանտների քանակը (այդ թվում՝ կանայք) առ 01.01.2015 թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում՝ կանայք)	
		ա/կ	ա/չկ	ա/կ	ա/չկ
1	2	3	4	5	6
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	11/1	13/9	5/0	3/1

Տվյալներ մասնագիտական խորհուրդների վերաբերյալ

№	Կազմակերպությունը	Ատենախոսության խորհրդի ծածկագիրը	Մասնագիտության ծածկագիրը և անվանումը	Խորհրդի նախագահը (զիտ. աստիճան, անուն, ազգանուն)	2014 թ. կազմակերպության աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսությունների թիվը	
					դոկտորական	թեկնածուական
1	2	3	4	5	6	7
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-	-

Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներն առ 01.01.2015 թ.

№	Կազմակերպությունը	Աշխատողների ընդհանուր թիվը	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
1	2	3	4	5	6	7	8
	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	66	51	1	1	8	25

*I. Կարևորագույն արդյունքները*

*«Եվրասիական տնտեսական միությանը անդամակցության հնարավոր ազդեցությունները ՀՀ տնտեսության վրա»* թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Ա. Թավադյան) շրջանակներում.

- հիմնավորվել է, որ անհրաժեշտ է ճշգրտել և համաձայնեցնել ԵԱՏՄ երկրների տնտեսական քաղաքականության գերակայությունները, որոշել նպատակները, ձևավորել տնտեսության զարգացման նոր մոդել,
- ձևակերպվել են ՀՀ տնտեսության զարգացման ինտեգրացիոն ճանապարհների ընտրության սկզբունքները:
- հիմնավորվել է, որ ԵԱՏՄ ձևավորման լավագույն սցենարի հավանականությունը բարձր է միայն այն դեպքում, եթե ապահովվում է ԵԱՏՄ պայմանագրի առանցքային պահանջների կատարումը, և իրականացվում է համաձայնեցված հարկաբյուջետային, դրամավարկային և, հատկապես, արժույթային քաղաքականություն:

*«Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում»* թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Ա. Բալայան) շրջանակներում.

- կարևորվել և հիմնավորվել է պետական պարտքի կառավարումն ու քաղաքական որոշումներն իրարից տարանջատելու անհրաժեշտությունը,
- հիմնավորվել է պետական պարտքի ներգրավման յուրաքանչյուր գործարքի ժամանակ նպատակի սահմանման անհրաժեշտությունը և պարտք ներգրավելու բացառիկ իրավունքի վերապահումը,
- պարտքային ճգնաժամից խուսափելու նպատակով առաջարկվել է ավելացնել ներքին պետական պարտքի մասնաբաժինը և, մասնավորապես, ինստիտուցիոնալ պարտատոմսերի ծավալը,
- պետական պարտքի կառավարելիությունը ապահովելու նպատակով առաջարկվել է օրենսդրորեն ամրագրել պետական պարտքի սահմանային լրացուցիչ մեծություններ:

*«Հայ ժողովրդի ժողովրդագրական և նյութական կորուստները ցեղասպանության ընթացքում և դրանց փոխհատուցման հիմնախնդիրները»* թեմայի (գիտ. դեկ. ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ. գ. դ. Վ. Հարությունյան) շրջանակներում.

- տրվել են ցեղասպանության ժողովրդագրական, նյութական և ֆինանսական կորուստների վերաբերյալ մեկնաբանություններ,
- վերոնշյալ կորուստները գնահատվել է ըստ ՀՀ ազգային արխիվում պահվող հայտարարագրերի,
- հետազոտության առարկա է դարձել նաև այդ կորուստների հատուցման հնարավոր ձևերի հիմնախնդիրը,

- ուսումնասիրության առարկա են դարձել նաև ցեղասպանության միջազգային իրավական պատասխանատվության հիմնախնդիրը և ցեղասպանության ֆոնդի ստեղծման ու հատուցման փաթեթի ձևավորման հիմնահարցերը:

## *II. Բազային ֆինանսավորմամբ ստացված արդյունքները*

*1) «Ներդրումային ծրագրերի իրականացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ իրական հատվածում»* թեմայի (գլխ. ղեկ. տնտ. թեկն. Ք. Բաղդասարյան) շրջանակներում.

- կատարվել է վերլուծություն ներդրումային քաղաքականության վերաբերյալ, մասնավորապես՝ պետական ներդրումների ցածր տեսակարար կշիռը պետական բյուջեում, բնակչության սոցիալական վիճակը և խնայողությունների սղությունը, ներքին շուկայի տարողունակության և արտահանման ծավալների փոքր լինելը, վնասով աշխատող կազմակերպությունների թվաքանակի աճը, ֆինանսական ինստիտուտների թերզարգացվածության մակարդակը, միջազգային շուկայում մրցունակության լարվածությունը և այլ հիմնախնդիրներ հնարավորություն չեն ընձեռում կատարել մեծածավալ ազգային ներդրումներ,
- գնահատվել են ՀՀ օտարերկրյա ուղղակի ներդրումները և դրանց իրականացման ոլորտները 2007-2014 թթ.՝ վերլուծելով ներդրումային գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտը, «Օտարերկրյա ներդրումների» մասին ՀՀ օրենքը, ներդրումային հայեցակարգը,
- կատարվել է նաև վերլուծություն, համաձայն որի գնահատվել են հարկային օրենսդրությամբ սահմանված հարկային համակարգի ազդեցությունը ներդրումային գործունեության վրա:

*2) «Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ռիսկերի կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում»* թեմայի (գլխ. ղեկ.՝ տնտ. թեկն. Ա. Ջատիկյան) շրջանակներում.

- վերլուծվել է ՀՀ -ում ՀՆԱ -ի իրական աճը 2007 -2014 թթ.,
- ուսումնասիրվել են ՀՀ տնտեսության իրական հատվածում իրականացված օտարերկրյա ներդրումների ծավալը, կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների կողմից կայուն եկամտային, պահպանողական և հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների կառավարման արդյունքները,
- գնահատվել են ֆինանսական ռիսկերի կառավարման գործընթացի հիմնական փուլերը, ՀՀ-ում կենսամակարդակի հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները, ՀՀ առկա և մշտական բնակչության թվաքանակը և սեռատարիքային կազմը, ՀՀ ազգաբնակչության կյանքի միջին տևողությունը և մի շարք այլ ցուցանիշներ,
- հիմնավորվել է այնպիսի ռիսկերի առկայությունը, ինչպիսիք են աղբատության մակարդակի ավելացումը, պետական բյուջեի ծախսային բեռի ավելացումը, միջոցների կուտակման և հետագա բաշխման մեխանիզմների անկա-

տարությունը և ՀՀ -ից կապիտալի հնարավոր արտահոսքը:

Նոր կենսաթոշակային համակարգի ներդրման ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով առաջարկվել է.

- արտասահմանյան երկրների կենսաթոշակային համակարգերի ռիսկերի, կառավարման առաջատար փորձի ուսումնասիրության հիման վրա հնարավոր ֆինանսական ռիսկերի առաջացման նկատմամբ մշտական վերահսկողության իրականացում,
- ռիսկերի կառավարման համապատասխան ռազմավարության մշակում և իրագործում,
- ներդրվող միջոցների ապահովագրում,
- ֆինանսական շուկաների զարգացման միտումների մշտական հետազոտություն և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ներդրման նոր ընձեռված հնարավորությունների օգտագործում:

*3) «Ֆինանսական միջոցների կազմավորման և օգտագործման բարելավման ուղիները ՀՀ ագրարային ոլորտում»* թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Ա. Բայադյան) շրջանակներում ուսումնասիրվել են ագրարային, շուկայական ենթակառուցվածքների զարգացման հնարավորությունները, մարքեթինգի, խորհրդատվության ու տեղեկատվության հասանելիությունը:

Բացահայտվել են ՀՀ առևտրային բանկերի, համաշխարհային բանկի միջազգային և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող ֆինանսական միջոցների ներկա վիճակը, օգտագործման արդյունավետությանը խոչընդոտող հանգամանքներն ու դրանց վերացման ուղիները, և ըստ այդմ առաջարկվել է.

- գյուղացիական տնտեսություններում արտադրական սպասարկման՝ պարարտանյութերով, թունաքիմիկատներով, այլ կյութական միջոցներով ապահովման խնդրի լուծման նպատակով համայնքներում ստեղծել վճարովի ծառայություն մատուցող կառույց,
- պետության կողմից տարբեր ծրագրերով հանրապետություն ներկրված գյուղատնտեսական տեխնիկան, պարարտանյութերը, թունաքիմիկատները տրամադրել ոչ թե առանձին անհատ հողագործներին, այլ համայնքներում ձևավորվող մասնագիտացված կազմակերպությանը (կոոպերատիվին),
- գյուղատնտեսության վարկավորման բարելավման համար կարևորվել է գրավադրման մեխանիզմների կատարելագործումը, վարկային տոկոսադրույքի իջեցումը, սուբսիդավորման մասնաբաժնի ավելացումը, մարման ժամկետների ավելացումը,
- տրամադրվող վարկերի գումարը առաջարկվել է դարձնել մինչև 10 տարի, իսկ տոկոսադրույքը նվազեցնել 2-3%-ի չափով:

Նոր ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար տրամադրել նախնական կապիտալ առաջիկա հինգ տարիներին ազատելով հարկերից:

4) «Եվրասիական տնտեսական միությանը անդամակցության հնարավոր ազդեցությունները ՀՀ տնտեսության վրա» թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Ա. Թավադյան) շրջանակներում.

- վերլուծվել են ԵԱՏՄ երկրների տնտեսության ներուժի մեծացման տեսանկյունից հակաճգնաժամային քայլերի համաձայնեցման ուղիները,
- ուսումնասիրվել է Հայաստանի արտաքին տնտեսական կապերի իրական վիճակը,
- գնահատվել է ազգային արժույթների կիրառման նպատակահարմարությունը, հատկապես ռազմավարական ապրանքների համար, վերլուծվել է ԵԱՏՄ երկրների համաձայնեցված դրամավարկային քաղաքականության ազդեցությունը ազգային արժույթով փոխհաշվարկների վրա,
- հետազոտվել է համաձայնեցված դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության նպատակահարմարությունը և արդյունավետությունը ԵԱՏՄ երկրներում:

5) «Հայ ժողովրդի ժողովրդագրական և նյութական կորուստները ցեղասպանության ընթացքում և դրանց փոխհատուցման հիմնախնդիրները» թեմայի (գիտ. դեկ. ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ. գ. դ. Վ. Հարությունյան) շրջանակներում գնահատականներ են տրվել ցեղասպանության ժողովրդագրական, նյութական և ֆիզիանսական կորուստների վերաբերյալ:

- Հատուկ ուշադրություն է դարձվել նաև հայոց ցեղասպանության միջազգային իրավական պատասխանատվության հիմնախնդիրներին, ինչպես նաև ցեղասպանության ֆոնդի ստեղծման ու հատուցման փաթեթի ձևավորման հիմնահարցերին:

6) «Հայ տնտեսագիտական մտքի արդի ընթացքի ուրվագծեր: Նորագույն շրջանի հայ տնտեսագիտական միտքը» թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Ռ. Սարինյան) շրջանակներում ուսումնասիրություններ են իրականացվել XX դարասկզբի և արդի հայ տնտեսագիտական մտքի պատմության կտրվածքներով: «Բախշի Իշխանյան» գրքում առաջին անգամ համակարգվել են հայ մտավոր պատմության նշանավոր անուններից մեկի տնտեսագիտական հայացքները, ցույց է տրվել, որ.

1. նա ընդլայնել է XX դարասկզբի հայ տնտեսագիտական մտքի տեսապատմական սահմանները՝ տնտեսական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելով սոցիոլոգիական մեթոդը,
2. նրա հետազոտությունը Առաջին համաշխարհային պատերազմի գերմանական միլիտարիզմի պատճառների բացահայտման առումով դուրս է գուտ ազգային շրջանակներից,
3. ժողովրդավարության վերաբերյալ նրա ուսումնասիրությունները ուսանելի են պատմության ուսումնասիրության համար:

### *III. Թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված արդյունքները*

1) «Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Ա. Բայադյան) շրջանակներում հետազոտությունները ցույց են տալիս, որ սկսած 2009 թվականից տեղի է ունեցել պետական պարտքի աճման միտում՝ 2014 թվականի վերջին կազմելով 1.969.8 մլրդ դրամ, որը 2009 թվականի մակարդակը գերազանցել է 699.1 մլրդ դրամով: ՀՀ պետական և ՀՆԱ հարաբերակցությունն ամենաբարձրն է եղել 2002 թ. (45.8%) և 2012 թ. (44.3%), իսկ ամենացածրը՝ 2007 թ. (16.4%), այսինքն՝ ըստ ուսումնասիրվող տարիների ունեցել ենք նվազման, այնուհետև՝ աճման միտում:

ՀՀ պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման մոտեցումներն ու դրանց լուծման ուղիների շարքում կարևոր նշանակություն ունի հետևյալ միջոցառումների իրականացումը.

1. պարտքային ճգնաժամից խուսափելու նպատակով առաջարկվել է ավելացնել ներքին պետական պարտքի մասնաբաժինը և, մասնավորապես, իննայողական պարտատոմսերի ծավալը,
2. պետական պարտքի կառավարելիությունն ապահովելու նպատակով առաջարկվել է օրենսդրորեն ամրագրել պետական պարտքի սահմանային լրացուցիչ մեծություններ:

2) «Պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի (գիտ. դեկ. տ. գ. թ. Դ. Հարությունյան) թեմայի շրջանակներում.

- կատարվել են սննդարդյունաբերության ճյուղի, մասնավորապես՝ սննդամթերքի տարբեր տեսականու մասով համախառն թողարկված արտադրանքի և արտաքին առևտրի վիճակագրական ցուցանիշների համեմատական վերլուծություններ,
- վերլուծության արդյունքում առաջարկվել է համապատասխանեցնել ՀՀ ստանդարտները ԵՏՄ միասնական ստանդարտներին, հատկապես մսամթերքի արդյունաբերության ենթաճյուղում,
- առաջարկվել է գյուղացիական տնտեսությունների ֆինանսական միջոցների ձեռքբերումը իրականացնել կոոպերատիվների միջոցով, որի շնորհիվ համապատասխան գույքի գրավադրմամբ հնարավոր կլինի ֆինանսական հաստատություններից ստանալ ֆինանսական ռեսուրսներ,
- առաջարկվել է նաև վարչարարության միջոցով պարենային շուկայի վերահսկողության իրականացում, որը միտված է լուծել տնտեսական խնդիրներ:

### *IV. Կիրառական մշակումների արդյունքները*

«Եվրասիական տնտեսական միությանը անդամակցության հնարավոր ազդեցությունները ՀՀ տնտեսության վրա» թեմայում (գիտ. դեկ. տ. գ. դ. Ա. Թավադյան) գնահատվել են ԵԱՏՄ երկրների տնտեսության ներուժի մեծացման տեսանկյունից հակաճգնաժամային քայլերի կոորդինացման ուղիները: Հայաստանի տնտեսական աճի տեսանկյունից ներկայացվել են ԵԱՏՄ պայմանագրի

առանցքային հողվածները և նրանց ճշգրտման հնարավորությունները:

Գնահատվել է արտահանում-ՀՆԱ հարաբերակցությունը: Հիմնավորվել է, որ այդ ցուցանիշը Հայաստանի համար պետք է լինի ոչ պակաս, քան 30%: Հաշվի առնելով այն, որ այդ ցուցանիշը չի գերազանցում 15 %-ը, ձևավորվել են հատկապես պատրաստի արտադրանքի արտահանման հնարավորությունները ինչպես ԵԱՏՄ, այնպես էլ ԵՄ և այլ երկրներ:

Հիմնավորվել է ԵԱՏՄ երկրների մակրոտնտեսական քաղաքականության համաձայնեցման անհրաժեշտությունը, ինչը փաստացի հանդիսանում է ԵԱՏՄ պայմանագրի պահանջը: Ցույց են տրվել ՀՀ տնտեսության համար հնարավոր էֆեկտները այդ քայլից: Ելնելով դրանից՝ ձևակերպվել են համակարգված քայլեր, որոնք անհրաժեշտ է իրականացնել ՀՀ տնտեսության ինտեգրացիոն էֆեկտները հնարավորինս մեծացնելու համար:

*«Ֆինանսական միջոցների կազմավորման և օգտագործման բարելավման ուղիները ՀՀ ագրարային ոլորտում»* թեմայի (գիտ. ղեկ.՝ տ. գ. դ. Ա. Բայադյան) շրջանակներում.

- ուսումնասիրվել են ագրարային ոլորտի ֆինանսավորման, վարկավորման և դրանց օգտագործման արդյունավետությունը, ՓՄՁ-ների, կոոպերատիվների գործունեության բարելավման համար ֆինանսների հասանելիությունը, ու դրանց համահունչ բացահայտվել են խոչընդոտող հանգամանքները, և տրվել են լուծման ուղիները,
- ագրարային ոլորտի բարելավման նպատակով ուսումնասիրության արդյունքում, տնտեսապես զարգացող երկրների փորձին համահունչ, կոոպերատիվների հետագա խթանման ու ընդլայնման, ինչպես նաև նոր ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար առաջարկվել է ստեղծել ֆինանսական կառույցներ և առաջիկա հինգ տարիներին տալ հարկային արտոնություններ,
- վերլուծվել և հիմնավորվել է հիփոթեքային վարկերի դրական ազդեցությունը, որը կնպաստի արտադրական գործընթացներում նորամուծությունների ներդրմանն ու զարգացմանը:

#### *V. Ինստիտուտի գիտական հրապարակումները*

Ինստիտուտի կողմից հրատարակվել են 4 գիրք և 112 գիտական հոդվածներ (տե՛ս հավելված 9):

#### *VI. Տվյալներ ինստիտուտի ղեկավարության մասին*

Տնօրեն՝	Վլադիմիր Հարությունյան ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Փոխտնօրեն՝	Ալվարդ Զատիկյան տնտեսագիտության թեկնածու
Գիտական քարտուղար՝	Քրիստինե Բաղդասարյան տնտեսագիտության թեկնածու

Էլեկտրոնային փոստը՝ E-mail: info@economics.sci.am.

Ինտերնետային կայքը՝ economics.sci.am.

### *VII. Տվյալներ կադրերի վերաբերյալ*

- ա) մինչև 35 տարեկան 4 գիտնական զբաղեցրել է ղեկավար պաշտոն, որոնցից 2-ը՝ կին,
- բ) հաշվետու տարում ընդունվել են 19 երիտասարդ մասնագետներ, այդ թվում՝ 10 կին, և ազատվել են 9-ը, որից 2-ը՝ կին,
- գ) մինչև 35 տարեկան գիտաշխատողների թվաքանակը կազմում է 22, 35-ից 60 տարեկան՝ 24, և 60-ից բարձր տարիքի՝ 13:

### *VIII. Հաշվետու տարում պաշտպանված դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների քանակը*

- դոկտորական՝ 1
- թեկնածուական՝ 5

### *IX. Տեղեկություններ հաշվետու տարում պատվավոր կոչումների և պարգևատրումների արժանացած գիտնականների մասին*

ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթում հաղթող են ճանաչվել ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտ. դոկտ., պրոֆեսոր Վ. Լ. Հարությունյանը և տնտ. դոկտ., պրոֆեսոր Ա. Հ. Բայադյանը:

### *X. Գիտության և կրթության ոլորտում համագործակցությունը ՀՀ բուհերի և այլ կազմակերպությունների հետ, համատեղողների թվաքանակն ըստ կազմակերպությունների, յուրաքանչյուր կազմակերպության հետ համատեղ հրապարակումները*

Ինստիտուտը համագործակցել է Երևանի պետական (2 աշխատակից դասավանդել են), Հայաստանի պետական տնտեսագիտական (3), Հայաստանի պետական ճարտարագիտական (3), Հայաստանի ազգային ագրարային (3), Հայամերիկյան (1) համալսարանների հետ:

Ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Վլադիմիր Հարությունյանն ընդգրկվել է համառուսական գիտապրակտիկ «Տնտեսության փոխակերպման տարածքային հիմնախնդիրներ» ամսագրի գիտախմբագրական խորհրդի կազմում և «Ռուսաստանը XX դարում. գլոբալ հրավերներ և զարգացման հեռանկարներ» չորրորդ միջազգային ֆորումի կազմկոմիտեի անդամների թվում:

Համագործակցության հուշագիր է կնքվել Գավառի պետական համալսարանի հետ՝ իրականացնելու ծրագրեր կրթական, գիտահետազոտական գոր-

ծունեության ոլորտներում, ինչպես նաև այնպիսի երիտասարդ մասնագետների պատրաստման ուղղությամբ, որոնք զբաղվում են տնտեսագիտության տեսական և գործնական խնդիրների, հայ և արտասահմանյան տնտեսագիտական մտքի պատմության ուսումնասիրությամբ:

Տ. գ. դ., պրոֆեսոր Աշոտ Թավադյանը մասնակցել է.

- «Կյանքը պատժամիջոցների պայմաններում, միջազգային փորձ» միջազգային գիտաժողովին, պատրաստել է «Արժութային անվտանգությունը ճգնաժամի պայմաններում» գեկույցը, ԱՊՀ երկրների ինստիտուտի և Մոսկվայի պետական համալսարանի Լոմոնոսովի անվ. տնտեսագիտության ֆակուլտետի հետ համատեղ:
- «Եվրասիական նախագիծ 2015. ընդհանուր հարևանության պետությունների սպասումների մարմնացում» միջազգային փորձագիտական սեմինարին, «Եվրասիական ինտեգրացիա. ԶԼՄ-ների և տնտեսության մարտահրավերները», Մոսկվա, Կլոբ սեդան, ՌԻԱ Նովոստի:
- «Եվրասիական տնտեսական ինտեգրացիա» X միջազգային գիտաժողովին, 2015 թվականի հոկտեմբերի 29, Մոսկվա, Եվրասիական զարգացման բանկ: Լիազումար նիստ «Տնտեսագետների գրույց (երկխոսություն). ԵԱՏՄ տնտեսական զարգացման վեկտորները ճգնաժամի պայմաններում»: Ավագ գիտաշխատող, տ. գ. դ. Դավիթ Հարությունյանը մասնակցել է.
- Բիզնես ֆորումին, որի նպատակը Հայաստանի արտահանման ապահովագրության գործակալության և Իրանի արտահանման երաշխավորման ֆոնդի միջև հուշագրի ստորագրումն էր: Այն միտված էր կողմերի միջև առևտրի և ներդրումների խթանմանն ու աջակցությանը (Իրան-Հայաստան Բիզնես ֆորում, նոյեմբերի 9, 2015 թ.): «Doing business in Armenia» գեկույցում Դավիթ Հարությունյանը ներկայացրել է Հայաստանի ներդրումային միջավայրը, ՕՌԻՆ-ների խթանման և պաշտպանության մեխանիզմները, արտահանման և ներմուծման կարգավորման ուղիները, ՀՀ հարկային համակարգի, բիզնեսի գրանցման, լիցենզավորման ու սեփականության իրավունքների գրանցման առանձնահատկությունները և այլն:
- «Հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները» աշխատաժողովին (Կիև, Ուկրաինա, ապրիլի 23-24, 2015 թ.), որի ընթացքում ներկայացրել է ՀՀ-ում հարկային համակարգում առկա խնդիրները, հարկային հաշվետվությունների ներկայացման և վարչարարության հետ կապված տարբեր հարցեր:

*Համատեղողների թվաքանակը՝ 19*

*Համատեղ հրապարակումներ*

1. *ՀՊՀՀ -ի հետ՝ Ռ. Ն. Սարինյան, Ա. Ս. Թադևոսյան, Բախշի Իշխանյան.* տնտեսագիտական հայացքները, Եր., «Ճարտարագետ» հրատ., 2015, 136 էջ:
2. *«Անանիա Շիրակացի» ՄՀՀ-ի հետ՝* «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» (գիտական հոդվածների ժողովածու), Եր., 2015, 1(22), 359 էջ:

3. ՀՊՏՀ-ի հետ «Չարգացման ժամանակակից մարտահրավերներ», ՀՊՏՀ 24-րդ գիտաժողովի (2014 թ. հոկտեմբերի 29 -31) նյութեր, Եր., «Տնտեսագետ», 2015, մաս 1, 772 էջ, մաս 2, 536 էջ:
4. «Հայ ժողովրդի ժողովրդագրական և նյութական կորուստները ցեղասպանության ընթացքում և դրանց հատուցման հիմնախնդիրները» (գիտական հոդվածների ժողովածու)՝ նվիրված հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտության» հրատ, 2015, 174 էջ:

Աղյուսակ 1

Արտոնագրային ցուցանիշներ

№	Կազմակերպությունը	Արտոնագրերի հայտերի թիվը	Դրական որոշումների թիվը	Ստացված արտոնագրերի թիվը
1	2	3	4	5
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-

Աղյուսակ 2

2015 թ. թեմատիկայի ամփոփ տվյալներ

№	Կազմակերպությունը	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (n) և ֆինանսավորման ծավալը (X հազ. դր.)			
		նպատակային ֆինանսավորում	բազային ֆինանսավորում	թեմատիկ ֆինանսավորում	տնտ. պայմանագրեր
1	2	3	4	5	6
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	162093,4	5534,0	5742,0

Աղյուսակ 3

Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային գիտական միջոցառումները

№	Միջոցառումները	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում՝ արտ. երկրներից
1	2	3	4	5
1.	Հանրապետական գիտաժողով «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ և ՀՊՏԻ, հունիսի 4 -7, 2015	60	-
2.	Գիտաժողով «Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում» խորագրով	Ք. Երևան, Նալբանդյան 128, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, ՀՊՏՀ և ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ, նոյեմբերի 11 -13, 2015	40	-

3	Գիտաժողով «Հայ ժողովրդի ժողովրդագրական և նյութական կորուստները ցեղասպանության ընթացքում և դրանց հատուցման հիմնախնդիրները» (նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, 1915 -2015 թթ.)	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ և ՀՊՏԻ, դեկտեմբերի 3-4, 2015	50	
---	---	--	----	--

Աղյուսակ 4

Աշխատակիցների արտասահման, այդ թվում՝ ԱՂՀ երկրներ կատարած գործուղումները

№	Կազմակերպությունը	Երկիրը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
			գիտաժողովներին մասնակցելու	համատեղ գիտական աշխատանք կատարելու	բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	ՌԴ	3	-	-
		Ուկրաինա	1	-	-
		Իրան	1	-	-

Աղյուսակ 5

Արտասահմանյան գիտնականների ընդունելություն կազմակերպությունում

№	Կազմակերպությունը	Երկիրը	Ընդունված գիտնականների թվաքանակը		
			գիտաժողովներին մասնակցելու	համատեղ գիտական աշխատանք կատարելու	բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-

Աղյուսակ 6

Կազմակերպության միջազգային դրամաշնորհներ

№	Կազմակերպությունը	Թեմայի անվանումը	Հիմնադրամի կամ կազմակերպության անվանումը	Դրամաշնորհի ժամկետը		Ֆինանսավորման ծավալը (\$, €, դր., քց.)		Թեմայի ղեկավարը
				սկիզբ	ավարտ	ընդհանուր	2015 թ. համար	
1	2	3	4	5	6	7	8	9
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-	-	-	-

Աղյուսակ 7

Կազմակերպության 2015 թ. ֆինանսավորման ծավալները

№	Կազմակերպությունը	Բյուջե	Արտաբյուջե	Դրամաշնորհներ		
				արտարժույթ (\$, €, քց.)	արժույթի կուրսը	դրամ
1	2	3	4	5	6	7
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	167627,4	5742,0	-	-	-

ԳԱԱ գիտաշխատողների 2015 թ. հրապարակումների ընդհանուր քանակը

№	Կազմակերպությունը	Մենագրություն, ժողովածու		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք		Հոդվածներ, գեկուցումներ		Թեզիսներ	
		հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.
1	2	3	4	5	6	7	8	9	10
	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	4	-	-	-	85	12	-	-

Ասպիրանտների թվաքանակը

№	Կազմակերպությունը	Ասպիրանտների քանակը (այդ թվում՝ կանայք) առ 01.01.2016 թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում՝ կանայք)	
		ա/կ	ա/չկ	ա/կ	ա/չկ
1	2	3	4	5	6
	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	14/0	10/4	5/0	3/1

Տվյալներ մասնագիտական խորհուրդների վերաբերյալ

№	Կազմակերպությունը	Ատենախոսության խորհրդի ծածկագիրը	Մասնագիտության ծածկագիրը և անվանումը	Խորհրդի նախագահը, գիտ. աստիճան, անուն, ազգանուն)	2015 թ. կազմակերպության աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսությունների թիվը	
					ընդհանուր քանակ	թեկնածուական
1	2	3	4	5	6	7
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-	-

Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներն առ 01.01.2016 թ.

№	Կազմակերպությունը	Աշխատողների ընդհանուր թիվը	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
1	2	3	4	5	6	7	8
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	71	59	1	1	8	31

*1. Կարևորագույն արդյունքները*

1. «Տնտեսվարող սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեության գնահատման հիմնահարցերը և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» թեմայի (գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Ա. Բայադյան) շրջանակներում առաջարկվել է.

- տարբեր ճյուղերում ներդրումային ծրագրերի խթանում, բյուջետային բոլոր ծախսերի կրճատում, հարկային վարչարարության բարեփոխում, փոքր ու միջին ձեռնարկությունների վարկավորման ծրագրերի ընդլայնում՝ ապահովելով մրցակցությունը,
- ապահովել կազմակերպությունների մրցունակության համակողմանի քանակական գնահատման միասնական մեթոդիկայի կիրառումը, որի կարիքը ունեն հայրենական բոլոր կազմակերպությունները:

«Հայաստանի Հանրապետության ինտեգրացման գործընթացների հիմնախնդիրները» թեմայի (գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Ա. Թավադյան) շրջանակներում.

- հիմնավորվել է, որ անհրաժեշտ է ձևավորել ՀՀ տնտեսության զարգացման նոր մոդել, որը հաշվի կառնի ՀՀ տնտեսության ներքին ու արտաքին մարտահրավերները՝ կանխատեսելով ակնկալվող արդյունքները,
- եզրակացվել է, որ Հայաստանի համար ԵԱՏՄ ինտեգրացիոն ներուժի արդյունավետ օգտագործման հանձնարարականները պետք է հաշվի առնեն նաև երկրի տնտեսական անվտանգության խնդիրները,
- հիմնավորվել է, որ Հայաստանը առևտրատնտեսական արդյունավետ հարաբերություններ զարգացնելու զգալի ներուժ ունի ինչպես հարևան երկրների՝ Վրաստանի և Իրանի հետ, այնպես էլ ԵՄ անդամ մի շարք պետությունների հետ:

2. «Հարկաբյուջետային քաղաքականության բարելավման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի (գիտ. դեկ.՝ տնտ. գիտ. թեկն. Կ. Սարգսյան) շրջանակներում հիմնավորվել է, որ ՀՀ-ում գործարար միջավայրի ակտիվացման, տնտեսական աճի խթանման և սոցիալական լարվածության թուլացման տեսանկյունից առավել մեծ նշանակություն ունեն հարկային բեռի կրճատումը և միաժամանակ հարկման բազայի ընդլայնումը, ինչը թույլ կտա Հայաստանի հարկային համակարգն ավելի արդյունավետ դարձնել: Որպես հարկային ոլորտի բարեփոխումներ՝ առաջարկվել է.

- ԱԱՀ-ի տարբերակված դրույքաչափերի կիրառումը, մասնավորապես՝ կենսական նշանակության ապրանքների և ծառայությունների համար կիրառելով ԱԱՀ-ի նվազեցված դրույքաչափի սահմանումը,
- շահութահարկի գծով արագացված ամորտիզացիայի կիրառումը,
- կազմակերպության հարկվող շահույթի նվազեցումն այն գումարի չափով, որն ուղղվելու է ներդրումների ֆինանսավորմանը,

- կազմակերպության շահույթից նվազեցվող ծախսերի առավելագույն նորմաների վերանայումը,
- ֆիզիկական անձանց հարկային բեռի կրճատումը,

## II. Բազային ֆինանսավորմամբ ստացված արդյունքները

1. «Տնտեսվարող սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեության գնահատման հիմնահարցերը և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Ա. Բայադյան) շրջանակներում ուսումնասիրվել են տնտեսվարող սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեությունը, դրա ֆինանսական արդյունքների և դրանից բխող շահութաբերության ցուցանիշները, ֆինանսական կայունության գնահատումը, ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարման հնարավոր ուղիները, վերամշակող կազմակերպությունների և արտադրողների միջև պայմանագրային հարաբերությունների զարգացումը, ֆինանսական ռեսուրսների մատչելիության բարելավումը, արտադրական կազմակերպությունների ռիսկերի վերլուծությունը և ռիսկերի նվազեցման եղանակներն ու ուղիները: Կատարված վերլուծությունների արդյունքում առաջարկվել է.

- բարձրացնել իրացումից ստացած զուտ հասույթի չափը համախառն ներքին արդյունքի կազմում, ինչը հնարավորություն կտա նպաստելու ավելի շահութաբեր արտադրատեսակների ծավալների ընդլայնմանը,
- ներգրավել մատչելի վարկեր, ինչը ազրովերամշակման ոլորտի կարևորագույն հիմնախնդիրներից մեկն է:

2. «Հարկաբյուջետային քաղաքականության բարելավման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի (գիտ. դեկ. տնտ. թեկն. Կ. Սարգսյան) շրջանակներում.

- հետազոտվել և վերլուծվել են հարկաբյուջետային քաղաքականության տեսամթերողական հիմքերը,
- վերլուծվել են հարկաբյուջետային քաղաքականության առանձնահատկությունները, ինչի արդյունքում և բացահայտվել են ոլորտում առկա հիմնախնդիրները,
- ուսումնասիրվել է հարկաբյուջետային քաղաքականության ոլորտում արտերկրյա փորձը, և իրականացվել են համեմատական վերլուծություններ,
- առաջարկվել են հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության բարձրացման յուրովի մոտեցումներ:

3. «Հայաստանի Հանրապետության ինտեգրացման գործընթացների հիմնախնդիրները» թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Ա. Թավադյան) շրջանակներում.

- բացահայտվել են ՀՀ տնտեսության արտաքին և ներքին մարտահրավերները: Որպես արտաքին մարտահրավերներ են մատնանշվել տարածաշրջանում ոչ կայուն իրավիճակը, Ռուսաստանում գնողունակության անկումը, ԵՄ-ում մակրոտնտեսական քաղաքականության չհամաձայնեցվածությունը, ինչպես նաև համաշխարհային շուկայում գունավոր մետաղների գների անկումը, իսկ ներքին մարտահրավերները պայմանավորված

են դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների ոչ բավարար համաձայնեցմամբ և կոռուպցիայի բարձր մակարդակով:

ԵՄՏՄ ինտեգրացիոն ներուժի արդյունավետ օգտագործման ուղիների բացահայտման նպատակով հետազոտվել են այդ ներուժի իրացման խոչընդոտներն ու հեռանկարներն՝ ըստ ինտեգրացիոն համագործակցության զարգացման այն ուղղությունների, որոնք առաջարկվել են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից:

Ուսումնասիրվել են Հայաստանի տնտեսական ինտեգրացիայի այլընտրանքային ուղղությունները, մասնավորապես՝ հայ-իրանական և ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցության զարգացման հեռանկարները: Վերլուծվել են հայ-իրանական ներդրումների դինամիկան և կառուցվածքը:

4. *«Հայ ժողովրդի ժողովրդագրական և նյութական կորուստները ցեղասպանության ընթացքում և դրանց փոխհատուցման հիմնախնդիրները»* թեմայի (գիտ. դեկ. ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ. գ. դ. Վ. Հարությունյան) շրջանակներում ներկայացվել են Բուրսայի և Ադանայի նահանգներում բնակվող հայերի սեփականության, ինչպես նաև եկեղեցու տնօրինության տակ գտնվող անշարժ գույքի նկարագիրը նախքան 1915 թ. և կորուստները հայոց ցեղասպանության տարիներին:

5. *«Հայ տնտեսագիտական մտքի արդի ընթացքի ուրվագծեր. գիտական հետազոտում»* թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Ռ. Սարինյան) շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքներն իրացվել են հետևյալ հրատարակումներում.

Մենագրություններ

- Վ. Հարությունյան, Ռ. Սարինյան, «Տնտեսագիտության ինստիտուտը 10 տարում. 2006-2016 թթ. (հետազոտական արդյունքների ուրվագիծ)», «Գիտություն» հրատ., 2016, 223 էջ:

Աշխատությունն ուրվագծում է տնտեսագիտության ինստիտուտի տասնամյա (2006-2016 թթ.) հետազոտական գործունեության հետազոտումը: Նյութը ենթարկելով որոշակի թեմատիկ համակարգման (տնտեսական ճգնաժամեր, հարկային տնտեսագիտություն, գիտություն և տնտեսական աճ, միջազգային տնտեսագիտություն, կառավարչական միտք, տնտեսության իրական հատված, տնտեսագիտական մտքի պատմություն)՝ կատարվել են վերլուծություններ դրանց դիտակետերի և կիրառական տեսանկյունների վերաբերյալ:

- Հրատարակության է պատրաստվել «Ավետիք Արասխանյանը և իր «Մուրճը» մենագրությունը (Ռ. Սարինյան, Ա. Թադևոսյան):

Վերսկսվել են «Հայ տնտեսագետներ» գրքի նոր նյութերի հավաքումը, հայ տնտեսագիտական մտքի պատմության առանձին շրջանների վերաբերյալ մենագրության լրամշակված հրատարակության աշխատանքները, ինչպես նաև հրատարակության է պատրաստվել «Հայ տնտեսագիտական մտքի երկու դարը» (գիտակենսագրական հանրագիտարան) խորագրով գրքի I մասը:

### *III. Թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված արդյունքները*

Թեմատիկ ֆինանսավորմամբ գիտական հետազոտություն չենք ունեցել:

### *IV. Կիրառական մշակումների արդյունքները.*

*«Տնտեսվարող սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեության գնահատման հիմնահարցերը և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում»* թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Ա. Բայադյան) շրջանակներում.

- ուսումնասիրվել, վերլուծվել և հիմնավորվել է «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ օրինակով գյուղատնտեսական արտադրանք (մթերք) արտադրող սուբյեկտների և վերամշակող արտադրական կազմակերպությունների միջև կնքված ու գործող պայմանագրերի նպատակահարմարությունը, և առաջարկվել է ՀՀ կառավարության կողմից արտադրողներին սուբսիդավորման իրականացում՝ շուկայական գնի և նվազագույն սահմանված գնի միջև եղած տարբերության չափով,

- արտադրական ռիսկերի կառավարման նվազեցման համար առաջարկվել է ստեղծել համաֆինանսավորման սկզբունքով ապահովագրության նոր համակարգի արագ ձևավորում, որին հետագայում կնպաստի միջհամայնքային միավորումների նոր համակարգի ստեղծումը:

*«Հայաստանի Հանրապետության ինտեգրացման գործընթացների հիմնախնդիրները»* թեմայի (գիտ. դեկ. տ. գ. դ. Ա. Թավադյան) շրջանակներում.

- ՀՀ ինտեգրացիոն էֆեկտները գնահատելու համար առաջարկվել է ստեղծել բազմաչափ ռեգրեսիոն մոդել. այդ համատեքստում, մասնավորապես, ուսումնասիրվել է ՀՆԱ-ի վրա ինտեգրացիոն գործընթացները պայմանավորող փոփոխականների ազդեցությունը,

- առաջարկվել է էապես կրճատել վերաֆինանսավորման տոկոսադրույքի և գնաճի տարբերությունը ավելի քան 2-3 տոկոսային կետով:

- հիմնավորվել է, որ, էներգետիկ գլոբալ շուկայի արդի զարգացումներին համահունչ, Հայաստանի նման երկիրը, որը զգալիորեն կախված է էներգակիրների ներկրումից, պետք է աստիճանական անցում կատարի էներգիայի այլընտրանքային (վերականգնվող) աղբյուրների օգտագործմանը:

### *V. Ինստիտուտի գիտական հրապարակումները*

Ինստիտուտի կողմից հրատարակվել են 7 գիրք և 74 գիտական հոդվածներ (տե՛ս հավելված 10):

### *VI. Տվյալներ ինստիտուտի ղեկավարության մասին*

Տնօրեն՝ Վլադիմիր Հարությունյան  
ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Փոխտնօրեն՝ Ալվարդ Չատիկյան  
տնտեսագիտության թեկնածու

Գիտական քարտուղար՝ Քրիստինե Բաղդասարյան  
տնտեսագիտության թեկնածու

Էլեկտրոնային փոստը՝ E-mail: info@economics.sci.am.

Ինտերնետային կայքը՝ economics.sci.am.

### *VII. Տվյալներ կադրերի վերաբերյալ*

- ա) մինչև 35 տարեկան դեկավար պաշտոն զբաղեցրել են 2 կին,
- բ) հաշվետու տարում ընդունվել են 15 երիտասարդ մասնագետներ, այդ թվում՝ 9 կին, և ազատվել են 14-ը, որոնցից 8-ը՝ կին,
- գ) մինչև 35 տարեկան գիտաշխատողների թվաքանակը կազմում է 21, 35-ից 60 տարեկան՝ 15, և 60-ից բարձր տարիքի՝ 12:

### *VIII. Հաշվետու տարում պաշտպանված դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների քանակը*

դոկտորական՝ -  
թեկնածուական՝ 5

### *IX. Տեղեկություններ հաշվետու տարում պատվավոր կոչումների և պարգևատրումների արժանացած գիտնականների մասին*

ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթում հաղթող են ճանաչվել ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտ. դոկտ., պրոֆեսոր Վ. Լ. Հարությունյանը և տնտ. դոկտ., պրոֆեսոր Ա. Հ. Բայադյանը:

### *X. Գիտության և կրթության ոլորտում համագործակցությունը ՀՀ բուհերի և այլ կազմակերպությունների հետ, համատեղողների թվաքանակն ըստ կազմակերպությունների, յուրաքանչյուր կազմակերպության հետ համատեղ հրատարակումները*

Ինստիտուտը համագործակցել է Երևանի պետական (2 աշխատակից դասավանդել են), Հայաստանի պետական տնտեսագիտական (4), Հայաստանի պետական ճարտարագիտական (3), Հայաստանի Խ. Աբովյանի անվան պետա-

կան մանկավարժական (1), Հայաստանի ազգային ագրարային (3) համալսարանների հետ:

Ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Վլադիմիր Հարությունյանն ընդգրկվել է միջազգային «Տնտեսագիտական ինստիտուտի լրաբեր», Բելառուսի ազգային ակադեմիայի ամսագրի գիտախմբագրական խորհրդի կազմում:

**Համատեղողների թվաքանակը \* 11:**

**Համատեղ հրապարակումներ**

1. Հայոց նորագույն պետականության քառորդ դարը (գիտաժողովի զեկուցումների դրույթներ, 2016 թ., հուլիսի 15), ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք, Երևանի պետական համալսարան, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, 185 էջ:

2. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները (գիտական հոդվածների ժողովածու, 1(23)), Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան, Եր., 2016, 475 էջ:

**Աղյուսակ 1**

**Արտոնագրային ցուցանիշներ**

№	Կազմակերպությունը	Արտոնագրերի հայտերի թիվը	Դրական որոշումների թիվը	Ստացված արտոնագրերի թիվը
1	1	2	3	4
1.	ՀՀ ԳԱԱ Ս. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-

**Աղյուսակ 2**

**2016 թ. թեմատիկայի ամփոփ տվյալներ**

№	Կազմակերպությունը	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (ո) և ֆինանսավորման ծավալը (X հազ. դր.)			
		նպատակային ֆինանսավորում	բազային ֆինանսավորում	թեմատիկ ֆինանսավորում	տնտ. պայմանագրեր
1	ՀՀ ԳԱԱ Ս. Քոթանյանի անվան ՏԻ	-	8 / 140192,7	-	-

Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային գիտական միջոցառումները

№	Միջոցառումները	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում՝ արտ. երկրներից
1	2	3	4	5
1.	Գիտաժողով՝ «Հայ ժողովրդի ժողովրդագրական և նյութական կորուստները ցեղասպանության ընթացքում և դրանց հատուցման հիմնախնդիրները» (նվիրված Հայոց ցեղասպանության 100 -րդ տարեկիցին, 1915 -2015 թթ.)	ՀՀ, Կոտայքի մարզ, Արզական, ՀՀ ԳԱԱ գիտաժողովների տուն, հուլիսի 14-16, 2016, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	60	-
2.	Հանրապետական գիտաժողով «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ, հոկտեմբերի 10-11, 2016	30	

Աշխատակիցների արտասահման, այդ թվում՝ ԱՊՀ երկրներ կատարած գործուղումները

№	Կազմակերպությունը	Երկիրը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
			գիտաժողովների մասնակցելու	համատեղ գիտական աշխատանք կատարելու	բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	ՌԴ	2	-	-

Արտասահմանյան գիտնականների ընդունելություն կազմակերպությունում

№	Կազմակերպությունը	Երկիրը	Ընդունված գիտնականների թվաքանակը		
			գիտաժողովներին մասնակցելու	համատեղ գիտական աշխատանք կատարելու	բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-

Կազմակերպության միջազգային դրամաշնորհներ

№	Կազմակերպությունը	Թեմայի անվանումը	Հիմնադրամի կամ կազմակերպության անվանումը	Դրամաշնորհի ժամկետը		Ֆինանսավորման ծավալը (\$, €, դր., քցճ.)		Թեմայի ղեկավարը
				սկիզբ	ավարտ	ընդհանուր	2016 թ. համար	
1	2	3	4	5	6	7	8	9
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-	-	-	-

Կազմակերպության 2016 թ. ֆինանսավորման ծավալները

№	Կազմակերպությունը	Բյուջե	Արտաբյուջե առ 01.10.2016 թ.	Դրամաշնորհներ		
				արտաբյուջե (\$, €, քցճ.)	արժույթի կուրսը	դրամ
1	2	3	4	5	6	7
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	161119,3	3205,1	-	-	-

ԳԱԱ գիտաշխատողների 2016 թ. հրապարակումների ընդհանուր քանակը

№	Կազմակերպությունը	Մենագրություն, ժողովածու		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք		Հոդվածներ, գեկուցումներ		Թեզիսներ	
		հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	7	-	-	-	71	3	-	-

Ասպիրանտների թվաքանակը

№	Կազմակերպությունը	Ասպիրանտների քանակը (այդ թվում՝ կանայք) առ 01.01.2017 թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում՝ կանայք)	
		ա/կ	ա/չկ	ա/կ	ա/չկ
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	13	7	3	3

Տվյալներ մասնագիտական խորհուրդների վերաբերյալ

№	Կազմակերպությունը	Ատենախոսության խորհրդի ծածկագիրը	Մասնագիտության ծածկագիրը և անվանումը	Խորհրդի նախագահը, գիտքարտուղարը (գիտ. աստիճան, անուն, ազգանուն)	2016 թ. կազմակերպության աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսությունների թիվը	
					դոկտորական	թեկնածուական
1	2	3	4	5	6	7
1.	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-	-

Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներն առ 01.01.2017 թ.

№	Կազմակերպությունը	Աշխատողների ընդհանուր թիվը	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
1	2	3	4	5	6	7	8
	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	60	48	1	1	8	23

*I. Գիտական գործունեության կարևորագույն արդյունքները*

*«Հարկային և մաքսային մարմինների գործունեության կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»* թեմայի շրջանակներում (գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտ. դոկտոր Վ. Լ. Հարությունյան) կատարված վերլուծությունների արդյունքում բացահայտվել է ԵՏՄ անդամության հետ կապված հնարավոր խնդիրների ու հետևանքների անորոշության աստիճանը՝ անդրադառնալով ԵՏՄ անդամ և ոչ անդամ պետությունների հետ հարկային և մաքսային մարմինների գործունեության կազմակերպման առանձնահատկություններին, անդամակցությունից բխող օրենսդրական և վարչարարական նորամուծություններին:

Վերլուծության և միջազգային փորձի խոր ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են հարկային և մաքսային մարմինների գործունեության կատարելագործման օպտիմալ ուղիները՝ շեշտադրումը կատարելով և՛ կազմակերպչական, կառուցվածքի օպտիմալացմանը, և՛ հարկային, և՛ մաքսային ծառայողի վարվելակերպի կանոնների բարելավմանը:

*«ՀՀ տնտեսության կայուն աճի ապահովման հիմնախնդիրները և լուծման ուղիները»* թեմայի շրջանակներում (գիտ. ղեկավար՝ տնտեսագիտ. դոկտոր Ա. Բայադյան) ցույց է տրվել, որ ՀՀ-ում սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը հնարավոր է մարզային արդյունաբերական համալիրի ձևավորման, վերամշակող արդյունաբերության տարբեր ճյուղերի զարգացման, մարզի ներսում ներձուղային ու միջձուղային արտադրական կապերի ստեղծման պարագայում: ՀՆԱ-ի ավելացման նպատակով անհրաժեշտ է բարելավել արտահանման ենթակառուցվածքները, մասնավորապես՝ հատուկ ուշադրություն պետք է դարձնել Հայաստանի տրանսպորտային փոխադրումների դժվարություններին և կարևորել արտահանման խթանման ջանքերի նպատակաուղղումը բարձրակարգ և չփչացող ապրանքատեսակներին:

*II. Բազային ֆինանսավորմամբ գիտական գործունեության հիմնական արդյունքները*

*«ՀՀ տնտեսության կայուն աճի ապահովման հիմնախնդիրները և լուծման ուղիները»* թեմայի շրջանակներում (գիտ. ղեկավար՝ տնտեսագիտ. դոկտոր Ա. Բայադյան) բացահայտվել է, որ տարածքային համաչափ զարգացման հիմքում պետք է դնել որոշակի տարածքի ռեսուրսային ներուժը՝ պայմանավորված կլաստերների ձևավորմամբ, գիտելիքների և նորարարությունների կիրառմամբ: Տնտեսության բոլոր ոլորտների զարգացման արդյունավետությունն ապահովելու համար հիմնավորվել է ապահովագրության արմատավորման հույժ կարևորությունը:

*«Վերականգնվող էներգետիկայի զարգացման խթանման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»* թեմայի շրջանակներում (գիտ. ղեկավար՝ տնտեսագիտ. թեկնածու Ն. Մարկոսյան) ցույց է տրվել, որ Հայաստանի ծերացած էներգետիկ համակարգում սերնդափոխության իրականացման ընթացքում աստ-մային, ջերմային և վերականգնվող էներգետիկայի միջև ընդհանուր հզորու-թյունների օպտիմալ բաշխումը մինչև 21-րդ դարի կեսերը կանխորոշելու է Հայաստանի էներգետիկ անվտանգությունն ու մրցունակությունը: Վերականգն-վող էներգետիկայի ենթակառուցվածքների խթանման գործում խիստ արդիական է պետական աջակցության այնպիսի մեխանիզմների ներդրումը, որոնք երկա-րաժամկետ բեռի չեն վերաձվի պետական բյուջեի համար:

*«Ռազմաարդյունաբերության, նորարարությունների և տնտեսական աճի միջև փոխկապվածությունները փոքր բաց տնտեսությունում (ՀՀ օրինակով)»* թեմայի շրջանակներում (գիտ. ղեկավար՝ տ. գ. դ. Վ. Հարությունյան) կառուցվել է ազգա-յին տնտեսության և ռազմաարդյունաբերության փոխկապվածություններն ար-տացույցով գծապատկերային մոդել, որով հիմնավորվել է ռազմաարդյունաբերու-թյան ոլորտի ներուժային համակարգաստեղծ նշանակությունն ամբողջ տնտե-սության համար՝ պայմանավորված տնտեսության այլ ճյուղերի հետ համա-գործակցության լայն հնարավորություններով:

Գրեյնջեր-պատճառականության թեստի միջոցով բացահայտվել է, որ Հա-յաստանում պաշտպանությանը հատկացվող պետական ծախսերը, չնայած զգա-լի ծավալներին (2015 թ.՝ ՀՆԱ 4.5%-ը) տնտեսական աճի վրա խթանիչ ազդեցու-թյուն չեն ունեցել, ավելին՝ ռազմական ծախսերը 1 տարի ժամանակային լազով պայմանավորված են եղել ՀՆԱ ցուցանիշով: Հետազոտվել են քաղաքացիական նշանակության արտադրությունների վրա ռազմական ԳՀՓԿԱ-ների ազդեցու-թյան ուղղությունները, գնահատվել են դրանց առանձնահատկությունները:

*«Հարկային վարչարարության և հարկային բեռի բարելավման հիմնախնդիր-ները կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համատեքստում»* թեմայի շրջանակնե-րում (գիտ. ղեկավար՝ տնտեսագիտ. թեկնածու Ք. Բաղդասարյան) կատարվել են հարկային վարչարարության և հարկային բեռի բարելավման առաջարկու-թյուններ, որոնք ներկայացվել են երկու առանցքային հարցերի տեսքով՝ ոչ ֆոր-մալ տնտեսության և կոռուպցիոն ռիսկերի: Ըստ եզրակացության՝ Հայաստա-նում հարկային վարչարարությունը խաթարվում է ոչ ֆորմալ տնտեսությունում հարկային օրենքները կիրարկելու արդյունքում, ինչպես նաև տնտեսաչափա-կան գործիքների կիրառման արդյունքում տրվել է քանակական գնահատական՝ ՀՀ տնտեսության զարգացման վրա ազդող հարկային բեռի, աշխատուժի և կապիտալի վերաբերյալ:

*«Ներքին և օտարերկրյա ներդրումային ակտիվության խրախուսումը որպես ՀՀ կայուն տնտեսական աճի ապահովման գործիք»* թեմայի շրջանակներում (գիտ. ղեկավար՝ տնտեսագիտ. թեկնածու Լ. Սարգսյան) կատարված էկոնոմետ-րիկ վերլուծության արդյունքում ցույց է տրվել, որ 1 տարվա ընթացքում ՀՀ-ում ՕՈՒՆ-ների ներհոսքը մեծացնում է տնտեսական աճը 0.14 տոկոսային կետով, իսկ արտահանումը՝ 0.56 տոկոսով: Ցույց է տրվել, որ ներդրումներն իրա-

կանացվում են արտահանման աճի տեմպը նվազող ոլորտներում, ինչպես նաև այնպիսի արտադրությունների ոլորտներում, որոնք գործունեություն են ծավալում հումքի կամ տեխնոլոգիաների ներմուծման միջոցով:

Հիմնվելով բացահայտ համեմատական առավելության ինդեքսի հաշվարկի վրա՝ առանձնացվել են ներդրումների իրականացման համար ԵՏՄ շուկա արտահանելու տեսանկյունից հեռանկարային ոլորտները, որոնց շարքում են գյուղատնտեսական և թեթև արդյունաբերության մի շարք արտադրատեսակներ:

Իրականացված սոցիոլոգիական հարցման համաձայն՝ տնտեսվարողների կողմից բարձրաձայնված ամենաեական խնդիրներն են՝ առևտրային վարկի բարձր տոկոսադրույքը՝ 52.5%, առևտրային վարկի համար պահանջվող գրավի առկայությունը՝ 28%, նոր ներդրողների ներգրավման դժվարությունը՝ 27.2%, աշխատողների մասնագիտական հմտությունների անհամապատասխանությունը կազմակերպության պահանջներին՝ 49%, բարձր հարկադրույքները՝ 39%, մաքսագերծման ժամանակ հսկիչ գների չարդարացված չափի արդյունքում առաջացող վճարումները՝ 21% և այլն:

*«Շողովրդագրական բարելավմանն ուղղված նորովի մոտեցումների մշակում և ներդրում»* թեմայի շրջանակներում (գիտ. ղեկավար՝ տնտեսագիտ. թեկնածու Ա. Զատիկյան) բացահայտվել է, որ երեխաների ծնելիության աճը կարող է հանգեցնել խնայողություններ/ՀՆԱ հարաբերակցության կրճատմանը, իսկ տարեց բնակչության աճի դեպքում կարող է արձանագրվել խնայողությունների աճ: Քանի որ ՀՀ բնակչությունը ծերացման միտում ունի, ապագայում կարելի է ակնկալել, որ խնայողությունների մակարդակը կավելանա:

### *III. Թեմատիկ ֆինանսավորմամբ գիտական գործունեության հիմնական արդյունքները*

Հաշվետու տարում թեմատիկ ֆինանսավորմամբ գիտական հետազոտություններ չեն իրականացվել:

### *IV. Գիտական գործունեության կիրառական աշխատանքների արդյունքները*

*«Հարկային և մաքսային մարմինների գործունեության կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»* թեմայի շրջանակներում (գիտ. ղեկավար՝ տնտեսագիտ. դոկտոր Վ. Լ. Հարությունյան) ուսումնասիրվել են տնտեսության առաջընթացի ապահովման գործում վճռորոշ ազդեցություն ունեցող հարկային և մաքսային մարմինների գործունեության զարգացման հիմնախնդիրները, հարկային վարչարարության բարելավման տեսական և մեթոդաբանական մոտեցումները, տարածաշրջանային ինտեգրման ազդեցությունը հարկային և մաքսային համակարգերի վրա, միջազգային լավագույն փորձի հիման վրա հարկային և մաքսային ծառայողի վարվելակերպի արմատական վերափոխման հնարավոր ուղիները:

*«Վերականգնվող էներգետիկայի զարգացման խթանման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»* թեմայի շրջանակներում (գիտ. ղեկավար՝ տնտեսագիտ. թեկնածու Հ. Մարկոսյան) կատարված ուսումնասիրության արդյունքում առաջարկվել է վերականգնվող էներգետիկայի ոլորտում թույլատրել

արագացված ամորտիզացիայի կիրառումը և էներգիայի մասնավոր ցրված հզորությունների կառուցման խթանման նպատակով էներգիայի կուտակման կայաններին էլեկտրաէներգիայի վաճառքի և հետգնման գնի երաշխավորված մարժայի սահմանումը, մշակվել են առանց լիցենզիայի ինքնավար արևային կայանների գործունեության խթանման մեխանիզմներ՝ հիմնված արտադրված էներգիայի գնման սակագնի սանդղակի և վարկային միջոցներով կառուցված հզորությունների վարկի դիմաց հաշվարկված տոկոսադրույքը ֆիզիկական անձանց վճարած եկամտային հարկից փոխհատուցելու տարբերակի վրա, հիմնավորվել է «Կանաչ սերտիֆիկատների» ներդրման արդյունավետությունը և հիդրոակումուլյացիոն հզորությունների գործարկման անհրաժեշտությունը:

*«Ներքին և օտարերկրյա ներդրումային ակտիվության խրախուսումը որպես ՀՀ կայուն տնտեսական աճի ապահովման գործիք»* թեմայի շրջանակներում (գիտ. ղեկավար՝ տնտեսագիտ. թեկնածու Լ. Մարգարյան) գործարարության դյուրինության ինդեքսի բարելավմանն ուղղված վերլուծությամբ ցույց է տրվել, որ անհրաժեշտ է բարելավել շինարարության թույլտվության ստացման, էլեկտրաէներգիայի միացման, փոքր ներդրողների պաշտպանության, հարկերի վճարման, պայմանագրերի կիրարկման և վեճերի քննման ընթացակարգերը: Հայաստանի ներդրումային ներուժի և ներդրումային ոլորտի գնահատման արդյունքում պարզվել է, որ առավել մտահոգիչ են ՕՈՒՆ-ների ներհոսքի, 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի, աղքատության, բիզնեսի կողմից վճարվող հարկերի ցուցանիշները:

*«Ռազմաարդյունաբերության, նորարարությունների և տնտեսական աճի միջև փոխկապվածությունները փոքր բաց տնտեսությունում (ՀՀ օրինակով)»* թեմայի շրջանակներում (գիտ. ղեկավար՝ տնտեսագիտ. թեկնածու Գ. Հարությունյան) ՀՀ օրինակով տեղայնացվել է ռազմաարդյունաբերության զարգացման հիմքով տնտեսական աճի էական ցուցանիշներ արձանագրած փոքր բաց տնտեսությամբ որոշ երկրների (Իսրայել, Հարավային Կորեա, Սինգապուր) հաջող փորձը: Ներկայացվել է ռազմաարդյունաբերության զարգացման համար միջգիտակարգային համագործակցության նոր կառուցակարգ, առաջարկվել է այն ներդնել ՀՀ գիտության զարգացման ժամանակակից քաղաքականության հիմքում:

*«Ժողովրդագրական բարելավմանն ուղղված նորովի մոտեցումների մշակում և ներդրում»* թեմայի շրջանակներում (գիտ. ղեկավար՝ տնտեսագիտ. թեկնածու Ա. Ջատիկյան) ներկայացվել է աշխատանքային արտագաղթողների տեսանկյունից հետաքրքրություններ ներկայացնող պետությունների գնահատման մեթոդաբանություն՝ համապատասխան մոդելի առաջադրմամբ:

*«Հայկական կազմակերպությունների դիրքավորման հնարավորությունների բացահայտումն ու իրացումը վերագգային կորպորացիաների արժեքային շղթային ինտեգրման համատեքստում»* թեմայի շրջանակներում (գիտ. ղեկավար՝ տնտեսագիտ. թեկնածու Ա. Մակարյան) կատարված ուսումնասիրությամբ հիմնավորվել է, որ բարձր իրական աճի տեմպեր ապահովելու տեսանկյունից անհրաժեշտ է խթանել խումբ 62-ի ինչպես արտապատվիրված, այնպես էլ

սեփական արտադրության հագուստի և հագուստի պարագաների արտահանման ծավալների աճը դեպի ՌԴ և այլ ԵԱՀԿ անդամ երկրների շուկաներ: Դեղագործական արտադրանքի արտադրության կտրվածքով կատարված վերլուծության արդյունքում հիմնավորվել է ջեներիք (generic) դեղերի արտադրության կարևորությունը:

*V. Ինստիտուտի աշխատակիցների կողմից 2017թ. հրատարակված մենագրությունների և գիտական հոդվածների ցանկը բերված է հավելված 11-ում:*

*VI. Տվյալներ ինստիտուտի ղեկավարության մասին*

Տնօրեն՝ *Վլադիմիր Լիպարիտի Հարությունյան*  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Փոխտնօրեն՝ *Ալվարդ Թևոսի Զատիկյան*  
տնտեսագիտության թեկնածու

Գիտական քարտուղար՝ *Քրիստինե Յուրիի Բաղդասարյան*  
տնտեսագիտության թեկնածու

Ինստիտուտի էլեկտրոնային փոստը՝ E-mail:  
info@economics.sci.am.

*VII. Տվյալներ կադրերի վերաբերյալ*

- ա) մինչև 35 տարեկան 1 կին գիտնական զբաղեցրել է ղեկավար պաշտոն,
- բ) հաշվետու տարում ընդունվել են 6 երիտասարդ մասնագետ (այդ թվում՝ 3 կին), ազատվել են 7 երիտասարդ մասնագետ (այդ թվում՝ 4 կին),
- գ) մինչև 35 տարեկան գիտաշխատողների թվաքանակը՝ 15, 35-ից 60 տարեկան գիտաշխատողների թվաքանակը՝ 18, 60 տարեկանից բարձր գիտաշխատողների թվաքանակը՝ 7:

*VIII. Գիտության և կրթության ոլորտում համագործակցությունը ՀՀ բուհերի և այլ կազմակերպությունների հետ, համատեղողների թվաքանակն ըստ կազմակերպությունների, յուրաքանչյուր կազմակերպության հետ համատեղ հրատարակումները*

Ինստիտուտի 7 աշխատակիցներ դասավանդել են ՀՀ բուհերում.

- Երևանի պետական համալսարան՝ 1,
- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան՝ 1,
- Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան՝ 1,
- Հայաստանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան՝ 1,
- Հայաստանի ազգային ագրարային համալսարան՝ 1,
- Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղ՝ 1,

- ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոն՝ 1:

Ինստիտուտը համագործակցել է ԵԱՏՄ Դատարանի հետ՝ CE-2-1/1-17-ԵԿ վարույթի շրջանակներում ներկայացնելով փորձագիտական կարծիք:

Ինստիտուտի 2017 թ. գիտական ներուժին, աշխատողների թվաքանակին և այլնին վերաբերող տեղեկությունները ներկայացված են աղյուսակներ 1-6-ում:

Աղյուսակ 1

2017 թ. թեմատիկայի ամփոփ տվյալները

№	Կազմակերպությունը	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (ո) և ֆինանսավորման ծավալը (X հազ. դր.)			
		նպատակային ֆինանսավորում	բազային ֆինանսավորում	թեմատիկ ֆինանսավորում	տնտ. պայմանագրեր
1	2	3	4	5	6
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ	-	12 / 141400.5	-	-

Աղյուսակ 2

2017թ. կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային գիտական միջոցառումները

№	Միջոցառման անվանումը	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում՝ արտերկրներից
1	2	3	4	5
1	Հանրապետական գիտաժողով «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնական դերերը ՀՀ-ում» խորագրով	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, Երևան, հունիսի 15-16, 2017	66	-

Աղյուսակ 3

Կազմակերպության 2017 թ. ֆինանսավորման ծավալները

№	Կազմակերպությունը	Բյուջե	Արտաբյուջե	Դրամաշնորհներ		
				արտարժույթ (\$, €, րԿ.)	արժույթի կուրսը	դրամ
1	2	3	4	5	6	7
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	160523.9	4287.5	-	-	-

2017 թ. գիտաշխատողների հրապարակումների  
ընդհանուր քանակը

№	Կազմակերպությունը	Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր		Ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր		Հոդվածներ, զեկուցումներ		Թեզիսներ	
		հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ	10	-	-	-	80	40	-	-

2017 թ. ասպիրանտների թվաքանակը

№	Կազմակերպությունը	Ասպիրանտների քանակն (այդ թվում՝ կանայք) առ 01.01.2018 թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում՝ կանայք)	
		ա/կ	ա/չկ	ա/կ	ա/չկ
1	2	3	4	5	6
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ	9 (-)	11 (6)	2 (-)	2 (2)

Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներն առ 01.01.2018 թ.

№	Կազմակերպությունը	Աշխատողների ընդհանուր թիվը	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
1	2	3	4	5	6	7	8
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ	53	40	1	1	6	18

*1. Գիտական գործունեության կարևորագույն արդյունքները*

*«Ստվերային շրջանառությունների բացահայտման և հարկերը թաքցնելու հնարավորությունների սահմանափակման ուղիները ՀՀ-ում»* թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ. գ. դ., պրոֆ. Վ. Լ. Հարությունյան) կատարված հետազոտության արդյունքում ցույց է տրվել, որ վերջին երկու տասնամյակներում աշխարհի տարբեր երկրների տնտեսագետների ուշադրությունը սևեռվել է «ստվերային տնտեսություն» կոչվող երևույթի վրա, քանի որ չկա մի երկիր, որի տնտեսական զարգացման ռազմավարության առաջնահերթությունների շարքում չլինի ստվերային տնտեսության բացահայտման և կրճատման հիմնախնդիրը: Թեմայի շրջանակներում հանգամանալից ներկայացվել է հարկային վարչարարության նոր մեխանիզմների և նոր կիրարկվող հարկային օրենսդրության ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների հավաքագրման, ստվերի, կոռուպցիոն ռիսկերի կրճատման վրա՝ շեշտադրում կատարելով հավասար մրցակցային պայմանների ապահովմանը, ինչպես նաև կատարվել են գործնական նշանակության հարցադրումներ, առաջադրվել են դրանց հնարավոր լուծումները: Ուսումնասիրություններն իրականացվել են ստվերային տնտեսության առաջացման և ընդլայնման պատճառների, տնտեսական և քաղաքական գործոնների բացահայտման, ստվերային տնտեսության ծավալների գնահատման և դրանց կրճատման ուղղությամբ համապատասխան միջոցառումների մշակման համատեքստում:

*«Միջուկային էներգետիկայի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»* թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Հ. Ա. Մարկոսյան) միջուկային էներգետիկայի ոլորտի զարգացման միջազգային միտումների համակարգման արդյունքում ցույց է տրվել, որ ոլորտի զարգացման հեռանկարներն առկա տեխնոլոգիական զարգացումների պայմաններում խիստ կասկածելի են՝ պայմանավորված միջուկային վառելիքի առաջարկի կրճատման, օգտագործված միջուկային վառելիքի և միջուկային թափոնների վերամշակման տեխնոլոգիաների անկատարության և բացակայության, միջուկային թափոնների մշտական պահպանման պաշտոնապես գործող պահեստային տարածքների բացակայության, շահագործման հանձնվող նոր ռեակտորների թվի և վերականգնվող էներգիայի շահագործման ինքնարժեքի շարունակական անկման, ինչպես նաև մրցունակության բարձրացման և այլ գործոններով:

*«Արտահանման խթանման և ներմուծման փոխարինման հիմնախնդիրները ՀՀ-ում»* թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Լ. Ն. Մարգարյան) հիմնավորվել է, որ ՀՀ-ում արտահանումը 2000-2016 թթ. ունեցել է բավականին բարձր կենտրոնացվածություն. 4 ապրանքախմբերի (թանկարժեք քարեր և մետաղներ, ոչ թանկարժեք մետաղներ, պատրաստի սնունդ, հանքահումքային ապրանքներ)

միջինում բաժին է ընկել արտահանման 82.9%-ը: Հարկ է նշել, որ արտահանման մեջ գերակշռում է միջանկյալ հումքը, որի արտադրությունում ստեղծվող ավելացված արժեքի կշիռը խիստ սահմանափակ է և ենթակա է միջազգային գների նշանակալի տատանումներին, ինչն էլ ավելի է մեծացնում արտահանման խոցելիությունը: Առևտրային հաշվեկշռի պակասորդը 2016 թ. ՀՀ-ում կազմել է ՀՆԱ-ի ավելի քան 16%-ը, ինչը ցույց է տալիս արտաքին առևտրի զգալի անկատարությունը:

## *II. Բազային ֆինանսավորմամբ ստացված արդյունքները*

*«Ստվերային շրջանառությունների բացահայտման և հարկերը թաքցնելու հնարավորությունների սահմանափակման ուղիները ՀՀ-ում»* թեմայի շրջանակներում (գլխ. դեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ. գ. դ., պրոֆ. Վ. Լ. Հարությունյան) ցույց է տրվել, որ Հայաստանում որևէ պետական կառույցի կողմից ստվերային տնտեսության չափերի հանգամանակից գնահատում և խոր վերլուծություն դեռևս չի իրականացվել: Այսպես, գնահատման ուղղակի մեթոդների կիրառմամբ և առկա ռիսկերի բացահայտման միջոցով ստվերային գործունեության չափերը, ըստ Պետական եկամուտների կոմիտեի գնահատականների, 2016 թ. դեկտեմբերի վերջին խոշոր հարկ վճարողների մոտ կազմել է 48,8 տոկոս, իսկ ըստ տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից հիմնականում անուղղակի մեթոդների կիրառմամբ կատարված գնահատումների՝ 35-40 տոկոս: Սակայն որքան էլ բարդ է ստվերային տնտեսության չափերի գնահատումը, այն չափազանց կարևոր է ինչպես տնտեսական աճի վերլուծության, այնպես էլ տնտեսական քաղաքականության ուղղությունների սահմանման տեսանկյունից: Ստվերային տնտեսության իրական պատկերը հնարավորինս համակողմանիորեն ներկայացնելու, իրական գնահատականների, տնտեսության առանձնահատկությունների, ստվերի առաջացման նախապայմանների, գերակշռող տեսակի բացահայտման համար նպատակահարմար է չսահմանափակվել մեկ կամ երկու մեթոդների կիրառմամբ, այլ կիրառել կոմպլեքս մեթոդներ:

*«Միջուկային էներգետիկայի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»* թեմայի շրջանակներում (գլխ. դեկ.՝ տ. գ. թ. Հ. Ա. Մարկոսյան) բացահայտվել են Հայաստանում միջուկային էներգետիկայի զարգացման փաստարկները, որոնց շարքում կարևոր նշանակություն ունեն տնտեսական տեսանկյունից միջուկային վառելիքի տեղափոխման մատչելիությունը, միջուկային էներգիայի համեմատաբար էժանությունը, երաշխավորված հզորությունը, էկոլոգիապես մաքրությունը, ինչպես նաև ոլորտի զարգացման խոչընդոտները, որոնց շարքում են վառելիքի ներկրվող բնույթը, միջուկային վթարների բացառման անհնարինության վիճակագրական հիմնավորումները, Հայկական աէլի տեղադիրքը ահաբեկչության հետ կապված ռիսկերը, ԱԷԿ-ի բարոյական մաշվածությունը, նոր էներգաբլոկի շինարարության ֆինանսատնտեսական չլուծված խնդիրները և այլն: Հայաստանի համար աէլ ունենալու և չունենալու հարցը չի կարող սահմանափակվել միայն տնտեսական հիմնավորում-

ներով: Աեկի գոյությունը վկայում է Հայաստանի՝ միջուկային պետությունների ակումբ մուտք ունենալու կարգավիճակը: Միջուկային ոլորտում ՀՀ քաղաքականությունը պետք է ուղղված լինի գործող էներգաբլոկների հուսալիության քարձրացմանն ու շահագործման ժամկետի երկարացմանը:

*«Արտահանման խթանման և ներմուծման փոխարինման հիմնախնդիրները ՀՀ-ում»* թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Լ. Ն. Սարգսյան) ՀՀ ՀՆԱ-ի, արտահանման և ներմուծման միջև կապի բացահայտման ռեգրեսիոն մոդելի վերլուծությունը թույլ է տվել եզրակացնել, որ արտահանման 1 ԱՄՆ դոլարով աճը հանգեցնում է ՀՆԱ 0.003 ԱՄՆ դոլարով աճի, իսկ ներմուծման 1 ԱՄՆ դոլարով աճը՝ ՀՆԱ 0.0015 ԱՄՆ դոլարով աճի: Արտահանման խթանման և ներմուծման փոխարինման համար հաշվարկվել են մի շարք համեմատական առավելությունների ցուցանիշներ, ինչի արդյունքում բացահայտվել է, որ «Ձուկ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ», «Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք», «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ», «Օխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ», «Հանքաքար, խարամ և մոխիր», «Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ», «Սև մետաղներ», «Պղինձ և իրեր դրանից», «Ալյումին և իրեր դրանից», «Այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, ապրանքներ դրանցից», «Ժամացույցներ և դրանց մասեր» ապրանքախմբերն ունեն բացահայտված համեմատական առավելություն, կարևոր նշանակություն ունեն արտահանման տեսանկյունից և նպաստում են ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը:

*«Գյուղատնտեսության ապահովագրության հիմնախնդիրները ՀՀ-ում»* թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Մ. Գ. Մանուչարյան) կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության հիմնախնդիրների լուծումը ագրարային ոլորտի կայուն ու համաչափ զարգացման հիմնական նախապայմաններից է: Գյուղացիական տնտեսությունների կողմից գյուղատնտեսության ապահովագրության նկատմամբ պահանջարկը դեռևս մեծ չէ, ինչը բացատրվում է մի շարք հանգամանքներով, որոնցից կարելի է առանձնացնել գյուղմթերք արտադրողների վճարունակության ցածր մակարդակը: ՀՀ ագրարային հատվածում ապահովագրության համակարգի ներդրման գործընթացի դիտարկումների արդյունքում հիմնավորվել է, որ պետության աջակցությունը նշված համակարգի արդյունավետության հիմնական նախապայմաններից է: Այդ մոտեցումը պահանջում է օրենսդրորեն ամրագրել գյուղատնտեսության ապահովագրության 3 գլխավոր կողմերի՝ գյուղատնտեսական մթերք արտադրողների (վերամշակողների), ապահովագրող ընկերությունների և պետության փոխհամագործակցության ձևերը, աջակցության ուղղությունները, չափերը և այլն:

*«Փոքր և միջին ձեռնարկատիրության խթանման համայնի միջոցառումները ՀՀ-ում»* թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Ս. Ա. Դալլաքյան) ցույց է տրվել, որ ՓՄՁ ոլորտում ֆինանսական խնդիրները լուծելու և արտահանման

գործառնություններում փոքր և միջին բիզնեսն ակտիվացնելու, ինչպես նաև միջազգային շուկայում արտադրանքի մրցունակությունը մեծացնելու համար անհրաժեշտ է մշակել բանկերի և վարկային կազմակերպությունների՝ ՓՄՁ-ներին վարկեր տրամադրելու մեխանիզմներ՝ ընձեռելով արտոնյալ տոկոսադրույքներ՝ մասնակի կամ լրիվ մարման սկզբունքով, ինչպես նաև մշակել արտահանման նկատառումով ապրանքների արտադրության համար ներմուծվող հումքին և նյութերին վերաբերող մաքսատուրքերը արտոնյալ զանձելու ծրագիր: Կարևորվել է ՓՄՁ ֆինանսավորման հասանելիության դյուրացումը, մասնավորապես՝ նորաստեղծ ձեռնարկությունների ու գյուղմթերք արտադրողների համար՝ լիզինգային ֆինանսավորման հասանելիությունը, որը կարող է լինել բանկային ֆինանսավորման այլընտրանք:

*«Տրանսֆերային գնագոյացման առանձին գործընթացների առավել արդյունավետ համագործակցության հարթակի ձևավորման հիմնախնդիրները ՀՀ-ում»* թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ., դոցենտ Ք. Յու. Բաղդասարյան) կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ տրանսֆերային գնագոյացման առումով ԵՏՄ երկրներում վերահսկվող գործարքների սահմանումները գրեթե նույնական են, սակայն այդ երկրներում տարբեր կերպ են սահմանազատում չվերահսկվող և վերահսկվող գործարքները, հետևաբար՝ նաև տրանսֆերային գնագոյացման կանոնները: Տրանսֆերային գնագոյացման մասին օրենքը ՀՀ հարկատուների համար կարող է առաջացնել լրացուցիչ պարտավորություններ, սակայն նման կանոնների ներդրումն օտարերկրյա ներդրողների կողմից դրականորեն է ընկալվում: Արտասահմանցի գործարարները ցանկանում են վստահ լինել, որ գործարքի երկու կողմերում էլ հարկային մարմինների կողմից գործում են միատեսակ մոտեցումներ, իսկ գործարքում կիրառվող գները շուկայական են և արդարացի:

*«ՀՀ ռազմարդյունաբերության նորարարական զարգացման կլաստերային մեխանիզմները»* թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ., դոցենտ Գ. Հարությունյան) օրենսդրափրավական դաշտի անկատարությունը ներկայացվել է որպես Հայաստանում ռազմարդյունաբերության ոլորտում կլաստերացման գործընթացին խոչընդոտող հիմնական գործոններից մեկը, որի առնչությամբ առաջարկվել է «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքում վերաշարադրել «ռազմատեխնիկական քաղաքականություն», «ռազմարդյունաբերական գործունեություն» և «ռազմարդյունաբերական կլաստեր» հասկացությունների բնորոշումները: Ռազմարդյունաբերության ոլորտում կլաստերացման գործընթացների հիմնական խոչընդոտ դիտելով տեղեկատվական ասիմետրիան, տնտեսության տարբեր հատվածների միջև արդյունավետ կապերի բացակայությունը և արտադրական տարբեր ոլորտների միջև թույլ փոխկապվածությունը՝ առաջարկվել է մասնակիորեն ազատականացնել ռազմարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը:

### *III. Թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված արդյունքները*

«Ռազմարդյունաբերության նորարարական զարգացման հնարավորությունները Հայաստանում» պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ թեմայի շրջանակներում (զիտ. դեկ.՝ տ. գ. թ., դոցենտ Գ. Է. Հարությունյան) GMM (Generalized method of moments) մոմենտների ընդհանրացված մեթոդով հետազոտվել է ռազմական ծախսերի և տնտեսական աճի միջև փոխկապվածությունը երկու խումբ՝ Արևելյան Եվրոպայի հետխորհրդային (Հայաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուս, Մոլդովա, Ադրբեջան, Վրաստան) և փոքր բաց տնտեսություն ունեցող երկրների (Հայաստան, Իսրայել, Հարավային Կորեա, Սինգապուր, Թայվան, Եվեյցարիա, Ֆինլանդիա) համար: «Force Field» վերլուծության և «Stakeholder» վերլուծության «Power/Interest» մատրիցի միջոցով, ինչպես նաև մոդիֆիկացված SWOT-վերլուծության եղանակով գնահատվել է Հայաստանում ռազմարդյունաբերության զարգացման ներուժը:

### *IV. Գիտական գործունեության կիրառական աշխատանքների արդյունքները*

«Ստվերային շրջանառությունների բացահայտման և հարկերը թաքցնելու հնարավորությունների սահմանափակման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (զիտ. դեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ. գ. դ., պրոֆ. Վ. Լ. Հարությունյան) կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ վերջին տարիներին հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը գրեթե չի փոխվել (2017 թ. կազմել է 21.1 տոկոս, 2018 թ.՝ 21.6 տոկոս, 2019 թ. կանխատեսվում է 20.7 տոկոս), որը վկայում է, որ ստվերային տնտեսության ծավալների զգալի նվազում կամ հարկային վարչարարության բարելավում տեղի չի ունեցել և չի ակնկալվում, հետևաբար ստվերի կրճատման միջոցառումների վերլուծությունը իրականացվել է պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման, օրենսդրական նորմերի պատշաճ կիրառման ուղղություններով: Խնդրի ուսումնասիրության շրջանակներում ստվերայինության առաջացման դրոշմապատճառները ներկայացվել են ըստ տարբեր գործոնների՝ ըստ տնտեսության ճյուղերի, ըստ կազմակերպության չափերի, ըստ առկա ռիսկերի, ըստ օրենսդրական և վարչարարության համակարգում առկա խնդիրների և այլն: Առաջադրված հարցադրումների շուրջ տրվել են կիրառական առաջարկություններ: Ներկայացվել են ՀՀ-ի ստվերային տնտեսությունը կարգավորող մեխանիզմներ՝ ազգային-պետական շահերին, տնտեսական անվտանգության ապահովման նպատակներին համապատասխան, օրինապահ հարկ վճարողների գործունեությանը չխոչընդոտելու, ինչպես նաև ստվերում գտնվողների բացահայտման արդյունավետության բարձրացման նպատակով:

«Միջուկային էներգետիկայի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակներում (զիտ. դեկ.՝ տ. գ. թ. Հ. Ա. Մարկոսյան) կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ միջուկային էներգետիկայի ոլորտում նպատակահարմար չէ ձեռնարկել Հայկական ԱԷԿ-ի նոր էներգաբլոկի շինարարությունը, քանի որ ամբողջ աշխարհում միջուկային էլեկտրակայանների շինարարության ընթացքը բնութագրվում է ինչպես նախա-

հաշվի անընդհատ աճով, այնպես էլ ժամկետների չպահպանմամբ: Նոր միջուկային էներգաբլոկների շինարարությունն ամբողջ աշխարհում կրճատվում է, ինչը հստակ ցույց է տալիս դրանց նկատմամբ տնտեսական հետաքրքրվածության անկումը: 2016 թ. ամբողջ աշխարհում մեկնարկել են 3 նոր միջուկային ռեակտորի շինարարության աշխատանքներ (Չինաստան՝ 2, Պակիստան՝ 1), 2017-ին՝ ընդամենը 1 (Հնդկաստան):

*«Արտահանման խթանման և ներմուծման փոխարինման հիմնախնդիրները ՀՀ-ում»* թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Լ. Ն. Սարգսյան) կատարված հետազոտությունները վկայում են մրցունակ արտադրանք թողարկելուն գուզահեռ դրա արտահանմանն օժանդակող մեխանիզմներ մշակելու անհրաժեշտության մասին: Այդ նպատակով հիմնավորվել է արտերկրում հայկական ներկայացուցչությունների ցանցի ընդլայնման, որակի երաշխիք հանդիսացող ապրանքային նշանի ձեռքբերման և արտասահմանյան շուկաներում հնարավոր բոլոր մարկետինգային միջոցներով դրա հետևողական տարածման, միջազգային տոնավաճառներին և ցուցահանդեսներին մասնակցության անհրաժեշտությունը: Առաջարկվել է ՀՀ արտահանող կազմակերպություններին աջակցելու նպատակով ստեղծել ՀՀ արտահանման հարթակ, որտեղ կազմակերպությունների գրանցումը կլինի կամավոր և մատչելի անդամավճարի պայմանով: Արտահանման հատվածում գրանցվող կազմակերպությունները այնտեղ կներկայացնեն իրենց արտադրատեսականին, իսկ հարթակի առաջմղման գործառույթը կդրվի տարբեր երկրներում գործող ՀՀ առևտրային ներկայացուցչությունների վրա:

*«Գյուղատնտեսության ապահովագրության հիմնախնդիրները ՀՀ-ում»* թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Մ. Գ. Մանուչարյան) կատարված հետազոտությունները վկայում են, որ ապահովագրական գործուն համակարգի ներդրման հիմնական նախապայմանը գյուղատնտեսության ապահովագրական ռիսկերի համապարփակ գնահատումն է, որին համահունչ առաջարկվել է պետական միջոցների հաշվին ապահովագրական ռիսկերի համատարած գնահատման ծրագրերի իրականացումը: Հաշվի առնելով գյուղատնտեսության ապահովագրության գործուն համակարգի ներդրման ծախսատարությունն ու գործընթացի խթանումը սահմանափակող գործոնները՝ այն պետք է իրականացվի փուլային եղանակով: Գյուղատնտեսության ապահովագրության ներդրման համար անհրաժեշտ և պարտադիր պայման է որոշակի տարածքներում, խոշոր տնտեսություններում, առանձին համայնքներում իրականացնել փորձնական (պիլոտային) ապահովագրական ծրագրեր, մասնավորապես՝ կապված սահմանափակ ռիսկերի հետ:

*«ՀՀ ռազմարդյունաբերության նորարարական զարգացման կլաստերային մեխանիզմները»* թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ., դոցենտ Գ. Է. Հարությունյան) առաջարկվել է պետության կողմից նախաձեռնել ռազմարդյունաբերական կլաստերների ձևավորման քայլեր միաժամանակ ՀՀ մի քանի տարածաշրջաններում, մասնավորապես՝ Գյումրիում՝ որպես կլաստերի միջուկ դիտարկելով Ավիավերանորոգման գործարանը (կամ Ավիավերանորոգման գոր-

ծարանը), Հրագրանում՝ «Պատնեշ ՓԲԸ»-ն, Եղվարդում՝ «65-րդ ռազմական գործարանը», Գորիսում՝ «Գորիսի Գամմա» ԲԲԸ-ն): Կլաստերների նման առաջարկները հիմնավորված են արտադրական, գիտակրթական, տրանսպորտային ենթակառուցվածքների առկայությամբ, հարակից և սպասարկող ճյուղերի (թեև սակավաթիվ) առկայությամբ, տարածքային զարգացման անհամաչափությունների հարթեցման պահանջով:

*V. Ինստիտուտի աշխատակիցների կողմից 2018 թ. հրատարակված մենագրությունների և գիտական հոդվածների ցանկը բերված է հավելված 11-ում:*

*VI. Տվյալներ ինստիտուտի ղեկավարության մասին*

Տնօրեն՝ *Վլադիմիր Լիպարիտի Հարությունյան*  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Փոխտնօրեն՝ *Հայկ Աշոտի Մարկոսյան*  
տնտեսագիտության թեկնածու

Գիտական քարտուղար՝ *Քրիստինե Յուրիի Բաղդասարյան*  
տնտեսագիտության թեկնածու

Ինստիտուտի էլեկտրոնային փոստը՝ E-mail:  
info@economics.sci.am.

Կայքէջը՝ [www.economics.sci.am](http://www.economics.sci.am)

*VII. Տվյալներ կադրերի վերաբերյալ*

- ա) մինչև 35 տարեկան ոչ մի գիտնական չի զբաղեցրել ղեկավար պաշտոն,  
բ) հաշվետու տարում ընդունվել է 9 երիտասարդ մասնագետ (այդ թվում՝ 3 կին), ազատվել է 6 երիտասարդ մասնագետ (այդ թվում՝ 4 կին),  
գ) մինչև 35 տարեկան գիտաշխատողների թվաքանակը՝ 19, 35-ից 60 տարեկան գիտաշխատողների թվաքանակը՝ 11, 60 տարեկանից բարձր գիտաշխատողների թվաքանակը՝ 6:

*VIII. Հաշվետու տարում պաշտպանված դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների քանակը*

- դոկտորական՝ 0
- թեկնածուական՝ 9

*IX. Տեղեկություններ հաշվետու տարում պատվավոր կոչումների և պարգևատրումների արժանացած գիտնականների մասին*

Հաշվետու տարում պատվավոր կոչումների և պարգևատրումների արժանացած գիտնականներ չկան:

*X. Գիտության և կրթության ոլորտում համագործակցությունը ՀՀ բուհերի և այլ կազմակերպությունների հետ, համատեղողների թվաքանակն ըստ կազմակերպությունների, յուրաքանչյուր կազմակերպության հետ համատեղ հրապարակումները*

Ինստիտուտի 9 աշխատակիցներ դասավանդել են ՀՀ բուհերում.

- Երևանի պետական համալսարան՝ 1,
- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան՝ 2,
- Գ. Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարանի Երևանյան մասնաճյուղ՝ 1,
- Հայաստանում ֆրանսիական համալսարան՝ 2,
- Հայաստանի Խ.,Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան՝ 1,
- Հայաստանի ազգային ագրարային համալսարան՝ 2,
- ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտակրթական կենտրոն՝ 2:

*XI. Տեղեկություն համատեղ միավորումների (ամբիոններ, լաբորատորիաներ և այլն) մասին*

Համատեղ միավորումներ չեն գործում

Ինստիտուտի 2018 թ. գիտական ներուժին, աշխատողների թվաքանակին և այլնին վերաբերող տեղեկությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակներում:

Աղյուսակ 1

**Արտոնագրային ցուցանիշները**

№	Կազմակերպությունը	Արտոնագրերի հայտերի թիվը	Դրական որոշումների թիվը	Ստացված արտոնագրերի թիվը
1	2	3	4	5
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-

2018 թ. թեմատիկայի ամփոփ տվյալները

№	Կազմակերպությունը	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (ո) և ֆինանսավորման ծավալը (X հազ. դր.)			
		նպատակային ֆինանսավորում	բազային ֆինանսավորում	թեմատիկ ֆինանսավորում	տնտ. պայմանագրեր
1	2	3	4	5	6
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ	- "	1 (130968.0)	2 (2270.8)	-

Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային գիտական միջոցառումները

№	Միջոցառման անվանումը	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում՝ արտերկրներից
1	2	3	4	5
1	Հանրապետական գիտաժողով «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ, Երևան, հունիսի 8-9, 2018	47	-
2.	Հանրապետական գիտաժողով՝ նվիրված ՀՀ ԳԱԱ հիմնադրման 75-ամյակին, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ, Երևան, դեկտեմբերի 3, 2018	22	-

Աշխատակիցների արտասահման (այդ թվում՝ ԱՊՀ երկրներ) կատարած գործուղումները

№	Կազմակերպությունը	Երկիրը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
			գիտաժողովների և մասնակցելու	համատեղ գիտական աշխատանք կատարելու	բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-

Աղյուսակ 5

Կազմակերպությունում արտասահմանյան գիտնականների ընդունելությունը

№	Կազմակերպությունը	Երկիրը	Ընդունված գիտնականների թվաքանակը		
			գիտաժողովների մասնակցելու	համատեղ գիտական աշխատանք կատարելու	բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-

Աղյուսակ 6

Կազմակերպության միջազգային դրամաշնորհները

№	Կազմակերպությունը	Թեմայի անվանումը	Հիմնադրամի կամ կազմակերպության անվանումը	Դրամաշնորհի ժամկետը		Ֆինանսավորման ծավալը (\$, €, դր., քցճ.)		Թեմայի ղեկավարը
				սկիզբ	ավարտ	ընդհանուր	2018 թ. համար	
1	2	3	4	5	6	7	8	9
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-	-	-	-

Աղյուսակ 7

Կազմակերպության 2018 թ. ֆինանսավորման ծավալները

№	Կազմակերպությունը	Բյուջե	Արտաբյուջե	Դրամաշնորհներ		
				արտարժույթ (\$, €, քցճ.)	արժույթի կուրսը	դրամ
1	2	3	4	5	6	7
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	147857.6	4491.6	-	-	-

Աղյուսակ 8

ԳԱԱ գիտաշխատողների 2018 թ. հրապարակումների ընդհանուր քանակը

№	Կազմակերպությունը	Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր		Ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր		Հոդվածներ, զեկուցումներ		Թեզիսներ	
		հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	10	1	-	-	101	165	-	1

Ասպիրանտների թվաքանակը

N°	Կազմակերպությունը	Ասպիրանտների քանակն (այդ թվում՝ կանայք) առ 01.01.2018 թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում՝ կանայք)	
		ա/կ.	ա/չկ.	ա/կ.	ա/չկ.
1	2	3	4	5	6
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏՀ	5 (-)	13 (8)	1 (-)	5 (3)

Տվյալներ մասնագիտական խորհուրդների վերաբերյալ

N°	Կազմակերպությունը	Ատենախոսության խորհրդի ծածկագիրը	Մասնագիտության ծածկագիրը և անվանումը	Խորհրդի նախագահը, գիտքարտուղարը (գիտ. աստիճան, անուն, ազգանուն)	2018 թ. կազմակերպության աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսությունների թիվը	
					դոկտորական	թեկնածուական
1	2	3	4	5	6	7
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-	-

Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներն առ 01.01.2019 թ.

N°	Կազմակերպությունը	Աշխատողների ընդհանուր թիվը	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
1	2	3	4	5	6	7	8
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	50	38	1	1	3	22

*1. Կարևորագույն արդյունքները*

«Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցության հետևանքների գնահատումը և հետագա հնարավոր զարգացումները» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Լ. Մարգարյան) վերլուծվել է ՀՀ արտահանումը դեպի ԵՏՄ շուկա՝ ըստ ապրանքների մրցունակության, ինչի արդյունքում բացահայտվել է արտահանման դինամիկայի հստակ արտահայտված միտում. նոր իրողության պայմաններում, շնորհիվ մաքսային և այլ փոփոխությունների, մեծացել են ՀՀ ապրանքների համեմատական և մրցակցային առավելությունները ԵՏՄ ընդհանուր շուկայում, ընդլայնվել է ՀՀ արտահանման ծավալը և դիվերսիֆիկացիան: Վերլուծվել է նաև ՕՈՒՆ ներհոսքի դինամիկան ԵՏՄ անդամակցությունից առաջ և հետո, ինչի արդյունքում պարզվել է, որ ԵՏՄ անդամակցությունը դեռևս որևէ որոշակի ազդեցություն չի ունեցել ՕՈՒՆ ներգրավման վրա, և ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների ներհոսքը կրում է անկայուն բնույթ:

«Հայաստանի էներգետիկ անվտանգության հիմնախնդիրներն արդի տնտեսական և աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Հ. Մարկոսյան) վերլուծվել են տնտեսական անվտանգության համակարգում էներգետիկ անվտանգության հայեցակարգը, ՀՀ էներգետիկ անվտանգության մարտահրավերները, զարգացման հեռանկարները և կապն էներգետիկ անվտանգության ապահովման հետ: Բացահայտվել են էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացման գործիքակազմի կիրառման հնարավոր հեռանկարները Հայաստանում: Կարևորվել է էներգաարդյունավետության և էներգիայի պահանջարկի նվազեցմանն ուղղված ոչ տնտեսական մեխանիզմների ներդրումը:

*2. Բազային ֆինանսավորմամբ ստացված արդյունքները*

«Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդ., տ. գ. դ. Վ. Հարությունյան) անդրադարձ է կատարվել զբոսաշրջության ոլորտի զարգացման պատմությանը, հիմնական ուղղություններին և տեսակներին, զբոսաշրջության մարքեթինգին, ինչպես նաև փաստական թվերի և վերլուծությունների արդյունքում ոլորտը դիտարկվել է որպես ՀՀ տնտեսության կայուն զարգացման հիմնասյուններից մեկը: Անհրաժեշտ է երկրի աշխարհագրությունը, պատմությունն ու մշակույթը ներկայացնող և լավ տիրապետող մասնագետների թվի ավելացում, ինչը հնարավորություն կտա պատշաճ քարոզել մեր երկրի արժեքները:

«Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցության հետևանքների գնահատումը և հետագա հնարավոր զարգացումները» թեմայի շրջանակներում

(գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Լ. Մարգարյան) վերլուծվել է ՀՀ արտահանման, ներմուծման և ՕՈՒՆ ներհոսքի դինամիկան: Բացահայտվել է, որ ՌԴ շուկայում նախկին 9-ի փոխարեն այժմ մրցունակ են 14 անուն-ապրանք, Բելառուսում նախկին 3-ի փոխարեն՝ 8-ը, Ղազախստանում 3-ի փոխարեն՝ 6-ը, և Ղրղզստանում 3-ի փոխարեն՝ 4-ը: Հատկանշական է, որ մի շարք հայկական ապրանքներ, ինչպիսիք են տրիկոտաժե հագուստը, կաթնամթերքը, միրգը, բանջարեղենը և այլն, նոր իրողության պայմաններում արդեն դարձել են մրցունակ: Այդուհանդերձ, պետք է նշել, որ ԵՏՄ անդամակցությամբ պայմանավորված մի շարք ակնկալիքներ դեռևս իրողություն չեն դարձել, մասնավորապես՝ ԵՏՄ շուկայում արտահանման համեմատական առավելություն ունեցող ոչ բոլոր ապրանքների արտահանումն է աճել, ինչպես նաև ակնկալվող չափով չեն աճել նաև ՕՈՒՆ-ները:

«Միջազգային հարկային հարաբերությունների կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Ք. Բաղդասարյան) վերլուծվել են հարկային եկամուտների աստիճանական աճի միջոցով ռեսուրսային շրջանակի ընդլայնման և գործարար միջավայրի բարելավման ու մրցունակության ապահովման հիմնախնդիրները, ինչպես նաև միջազգային հարկման առանձնահատկություններն ու հարկային բեռի օպտիմալացման մեխանիզմները:

«Հայաստանի էներգետիկ անվտանգության հիմնախնդիրներն արդի տնտեսական և աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Ն. Մարկոսյան) ցույց է տրվել, որ էներգիայի առաջնային աղբյուրների անխափան և կանխատեսելի գների երկարաժամկետ կայունությունը շարունակում է մնալ ՀՀ էներգետիկ անվտանգության կարևորագույն մարտահրավերը: Փորձագիտական և հանրության շրջանակներում Ռուսաստանի կողմից էներգետիկ գերակշիռ աղբյուրի՝ գազի գնի ամենամյա վերանայումն ընկալվում է որպես առավելապես քաղաքական գործիք՝ ուղղված հանրապետությանն «էներգետիկ ստրկություն» պարտադրելուն: Առաջարկվել է գործիքակազմ խթանելու էներգիայի այլընտրանքային աղբյուրների կիրառումը, որը ենթադրում է ինչպես տնտեսական, այնպես էլ ոչ տնտեսական մեխանիզմներ: Հիմնավորվել է, որ երկարաժամկետ հեռանկարում էներգիայի կուտակման հիդրոտեխնիկական կառույցների զարգացման և էլեկտրաքիմիական տեխնոլոգիաների գնանկման ներկայիս միտումների պահպանման պարագայում հնարավոր կլինի ՀՀ էներգետիկ անվտանգության և անկախության ընդունելի մակարդակի ապահովումը, որը պետք է դիտվի որպես ՀՀ էներգետիկ քաղաքականության կարևորագույն թիրախ:

«Վարկավորման դերը ՀՀ ագրարային ոլորտի զարգացման գործում և դրա բարելավման ուղիները» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Մ. Մանուչարյան) վերլուծվել են ՀՀ ագրարային ոլորտի զարգացման ժամանակակից առանձնահատկությունները և խնդիրները, գյուղատնտեսության վարկավորման միջազգային փորձը և այլն: Բացահայտվել է, որ Հայաստանի Հանրապետության տարբեր տարածաշրջաններում նախընտրելի արտադրական ուղղություններով գյուղատնտեսական և գյուղատնտեսական հումքի վերամշակման տնտեսվարող

սուբյեկտների կարողությունների ուժեղացման և նոր սուբյեկտների ձևավորման նպատակով պետական աջակցության կարևոր գործոն է նպատակային վարկավորումը: ՀՀ-ն գյուղատնտեսական արտադրության հետագա ընդլայնմանն ուղղված արտադրական հիմնական և շրջանառու միջոցների ավելացումը պետք է իրականացնի ոչ միայն ի հաշիվ սեփական կապիտալի, այլև լրացուցիչ նյութական և դրամական ներդրումների, որոնք կարող են դրսևորվել ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ առումներով: Այդ ներդրումները պետք է օգտագործվեն հնացած ու մաշված սարքավորումների փոխարինման, նոր տեխնոլոգիաների ներդրման և ժամանակակից տեխնիկայի ու սարքավորումների հագեցվածության, գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ընդլայնման և նոր տեսակի արտադրությունների զարգացման նպատակով:

*«Բարձր տեխնոլոգիական ոլորտի ձեռնարկությունների գործունեության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»* թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Ս. Դավաթյան) վերլուծվել են ինովացիոն գործունեության գնահատման միջազգային համաթվերը, բարձր տեխնոլոգիական ոլորտի ձեռնարկությունների գործունեության խթանման միջոցառումների համակարգը, գիտահետազոտական և փորձարարական կոնստրուկտորական աշխատանքները (ԳՀՓԿՄ)՝ որպես ինովացիոն տնտեսության խթանման կարևորագույն գործոն: Վերլուծվել է նաև ՀՀ-ում բաժնետիրական կապիտալի ներգրավմամբ ինովացիոն գործունեության խթանման հարցը, ինչպես նաև վերլուծվել են ազգային ինովացիոն համակարգի առանձնահատկությունները:

*«Ուրվագծեր հայ տնտեսագիտական մտքի պատմության»* թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Ռ. Սարինյան) շարունակվել են հայ տնտեսագիտական մտքի ինչպես անցյալ, այնպես էլ ներկա ժամանակաշրջանների ուսումնասիրությունները: Վերլուծվել են մի կողմից հայ իրականության նոր շրջանի, մյուս կողմից՝ արդի ազգային տնտեսության տարբեր հարցերի վերաբերյալ դիտակետերը: Դրանք ներարձակ են երևույթների ճանաչողական ընդհանուր հոսքի մեջ: Արդի տնտեսագիտական մտքի վերջին երեք տասնամյակների հետազոտության սույն փորձը եզակի է հանրապետության հասարակագիտական մտքի ոլորտում:

### **3. Թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված արդյունքները**

«Ռազմարդյունաբերության նորարարական զարգացման հնարավորությունները Հայաստանում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Գ. Հարությունյան) գնահատվել է Հայաստանում ռազմարդյունաբերության ներուժը՝ SWOT-AHP մեթոդով, ինչը հնարավորություն է տվել հիմնավորելու ռազմարդյունաբերության զարգացման ռազմավարության առաջնային ուղղությունները: Force Field վերլուծության միջոցով գնահատվել է առաջարկվող վերլուծությունների իրատեսականությունը: Միաժամանակ առաջարկված ռազմավարական սցենարներում գնահատվել են նաև դրանց կարևոր մասնակցություն ունեցող կողմերի շահերը, ռազմավարական ծրագրերի, ինչպես նաև քաղաքական գործողությունների վրա դրանց հավանական ազդեցությունը (Power/interest

մատրիցայի միջոցով): Գնահատվել է նաև ռազմական ծախսերի ազդեցությունը պետության արտաքին պարտքի վրա՝ կիրառելով Յոհանսենի կոինտեգրացիոն թեստը և Գրեյնշեր պատճառականության թեստը: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ Հայաստանում ռազմական ծախսերը և արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռն այն հիմնական գործոններն են, որոնք պայմանավորել են արտաքին պարտքի էական աճը նախորդ 25 տարիներին:

«Հակաճգնաժամային միջոցառումների բարելավման և դրանց արդյունավետության բարձրացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ Տ. Շահինյան) ուսումնասիրվել ու վերլուծվել են համաշխարհային տնտեսության մեջ պարբերաբար տեղի ունեցող տատանումները, հակաճգնաժամային միջոցառումների արտերկրյա և հայաստանյան փորձը, ինչպես նաև մի շարք մակրոտնտեսական ցուցանիշներ: Ուսումնասիրվել են նաև հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետության բարձրացման նորարարական մոտեցումներն ու տնտեսության բոլոր ճյուղերի գործունեության բարելավման հեռանկարները: Կատարված վերլուծությունների և ուսումնասիրությունների արդյունքում ներկայացվել են մի շարք առաջարկություններ, մասնավորապես՝

- ձեռնամուխ լինել գյուղատնտեսության, զբոսաշրջության և շինարարական ոլորտների զարգացմանը՝ հաշվի առնելով վերջիններիս խիստ կարևոր դերը երկրի ՀՆԱ-ի ձևավորման գործում,
- տնտեսության տարբեր ոլորտներում ներդնել ու կիրառել նորարարական տեխնոլոգիաներ, որոնք արդյունավետ կերպով կնպաստեն հետճգնաժամային փուլում տնտեսության զարգացմանն ու կապահովեն տնտեսական աճի բարձր տեմպեր,
- ընդլայնել տնտեսության թվային հատվածը՝ հիմք ընդունելով այն փաստը, որ տնտեսության թվայնացումը նպաստում է գործարքային հատվածի աճին, որը զարգացած երկրներում կազմում է ՀՆԱ-ի ավելի քան 70%-ը: Այս ոլորտը ներառում է պետական կառավարումը, խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների ֆինանսավորումը, մեծածախ և մանրածախ առևտուրը, ինչպես նաև տարատեսակ կոմունալ, անձնական և սոցիալական ծառայությունների մատուցումը: Հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետության բարձրացման կարևորագույն գործիք հանդիսացող թվային լուծումները կնպաստեն վերոնշյալ ոլորտների զարգացմանն ու կապահովեն կայուն տնտեսական աճ:

«ՕՈՒՆ ներգրավման համար անհրաժեշտ ռազմավարության մշակումը որպես ՀՀ տնտեսության զարգացման գերակայություն» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Լ. Մարգարյան) վերլուծվել է ՀՀ ՕՈՒՆ դինամիկան՝ ըստ ոլորտների և ներդրող երկրների, և մեկնաբանվել են ՕՈՒՆ փոփոխությունների հիմնական պատճառները: ՕՈՒՆ ներհոսքի 2000-2018 թթ. վիճակագրական տվյալները ցույց են տվել, որ ՀՀ-ում ներդրումների կտրուկ աճ է գրանցվել 2004 թվականից, ինչը պայմանավորված էր կապի ոլորտում կատարվող ներդրում-

ներով: ՕՈՒՆ ներհոսքն իր առավելագույն մակարդակին է հասել 2008 թ.՝ կտրուկ անկում ապրելով 2010 թ.:

Իրականացվել է համեմատական վերլուծություն ՀՀ, հարևան երկրների, ինչպես նաև ԵՏՄ երկրների ներդրումային միջավայրերի միջև՝ հիմք ընդունելով տարբեր փորձագետների կողմից առաջարկվող ներդրումային միջավայրը պայմանավորող գործոնների ամբողջությունը՝ ըստ 50 գործոնների և ցուցանիշների:

Համեմատական վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ ՀՀ-ն ներդրումային ներուժի և ներդրումային ոլորտի գնահատման համար ընտրված 50 ցուցանիշից ԵՏՄ բոլոր երկրներին զիջում է միայն 15-ում, իսկ 13 ցուցանիշի մասով գրանցել է լավագույն արդյունքը: Վրաստանին ՀՀ-ն զիջում է նշված 50 ցուցանիշներից 26-ով և գերազանցում է միայն 9-ով, իսկ ահա Իրանի պարագայում պատկերն այլ է. 50 ցուցանիշից 22-ի տեսանկյունից ՀՀ դիրքերն անհամեմատ ավելի լավ են, քան Իրանինը: Նշված 50 ցուցանիշի տեսանկյունից մտահոգիչ են ՀՀ ցուցանիշները ՕՈՒՆ ներհոսքի, 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի, աղբատության, բիզնեսի կողմից վճարվող հարկերի տեսանկյունից:

#### *4. Կիրառական աշխատանքների արդյունքները*

«Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. դ., պրոֆ. Վ. Հարությունյան) առաջարկվել են միջոցառումներ, որոնց արդյունքում մեր երկիրը կարելի է դարձնել նաև կարճատև զբոսաշրջային այցերի հանգրվան: Անհրաժեշտ է տարբեր գնողունակություն ունեցող զբոսաշրջիկների համար մշակել մատչելի փաթեթներ և իրագործել արդյունավետ մարքեթինգային քաղաքականություն, նաև զբոսաշրջության ոլորտն անընդհատ համալրել արդիական նորարարական լուծումներով: Բացի այդ, առաջարկվել է դիվանագիտական գործիքակազմերով ընդգծել Հայաստանի Հանրապետության հեղինակությունն ու վարկանիշը, հետևողականորեն նպաստել դեպի մեր երկիր զբոսաշրջային հոսքերի ավելացմանը և ցուցաբերել առանձնահատուկ վերաբերմունք մեր երկիր այցելած յուրաքանչյուր զբոսաշրջիկի հանդեպ:

«Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցության հետևանքների գնահատումը և հետագա հնարավոր զարգացումները» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Լ. Սարգսյան) բացահայտվել են ՀՀ տնտեսության այն ոլորտները, որոնք կարող են միջնաժամկետ հեռանկարում գրավիչ լինել օտարերկրյա ներդրողների համար: Դրանք են մսից, ձկնից և ծովային անողնաշարավորներից արտադրանքի, օձառի, մաքրող միջոցների արտադրությունը և այլն: Բացի այդ, էկոնոմետրիկ մոդելով հաշվարկվել է նաև ՀՀ-ից ԵՏՄ արտահանման ազդեցությունը ՀՀ ՀՆԱ-ի աճի վրա: Արդյունքում ստացվել է, որ դեպի ԵՏՄ արտահանման աճի 1 միավորով աճը նպաստում է ՀՀ ՀՆԱ-ի աճին 2.5 միավորով: Այս հիմնավորմամբ էլ առաջարկվել են դեպի ԵՏՄ շուկա արտահանման աճը խթանող մեխանիզմներ՝ ցուցահանդեսների մասնակցության վճարների մասնակի փոխհատուցում, ՌԴ Ֆոդ-Սիթիի մշտական գործող տաղավարի վճարների աջակ-

ցության մեխանիզմ և այլն:

«Միջազգային հարկային հարաբերությունների կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Բ. Բաղդասարյան) առաջարկվել է առաջիկա տարիներին հարկային քաղաքականության տեսանկյունից առանձնակի կարևորություն տալ գործող հարկային արտոնությունների շրջանակի կրճատմանը, հարկման բազայի ընդլայնմանն ու ամրապնդմանը, ինչը հնարավորություն կընձեռի աստիճանաբար բարելավել հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը և ամրապնդել հարկման հորիզոնական արդարության սկզբունքը: Մասնավորապես՝ արդար հարկման հասկացությունը բխում է նրանից, թե որ հարկատուների նկատմամբ է կիրառվում հավասար մոտեցում:

«Վարկավորման դերը ՀՀ ագրարային ոլորտի զարգացման գործում և դրա բարելավման ուղիները» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Մ. Մանուչարյան) առաջարկվել է կիրառել վարկերի մատչելիության, հասանելիության ու վարկային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված վարկավորման տարբեր մեխանիզմներ և տեխնոլոգիաներ, որոնք նաև կնպաստեն գյուղատնտեսական վարկերի վերադարձմանը, ճյուղում վարկային ռիսկի մեղմմանը, գյուղատնտեսության ապահովագրության ներդրմանը և դրա հետագա զարգացմանը: Առաջարկվել է ներգրավել օտարերկրյա ուղղակի ներդրումներ և նպաստել լիզինգի զարգացմանը, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների հիման վրա իրականացնել ծառայությունների մատուցման խրախուսում և պետության աջակցությամբ առկա բարձրորակ կադրային ներուժի արդյունավետ օգտագործում աշխատուժի արտահոսքը կանխելու համար:

«Բարձր տեխնոլոգիական ոլորտի ձեռնարկությունների գործունեության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Մ. Դալլաքյան) առաջարկվել է ապահովել բարձր տեխնոլոգիական ձեռնարկությունների գործունեության խթանման միջոցառումներ, մասնավորապես՝ արտաքին առևտրային, հարկային, ֆինանսական, վարչական արտոնություններ:

5. 2019 թ. հրապարակումների ցանկը (հավելված 13)

6. *Տվյալներ ինստիտուտի մասին*

Տնօրեն՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ. գ. դ. Վ. Լ. Հարությունյան  
Փոխտնօրեն՝ տ. գ. թ. Լ. Ն. Սարգսյան  
Գիտքարտուղար՝ տ. գ. թ. Բ. Յու. Բաղդասարյան  
Էլեկտրոնային փոստ՝ info@economics.sci.am  
Կայքէջ՝ www.economics.sci.am

7. *Հաշվետու տարում պաշտպանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների քանակը*

Պաշտպանվել է 2 թեկնածուական ատենախոսություն:

8. *Տեղեկություններ հաշվետու տարում պատվավոր կոչումների և պարգևատրումների արժանացած գիտնականների մասին (անունը, ազգանունը, պարգևի լրիվ անվանումը)*

Հաշվետու տարում պատվավոր կոչումների և պարգևատրումների արժանացած գիտնականներ չկան:

9. *Գիտության և կրթության ոլորտում համագործակցությունը ՀՀ բուհերի և այլ կազմակերպությունների հետ, համատեղողների թվաքանակն ըստ կազմակերպությունների, յուրաքանչյուր կազմակերպության հետ համատեղ հրատարակումները*

*Ինստիտուտի 9 աշխատակիցներ դասավանդում են ՀՀ ԲՈՒՀ-երում.*

- Երևանի պետական համալսարան՝ 1,
- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան՝ 2,
- Գ. Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարանի Երևանի մասնաճյուղ՝ 1,
- Հայաստանում ֆրանսիական համալսարան՝ 1,
- Հայաստանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան՝ 1,
- Հայաստանի ազգային ագրարային համալսարան՝ 4,
- Հայ-ռուսական համալսարան՝ 1,
- ՀՀ ԱԻ նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա՝ 1:

*Ինստիտուտի գիտաշխատողները համատեղ հրատարակումներ ունեն հետևյալ կազմակերպությունների աշխատակիցների (կամ ուսանողների) հետ.*

- Երևանի պետական համալսարան՝ 5,
- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան՝ 6,
- Հայաստանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան՝ 2,
- Հայաստանի ազգային ագրարային համալսարան՝ 1,
- Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան՝ 1,
- Գիտությունների ռուսական ակադեմիայի Դադստանի գիտական կենտրոնի Սոցիալ-տնտեսական հետազոտությունների ինստիտուտ՝ 2:

10. *Տեղեկություն համատեղ միավորումների (ամբիոններ, լաբորատորիաներ և այլն) մասին*

Համատեղ միավորումներ չեն գործում

2019 թ. թեմատիկայի ամփոփ տվյալները

№	Կազմակերպությունը	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (ո) և ֆինանսավորման ծավալը (X հազ. դր.)			
		նպատակային ֆինանսավորում	բազային ֆինանսավորում	թեմատիկ ֆինանսավորում	տնտ. պայմանագրեր
1	2	3	4	5	6
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	1 (158515.6)	3 (5955.6)	5(1750)

Արտոնագրային ցուցանիշները

№	Կազմակերպությունը	Արտոնագրերի հայտերի թիվը	Դրական որոշումների թիվը	Մտացված արտոնագրերի թիվը
1	2	3	4	5
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-

Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային գիտական միջոցառումները

№	Միջոցառման անվանումը	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում՝ արտերկրներից
1	2	3	4	5
1	Հանրապետական գիտաժողով՝ «Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում»	ՀՀ ԳԱԱ նիստերի կլոր դահլիճ, Երևան, մայիսի 21, 2019	50	-
2	Հանրապետական գիտաժողով՝ «Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ -ում»	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ, Երևան, նոյեմբերի 26, 2019	80	-

Աշխատակիցների արտասահման (այդ թվում՝ ԱՊՀ երկրներ) կատարած գործուղումները

№	Կազմակերպությունը	Երկիրը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
			գիտաժողովներին մասնակցելու	համատեղ գիտական աշխատանք կատարելու	բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	Լեհաստան	1	-	-
2	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	Չինաստան	1	-	-

Կազմակերպությունում արտասահմանյան գիտնականների ընդունելությունը

№	Կազմակերպությունը	Երկիրը	Ընդունված գիտնականների թվաքանակը		
			գիտաժողովներին մասնակցելու	համատեղ գիտական աշխատանք կատարելու	բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-

Կազմակերպության միջազգային դրամաշնորհները

№	Կազմակերպությունը	Թեմայի անվանումը	Հիմնադրամի կամ կազմակերպության անվանումը	Դրամաշնորհի ժամկետը		Ֆինանսավորման ծավալը (\$, €, դր., քց.)		Թեմայի ղեկավար
				սկիզբ	ավարտ	ընդհանուր	2018 թ. համար	
1	2	3	4	5	6	7	8	9
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-	-	-	-

ԳԱԱ գիտաշխատողների 2019 թ. հրապարակումների ընդհանուր քանակը

№	Կազմակերպությունը	Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր		Ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր		Հոդվածներ, զեկուցումներ		Թեզիսներ	
		հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	12	-	-	-	58	120	-	-

Տվյալներ ԳԱԱ համակարգում գործող մասնագիտական խորհուրդների վերաբերյալ

№	Կազմակերպությունը	Ատենախոսության խորհրդի ծածկագիրը	Մասնագիտության ծածկագիրը և անվանումը	Խորհրդի նախագահը, գիտքարտուղարը (գիտ.աստիճան, անուն, ազգանուն)	2018 թ. կազմակերպության աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսությունների թիվը	
					դոկտորական	թեկնածուական
1	2	3	4	5	6	7
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-	-

## Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներն առ 01.01.2020 թ.

№	Կազմակերպությունը	Աշխատողների ընդհանուր թիվը	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
1	2	3	4	5	6	7	8
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	43	30	1	1	3	16

*1. Գիտական գործունեության կարևորագույն արդյունքները*

«Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճի ապահովման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ. գ. դ., պրոֆեսոր Վլադիմիր Հարությունյան) ուսումնասիրվել է, թե Հայաստանի Հանրապետությունում վերջին 10 տարիների ընթացքում ինչպիսի փոփոխությունների է ենթարկվել հարկեր/ՀՆԱ ցուցանիշը: Համեմատելով նշված ժամանակահատվածը՝ հարկ ենք համարում արձանագրել, որ ԵԱՏՄ անդամակցությունից հետո հարկային բեռն ավելացել է երկու տոկոսով: Այս ցուցանիշի աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ ԵԱՏՄ անդամակցությունից հետո ԵԱՏՄ անդամ պետություններ արտահանված ապրանքների մատակարարման գործարքների նկատմամբ կիրառվեց ԱԱՀ-ի գրոյակյան դրույքաչափ: Հարկային նոր օրենսգրքի ընդունումից հետո հարկեր/ՀՆԱ ցուցանիշն էական փոփոխության չի ենթարկվել, մասնավորապես՝ 2017 թվականին այն եղել է 18.7 տոկոս, իսկ 2019-ին՝ 18.9 տոկոս, այսինքն՝ տարբերությունը կազմել է ընդամենը 0.2 տոկոս, ինչի արդյունքում հանգել ենք այն եզրահանգման, որ սա անհետևողական քաղաքականության արդյունք է, որը չի տանում ստվերի կրճատման:

«Արտահանումը որպես ՀՀ տնտեսական աճի հենասյուն (ոլորտային ռազմավարություն)» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ տ. գ. թ. Լիլիթ Սարգսյան) հիմնավորվել է, որ սահմանափակ ներքին պահանջարկը չի կարող հանդիսանալ երկարատև կայուն տնտեսական աճի գրավական, ուստի տնտեսական աճի հետագա տեմպերի պահպանման համար մեծ կարևորություն է ստանում արտաքին պահանջարկը: Այսինքն՝ արտահանումը կարող է դառնալ հետագա զարգացման հիմնական աղբյուր՝ հնարավորություն տալով արտադրողներին օգտվել մասշտաբի էֆեկտից: Թեմայի կատարման արդյունքում բացահայտվել է տնտեսական աճի վրա արտահանման ազդեցության գիտական հետազոտությունը: Ըստ այդմ՝ արտահանման աճը նպաստում է մասշտաբի էֆեկտից տնտեսման, ինչպես նաև արտարժույթի ներհոսքի, որոնք էլ կարող են հանգեցնել ռեսուրսների առավել արդյունավետ բաշխման, ինչպես նաև՝ անհրաժեշտ հումքի և նոր տեխնոլոգիաների ներմուծման: Արդյունքում հանգում ենք արտադրողականության աճի և ավելի բարձր ավելացված արժեքի ստեղծման, հետևաբար և՝ տնտեսական աճի: Բացի այդ, էկոնոմետրիկ մեթոդների կիրառմամբ բացահայտվել է վերոնշյալ մեխանիզմի առանձին փուլերի տևողությունը ՀՀ-ում: Այսպես՝ արտահանման աճը մինչև 3 ամիս ժամանակահատվածում հանգեցնում է փոխարժեքի արժևորման, որն էլ նպաստում է ներմուծման աճին՝ ընդհուպ մինչև 9 ամիս ժամանակահատվածում: Հումքի և մեքենա-սարքավորումների ներմուծ-

ման աճն էլ իր հերթին պատճառ է հանդիսանում տնտեսական աճի առաջիկա 3-5 տարվա համար:

«Տնտեսական քաղաքականության և քաղաքացու բարեկեցության փոխազդեցության հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ տ. գ. թ. Քրիստինե Բաղդասարյան) վերլուծվել և համակարգվել է տնտեսական քաղաքականության գործիքակազմի միջոցով քաղաքացիական հասարակության ստեղծման անհրաժեշտությունը: Առաջարկվել է ՀՀ-ում կիրառել սոցիալական հաշվետվողականության սկզբունքը, որի արդյունքում ՀՀ քաղաքացիների և հանրային ծառայություններ մատուցողների միջև հարաբերությունները կդառնան թափանցիկ, ամբողջական, իսկ սահմանված իրավունքները կլինեն իրազեկված, կբարելավվի ծառայության մատուցման որակը, և, ի վերջո, կբարձրանա քաղաքացիների բարեկեցությունը՝ վերջիններիս կազմակերպված և գիտակից մասնակցության միջոցով:

«Բարձր տեխնոլոգիական տնտեսության ձևավորման և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ տ. գ. թ. Սվետլանա Դալլաքյան) բացահայտվել է ազգային տնտեսության մրցունակության բարձրացման կլաստերային մոտեցման անհրաժեշտությունը բարձր տեխնոլոգիական ոլորտում, մասնավորապես՝ տեղեկատվահաղորդակցման տեխնոլոգիաների, բիոտեխնոլոգիաների, էկոտեխնոլոգիաների և նանոտեխնոլոգիաների, ինչպես նաև ռազմարդյունաբերության ասպարեզում: Բացահայտվել է ռազմական ծախսերի ազդեցությունը տնտեսության զարգացման վրա, ինչպես նաև քննվել են ռազմական ծախսեր-տնտեսական աճին վերաբերող արդի հիմնահարցեր:

«Նորարարական զարգացման հիմնախնդիրները ՀՀ գյուղատնտեսության ոլորտում» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ տ. գ. թ. Մերի Մանուչարյան) ՀՀ գյուղատնտեսության ոլորտի նորարարական ներուժի համակողմանի գնահատմամբ բացահայտվել են դրա ներդրման և նորարարությունների առևտրայնացման հիմնական ուղղությունները: Բացահայտվել են, որ ՀՀ գյուղատնտեսության ոլորտի զարգացման հիմնական խոչընդոտները հնացած հիմնական միջոցները և տեխնոլոգիաներն են, ինչի պատճառով ոլորտի նորարարական զարգացման նպատակահարմարությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկա պայմաններում գրեթե բոլոր ռեսուրսները սահմանափակ են, և առաջանում է ռեսուրսախնայողություն: Ի դեպ, պետք է նշել, որ ոլորտը շարունակում է զարգանալ մեծապես էքստենսիվ ճանապարհով: Ներկայումս ոլորտի ներդրումային ակտիվությունը գտնվում է շատ ցածր մակարդակի վրա, ինչը պայմանավորված է ինչպես ողջ տնտեսության, այնպես էլ առանձին մարզերի վատ տնտեսական վիճակով:

## *2. Բազային ֆինանսավորմամբ ստացված արդյունքները*

«Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճի ապահովման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտ. դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Հարությունյան) ուսումնասիրվող տասնամյա ժամանակաշրջանում հարկային բեռի վերաբերյալ վերլուծությունները կատարվել են երկու փուլերով՝

1. 2007-2015 թթ., որն ընդգրկում է մինչ ԵԱՏՄ անդամակցությունը,

2. 2015-2019 թթ.՝ ԵԱՏՄ անդամակցությունից հետո:

Այսպես, մինչև ԵԱՏՄ անդամակցությունը հարկային բեռը միջինը կազմել է 16.9 տոկոս, իսկ ԵԱՏՄ անդամակցությունից հետո՝ 18.9 տոկոս:

Նշենք նաև, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում երկու անգամ փոփոխվեց ՀՀ հարկային օրենսգիրքը, մասնավորապես՝ ՀՀ-ում 2018 թվականի հունվարի 1-ից ընդունվեց հարկային նոր օրենսգիրք, որտեղ փոփոխության ենթարկվեցին օրենքներ, որոնք վերաբերում էին ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի հարկերին: Ուղղակի հարկերից փոփոխության ենթարկվեց, մասնավորապես, եկամտային հարկը, այն է՝ մինչև 150.000 դրամը ներառյալ դրույքաչափը կազմել է 23 տոկոս, իսկ 150.000-2.000.000 դրամը ներառյալ՝ 28 տոկոս: Հայաստանի Հանրապետությունը ԵԱՏՄ անդամ երկրների մեջ 2019 թվականի առաջին կիսամյակում ունեցել է ՀՆԱ-ի ցուցանիշի կտրուկ աճ: Հայաստանում, համեմատած անդամ մյուս երկրների հետ, գործում է եկամտային հարկի ամենաբարձր դրույքաչափը, որը հարկային նոր օրենսգրքի ընդունումից հետո դարձել է միասնական և կազմում է 23 տոկոս: Սակայն ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված է այն ևս աստիճանաբար նվազեցնել՝ 2023 թվականին հասցնելով մինչև 20 տոկոսի:

«Արտահանումը որպես ՀՀ տնտեսական աճի հենասյուն (ուլորտային ռազմավարություն)» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ տ. գ. թ. Լիլիթ Մարգարյան) պարզ դարձավ, որ ժամանակակից տնտեսություններում կարևոր է համարվում կայուն և դինամիկ տնտեսական աճի ապահովումը, որի համար էլ անհրաժեշտ է բացահայտել տնտեսության մրցունակ և ոչ մրցունակ արտադրության ճյուղերը: Մրցունակ ճյուղերին անհրաժեշտ է պետական աջակցություն ցուցաբերել, որպեսզի դրանք զարգանան և իրենց ուրույն տեղը գտնեն համաշխարհային շուկայում: ՀՀ արտահանման կառուցվածքի ներկայիս վիճակի վերլուծությունը ցույց է տալիս դրանում առկա լուրջ հիմնախնդիրները. նախ՝ արտահանման մոտ 80%-ը ապահովվում է միայն 4 ապրանքախմբի հիման վրա, ուստիև արտահանումը ՀՀ-ում բարձր աստիճանի կենտրոնացված է: Բացի այդ, ի համեմատ 2001 թվականի, 2020 թ. դրությամբ ՀՀ արտահանման մեջ էապես ավելացել է ռեսուրսատար ապրանքների արտահանման տեսակակար կշիռը, և նվազել է բարձր և միջին տեխնոլոգիատար ապրանքների արտահանման տեսակարար կշիռը, ինչը ամենևին էլ չի կարող նպաստել տնտեսության հետագա արդյունավետ զարգացմանը:

«Բարձր տեխնոլոգիական տնտեսության ձևավորման և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ տ. գ. թ. Սվետլանա Դալլաբյան) ուսումնասիրվել և վերլուծվել են բարձր տեխնոլոգիական տնտեսությունը բնութագրող մի շարք համաթվեր և ենթահամաթվեր, ռազմական ծախսերն ըստ առանձին բաղադրիչների, գործոնների և ՀՆԱ-ի վրա ունեցած ազդեցության, ինովացիոն տնտեսության զարգացման առանձնահատկությունների օտարերկրյա փորձը (Ճապոնիա, Հարավային Կորեա, Չիլի), ինովացիոն գործունեության ինստիտուցիոնալ հիմքերը, կրթության ինովացիոն մոտեցումները և աշխատանքի շուկայի առանձնահատկությունները, ինչպես նաև դիտարկվել է կապիտալի շուկայի դերը ՀՀ տնտեսության ինովացիոն զարգացման գործընթացում:

«Նորարարական զարգացման հիմնախնդիրները ՀՀ գյուղատնտեսության ոլորտում» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ տ. գ. թ. Մերի Մանուչարյան) վերլուծվել են նորարարությունների տեղը, դերը և նշանակությունը ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման գործում, ՀՀ ագրարոպարենային համակարգում նորարարությունների անհրաժեշտությունը, հիմնախնդիրները և դրանց հաղթահարման ուղիները, գյուղատնտեսական ոլորտի նորարարական զարգացման առանձնահատկությունները, մոդելները և արտասահմանյան փորձը, ՀՀ նորարարական ներուժի դերը տնտեսական աճի ապահովման գործում, նորարարական ներուժի գնահատմանն ու զարգացմանը խոչընդոտող գործոնները, նորարարական տնտեսության ձևավորման միտումները և առկա խնդիրները, գյուղատնտեսական ոլորտի նորարարական զարգացման մեխանիզմները և այլն:

«Տնտեսական քաղաքականության և քաղաքացու բարեկեցության փոխազդեցության հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ տ. գ. թ. Քրիստինե Բաղդասարյան) հիմնավորվել է, որ պետությունն իր ներկայիս տնտեսական քաղաքականությամբ ձգտում է վերակառուցել սոցիալական պաշտպանության համակարգը նոր տրամաբանությամբ՝ շեշտը դնելով մարդկանց համար հավասար մեկնարկի և իրավունքների լիարժեք իրականացման իրական հավասար հնարավորություններ ձևավորելուն և զարգացնելուն նպաստող միջավայր ստեղծելու վրա: Հետազոտության մեջ վերլուծվել է տնտեսական քաղաքականության գործիքակազմի ազդեցությունը քաղաքացու անմիջական բարեկեցության փոփոխության վրա, մասնավորապես՝ հարկային, արտահանման խթանման, դրամավարկային քաղաքականությունները ինչ հնարավորություններ կամ խոչընդոտներ են ստեղծում բիզնես-պետություն-հասարակություն ձևաչափի համագործակցության համար: Եթե թվարկված քաղաքականություններից որևէ մեկը շեղվում է իր թիրախից, այս հարթակը ձևափոխվում է ստեղծելով ճեղքվածք, հատկապես՝ հասարակության սոցիալական հավասարության և արդարության սկզբունքների միջև: Աշխատանքում ուսումնասիրվել են 38 պետություններ, որտեղ մեկ շնչին բաժին ընկնող համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) 20.000 դոլարից ավել է: Այսինքն՝ այս 38-ն աշխարհի ամենաբարեկեցիկ պետություններն են: Ինչպես ներկայացվել է The Economist Intelligence Unit-ի և The Freedom House-ի կողմից հրապարակված 2019 թվականի ժողովրդա-

վարության ինդեքսների համաձայն, նշված պետություններից միայն 33-ն են ժողովրդավար, իսկ 5-ն ավտորիտար են: Այսինքն աշխարհի ամենաբարեկեցիկ երկրները կա մ ժողովրդավար են, կա մ նավթ ու գազ ունեն: Ու թեև նավթի կամ բնական գազի մեծ պաշարներ ունենալը դեռ բարեկեցության երաշխիք չէ, սակայն արձանագրենք, որ բարեկեցիկ ու հարուստ երկիր լինելու համար անհրաժեշտ պայման է կա մ ժողովրդավարությունը, կա մ նավթի ու գազի մեծ պաշարները: Քանի որ Հայաստանը չունի ո՛չ բնական գազի և ո՛չ էլ նավթի պաշարներ, ակնհայտ է, որ տնտեսական զարգացման ու բարեկեցության մեր միակ ճանապարհը կայուն ժողովրդավարության կերտումն է:

«Թվային տնտեսությունը որպես ՀՀ զարգացման նոր հարացույց. մարտահրավերներ, հնարավորություններ և հեռանկարներ» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ տ. գ. թ. Գևորգ Հարությունյան) վերլուծվել է «Թվային տնտեսության» էությունը, առանձնահատկությունները, դերը, պայմանները, վտանգները և խնդիրները: Թվային տնտեսությունը զարգացել է առաջին հերթին արդյունաբերական երկրներում: Աշխատանքում ուսումնասիրվել է թվայնացման ոլորտում համաշխարհային մի շարք առաջատար երկրների փորձը, մասնավորաբար՝ ԱՄՆ, Ճապոնիա, Չինաստան, Հարավային Կորեա, Գերմանիա:

Դիտարկված երկրներում թվային տնտեսության զարգացմանը մեծապես նպաստել են հետևյալ գործոնները.

- հարկային, իրավական և ձեռնարկատիրական միջավայի բարելավումը, մտավոր սեփականության պաշտպանվածության մակարդակի շարունակական բարձրացումը,
- ՏՀՏ ոլորտի արժեթղթերի շուկայի կապիտալիզացիայի աճը,
- բանկային և ֆինանսական ծառայությունների որակի բարձրացումը և վենչուրային կապիտալի հասանելիության /մատչելիության ապահովումը,
- ընդհանուր բնակչության կազմում համակարգչից, բջջային հեռախոսներից, ինչպես նաև ինտերնետից օգտվողների քանակի աճը,
- էլեկտրոնային կառավարման և մասնակցության համակարգի զարգացումը,
- կիրառական տեխնոլոգիայի մակարդակի բարձրացումը:

ԵԱՏՄ անդամ երկրների վերլուծությունը ցույց տվեց, որ թվային տեխնոլոգիաների ավելի լայն տարածման համար պետության կողմից բարենպաստ միջավայրի ձևավորումը չափազանց կարևոր է: Միննույն ժամանակ, այստեղ կարող ենք խոսել ոչ միայն թվային ենթակառուցվածքի զարգացման ֆինանսավորման, այլ նաև բիզնեսի թվայնացման համար անհրաժեշտ իրավական հիմքերի ապահովման և նոր տեխնոլոգիաներ ընդունելու պետական մարմինների ճկունության մասին:

Ընդհանուր առմամբ, տարածաշրջանում անհրաժեշտ է զարգացնել թվային մշակույթը. այս պահին ԵԱՏՄ անդամ բոլոր երկրներում թվայնացման գործընթացի հիմնական շարժիչ ուժը բիզնեսն է: Միննույն ժամանակ, թվային տնտեսության զարգացումն արագացնելու համար առաջնային փուլը հիմնական ՏՀՏ ենթակառուցվածքների արդիականացման ձևավորումն ու արդիականացումն է:

«Ուրվագծեր հայ տնտեսագիտական մտքի պատմության» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ տ. գ. դ., պրոֆ. Ռոբերտ Սարինյան) շարունակվել են ուսումնասիրությունները հայ տնտեսագիտական մտքի ինչպես անցյալ, այնպես էլ ներկա ժամանակաշրջանների կտրվածքներով: Հատկապես ուշադրություն է դարձվել հետհեղափոխական Հայաստանում տնտեսագիտական մտքի զարգացումներին: Ուսումնասիրվել են ինչպես արդեն հայտնի, այնպես էլ երիտասարդ տնտեսագետների աշխատանքներ:

### *3. Թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված արդյունքները*

«ՕՈՒՆ ներգրավման համար անհրաժեշտ ռազմավարության մշակումը որպես ՀՀ տնտեսության զարգացման գերակայություն» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ տ. գ. թ. Լիլիթ Սարգսյան) վերլուծվել են 2000-2018 թթ. ՀՀ ՕՈՒՆ դինամիկան, ՀՀ ներդրումային միջավայրը պայմանավորող օրենսդրական դաշտը: Համեմատական վերլուծության է ենթարկվել նաև ներդրումային միջավայրի վրա ազդող 50 ցուցանիշի համախումբը: Մասնավորապես՝ պարզ է դարձել, որ գործարարության դյուրինության ինդեքսի 10 ենթակետերից 6-ում ՀՀ-ն ավելի վատ դիրքում է գտնվում, քան ԵՏՄ անդամ երկրները, հարևան Վրաստանին զիջում է 10-ից 8-ում, իսկ Իրանին՝ միայն 1-ում: Այսպիսով՝ գործարարության դյուրինության ինդեքսի բարելավման համար ՀՀ-ն պետք է դիրքերի բարելավման քայլեր իրականացնի շինարարության թույլտվության ստացման, էլեկտրաէներգիայի միացման, փոքր ներդրողների պաշտպանության, հարկերի վճարման, պայմանագրերի կիրարկման և վեճերի քննման տեսանկյունից: Ընդ որում՝ նշված ցուցանիշներից ամենավատ դիրքում ՀՀ-ն գտնվում է շինարարության թույլտվության ստացման ցուցանիշի տեսանկյունից: Իսկ ներդրումային ներուժի և ներդրումային դիսկի գնահատման համար ընտրված 40 ցուցանիշներից ՀՀ-ն ԵՏՄ բոլոր երկրներին զիջում է միայն 5-ում, իսկ 13 ցուցանիշի մասով գրանցել է լավագույն արդյունքը: Սակայն Վրաստանին ՀՀ-ն զիջում է նշված 35 ցուցանիշներից 26-ով և գերազանցում է միայն 9-ով: Իսկ ահա Իրանի պարագայում պատկերն այլ է. 35 ցուցանիշից 22-ի տեսանկյունից ՀՀ դիրքերն անհամեմատ ավելի լավ են, քան ԻԻՀ-ինը: Նշված 35 ցուցանիշի տեսանկյունից մտահոգիչ են ՀՀ ցուցանիշները ՕՈՒՆ ներհոսքի, 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի, աղքատության, բիզնեսի կողմից վճարվող հարկերի տեսանկյունից:

Ներկայացվել են հայտնաբերված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ: Ներդրումային դաշտի թերությունների առավել խոր վերլուծության համար նախապես մշակված հարցաթերթի հիման վրա սոցիոլոգիական հարցում է իրականացվել 1832 կազմակերպությունների ներկայացուցիչների շրջանում, որոնցից 521-ը՝ օտարերկրյա կապիտալով: Իրականացված սոցիոլոգիական հարցման համաձայն՝ տնտեսվարողների կողմից բարձրաձայնված ամենաեական խնդիրներն են՝ առևտրային վարկի բարձր տոկոսադրույքը՝ 52.5 %, առևտրային վարկի համար պահանջվող գրավի առկայությունը՝ 28 %, նոր ներդրողների ներգրավման դժվարությունը՝ 27.2 %, աշխատողների մասնագիտական հմտու-

թյունների անհամապատասխանությունը կազմակերպության պահանջներին՝ 49 %, բարձր հարկադրույթները՝ 39 %, մաքսագերծման ժամանակ հսկիչ գների չարդարացված չափի արդյունքում առաջացող վճարումները՝ 21 % և այլն: Մշակվել են տնտեսվարողների կողմից բարձրաձայնված խնդիրների լուծման ուղիներ:

Կատարված է կոնոմետրիկ վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ 1 տարվա ընթացքում ՀՀ-ում ՕՌԻՆ ներհոսքը մեծացնում է ՀՆԱ-ի աճը 3,1 միավորով, իսկ արտահանումը՝ 2 միավորով:

Ռեգրեսիոն վերլուծության միջոցով գնահատվել է ՕՌԻՆ ազդեցության բնույթը մի շարք ցուցանիշների վրա, որի արդյունքում բացահայտվել են հետևյալ փոխառնչությունները.

1. ՕՌԻՆ ներհոսքը ՀՆԱ-ի աճի վրա ամենամեծ նպաստումն է ունենում բարձր եկամտով երկրներում՝ ի համեմատ համաշխարհային միջինի և եկամտային այլ խմբի երկրների: Այդուհանդերձ Հայաստանում այդ ազդեցության չափը շատ ավելի մեծ է, ինչը կարող է բացատրվել փոքր երկիր լինելու և սակավ ֆինանսական ռեսուրսների տիրապետելու հանգամանքով, երբ յուրաքանչյուր միավոր նոր ներդրումը հանգեցնում է ՀՆԱ-ի մեծ աճի:
2. ՕՌԻՆ աճը միջին եկամտով երկրներում անհամեմատ մեծ չափով է նպաստում արտահանման աճի, քան բարձր եկամտով երկրներում: Մինչդեռ Հայաստանում ՕՌԻՆ աճը նպաստում է 1 տարի անց արտահանման որոշակի կրճատման:
3. ՕՌԻՆ աճը դիտարկվող բոլոր երկրներում նպաստում է ներմուծման աճին, սակայն ամենամեծ դրական նպաստում արձանագրվել է միջին եկամտով երկրներում:
4. ՕՌԻՆ աճը նվազեցնում է գործազրկության մակարդակը բոլոր դիտարկվող դեպքերում, սակայն ամենամեծ չափով գործազրկությունը նվազում է բարձր եկամտով երկրներում:

Հիմնվելով Բացահայտ համեմատական առավելության ինդեքսի հաշվարկի վրա՝ կարող ենք նշել այն ոլորտները, որոնցում ԵՏՄ անդամ, ինչպես նաև հարևան Վրաստանի և Իրանի համեմատությամբ միայն ՀՀ-ն ունի ԵՏՄ շուկա արտահանման տեսանկյունից բացահայտ համեմատական առավելություն: Դրանք են՝ կենդանի ծառեր, թփեր, բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք, ծխախոտ, կաշվե իրեր, կենդանիների աղիքից իրեր, տրիկոտաժե հագուստ և պարագաներ, գլխարկներ ապրանքախմբերը: Ուստի այս ոլորտները կարելի է համարել ՀՀ տնտեսություն այսօր արդեն ամենամեծ ներդրումների ներգրավման հնարավորություն ունեցողներից:

ՀՀ ներքին սպառման շուկան բավական փոքր է, այդ պատճառով որպես ներդրումային հեռանկարային ոլորտ դիտարկել ենք դեպի ԵՄ, ԵԱՀԿ, ԱՄՆ, Չինաստանի, Իրանի և Վրաստանի շուկաներ արտահանման հնարավորություն ունեցող ոլորտները: Վերլուծության մեջ բացահայտվել են ներդրումային միջավայրի վրա ազդող գործոններն ու խնդիրները, և արվել են դրանց լուծմանն ուղղված առաջարկներ: Ներկայացվել են ՕՌԻՆ ներգրավման համար անհրա-

ժեշտ լավագույն պայմանները՝ հաշվի առնելով համաշխարհային փորձը և Հայաստանի առանձնահատկությունները: Մշակվել են արտերկրում ՀՀ առևտրային ներկայացուցիչների կողմից դեպի ՀՀ ներդրումների հոսքը խրախուսմանն ուղղված քայլեր: Ներկայացվել են [investinarmenia.am](http://investinarmenia.am) ներդրումային հարթակների թերությունները, և առաջարկվել են դրանց բարելավմանն ուղղված առաջարկներ միջազգային լավագույն ներդրումային հարթակների օրինակների հիման վրա, ինչպիսիք են, օրինակ,

Ֆիլիպինների <https://www.angelinvestmentnetwork.com.ph/>,

Ռուսաստանի <https://rusinvestproject.ru/katalog-investproektov/> և

ԵՄ-ի <https://ec.europa.eu/eipp/desktop/en/index.html?2nd-language=en> կայքերը:

Հիմնվելով ներդրումային միջավայրի՝ մեր կողմից բացահայտված խնդիրներին, աշխարհում դրանց լուծման փորձի և ՀՀ-ում դրա տեղայնացման հնարավորությունների վրա, վերլուծելով թոփչածև զարգացում արձանագրած երկրների փորձը հատկապես ներդրումների ներգրավման ոլորտում՝ մշակվել և առաջարկվել է ՀՀ ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված ռազմավարական ծրագիր (նախագիծ), որը ներառում է ՀՀ երկարաժամկետ զարգացման ընդհանուր տնտեսական կուրսին, ներդրումային ընդհանուր և ոլորտային բարելավումներին, ինչպես նաև առանձին տարածաշրջանների ներդրումային գրավչության բարձրացմանն ուղղված քայլերի ամբողջություն՝ սկսած տրամադրվող աջակցության մեխանիզմներից մինչև ներդրումային հարթակի լավարկում և արտերկրի ՀՀ ներկայացուցչությունների գործունեության արդյունավետության բարձրացում:

#### *4. Կիրառական աշխատանքների արդյունքները*

«Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճի ապահովման հիմնախնդիրները և դրանց լուծմանն ուղիները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ. գ. դ., պրոֆեսոր Վլադիմիր Հարությունյան) արձանագրվել է, որ յուրաքանչյուր պետություն մշտապես կանգնած է հարկային բեռի օպտիմալ մակարդակի հասնելու խնդրի առջև: Հարկային բեռի բարձր մակարդակը սկզբնական շրջանում պետության համար դրական ցուցանիշ է համարվում, քանի որ այն ապահովում է հարկային մեծ եկամուտներ: Սակայն պետք չէ այս խնդրին նայել միանշանակ, քանի որ հարկային բարձր բեռը մյուս կողմից էլ հանգեցնում է գործարար ակտիվության նվազմանը: Եվ, որպես հետևանք, կրճատում է բնակչության կողմից աշխատելու խթանները, ինչն էլ իր հերթին հանգեցնում է հարկային եկամուտների կրճատմանը: Հետևաբար հարկային քաղաքականություն մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել երկու կարևոր գործոններ. առաջին՝ հարկերը պետք է համատեղելի լինեն տնտեսական արդյունավետության հետ, և երկրորդ՝ հարկային համակարգը պետք է լինի հավասարական, այսինքն՝ այն պետք է համատեղելի լինի արդարության սկզբունքի հետ:

«Արտահանումը որպես ՀՀ տնտեսական աճի հենասյուն (ոլորտային ռազմավարություն)» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ տ. գ. թ. Լիլիթ Սարգսյան)

տնտեսական աճի վրա արտաքին առևտրի ազդեցությունն առավելապես դրական դարձնելու նպատակով առաջարկվել են հետևյալ քայլերը.

- ՀՀ արտահանման կառուցվածքում ռեսուրսատար և ցածր տեխնոլոգիատար ապրանքների արտահանումից աստիճանաբար անցում կատարել դեպի միջին և բարձր տեխնոլոգիատարության ապրանքների արտադրություն և արտահանում,
- ներմուծման կառուցվածքում մեծացնել արդյունաբերական նպատակներով օգտագործվող մեքենա-սարքավորումների և այն արդյունաբերական հումքի ներմուծումը, որը բնակլիմայական և այլ պատճառներով տեղում հնարավոր չէ արտադրել, կամ դրա արտադրությունը տնտեսապես անարդյունավետ է:

Երկարատև ժամանակահատվածում արտահանման հնարավորությունների բացահայտման համար իրականացված հանգամանալից վերլուծության արդյունքում բացահայտվել են մի շարք հնարավորություններ.

- հայկական գյուղմթերքը, ի համեմատ շատ երկրներում արտադրվող գենամոդիֆիկացված մթերքների, ունի զգալի արտահանման առավելություն: Ուստի այս առավելության կորստին նպաստող հանգամանքները, ինչպիսիք են հանքերի շահագործումը, բաց պոչանքների առկայությունը և այլն, նվազեցնելու պարագայում մենք կկարողանանք գյուղմթերքի համաշխարհային շուկայում գրավել ուրույն տեղ: Հիմնական թիրախային շուկաներ կարող են հանդիսանալ ՌԴ, ԵՄ, ԱՄՆ շուկաները, իսկ առաջարկվող նոր արտադրատեսակները (թեյի վարդ, մասուր) կարտահանվեն Մերձավոր Արևելքի շուկաներ: Կոնյակի արտահանման համար որպես թիրախային շուկա առաջարկվում է ԱՄՆ և Չինաստանի շուկաները, իսկ գինիների և այլընտրանքային համերով օղիների համար՝ ՌԴ-ն և Չինաստանը:
- Հանքահումքային ապրանքների չմշակված տարբերակների արտահանումը, մեր կարծիքով, նույն տեմպով չի կարելի թույլատրել: Անհրաժեշտ է արտահանել գոնե դրանց վերամշակված տարբերակները: Հանքահումքային արտադրանքի արտահանման սահմանափակման տեսանկյունից կարևորում ենք նաև պելոլիտի արտահանումը, քանի որ այս ապարը հնարավոր է կիրառել ամենատարբեր արտադրություններում՝ սկսած շինարարականից մինչև կենցաղային սնունդ ու բժշկություն:
- Կոշկեղենի և տեքստիլ արդյունաբերությունները ևս առնվազն միջնաժամկետ հեռանկարում կարող են ձեռք բերել արտահանման մրցունակություն: Հեռանկարային է համարվում նաև արտաքին շուկայում մեծ պահանջարկ ունեցող մետաքսե արտադրանքի արտահանումը: Ոլորտի արտահանման հիմնական թիրախային շուկաներ կդառնան ԱՄՆ-ն ՌԴ-ն և Գերմանիան, որոնց հետ արդեն իսկ այսօր առկա է փոքրածավալ համագործակցություն:
- Աղամանդագործության և ոսկերչության ոլորտի զարգացման պարագայում անհրաժեշտ է շեշտադրել ոսկե իրերի արտադրությունը, քանի որ դրանցում ստեղծվող ավելացված արժեքն ավելի մեծ է: Ընդ որում՝ ոլորտի հետագա զարգացումն առավել նպատակահարմար կլինի կազմակերպել կլաստե-

րային զարգացման մոդելով:

- Մեքենաշինության ոլորտում առաջանցիկ աճի հնարավորություն ունեն էլեկտրոնիկան և ճշգրիտ ճարտարագիտությունը: Այս բնագավառում գործող գրեթե բոլոր ընկերությունները պահպանել են իրենց հետազոտական-փորձարարական լաբորատորիաները, սակայն դրանց արտադրական հզորությունները հնացած են և ունեն լուրջ ներդրումների կարիք վերագինման համար:
- Քիմիական արդյունաբերության հնարավորություններին անդրադառնալիս բացահայտվեց, որ ոլորտն առավելապես մեծ զարգացման հեռանկար ունի տեքստիլ արդյունաբերության հետ համատեղելու պարագայում՝ քիմիական արհեստական մանրաթելերի և դրանցից արտադրանքի արտադրության, ինչպես նաև համաշխարհային շուկայում այս ոլորտի համեմատաբար նոր ճյուղի՝ չիրկիզվող պոլիմերային նյութերի և կտորների արտադրության զարգացմամբ: Իսկ զուտ քիմիական արտադրանքներից արտահանման հնարավորություններն առավելապես մեծ են կենցաղային և նուրբ օրգանական քիմիայի պարագայում:

«Բարձր տեխնոլոգիական տնտեսության ձևավորման և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ տ. գ. թ. Սվետլանա Դալլաքյան) ներկայացվել են կիրառական բնույթի հետևյալ առաջարկները.

- ռազմական ծախսերի քաղաքականություն մշակելիս հաշվի առնել տարածաշրջանային բազմարկիչի գործոնը, քանի որ, ինչպես հիմնավորվել է, ռազմական ծախսերը կարող են ոչ միայն պահպանվել ամբողջ տնտեսությունում, այլ նաև բերել տնտեսական աճ ու հետագայում, կոռեկցիայի ենթարկվելով, ինքնապահովվել:
- Տնտեսության մի շարք ճյուղերի, ինչպես նաև կառավարության գործունեության մեջ ներդնել կիբերանվտանգության, տեղեկատվական անվտանգության խնդիրների լուծման առաջավոր մոտեցումներ՝ մշակելով Հայաստանում կիբերանվտանգությանը վերաբերող հայեցակարգ, որի արդյունքում կարող է ձևավորվել կիբերանվտանգության կենտրոն՝ ՀՀ պետական և մասնավոր ենթակառուցվածքները կիբերհարձակումներից պաշտպանելու նպատակով, և որքան հաջողվի արդյունավետ լինել այս դաշտում, այնքան ավելի արագ կապահովենք տեխնոլոգիաների մուտքն առօրյա կյանք:
- Կապիտալի շուկայի միջոցով ինովացիոն գործունեության ֆինանսավորման խթանում հետևյալ ուղիներով. հարկային և մաքսային արտոնությունների տրամադրում, մասնավորապես՝ ինովացիոն ոլորտում գործող ընկերությունների հարկազանձման մակարդակի նվազեցում, բաժնետիրական ընկերությունների ինովացիոն արտադրանքների արտահանմանն աջակցություն, արտադրական ձեռնարկությունների, գիտական և կրթական հաստատությունների միջև արդյունավետ համագործակցության ապահովում:

«Նորարարական զարգացման հիմնախնդիրները ՀՀ գյուղատնտեսության ոլորտում» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ տ. գ. թ. Մերի Մանուչարյան) առաջարկվել է ստեղծել նախապայմաններ, որպեսզի գյուղատնտեսության

ուղորտի նորարարությունները հասանելի լինեն ոչ միայն հարուստ ֆերմերներին, այլև միջին և ցածր եկամուտ ունեցող գյուղացիական տնտեսություններին, որոնք ավելի մեծ տեսակարար կշիռ են կազմում ՀՀ-ում: Այս պարագայում անհրաժեշտ է կիրառել արտասահմանյան փորձը և գյուղատնտեսության նորարարական նախագծի արժեքի 50 %-ի չափով տալ պետական երաշխավորություն, ինչը նաև կհանգեցնի ուղորտի ռիսկայնության մակարդակի նվազեցմանը: Համագործակցության, կապերի հաստատման և ամրապնդման նպատակով (ներդրողներ, ֆերմերներ) անհրաժեշտ է ստեղծել վեբ-հարթակներ, ինչպես նաև կազմակերպել ցուցահանդեսներ: Նորարարական զարգացման պայմաններում ավելի է կարևորվում տնտեսություն և գիտություն կապի ամրապնդումը, և նրանք պետք է գործեն միասնական գործընկերության մթնոլորտում, որպեսզի հնարավոր լինի ապահովել բարձր արդյունավետություն:

5. Հրապարակումները տես հավելված 14-ում:

6. ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

Տնօրեն՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ.գ.դ. Վ.Լ.Հարությունյան

Փոխտնօրեն՝ տ.գ.թ. Լ.Ն.Սարգսյան

Գլխաբարտուղար՝ տ.գ.թ. Զ.Յու.Բաղդասարյան

Էլեկտրոնային փոստ՝ info@economics.sci.am

Կայքէջ՝ www.economics.sci.am

8. Հաշվետու տարում պաշտպանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների քանակը:

Պաշտպանվել է 4 թեկնածուական ատենախոսություն:

9. Տեղեկություններ հաշվետու տարում պատվավոր կոչումների և պարգևատրումների արժանացած գիտնականների մասին (անունը, ազգանունը, պարգևի լրիվ անվանումը):

ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթում հաղթող է ճանաչվել ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտ. դոկ., պրոֆեսոր Վ.Լ.Հարությունյանը

10. Գիտության և կրթության ոլորտում համագործակցությունը ՀՀ բուհերի և այլ կազմակերպությունների հետ՝ նշելով համատեղողների թվաքանակն ըստ կազմակերպությունների, յուրաքանչյուր կազմակերպության հետ համատեղ հրապարակումները:

*Ինստիտուտի 9 աշխատակիցներ դասավանդում են ՀՀ ԲՈՒՀ-երում՝*

- Երևանի պետական համալսարան՝ 1,

- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան՝ 2,
- Գ.Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարանի Երևանյան մասնաճյուղ՝ 2,
- Հայաստանում ֆրանսիական համալսարան՝ 1,
- Հայաստանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան՝ 1,
- Հայաստանի ազգային ագրարային համալսարան՝ 4,
- Հայ-ռուսական համալսարան՝ 1,
- ՀՀ ԱԻ նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա՝ 1:

*Ինստիտուտի գիտաշխատողները համատեղ հրապարակումներ ունեն հետևյալ կազմակերպությունների աշխատակիցների (կամ ուսանողների) հետ.*

- Հայ-ռուսական համալսարան՝ 1 հատ,
- Երևանի պետական համալսարան՝ 2 հատ,
- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան՝ 2 հատ,
- Հայաստանի ազգային ագրարային համալսարան՝ 1 հատ,
- Հայաստանի ամերիկյան համալսարան՝ 2 հատ,
- Չինաստան Բանգոր համալսարան՝ 1 հատ,
- Գիտությունների ռուսական ակադեմիայի Դադստանի գիտական կենտրոնի Սոցիալ-տնտեսական հետազոտությունների ինստիտուտ՝ 1 հատ:

11. Տեղեկություն համատեղ միավորումների (ամբիոններ, լաբորատորիաներ և այլն) մասին:

Համատեղ միավորումներ չեն գործում

Աղյուսակ 1

2020 թ. թեմատիկայի ամփոփ տվյալները

№	Կազմակերպությունը	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (ո) և ֆինանսավորման ծավալը (X հազ. դր.)			
		նպատակային ֆինանսավորում	բազային ֆինանսավորում	թեմատիկ ֆինանսավորում	տնտ. պայմանագրեր
1	2	3	4	5	6
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ	-	1 (133.191,7)	3 (8.706,0)	5 (1.142,8)

Աղյուսակ 2

Արտոնագրային ցուցանիշները

№	Կազմակերպությունը	Արտոնագրերի հայտերի թիվը	Դրական որոշումների թիվը	Ստացված արտոնագրերի թիվը
1	2	3	4	5
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-

Աղյուսակ 3

Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային գիտական միջոցառումները

№	Միջոցառման անվանումը	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում՝ արտերկրներից
1	2	3	4	5
1	Միջազգային գիտաժողով՝ «Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում»	ՀՀ ԳԱԱ նիստերի կլոր դահլիճ, Երևան, նոյեմբերի 20, 2020	50	-

Աղյուսակ 4

Աշխատակիցների արտասահման (այդ թվում՝ ԱՊՀ երկրներ) կատարած գործուղումները

№	Կազմակերպությունը	Երկիրը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
			գիտաժողովների մասնակցելու	համատեղ գիտական աշխատանք կատարելու	բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
1	-	-	-	-	-

Աղյուսակ 5

Կազմակերպությունում արտասահմանյան գիտնականների ընդունելությունը

№	Կազմակերպությունը	Երկիրը	Ընդունված գիտնականների թվաքանակը		
			գիտաժողովների մասնակցելու	համատեղ գիտական աշխատանք կատարելու	բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	-	-	-	-

Աղյուսակ 6

Կազմակերպության միջազգային դրամաշնորհները

№	Կազմակերպությունը	Թեմայի անվանումը	Հիմնադրամի կամ կազմակերպության անվանումը	Դրամաշնորհի ժամկետը		Ֆինանսավորման ծավալը (\$, €, դր., րպ.)		Թեմայի դեկավար
				սկիզբ	ավարտ	ընդհանուր	2018 թ. համար	
1	2	3	4	5	6	7	8	9
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ	-	-	-	-	-	-	-

Աղյուսակ 7

ԳԱԱ գիտաշխատողների 2020 թ. հրապարակումների ընդհանուր քանակը

№	Կազմակերպությունը	Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր		Ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր		Հոդվածներ, գեկուցումներ		Թեզիսներ	
		հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.	հանրապետ.	արտասահմ.
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ	5	-	-	-	41	134	-	-

Աղյուսակ 8

Տվյալներ ԳԱԱ համակարգում գործող մասնագիտական խորհուրդների վերաբերյալ

№	Կազմակերպությունը	Ատենախոսության խորհրդի ծածկագիրը	Մասնագիտության ծածկագիրը և անվանումը	Խորհրդի նախագահը, գիտ-բարտուղարը (գիտ. աստիճան, անուն, ազգանուն)	2018 թ. կազմակերպության աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսությունների թիվը	
					դոկտորական	թեկնածուական
1	2	3	4	5	6	7
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ	-	-	-	-	-

Աղյուսակ 9

Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներն առ 01.01.2021 թ.

№	Կազմակերպությունը	Աշխատողների ընդհանուր թիվը	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
1	2	3	4	5	6	7	8
1	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ	49	37	1	1	4	21

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
2006-2020 ԹԹ. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ կառավարության 2006 թ. նոյեմբերի որոշմամբ հանրապետությունում գործող տնտեսագիտական ուղղվածություն ունեցող երեք գիտահետազոտական ինստիտուտները վերակազմավորվեցին և միացվեցին ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտին՝ սկիզբ դնելով միացյալ ինստիտուտի նոր կոլեկտիվի կազմավորման գործընթացին, ինչպես նաև նորացված գիտական խորհրդի, գիտակազմակերպչական նոր կառուցվածքի ու գիտական նոր ուղղությունների ձևավորմանը: Ըստ էության սկզբնավորվեց նոր շրջափուլ տնտեսագիտության ինստիտուտի տարեգրության մեջ: Ինստիտուտի հետագա 10-ամյա գործունեությունը բնորոշվեց որոշակի առանձնահատկություններով, որոնցից արժանահիշատակ են հետևյալները.

1. հետազոտվող գիտական թեմաներին տրվել է գերազանցապես գործնական ուղղվածություն, որոնք եզրակացությունների և առաջարկությունների ձևով ներկայացվել են ՀՀ կառավարություն: Օրինակ՝ դրանց արդյունքում ուժը կորցրած ճանաչվեցին «Պարզեցված հարկի մասին» և «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքները,
2. 2012 թ. սկսած՝ ՊԵԿ-ի կողմից կազմված ստուգման ակտերի ճշտության փորձաքննությունների անցկացում,
3. հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներին նվիրված հանրապետական ամենամյա գիտաժողովների անցկացում,
4. ինստիտուտի գիտական ներուժի երիտասարդացում,
5. հրատարակչական գործի նորովի կազմակերպում,
6. ՀՀ գիտության պետական կոմիտեի հայտարարած «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթին ակտիվ մասնակցություն: Արդյունքում երկու հոգի շահել են ավագ սերնդի և մեկ հոգի (մինչև 35 տարեկան) երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին,
7. Էականորեն բարելավվել են ինստիտուտի աշխատանքային պայմանները.
  - բոլոր սենյակներում տեղադրված է օդորակիչ,
  - գրեթե բոլոր աշխատակիցներն ապահովված են որակյալ համակարգիչներով,
  - սենյակներում տեղադրված են նորացված կահույք և այլ անհրաժեշտ պարագաներ,
  - ինստիտուտի զբաղեցրած տարածքը կապիտալ վերանորոգվել է, այն ավտոնոմ ջեռուցվում է, ավարտվել է հին պատուհանները եվրոպատուհաններով փոխարինելու գործընթացը և այլն:
8. Իրականացվել է «Հայ ժողովրդի ժողովրդագրական և նյութական կորուստները ցեղասպանության ընթացքում և դրանց հատուցման հիմնախնդիրները» խորագրով գիտական թեմայի կատարումը, որի շրջանակներում նույն

խորագրով անց է կացվել երկու հանրապետական գիտաժողով, և հրատարակվել է գիտական հոդվածների ժողովածու (2015 թ.), իսկ 2017 թ. I եռամսյակում հրապարակվել է 2 մենագրություն՝

- Բուրսայի նահանգի հայերի ֆինանսատնտեսական վիճակը I աշխարհամարտից առաջ և նյութական կորուստները 1915-1923թթ.,
- Ադանայի նահանգի հայերի ֆինանսատնտեսական վիճակը I աշխարհամարտից առաջ և նյութական կորուստները 1915-1923թթ.:

Ամփոփելով միացյալ ինստիտուտի 10-ամյա գիտական հետազոտությունների համառոտ արդյունքները՝ կարող ենք փաստել, որ ինստիտուտի կողմից, ընդհանուր առմամբ, հրատարակվել է.

- գիտական հոդվածների 16 ժողովածու՝ նվիրված հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներին,
- 88 գիրք,
- 1294 հոդված (այդ թվում՝ 82-ը՝ միջազգային):

Վերոնշյալ գիտական հետազոտությունների տեսական և կիրառական հարցերի լուծումներն առավել հանգամանալից քննության են ենթարկվել «Տնտեսագիտության ինստիտուտը 10 տարում. 2006-2016 թթ» մենագրության մեջ:

Ինստիտուտի 2 գիտաշխատողներ պաշտպանել են դոկտորական ատենախոսություն, իսկ 154 հայցորդ և ասպիրանտ՝ թեկնածուական ատենախոսություն, որոնցից 7-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ են:

Ինստիտուտի գիտաշխատող Ղավիթ Հարությունյանի մենագրություններից մեկը ճանաչվել է 2013 թ. լավագույն գիտական աշխատանք, և 2013 թվականին նա արժանացել է ՀՀ նախագահի Մ. Գոշի անվան I կարգի մրցանակի, իսկ մեկ ուրիշ աշխատակից արժանացել է 2-րդ կարգի մրցանակի:

Միացյալ ինստիտուտի 10-ամյա գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքները ներկայացված են 10-ամյա հաշվետվության ձևով:

Ինստիտուտի տնօրինության հետագա ծրագրերի մեջ են մտնում.

1. շարունակել կոլեկտիվի երիտասարդացման գործընթացը,
2. հանրապետական գիտաժողովները վերածել միջազգային՝ հրավիրելով դրսի մասնագետների, ինչպես նաև գիտաժողովների կազմակերպում այլ ինստիտուտների հետ համատեղ,
3. կտրուկ ավելացնել միջազգային հրապարակումների թիվը՝ այն դիտարկելով աշխատանքի գնահատման կարևոր չափանիշներից մեկը,
4. ընդլայնել գիտական աշխատողների ընդգրկվածությունը գրանտային ծրագրերին:

Իսկ այժմ ներկայացնենք հաշվետու ժամանակահատվածի նախավերջին, այսինքն՝ 2019 թ. տնտեսագիտության ինստիտուտի 7 կարևորագույն փաստերը.

- 1) 2019 թ. մայիսին ՀՀ ԳԱԱ նիստերի կլոր դահլիճում ՀՀ վարչապետի, ՀՀ կառավարության անդամների, ՀՀ ԳԱԱ ղեկավարության և այլոց մասնակցությամբ ինստիտուտը կազմակերպեց և հանրապետությունում առաջինը անցկացրեց «Տնտեսական հեղափոխությունը» խորագրով գիտաժողով, որը լայն արձագանք գտավ կառավարության կայքում ու լրատվամիջոցներում:

- 2) 2019 թ. տարեկան հաշվետու ժողովում ինստիտուտի տնօրենը մեկ առ մեկ ներկայացրեց բոլոր այն կետերը, որոնք նա իրականություն էր դարձրել տնօրենի պաշտոնում ընտրվելուց հետո: Սա աննախադեպ երևույթ էր և նոր մշակույթ հայ իրականության մեջ:
- 3) Տնտեսագիտության ինստիտուտը 2019 թ. ունեցել է աննախադեպ թվով հրապարակումներ՝ 10 մենագրություն և 178 հոդված, որոնցից 120-ը արտերկրյա գրախոսվող հանդեսներում: Հրապարակումների թվով ինստիտուտը բաժանմունքում զբաղեցրել է առաջին պատվավոր հորիզոնականը:
- 4) 2019 թ. տնտեսագիտության ինստիտուտի անձնակազմն էականորեն երիտասարդացվել է, և դրա արդյունքն էր, որ 2019 թ. նոյեմբերին անցկացված գիտաժողովին զեկուցողները եղել են բացառապես երիտասարդներ, ինչը հատկապես նշվեց մամուլում:
- 5) 2019 թ. տնտեսագիտության ինստիտուտը բազային հետազոտական թեմաների ընտրությունը կատարել է հիմք ընդունելով հանրապետության հեղափոխական կառավարության գործունեության ծրագիրը, որն աննախադեպ ու բացառիկ երևույթ է հանրապետությունում, և դրա արդյունքն էր, որ ինստիտուտի հետազոտական արդյունքները կիրառական նշանակություն են ստացել:
- 6) Տնտեսագիտության ինստիտուտը 2019 թ. տարբերվել է նաև աշխատանքային բարձր կարգապահությամբ, աշխատանքային նորմալ պայմաններով (ինչի մասին հիշատակվել է նաև herq.am կայքում):
- 7) 2019 թ. ինստիտուտը ՀՀ կառավարության խնդրանքով տվել է մի շարք փորձագիտական եզրակացություններ, մասնավորապես՝ «Բարձրագույն կրթության և գիտության», «Գործարար միջավայրի բարելավման ռազմավարության» մասին ՀՀ օրենքների նախագծերի, ինչպես նաև «Լիդիան Արմենա» ընկերության ՇՄԱԳ-ում և ELARD ընկերության զեկույցում ներկայացված ծախսերի տնտեսական գնահատականի վերաբերյալ:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ 2019 թ. բեղմնավոր է եղել ինստիտուտի համար թե՛ աշխատանքային պայմանների բարելավման, թե՛ կառավարության հետ համագործակցության ընդլայնման և թե՛ գիտական ձեռքբերումների տեսանկյունից:

Ի դեպ, բավականին արժեքավոր ու բովանդակալից է եղել ինստիտուտի 2019 թվականի գիտակազմակերպչական գործունեությունը: Այս առումով արժանահիշատակ են.

- 1) 2019 թ. մայիսի 21-ին ՀՀ ԳԱԱ նիստերի կլոր դահլիճում ՀՀ վարչապետի, ՀՀ կառավարության տնտեսական բլոկի նախարարների, ՀՀ ԳԱԱ նախագահության անդամների և այլոց մասնակցությամբ կազմակերպված հանրապետական գիտաժողովը, որի խորագիրն էր «Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում»: Գիտաժողովը նվիրված էր ՀՀ-ում թավշյա հեղափոխության միամյակին (2018-2019 թթ.):

Գիտաժողովի բացմանը ողջույնի խոսքով հանդես է եկել Յուրի Սուվարյանը:

## Տնտեսական զարգացման որակական բնութագրիչները (բացման և ողջույնի խոսք)

Հարգելի՛ գործընկերներ:

Այսօրվա գիտաժողովը նվիրված է Հայաստանի Հանրապետության՝ առաջիկա տարիների տնտեսական զարգացման հիմնախնդիրներին: Ակնհայտ ճշմարտություն է, որ տնտեսական զարգացման մակարդակը որոշիչ և առանցքային նշանակություն ունի ոչ միայն հասարակության սոցիալական զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, այլ նաև ազգային անվտանգության ապահովման և աշխարհում երկրի մրցունակության ու հեղինակության համար: Ուստի մեր գիտաժողովի խնդիրն է մշակել հիմնավոր երաշխավորություններ երկրի տնտեսության՝ ժամանակակից տեխնոլոգիական հիմքով արագ առաջընթացի, դրա կառուցվածքի արդիականացման, թողարկվող արտադրանքի միջազգային մրցունակության բարձրացման, դրա հիման վրա՝ հումքի փոխարեն մշակող արդյունաբերության գիտատար արտադրանքի արտահանման, երկրի վճարային հաշվեկշռի բարելավման համար: Օգտվելով պատեհ առիթից՝ փորձենք դիտարկել տնտեսական զարգացման արդի որոշ հիմնախնդիրներ:

Ընդունված է տնտեսական զարգացման ընթացքը բնութագրել քանակական ցուցանիշներով: Չնսեմացնելով դրանց կարևորությունը անդրադառնամ ոչ պակաս կարևոր որակական բնութագրիչներին, որոնցից է տնտեսական զարգացման բնույթը: Եթե տնտեսական առաջընթացի քանակական ցուցանիշն աճի տեմպերն են, ապա որակական առումով այն կարող է լինել.

- էքստենսիվ՝ նոր ռեսուրսների ներգավմամբ,
- ինտենսիվ՝ առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ,
- հումքային ուղղվածության՝ համախառն ներքին արդյունքում լեռնահանքային և գյուղատնտեսական արտադրանքի գերակշռմամբ,
- աճի դանդաղ, կայուն կամ արագ (թռիչքային) տեմպերով:

Տնտեսական զարգացման որակական բնութագրիչներից է նաև այն, թե ինչպիսի տնտեսական կառուցակարգով է ապահովվում երկրի տնտեսության դինամիկան, այսինքն՝ ինչ չափով են առաջադիմական տնտեսական համակարգը և դրա կառավարման սկզբունքները:

Մեկ այլ որակական բնութագրիչ է այն, թե ինչքան հավասարաչափ են բաշխվում տնտեսական աճի շնորհիվ ստեղծված բարիքները հասարակության անդամների միջև, ինչը պայմանավորված է երկրում տիրող քաղաքական ու տնտեսական համակարգով և հետադարձ ազդեցություն կարող է ունենալ տնտեսական զարգացման ընթացքի վրա: Եկամուտների անհավասարաչափ բաշխումը համաշխարհային երևույթ է, այն բնորոշ է նաև շատ զարգացած երկրների, անգամ ԱՄՆ-ին<sup>3</sup>, սակայն այն համահարթելու կամ մեղմելու խնդիրը

<sup>3</sup> Стиглиц Дж., Нечестная экономика, в ж. "В мире науки", №1-2, 2019, էջ 85-91:

մնում է արդիական ու կարևոր բոլոր երկրների համար:

Վերը նշվածի առումով ուշագրավ է, որ հայկական մամուլում նկատվում են դիտարկումներ «տնտեսական հեղափոխություն» արտահայտության՝ իբրև տնտեսական զարգացման բնույթի, վերաբերյալ: Դրական վերաբերմունքի հետ մեկտեղ հաճախ որոշ մասնագետներ գտնում են, որ տնտեսությունը սիրում է կայունություն, ուստի դրա համար հեղափոխությունը չի կարող բնութագրական լինել: Իսկ ի՞նչ է հեղափոխությունը: Հայտնի է հարցադրման հանրագիտարանային պատասխանը. այն որևէ երևույթի խոր որակական փոփոխությունն է և տարբերվում է թե՛ էվոլյուցիոն զարգացումից, թե՛ բարեփոխումներից: Տեսության մեջ և պրակտիկայում գործածական է և ընդունված քաղաքական, սոցիալական, գիտատեխնիկական, տեխնոլոգիական ոլորտներում կտրուկ, արմատական փոփոխությունները կոչել հեղափոխություն: Պատմությանը հայտնի են այդ բնույթի բազմաթիվ հեղափոխություններ: Հատկապես գիտատեխնիկական, տեխնոլոգիական հեղափոխություններն էականորեն նպաստել են հասարակական ու տնտեսական առաջընթացի վրա: Մասնավորապես՝ հայտնի են միջազգայնորեն ընդունված տեխնոլոգիական հեղափոխության փուլերը և դրանց բնութագրիչները.

- արդյունաբերական հեղափոխություն (18-րդ դարի 60-ական թվականներ),
- ստանդարտացում և մեքենայացում (18-րդ դար),
- հոսքային հավաքման գծեր (1913 թ.):

ՌԳԱ ակադեմիկոս Ս. Գլազևը տեխնոլոգիական հեղափոխության շրջանակներում առանձնացնում է տեխնոլոգիական կացութաձևերը՝ համապատասխան առանցքային գործոններով, տեխնոլոգիական միջուկով, առանձնահատկություններով և ինստիտուցիոնալ կառուցվածքով<sup>1</sup>:

Կարող է լինել նաև տնտեսական հեղափոխություն: Այս հարցի պատասխանը գտնելու համար հարկ է դիտարկել տնտեսական համակարգերի փոփոխությունների պատմական ընթացքը:

Տնտեսական համակարգը սերտորեն շաղկապված է քաղաքական համակարգին, դրա բաղադրիչն է, ուստի դրանց փոփոխությունները տեղի են ունենում միասին և միաժամանակ: Հայտնի է, որ քաղաքական համակարգի փոփոխությունը զուգակցվում է սեփականատիրական հարաբերությունների, տնտեսական կառուցակարգերի, կառավարման սկզբունքների և կառուցվածքների փոխակերպումներով: Օրինակ՝ XX դարի 90-ական թվականների սկզբում նախկին ԽՍՀՄ տարածքում, այդ թվում՝ Հայաստանում տեղի ունեցան լուրջ քաղաքական փոփոխություններ, որոնց արդյունքում արտադրության միջոցների պետական սեփականությունը մեծ մասամբ մասնավորեցվեց, տիրապետող դարձավ սեփականության բազմաձևությունը՝ մասնավորի առաջատար դերով, էականորեն փոխվեց դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունը, ազատականացվեցին գները, արտաքին առևտուրը, ըստ էության ստեղծվեց

<sup>1</sup> Глазьев С. Ю., Становление шестого технологического уклада. – В кн.: Яковец Ю. В., Фарах С. Н., Диалог и партнерство цивилизаций, Москва-Казань, 2018, էջ 200-213:

տնտեսական գործող համակարգից տարբերվող որակապես նորը, որը համապատասխանում է նոր քաղաքական իրողություններին: Փոփոխությունների նկարագրված համալիրը, որը վերաբերում է տնտեսական համակարգի բազային բաղադրիչներին, իր բովանդակությամբ լիովին համապատասխանում է հեղափոխության բնութագրությանը, ուստի տեսականորեն և գործնականում տնտեսական հեղափոխություն կարող է լինել, եթե տեղի ունեցող փոփոխություններն ընդգրկում են ողջ տնտեսական համակարգը:

Տնտեսական համակարգում արմատական փոփոխությունները տրամաբանորեն կարող են հանգեցնել էական փոփոխությունների՝ տնտեսական աճի տեմպերի և բնույթի առումով: Սակայն սույն եզրակացությունը վերաբերում է նոր համակարգի ներուժային հնարավորությանը, որի գործնական դրսևորումը պայմանավորված է բազմաթիվ քաղաքական, տնտեսական, տեխնոլոգիական, ընդհանուր առմամբ՝ ներքին և արտաքին միջավայրերի գործոններով: Նոր տնտեսական համակարգը կարող է ապահովել բարձր տեմպեր ու նոր որակական զարգացում, եթե դրա համար ստեղծվում է նպաստավոր ներքին և արտաքին միջավայր:

Հիմա անդրադառնանք տնտեսական զարգացման կարևորագույն գերակայություններին, որոնք էական են տնտեսական զարգացման քանակական ու որակական բաղադրիչների արմատական փոփոխության համար:

Ռազմավարական առումով և պետականորեն հարկ է կարևորել այնպիսի արտադրությունների բուռն զարգացումը, որոնք կարող են լուծման համար: Այդպիսին են, մեր համոզմամբ, գիտատար և աշխատատար, քիչ նյութատար ճշգրիտ մեքենաշինական արտադրությունները: Դրանց զարգացումը կարող է ստեղծել աշխատատեղեր, նպաստել քաղաքացիական նշանակության սարքավորումների և պաշտպանական բնույթի արտադրատեսակների թողարկման ընդլայնմանը:

Այսօր գիտական արդյունքների և բարձր որակավորման կադրերի հանդեպ պահանջարկը նվազել է, այդ աննպաստ միտումը կհաղթահարվի գիտատար արտադրանքի թողարկման ծավալման շնորհիվ, ավելին՝ կխթանի թե՛ կրթության, թե՛ գիտության զարգացումը: Մեր հաշվարկներով ներկայումս զուտ գիտատար արտադրանքի ծավալը, ներառյալ տեղեկատվության և կապի ծառայությունները, կազմում է ՀՆԱ 4.5-5.0 տոկոսը, նկատելիորեն բուհերում սովորողների թվում հարաբերաբար նվազում է ինժեներատեխնիկական և բնական գիտությունների մասնագիտություններով ուսանողների տեսակարար կշիռը: Տխուր է նաև արտահանման կառուցվածքը:

Սակայն այդ արտադրությունների զարգացումը հնարավոր է ներդրումների և մրցունակ տեխնոլոգիայի առկայության պարագայում: Այդ դժվարագույն խնդիրների լուծման համար համաշխարհային պրակտիկայում հայտնի է երկու տարբերակ.

- Մինգապուրյան փորձը<sup>5</sup> պետություն-մասնավոր հատված համագործակ-

<sup>5</sup> Տե՛ս *Լի Կուան Յու*, Երրորդից առաջին աշխարհ. Մինգապուրի 1965-2000 թվականների պատմու-

ցության շրջանակներում նպատակային ներգրավել տրանսազգային կամ ազգային խոշոր կորպորացիաների՝ առաջարկելով բարենպաստ տնտեսվարման պայմաններ, բարձր որակավորման մասնագետներ, որոշ զարգացած ենթակառուցվածքներ,

- համատեղել ձեռնարկությունների ստեղծումը պետական մասնակցությամբ:

Հնարավոր բոլոր տնտեսական լծակներով պետք է խրախուսել հանրապետության համար ավանդական թեթև, կահույքի, շինարարական նյութերի, փոքր քիմիայի արտադրությունների, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը: Նույնը վերաբերում է հարաբերաբար բարենպաստ զարգացման ընթացք ունեցող սննդի արդյունաբերության, ծառայությունների ոլորտի ճյուղերին:

Չափազանց կարևոր խնդիր է գյուղատնտեսության արդիականացումը՝ ինդուստրացման, գյուղատնտեսական կազմակերպությունների՝ կոոպերացման շնորհիվ խոշորացման, արտադրություն-արդյունաբերական մշակում-իրացում շղթայի կատարելագործման ուղիներով, ինչը հնարավորություն կընձեռնի բարձրացնելու գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակը, կիրառելու բերքի աճեցման ժամանակակից տեխնոլոգիաներ, զոտտեխնիկական, անասնաբուժական և ագրոնոմիական ծառայություններ, ստեղծելու բազմաճյուղ տնտեսություններ՝ բնական ռիսկերի ազդեցությունը նվազեցնելու համար և այդպիսով ավելացնելու բերքատվության ու մթերատվության մակարդակը: Գյուղատնտեսության ինտենսիվացումը մշակովի հողատարածքների սահմանափակության պայմաններում երկրի պարենային անվտանգության ապահովման գլխավոր ուղին է:

Անկախության տարիներին երկրում միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ ձևավորված հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունը հիմնականում համապատասխանում է ժամանակակից չափանիշներին, սակայն նկատելի են որոշ բացեր, որոնք կարող են հաղթահարվել: Դրանցից առաջինը պակաս արդյունավետ հարկային վարչարարությունն է, հարկային օրենսդրության հաճախակի փոփոխությունների ստեղծված պրակտիկան:

Դրամավարկային քաղաքականության ոլորտում չափազանց շատ են ֆինանսատնտեսական ռիսկերից խուսափելու ձգտումները, ինչի արդյունքում միշտ չէ, որ տնտեսական աճի ռազմավարությունը զուգակցվում է արդյունավետ փողի և վարկային քաղաքականության հետ:

XXI դարում առանձնակի կարևորություն են ստանում ազգային նորամուծական համակարգի ձևավորումը և գործարկումը: Այն երկրները, որոնք ավելի են կարևորել գիտական առաջընթացը, նպաստել դրան, հասել են ավելի բարձր քաղաքակրթական, տնտեսական և պաշտպանական արդյունքների: Արդի աշխարհն այդ չափանիշով բաժանվում է զարգացած, զարգացող և թույլ զարգացած երկրների: Գիտատեխնիկական զարգացումն ընթանում է շատ արագ. եթե 18-րդ դարի 60-ական թվականներին և հաջորդ դարի առաջին կեսին տեխնոլոգիական

միջավայրի առանցքային գործոնները մանածագործական հաստոցները և շոգեքարշն էին, ապա XXI դարում արդեն տիրապետող են նանո և բջջային տեխնոլոգիաները<sup>6</sup>:

ՀՀ-ում որոշակի աշխատանք է կատարվել նորամուծական համակարգի ձևավորման ուղղությամբ, մասնավորապես՝ ստեղծվել է համապատասխան օրենսդրանորմատիվային դաշտ<sup>7</sup>: Սակայն դեռևս չի կայացել ազգային արդյունավետ գործող նորամուծական հնամակարգը՝ կրթություն-գիտություն-արտադրություն ինտեգրված շղթայով, պետական մարմինների միջև անհրաժեշտ լիագործությունների հստակ բաշխմամբ, գիտատեխնիկական գործունեության կոնկրետ գիտակոնստրուկտորական և սոցիալ-տնտեսական արդյունքներին միտված ֆինանսավորման և դրանց առևտրայնացման ենթահամակարգերով: Մինչդեռ այդ համակարգի ստեղծումը և դրա արդյունավետ գործունեության ապահովումը տնտեսության բարձր տեմպերով զարգացման և մրցունակ արտադրանքի թողարկման, երկրի ռազմավարական խնդիրների լուծման կարևորագույն երաշխիքներից են:

## 2) ՀՀ ԳԱԱ ՏԻ տնօրեն Վլադիմիր Հարությունյանի ողջույնի խոսքը.

Գիտաժողովի հարգարժան մասնակիցներ, առաջին հերթին թույլ տվեք շնորհակալություն հայտնել հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանին, կառավարության անդամների և ազգային ժողովի պատգամավորներին, ովքեր ընդունել են ինստիտուտի հրավերը՝ մասնակցելու թավշյա հեղափոխության միամյակին նվիրված այսօրվա գիտաժողովին:

Իրողություն է, որ մինչև թավշյա հեղափոխությունը Հայաստանում ձևավորվել էր ծանր բարոյահոգեբանական մթնոլորտ՝ պայմանավորված ինչպես ազգաբնակչության սոցիալ-տնտեսական կենսապայմաններով, այնպես էլ անարդարության, հովանավորչության, կոռուպցիայի համատարած բնույթով, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի, առանձին վերցրած, անգոր էր հաղթահարելու առկա դժվարությունները: Եվ միայն հասարակության հավաքական ուժի համախմբմամբ հնարավոր դարձավ իրականացնել թավշյա հեղափոխությունը, որի առաջին դրական արդյունքներն ակնհայտ են: Սակայն հասարակության պահանջն ավելին է, քան արձանագրված հաջողությունները: Բարեփոխումների և կենսամակարդակի հեղափոխական ազդեցության ակնկալիքն արդարացի է և օրյեկտիվ: Մենք իրավունք չունենք թույլ տալու, որ մարի այն հույսի ճրագը, որ համակել է յուրաքանչյուր հայորդու:

Այս առումով մենք բոլորս, յուրաքանչյուրս մեր գործով և հնարավորությամբ պետք է բազմապատկենք սեփական ջանքերը մեր պետականության ամրապնդման և բարգավաճման ուղղությամբ: Այլևս չմտածված, անհեռանկարային քայլեր անելու իրավունք չունենք, քանզի յուրաքանչյուր սխալ թանկ է նստում հասա-

<sup>6</sup> Ст'я Глазьев С. Ю., նշվ. աշխ., էջ 201-202:

<sup>7</sup> Ст'я Ազգային նորամուծական համակարգ. ներուժի գնահատումը և հայեցակարգային գերակայությունները, ՀՀ ԳԱԱ ակադ. Յու. Մ. Սուվարյանի խմբ., Ե., «Գիտություն», 2017, էջ 165-173:

րակական կյանքի յուրաքանչյուր ոլորտի վրա՝ սկսած կենցաղային հարցերից մինչև պետական սահմանի պաշտպանունակություն: Սա է մեր այսօրվա գիտաժողովի առաքելության փիլիսոփայությունը՝ մեկտեղել հայ տնտեսագիտական միտքը տնտեսական հեղափոխության իրականացման գործում:

Թավշյա հեղափոխությունից անցել է ընդամենը մեկ տարի, և արդեն ակնհայտ են ձեռքբերումները ժողովրդի ազատ կամարտահայտությամբ իշխանության ձևավորման, օրենքի առաջ բոլորի հավասարության և իրավունքի գերակայության, ազգային միասնության ու քաղաքացիական համերաշխության, արտաքին և ներքին անվտանգության և քաղաքականության մեջ նոր շեշտադրումների, կոռուպցիայի դեմ պայքարի, քաղաքականության և բիզնեսի գործնական տարանջատման, մարդու իրավունքների պաշտպանության և այլ ուղղություններում: Բնականաբար դա շատ կարճ ժամանակամիջոց է երկրում առկա բոլոր սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համար: Վերջինս իրատեսական է միայն տարիների կտրվածքով: Տնտեսական հեղափոխությունը կոչված է կարճելու այդ ժամանակը:

Արդեն իսկ ակնհայտ է նշանակալի առաջընթաց ոչ բնական տնտեսական մենաշնորհների բացառման, տնտեսական մրցակցության պաշտպանության, տնտեսության կառուցվածքային վերափոխումների և պետական կառավարման համակարգի օպտիմալացման հիմնախնդիրների լուծումներում:

Գիտաժողովի հարգարժան մասնակիցներ, հարկ եմ համարում արձանագրել, որ այսօրվա գիտաժողովն ունի որոշակի առանձնահատկություններ:

- Այն ամբողջապես կառուցված է 2019 թվականի փետրվարի 8-ի՝ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ծրագրի բովանդակությանը համապատասխան և բխում է ՀՀ կառավարության ծրագրի ելակետային դրույթներից, որը հստակ երևում է ժողովածուի էջ 348-ում տեղադրված թիվ 1 հավելվածից (տե՛ս հավելված 15):
- Գիտաժողովին իրենց մասնակցությունն են բերել հանրապետության տնտեսագետների լայն շրջանակներ (ԵՊՀ-ից, ՀՊՏՀ-ից, Հայաստանում ամերիկյան համալսարանից, Հայկական պետական մանկավարժական համալսարանից, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանից, Հայաստանի պետական ագրարային համալսարանից և այլ տեղերից), ինչպես նաև տնտեսագետ փորձագետներ:
- Ցանկանում եմ հետադարձ հայացքի և արդյունքների գնահատման առումով արձանագրել, որ հանրապետությունում տնտեսական հեղափոխությունն իրականություն դառնա, դա առաջին հերթին պետք է տեղի ունենա ազգաբնակչության գիտակցության մեջ, այսինքն՝ մարդկանց ուղեղներում: Ուստի առաջարկում ենք ՀՀ կառավարությանը, ՀՀ ԱԺ հանձնաժողովների նախագահներին ու պատգամավորներին է՛լ ավելի ակտիվացնել շփումները հասարակության տարբեր խմբերի ու խավերի հետ: Եվ դա անհրաժեշտ է կատարել մարզերում, քաղաքներում, համայնքներում, բուհերում ու գիտահետազոտական ինստիտուտներում: Այդ ամենը մուլտիպլիկատիվ էֆեկտով կտա իր արդյունքը, և «տնտեսական հեղափոխության» գաղափարը հոգևոր

հեղեղի պես բույն կղնի մարդկանց հոգիներում ու սրտերում, իսկ կառավարությանը դրանից հետո կմնա ուղղակի արձանագրել իրականություն դարձած «տնտեսական հեղափոխության» արդյունքները:

«Տնտեսական հեղափոխություն» չեն կարող իրականացնել ո՛չ կառավարությունները և ո՛չ էլ ամենահզոր անհատները: Այն կարող են իրականացնել միայն ու միայն ժողովուրդները, իսկ կառավարություններն ու անհատները կարող են ժողովուրդներին միայն ու միայն ուղղորդել և այն էլ՝ ճիշտ կամ սխալ, լավ կամ վատ: Իսկ մեր՝ տնտեսագետներիս ինդիքն է օգնել կառավարությանը, որպեսզի այդ ուղղորդումը լինի մասնագիտորեն ճիշտ ու արդարացված, այսինքն՝ յուրաքանչյուր մասնագիտական ծառայություն ու մասնագետ այս գործընթացում իր բաժին գործն ունի անելու:

Այս տրամաբանությամբ մենք՝ հայերս Հայաստանում, Արցախում և Սփյուռքում պարտավոր ենք գիտությամբ, մտքով, գաղափարով, նպատակաուղղվածությամբ և այլ լավագույն որակներով յուրաքանչյուրս մեր հնարավորության չափով մարտահրավեր նետել.

- խեղճությանը (եսիրությանը),
- աղքատությանը,
- գործազրկությանը,
- արտագաղթին,
- կոռուպցիային,
- անարդարությանը,
- հուսահատությանը:

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ, թույլ տվեք մեկ անգամ ևս շնորհակալություն հայտնել մասնակցության համար և հավաստիացնել, որ «Տնտեսական հեղափոխություն» խորագրով գիտաժողովներ ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտն այսուհետև ևս կանցկացնի տարեկան պարբերականությամբ՝ ակնկալելով ձեր մասնակցությունը:

Շնորհակալություն:

Մայիսի 21, 2019 թվական

Այնուհետև հրապարակվել են 22 գիտական հոդվածներ, որոնք բխել են ՀՀ կառավարության գործունեության ծրագրի ելակետային դրույթներից, որոնք իրենց արտացոլումն են ստացել ժողովածուի էջ 348-ում տեղադրված հավելված 1-ում (տես հավելված 15): Դա նշանակում է, որ հրավիրված գիտաժողովը իր բովանդակությամբ կրել է բացառապես կիրառական բնույթ, և նրա նյութերը փոստային առաքմամբ ուղարկվել են՝ 1) կառավարության անդամներին, 2) ՀՀ ԱԺ ղեկավարությանը, 3) ԱԺ հանձնաժողովների նախագահներին, 4) ՀՀ և ԼՂՀ գրադարաններ և բուհեր և 5) Հայաստանի երևելի տնտեսագետներին՝ հույսով և ակնկալությամբ, որ արված առաջարկությունները կիրառություն կստանան կամ ինստիտուտի համապատասխան մասնագետների հետ քննարկման արդյունքում կմերժվեն:

Բայց եղել է այն, ինչպես միշտ, այսինքն՝ ո՛չ 1-ինը, և ո՛չ 2-րդը:

Ինստիտուտի 2019 թ. գործունեության լուսավոր կետերից պետք է համարել

նոյեմբերին անցկացված հանրապետական գիտաժողովը՝ «Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով, որում 2 անգամ զեկուցումով հանդես է եկել ՀՀ ԳԱԱ ՏԻ տնօրեն Վլադիմիր Հարությունյանը.

1) *Ինստիտուտը 2006 թվականից հետո:* Դա եղել է այն տարեթիվը, երբ Վլադիմիր Հարությունյանը ընտրվել է ինստիտուտի տնօրեն (զեկուցումը կցվում է):

Վ. Հարությունյան

### Ինստիտուտը 2006-ից հետո

Համաձայն «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի (ընդունված 11.04.2011 թվականին) 4-րդ հոդվածի ակադեմիան գիտական գործունեության գծով ՀՀ կառավարության պաշտոնական խորհրդատուն է, որի առաջարկները քննարկում են կառավարությունը և պետական կառավարման համապատասխան մարմինները: Այս առաքելության իրագործմանն էլ նպատակաուղղված է եղել միացյալ ինստիտուտի 10-ամյա գիտական գործունեությունը, որի ընթացքում արված կիրառական եզրակացություններն ու առաջարկությունները պարբերաբար ներկայացվել են ՀՀ կառավարությանը: Դրանք իրենց արտացոլումն են ստացել «Ազգային տնտեսություն: ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի հետազոտական հետազոտությունները (2007-2017թթ.): Եզրակացություններ, կիրառական առաջարկություններ» (Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, 504 էջ) ժողովածուում, ինչպես նաև «2017 թ. գիտահետազոտական աշխատանքների կիրառական արդյունքները» գրքում, (Երևան, 2018 թ., 104 էջ): Այդ ժամանակահատվածում հրատարակվել են նաև՝ գիտական հոդվածների երկու ժողովածու՝ նվիրված հայոց ցեղասպանությանը,

«Տնտեսական հեղափոխության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով գիտական հոդվածների մեկ ժողովածու, որն իր ձևով ու բովանդակությամբ առաջինն ու միակն է հանրապետությունում մինչև օրս,

գիտական հոդվածների 16 ժողովածու՝ նվիրված հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներին,

- 105 գիրք (գիտահետազոտական աշխատանք),
- 1585 գիտական հոդված, 231-ը՝ միջազգային հանդեսներում:

Այդ ժամանակաշրջանում, բացի վերոնշյալներից՝ ինստիտուտի 2 երիտասարդ գիտաշխատողներ պաշտպանել են դոկտորական, իսկ 154 հայցորդ ու ասպիրանտ՝ թեկնածուական ատենախոսություն, որոնցից 7-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ:

Ինստիտուտի 2 գիտաշխատողների մենագրություններ արժանացել են Մ. Գոշի անվան 1-ին և 2-րդ կարգի մրցանակների:

Ինստիտուտի երիտասարդ գիտաշխատող Դավիթ Հարությունյանի գիտահետազոտական աշխատանքը ճանաչվել է 2013 թ. լավագույն գիտական աշխատանք:

Ինստիտուտի 3 գիտաշխատողներ դարձել են «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթի կրկնակի հաղթողներ (Աշոտ Բայադյան, Վլադիմիր և Դավիթ Հարությունյաններ):

2007 թվականից սկսած՝ ինստիտուտում նախապատրաստվել և հրատարակվել են «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով գիտական հոդվածների 16 ժողովածուներ (տե՛ս հավելված 17)՝ բաղկացած 4 գիտական ուղղություններից (մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ, տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ, ծառայությունների ոլորտի զարգացում և սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ):

Ինստիտուտի հետազոտական աշխատանքների կիրառական արդյունքների և առաջարկությունների նպատակայնությունն ու գործնականությունն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով փոխվել է բազային թեմաներ ընտրելու մոտեցումը, և վերջին տարիներին դրանք բոլորը բխեցվում են ՀՀ կառավարության ծրագրի ելակետային դրույթներից: Այս մոտեցումը կշարունակվի նաև առաջիկայում:

Հիշատակության է արժանի ինստիտուտի եռալեզու էլեկտրոնային կայքը ([www.economics.am](http://www.economics.am)): Ըստ որդեգրած քաղաքականության կայքում բաց մատչելիությամբ տեղադրվում են ինստիտուտի հրատարակած հոդվածների և գրքերի էլեկտրոնային տարբերակները: Հավելենք նաև, որ կայքում մատչելիությամբ տեղադրված են վերջին տարիներին ինստիտուտի հրատարակած շուրջ 500 հոդվածների և ավելի քան 60 գրքերի էլեկտրոնային տարբերակները (տե՛ս հավելված 18): Կայքն, ըստ էության, վերածվել է հայ տնտեսագիտական հանրության տեղեկատվություն ստանալու և մտքեր փոխանակելու միասնական հարթակի:

Ինստիտուտի գիտակազմակերպչական գործունեության վերջին 15-ամյակը կարելի է գնահատել որպես «պատվավոր տարեգրություն», որը բնութագրվում է գալիք սերունդներին ավանդվող ստորև բերվող հետազոտություններով.

- «Ազգային տնտեսություն: ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի հետազոտական հետազոտություններ (2007-2017). եզրակացություններ, կիրառական առաջարկություններ» գիրք-ժողովածուն (շուրջ 500 էջ), որը բացառիկ է և՛ գիտական, և՛ բուհական համակարգում: Ի դեպ, նրանում ընդգրկված կիրառական առաջարկությունները ամեն տարի ներկայացվել են ՀՀ կառավարությանը:

Ինստիտուտի<sup>8</sup> առաջարկությամբ 2008 թ. օգոստոսին ՀՀ կառավարությունը օրենսդրական նախաձեռնությամբ ԱԾ է ներկայացրել, և 2009 թ. հունվարի 1-ից ուժը կորցրած են ճանաչվել «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքը և «Հաստատագրված վճարների մասին» օրենքի առանձին դրույթներ: Իսկ որոշ կիրառական առաջարկություններ արտացոլվել են ՀՀ կառավարության որոշումներում և ընդունված ռազմավարական փաստաթղթերում:

<sup>8</sup> Վ. Հարությունյան, Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Զանգակ-97», 2003, էջ 165:

- Ռ. Սարինյանի և Վ. Հարությունյանի «Հայ տնտեսագիտական մտքի երկու դարը, գիտակենսագրական հանրագիտարան» երկհատոր աշխատությունը, որը միակն է հանրապետությունում բոլոր մասնագիտությունների գծով և ամփոփում է XIX դարի կեսերից սկսած «հայ տնտեսագիտական մտքի անցած ուղին, հետազոտական շրջանակների հետագիծը, տնտեսական հարցերի բարդ ու հակասական լուծումները, վերելքների ու վայրէջքների պատմությունը»: Աշխատությունը կարող է օգտագործվել որպես հանրագիտարանային տեղեկատու և ունի աղբյուրագիտական նշանակություն:

- Վ. Հարությունյանի և Ռ. Սարինյանի «Տնտեսագիտության ինստիտուտը 10 տարում: 2006-2016 թթ. հետազոտական արդյունքների ուրվագիծ» (տեսական հետազոտությունների համատեքստում) գիրքը:

- Տնտեսագիտության ինստիտուտի 2006-2016 թթ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքներին վերաբերող ստվառածավալ հաշվետվությունը (շուրջ 574 էջ):

- Վ. Հարությունյանի, Տ. Հարությունյանի և Դ. Հարությունյանի «Հարկեր և հարկազանձում» աշխատությունը (շուրջ 600 էջ): Աշխատության մեջ մանրամասնորեն ներկայացված են հարկերի անհրաժեշտությունը, ծագման ու ձևավորման էվոլյուցիան, գործառույթները և տեսակները, ինչպես նաև հարկման սկզբունքները և տեսաիրավական հիմքերը: Այնուհետև բարեխղճորեն վերլուծված են հարկային օրենսդրության ձևավորման ու բարեփոխման էվոլյուցիան՝ ըստ հարկատեսակների (բարդ ու աշխատատար գործ), հարկային պարտավորությունների հաշվառման օրենսդրական և մեթոդաբանական հիմքերը ՀՀ-ում (կրկին ըստ հարկատեսակների): Այնուհետև միանգամայն տրամաբանորեն ներկայացված են հարկային պարտավորությունների հաշվարկման կատարելագործման օրենսդրական և մեթոդաբանական մոտեցումները ՀՀ-ում (ըստ հարկատեսակների):

- Տ. Հարությունյանի «Հարկման և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» աշխատությունը (266 էջ), որում ամբողջականորեն դիտարկվում են տնտեսության զարգացման և կարգավորման հարկային լծակների ձևավորման և կիրառման տեսական և մեթոդաբանական հիմքերն ու առանձնահատկությունները և հարկային քաղաքականության ու հարկային վարչարարության արդյունավետությունը բարձրացնելու հիմնահարցերը:

- Դ. Հարությունյանի «Վճարային հաշվեկշռի պետական կարգավորման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» գիրքը (շուրջ 464 էջ), որում հեղինակն անդրադառնում է վճարային հաշվեկշռի ձևավորման ու կարգավորման հիմնախնդիրներին, ինչպես նաև վերլուծում ընթացիկ հաշվի պետական կարգավորման և արտաքին տնտեսական քաղաքականության առանձնահատկությունները ՀՀ-ում:

- Յու. Սուվարյանի և մյուսների «Փիտակրթական համակարգը և տնտեսական զարգացումը» աշխատությունը (շուրջ 150 էջ):

- Վ. Հարությունյանի «Հարկային և մաքսային մարմինների գործունեու-

թյան կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» մենագրությունը:

2. առաջարկվել են գյուղացիական տնտեսությունների սահմանային մեծությունների հիմնավորման մեթոդական մոտեցումներ, որից ելնելով՝ հանրապետության համար սահմանվել են 27 արտադրական տիպեր։

«Ծխելու և ավտոմեքենաներից արտազատվող վտանգավոր ազդեցության կրճատման էկոլոգատնտեսագիտական հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ երկրաբանահանքաբանական գիտ. դոկտոր Հ. Ս. Ավագյան)

1. ցույց է տրվել, որ Հայաստանի բնական ցեոլիտների օգնությամբ հնարավոր է սիգարետների ծխի հետ հեռացող թունավոր ու քաղցկեղածին նյութերի պարունակությունը կրճատել ցանկացած քանակներով՝ ընդհուպ մինչև 100%-ով։

«Մտավոր սեփականության կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ տ. գ. թ. Ս. Հ. Պողոսյան)։

1. Բացահայտվել են Հայաստանում մտավոր կապիտալի զարգացմանը խոչընդոտող հանգամանքները,

2. առաջարկվել են մտավոր կապիտալի գեներացման և գործարկման մոդել և ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման ուղիներ։

«Պետական կառավարման արդյունավետության գնահատում. մեթոդաբանական հիմքերը և մեթոդական մոտեցումները» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ տ. գ. դ. Բ. Հ. Եղիազարյան)

1. նշվել են ՀՀ-ում գիտելիքի հասարակություն ձևավորելու հիմնադրույթները, ձևավորվել են դրանում ՀՀ մտավորականության ակտիվ մասնակցությունն ապահովելու առաջարկություններ։

«ՀՀ արդյունաբերական ձեռնարկություններում նորամուծությունների ուղղությունները և կիրառման հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ տ. գ. դ. Ա. Խ. Նազարյան)

1. հիմնավորվել են ձեռնարկությունների նորամուծության ստեղծման և ներդրումների ներգրավման միասնական գործընթացների կազմակերպման ուղղությունները, կիրառման ոլորտները։

«ՀՀ տնտեսական անվտանգության ապահովման հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ տ. գ. դ. Վ. Բ. Բոստանջյան)։

1. մշակվել են տնտեսական անվտանգության ապահովման միջոցները և լծակները,

2. Բացահայտվել են հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման ոլորտում առկա հիմնախնդիրները և դրանց վրա ազդող գործոնները։

«Բնօգտագործման ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և բնապահպանական հիմնախնդիրները ՀՀ հյուսիսային մարզերում (Շիրակ, Լոռի, Տավուշ)» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ աշխ. գիտ. թեկնածու Է. Ա. Բաբայան)։

1. ցույց է տրվել, որ շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման բնագավառներում համակարգի գործունեությունը դեռևս չի համապատաս-

խանում միջազգային չափանիշներին,

2. առաջարկվել է հաստատել էկոլոգիական նորմերի սկզբունքները, սահմանել նոր մոտեցումներ վարչատնտեսական կարգավորման ուղղությամբ, ստեղծել ՀՀ էկոլոգիական իրավիճակի գնահատման ազգային միասնական տվյալների բանկ:

«ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքների վերլուծում, ժողովրդագրական իրադրության վերագնահատում և բնակչության թվաքանակի միջնաժամկետ կանխատեսում (մինչև 2025 թ.)» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ. տ. գ. թ. Ռ. Ս. Եզանյան)

1. ցույց է տվել, որ բնակչության ցածր ծնելիությունը մնում է երկրի ծանրագույն ժողովրդագրական խնդիրը, չեն բացառվում մահացության առումով անցանկալի զարգացումները, նոր ծավալուն էմիգրացիոն հոսքերի ձևավորման վտանգը և այլն:

«Գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնական ուղղությունների հիմնավորումը և արտադրանքի ծավալների կանխատեսումը ՀՀ մարզերում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ. տ. գ. դ. Հ. Մ. Մամիկոնյան)

1. մշակվել են գյուղատնտեսական արտադրանքի տեղաբաշխման համապատասխան մոտեցումներ և գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացմանն ու արդյունավետության բարձրացմանը նպաստող միջոցառումների համալիր:

«ՀՀ աշխատանքի շուկան և կադրերի պատրաստման ու վերապատրաստման համակարգի բարեփոխման հիմնական ուղղությունները» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ. տ. գ. թ. Ն. Վ. Շահնագարյան)

1. կարևորվել են որակյալ բանվորական աշխատուժի առկայությունը և երիտասարդներին անվճար, մեկնարկային կապիտալով, այն է՝ մասնագիտությամբ ապահովումը:

«Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները, ռազմավարությունը և հեռանկարները երկարաժամկետ հատվածում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ. տ. գ. թ. Ա. Ռ. Թամազյան).

1. հստակեցվել են Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ցուցանիշների վերլուծության տեսամեթոդական հիմքերը.

2. առաջարկվել են Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման, քննարկման, հաստատման, իրականացման և վերահսկողության սկզբունքներ և մեխանիզմներ,

3. մշակվել են ներդրումային փոխատվական համակարգի (ՆՓՀ) ձևավորման, դրա գործունեության մեխանիզմներ:

«Արտադրանքի ինքնարժեքը և արտադրության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ գյուղացիական տնտեսությունում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ. տ. գ. թ. Հ. Մկրտչյան).

1. կազմվել են բազմամյա խոտերի տեխնոլոգիական քարտերը, հաշվարկվել են ինքնարժեքները, մեծածախ և մանրածախ գների հիման վրա հաշվարկվել են շահութաբերության երկու տարբերակներ,

2. առաջարկություններ են արվել ինքնարժեքի իջեցման և արտադրանքի իրացման բարելավման խնդիրների վերաբերյալ:

«ՀՀ անասնապահական ճյուղի օպտիմալացման ուղիները» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ. տ. գ. թ. Բ. Ա. Չախմախյան)

1. առաջարկվել է տավարաբուծության ինտենսիվացմանը ուղղված առաջնահերթ միջոցառումների համալիր:

«Զբաղվածության բարձրացման ուղիները գյուղատնտեսության մեջ ռոռզման կազմակերպման նոր պայմաններում» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ. տ. գ. թ. Լ. Լ. Հակոբյան).

1. բացահայտվել են աշխատանքի արտադրողականության բարձրացման ուղիները, զբաղվածությունն ապահովելուն խոչընդոտող պատճառները,

2. տրվել է ռոռզման հեռանկարային ծրագրերի իրագործման և բուսաբուծական մշակաբույսերի տեղաբաշխման նոր պայմաններում ամբողջ գյուղատնտեսության և ռոռզելի երկրագործության մեջ զբաղվածների ընդհանուր թիվը:

«Պետական սեփականության կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ. տ. գ. դ. Ս. Ա. Դավոյան).

1. մշակվել են պետական սեփականության կառավարման արդյունավետության մեթոդաբանական հիմնադրույթները, առաջարկվել են համապատասխան ինստիտուցիոնալ համակարգի կատարելագործման ուղիները,

2. մշակվել և վերլուծվել են պետական սեփականության կառավարման օրենսդրական կատարելագործման ուղիներ:

## 2008

«Ֆինանսական համակարգի կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (ղեկ. տ. գ. դ. Վ. Հարությունյան).

1. հիմնավորվել և առաջարկվել է մինչև 30 տոկոսի հասցնել հարկեր /ՀՆԱ ցուցանիշը և այն դիտարկել որպես մակրոտնտեսական ցուցանիշ,

2. առաջարկվել է հրաժարվել հարկային օրենսդրությունում մասնակի փոփոխություններ կատարելու պրակտիկայից և կատարել այնպիսիները, որոնք կնպաստեն անուղղակի և ուղղակի հարկերի հարաբերակցության փոփոխմանը՝ հօգուտ երկրորդի, պրոգրեսիվ հարկման մոտեցումների կիրառմանը, միասնական հարկի ձևավորման ու գործնականում կիրառման ճիշտ մոտեցումների արմատավորմանը, հարկային բեռի արդարացի և համաչափ բաշխմանը,

3. վերլուծվել են ՓՄՁ-ների դասակարգման ցուցանիշները, ներկայացվել են մոտեցումներ դրանց վերանայման ուղիների վերաբերյալ, ինչպես նաև արվել են առաջարկություններ ՓՄՁ-ների գործունեությունը խթանող հարկային և վարկային խթանների վերաբերյալ,

4. ստացված արդյունքներն իրենց արտացոլումն են ստացել օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում, մասնավորապես՝ «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի ուժը կորցրած ճանաչելու հիմնավորումներում, ՀՀ կառավարության որոշմամբ ընդունված «ՀՀ-ում տեղական հարկերի հայեցակարգում»:

«Տնտեսության իրական հատվածի արդիական հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ. գ. դ. Յու. Սուվարյան)։

1. բացահայտվել են գյուղացիական տնտեսությունների զարգացմանը խոչընդոտող գործոնները, արտահանման աճի հիմնախնդիրները, և արվել են առաջարկություններ դրանց լուծման ուղիների վերաբերյալ։

2. հետազոտվել են Սյունիքի և Վայոց ձորի մարզերի մետաղական օգտակար հանածոների օգտագործման արդի վիճակը և դրանց արդյունավետության բարձրացման հնարավորություններն ու ուղիները։

«Սոցիալ-ժողովրդագրական արդիական հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ. գ. դ. Ա. Մարկոսյան)։

1. առաջարկվել են գործուն մոտեցումներ սոցիալական ծրագրերի հասցեականության ապահովման ու տեղեկատվական բազայի բարելավման ուղղությամբ,

2. առաջարկվել են գործուն մոտեցումներ միզրացիային առնչվող օրենսդրական դաշտի կատարելագործման ուղիների վերաբերյալ։

«Տնտեսության արտաքին հատվածի արդիական հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ. գ. դ. Թ. Թորոսյան)։

1. տրվել է Հայաստանի և Եվրամիության միջև առևտրատնտեսական և արժույթաֆինանսական հարաբերությունների վիճակի գնահատականը։

«Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ու պետական աջակցության համալիր միջոցառումների իրականացումը ՀՀ գյուղատնտեսության ոլորտում» թեմայի շրջանակներում (թեմայի ղեկ.՝ տ. գ. դ. Ս. Ղազարյան)։

1. հետազոտվել են ՓՄՁ-ների գործունեության արդի վիճակը, նրանց զարգացմանը նպաստող իրավական դաշտի ձևավորման հիմնահարցերը,

2. տրվել են ՓՄՁ-ների արդյունավետ չափերի որոշման մեթոդական մոտեցումները։

«ՀՀ քաղցրահամ ջրերի ռեսուրսները, պաշարները և կենցաղում ու գյուղատնտեսության մեջ դրանց արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (թեմայի ղեկ.՝ ե.հ. գ. դ. Հ. Ավագյան)։

1. գնահատվել են ՀՀ քաղցրահամ ջրերի պաշարները և ռեսուրսները։

«ՀՀ բարձրարդի գոտիներում բնակչության զբաղվածության բարելավման հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ. գ. դ. Վ. Խոջաբեկյան)։

1. բացահայտվել են Հայաստանի Հանրապետության բարձրարդի գոտիներում բնակչության զբաղվածության բարելավման հիմնախնդիրները։

«Տնտեսության ստվերային մասի կրճատման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ տ. գ. թ. Ա. Թամազյան)։

1. ընտրվել է Հայաստանում ստվերային տնտեսության ծավալների գնահատման նպատակով ու կիրառման տեսանկյունից նպատակահարմար մեթոդիկա,

2. հստակեցվել են դրա տեղայնացման պայմաններն ու մեխանիզմները։

«Ֆինանսական ճգնաժամի բացասական ազդեցությունների նվազեցման միջոցառումների ծրագրի մշակում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. դ., պրոֆեսոր Վ. Լ. Հարությունյան)։

1. վեր են հանվել ֆինանսական ճգնաժամի փուլերը, առանձնահատկությունները, ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացման պատճառները, բացասական դրսևորումները և պատմական դասերը,

2. հետազոտվել է հակաճգնաժամային միջոցառումների արտերկրյա փորձը, ՀՀ-ում իրականացվող հակաճգնաժամային միջոցառումները,

3. առաջարկություններ են արվել դրանց բարելավման ուղիների վերաբերյալ։  
«Հարկման բարելավման հայեցակարգային մոտեցումները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. դ., պրոֆեսոր Վ. Լ. Հարությունյան)։

1. վեր են հանվել հարկման սկզբունքների կիրառման ժամանակակից մոտեցումները, հարկերի հաշվարկման մեթոդական մոտեցումները և առանձնահատկությունները արտերկրում,

2. բացահայտվել են ՀՀ-ում հարկային պարտավորությունների հաշվարկման օրենսդրական ու մեթոդաբանական թերություններն ու բացթողումները,

3. արվել են առաջարկություններ դրանց վերացման ուղիների վերաբերյալ։  
«Վարկային շուկայի հուսալիության աստիճանի բարձրացման և տոկոսադրույքների նվազեցման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. դ., պրոֆեսոր Ա. Հ. Բայադյան)։

1. հստակեցվել են մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման մեթոդաբանական մոտեցումները վարկային շուկայի վրա,

2. առաջարկություններ են արվել տոկոսադրույքների նվազեցման ուղիների վերաբերյալ։

«Մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծություններ։ Փոփոխության միտումներ և կանխատեսումներ» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. թ. Վ. Վ. Խաչատրյան)։

1. տրվել են մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխության միտումները,

2. հիմնավորվել է ՀՀ տնտեսության սցենարային երեք ռազմավարությունների (լավատեսական, վատատեսական, մեկից մյուսին արագ անցման) մշակման անհրաժեշտությունը։

«Արժեթղթերի առաջնային շուկայի զարգացման հարցերը Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. դ., պրոֆեսոր Ա. Բ. Սալնազարյան)։

1. բացահայտվել են առաջնային շուկայի հիմնահարցերը՝ կապված դրա կենտրոնացվածության, ոչ բանկային ինստիտուցիոնալ ներդրողների բացակայության, արժույթային ռիսկերի և այլ գործոնների հետ, որոնց բացասական ազդեցությունների նվազեցման ուղղությամբ կատարվել են համապատասխան առաջարկություններ։

«Մրցակցային միջավայրի բարելավման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. թ. Ա. Ռ. Թամազյան)։

1. բացահայտվել են մրցակցային միջավայրի հիմնախնդիրները, և առաջարկություններ են արվել դրանց բարելավման ուղիների վերաբերյալ:

«Հայաստանի Հանրապետության գյուղացիական տնտեսությունների զարգացման հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. դ., պրոֆեսոր Է. Ս. Ղազարյան).

1. տրվել են մելիորացիայի զարգացման էկոլոգատնտեսագիտական հիմնախնդիրների լուծման հայեցակարգային մոտեցումները, արտադրության մասնագիտացման հիմնական ուղիները ըստ մարզերի.

2. առաջարկություններ են արվել կերային մշակաբույսերի ցանքատարածությունների ընդլայնման և օգտագործման արդյունավետության բարձրացման ուղիների վերաբերյալ:

«ՀՀ մշակող արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնման և գործարկման հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. դ., պրոֆեսոր Ա. Խ. Նազարյան)

1. մշակվել է մշակող արդյունաբերության համաչափ զարգացման մեթոդաբանություն:

«ՀՀ մետաղական օգտակար հանածոների գնահատումն ըստ մարզերի» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. երկրաբանահանք. գ. դ. Չ. Ս. Ավագյան).

1. տրվել է մետաղական օգտակար հանածոների պաշարների ու ռեսուրսների գնահատականը,

2. առաջարկություններ են արվել դրանց օգտագործման արդյունավետության բարձրացման ուղիների վերաբերյալ:

«Հայաստանի Հանրապետության և Եվրամիության երկրների միջև առևտրատնտեսական կապերի կատարելագործումը ֆինանսական ճգնաժամի պայմաններում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. դ., պրոֆեսոր Թ. Շ. Թորոսյան).

1. բացահայտվել են ՀՀ և ԵՄ առևտրային կապերի թերությունները,

2. առաջարկություններ են արվել դրանց բարելավման ուղիների վերաբերյալ՝ տալով նաև արժուրաֆինանսական հարաբերությունների վիճակի գնահատականը:

«Բնակչության սոցիալական պաշտպանվածության կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. դ., պրոֆեսոր Ա. Խ. Մարկոսյան).

1. ուսումնասիրվել է սոցիալական վերափոխումների արտերկրյա փորձը,

2. առաջարկություններ են արվել ՀՀ-ում դրա կիրառման նպատակահարմարության վերաբերյալ:

«Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. թ. Դ. Ն. Հախվերդյան).

1. վեր են հանվել բնակչության միգրացիայի հիմնական առանձնահատկությունները,

2. տրվել է ներկա վիճակի գնահատականը, և արվել են առաջարկություններ աշխատուժի միջազգային միգրացիային Հայաստանում պետական կանոնակարգվածություն հաղորդելու ուղղությամբ:

«Նվազագույն աշխատավարձի սահմանման հայեցակարգային մոտեցումները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. թ. Ա. Գ. Մինասյան)։

1. ուսումնասիրվել են նվազագույն աշխատավարձի որոշման մոտեցումները,
2. վեր են հանվել դրանց առավելություններն ու թերությունները,
3. ՀՀ-ում նվազագույն աշխատավարձի սահմանման համար նախապատվությունը տրվել է գործոնային վերլուծության մոտեցմանը։

«Ինտերնետ ծառայությունների զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. թ. Հ. Ա. Մարկոսյան)։

1. կարևորվել է ինտերնետ ծառայությունների որակի բարելավման հիմնախնդիրը՝ վեր հանելով վերջինիս թերությունները, կարևորելով օրենսդրական դաշտի կատարելագործման, ինտերնետային կայքի իրավական կարգավիճակի հստակեցման, ինտերնետային էջի արտապատկերի նոտարական վավերացման, էլեկտրոնային առևտրի հարկման մոտեցումների հստակեցման անհրաժեշտությունը։

«ՀՀ ազգային ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. թ. Ա. Շ. Մարգարյան)։

1. կարևորվել են գիտության ֆինանսավորման ծրագրա-նպատակային ուղղության փոփոխությունը, նորամուծային հիմնադրամների ստեղծումը, գիտության բնագավառի աշխատողների աշխատավարձերի բարձրացումը։

«Գիտելիքահենք տնտեսության կառուցման հայեցակարգային մոտեցումները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. թ. Գ. Ի. Վարդանյան)։

1. գաուսյան նորմալ բաշխման կորի հիման վրա բացահայտվել է ՀՀ մտավոր ներուժը,
2. առաջարկվել է այն լիարժեք իրացնելու չորս ուղի,
3. մշակվել են ՀՀ ազգային նորաստեղծական համակարգի հայեցակարգային մոտեցումներ։

«Բազմակողմ գիտակցված գործունեության հասարակություն. գաղափարը և ձևավորման հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. դ., պրոֆեսոր Բ. Հ. Եղիազարյան)։

1. վեր է հանվել «գիտակցված գործունեության» հասկացության էությունը, հիմնավորվել է նրա քանակական գնահատման և ներքին սահմանի նորմավորման անհրաժեշտությունը,

2. առաջարկություններ են արվել դրանց որոշման մեթոդական մոտեցումների և հանրապետությունում համապատասխան համակարգերի ձևավորման ուղղությամբ։

«Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ու պետական աջակցության համալիր միջոցառումների իրականացումը ՀՀ գյուղատնտեսության ոլորտում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. դ., պրոֆեսոր Ս. Գ. Ղազարյան)։

1. առաջարկություններ են արվել ագրարային ոլորտում ապահովագրության և ռիսկերի կառավարման բարելավման ուղիների, ՓՄՁ-ների մարքեթին-

գային ծառայությունների ակտիվացման վերաբերյալ:

«Առևտրի համաշխարհային կազմակերպության ՀՀ անդամակցության պարտավորությունների շրջանակներում գյուղատնտեսական գործունեության հարկման և պետական աջակցության հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. դ., պրոֆեսոր Ս. Ս. Ավետիսյան)։

1. բացահայտվել են գյուղատնտեսության հետագա զարգացման հիմնախնդիրները,

2. առաջարկություններ են արվել դրանց լուծման ուղիների վերաբերյալ՝ կապված հարկման տարբերակված մոտեցման ու սուբսիդավորման, մեծածախ շուկաների ձևավորման հետ:

«ՀՀ քաղցրահամ ջրերի ռեսուրսները, պաշարները և կենցաղում ու գյուղատնտեսության մեջ դրանց արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. երկ. հանք. գ. դ. Հ. Ս. Ավագյան)։

1. տրվել է քաղցրահամ ջրերի պաշարների գնահատականը,

2. առաջարկություններ են արվել դրանց արդյունավետ օգտագործման ուղղությամբ:

«ՀՀ մեքենաշինության զարգացման ուղղությունները և հիմնահարցերը» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. դ., պրոֆեսոր Ա. Խ. Նազարյան)

1. հիմնավորվել են մեքենաշինության հատվածի ձեռնարկությունների վերագործարկման անհրաժեշտությունը և շահույթով աշխատելու մոտեցումները՝ կապված ինովացիոն նախագծերի մշակման, արտադրանքի իրացման շուկաների ձևավորման հետ:

«ՀՀ բնակչության կենսամակարդակի և կյանքի որակի բարձրացման ուղիները» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. դ., պրոֆեսոր Ա. Խ. Մարկոսյան)։

1. վեր են հանվել հասարակության զարգացվածության մակարդակը բնութագրող համաթվերի հաշվարկման մեթոդաբանության թերությունները և դրանց վերացման ուղիները,

2. մշակվել է բնակչության աղքատության հաղթահարմանը նպաստող առաջարկությունների փաթեթ:

«ՀՀ բարձրադիր գոտիներում բնակչության զբաղվածության բարելավման հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. ակադեմիկոս, տ. գ. դ., պրոֆեսոր Վ. Ե. Խոջաբեկյան)

1. առաջարկվել է բարձրադիր գոտիներում խրախուսել բնա- և հողակլիմայական առանձնահատկություններից բխող գյուղատնտեսության տնտեսապես գերադասելի մասնագիտացումը, ապահովել գյուղատնտեսական մեքենա-մեխանիզմներով, նպաստել արտադրական ենթակառուցվածքների ձևավորմանը:

«ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերում բնօգտագործման և բնապահպանության տնտեսագիտական հիմնահարցերը» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. աշխ. գ. թ., պրոֆեսոր Է. Ա. Բաբայան)։

1. հիմնավորվել է էկոլոգատնտեսական հաշվառման ժամանակակից համակարգի ձևավորման անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտա գնահատել և հսկել զարգացման էկոլոգացման ընթացքը մակրոտնտեսական ցուցա-

նիշների օգնությամբ,

2. կարևորվել է այդ ոլորտում գանձվող հարկերի ու վճարների բարձրացման անհրաժեշտությունը՝ օրենսդրական փոփոխություններ կատարելու և հատուկ ֆոնդեր ձևավորելու ճանապարհով:

«Տնտեսության ստվերային մասի կրճատման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. թ. Ա. Ռ. Թամազյան)

1. բացահայտվել է անցումային տնտեսության և «ստվերային» հատվածի միջև առկա կապը, և նախանշվել են տնտեսության ստվերային մասի կրճատման ռազմավարական ուղղությունները:

«Հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. դ., պրոֆեսոր Վ. Բ. Բոստանջյան).

1. գնահատվել է հարկային վարչարարության դերը պետական եկամուտների հավաքագրման գործընթացում,

2. մշակվել են հարկային վարչարարության գնահատման ու կատարելագործման մոտեցումներ:

2010

«Ֆինանսական ճգնաժամի բացասական ազդեցությունների նվազեցման միջոցառումների ծրագրի մշակում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ. տ. գ. դ., պրոֆեսոր Վ. Հարությունյան).

1. հետազոտվել են ճգնաժամերի փոխանցման մեխանիզմները, ինչը հնարավորություն է տալիս նախօրոք բացահայտել ազդեցությունների հնարավոր ոլորտները և կառավարության միջոցառումները նպատակաուղղել բացասական ազդեցությունների նվազեցմանը,

2. տրվել է ճգնաժամերի կանխատեսման մեթոդաբանություն, բացահայտվել են ճգնաժամային իրավիճակների ի հայտ գալու նախանշանները,

3. առաջարկություններ են արվել ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունների նվազեցման, հետճգնաժամային զարգացումների ծրագրի մշակման ուղղությամբ:

«Հարկման արտերկրյա փորձը» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ. տ. գ. դ., պրոֆեսոր Վ. Հարությունյան)

1. ուսումնասիրվել է էլեկտրոնային հաշվետվությունների ներդրման արդյունքում հարկային հաշվետվությունների լրացման ժամանակային, վարչական ծախսերի կրճատման հնարավորությունները՝ նպաստելով հարկման արդյունավետության բարձրացմանը:

«Հայաստանի Հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների զարգացման հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ. գ. դ., պրոֆեսոր Վ. Խոջաբեկյան)

1. կատարած հետազոտությունները գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման, փոքր և միջին ձեռնարկատիրության խթանման, գյուղացիական տնտեսությունների խոշորացման և մի շարք այլ ուղղություններով ունեցել են կիրառական նշանակություն և հաշվի են առնվել ՀՀ տնտեսության ազրարային

հատվածի քաղաքականությանն առնչվող մասով իրավական ակտերի նախագծերի, ինչպես նաև վերլուծությունների ու առաջարկությունների ներկայացման գործընթացում:

«Հանրային ծառայությունների պետական կարգավորման համակարգի կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ. տ. գ. թ. Ա. Թամազյան).

1. ուսումնասիրվել են հանրային ծառայությունների տեսական և մեթոդաբանական հիմքերը,

2. տրվել են հիմնական հասկացությունների շուրջ կիրառական բնույթ ունեցող սահմանումները,

3. հետազոտվել են ֆրանչայզինգային հարաբերությունների արմատավորման և գնային արտոնագրերի աճուրդի մեթոդները:

«Ներդրումային գրավչության բարձրացման և ներդրումային գործունեության խթանման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ. տ. գ. թ. Գ. Կիրակոսյան).

1. մշակվել են ներդրումների ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործմանն ուղղված առաջարկություններ,

2. բացահայտվել են ներդրումային միջավայրի բարելավման հիմնական մոտեցումները:

«ՀՀ գյուղատնտեսության արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ. տ. գ. դ., պրոֆեսոր Է. Ղազարյան)

1. մշակվել են գյուղատնտեսական կազմակերպությունների մրցունակության կառավարման և արդյունավետության բարձրացման մեթոդական և հայեցակարգային կոնկրետ մոտեցումներ՝ գործուն համակարգի ներդրման բարենպաստ օրենսդրական և տնտեսական դաշտի ձևավորման, ապահովագրական համակարգի կայացման ուղղությամբ:

«Լեռնահանքային արդյունաբերության հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը» թեմայի շրջանակներում (գիտ. ղեկ. երկր. հանք. գ. դ. Ն. Ավագյան).

1. Ջանգեգուրի և Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատների օրինակով պարզվել է դրանց աշխատանքի ցածր արդյունավետությունը,

2. հիմնավորվել է, որ թերկորգման հետևանքով յուրաքանչյուր տարի պոչամբարներ են թափվում հազարավոր տոննաներով ծանր մետաղներ և թունավոր տարրեր:

«Հայաստանի ժողովրդագրական իրավիճակի բարելավման ուղիները» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ. տ. գ. թ. Ա. Մինասյան)

1. ուսումնասիրվել է Հայաստանի ներկայիս ժողովրդագրական իրավիճակը, նշվել են այն ուղիներն ու եղանակները, որոնք բարերար ազդեցություն կունենան այդ հիմնախնդիրները լուծող և ժողովրդագրական կայուն զարգացում ապահովող գործընթացի վրա:

«Բազմակողմ գիտակցված գործունեության հասարակություն (ԲԳԳՀ). գաղա-

փարը, բնութագրերը, ձևավորման հիմքերը» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ տ. գ. դ., պրոֆեսոր Բ. Եղիազարյան)։

1. առաջարկվել է երևույթի բնութագրման հիմք ընդունել ՄՀ հիմնական սուբյեկտի՝ մարդու մտածելու և գործելու բնատուր հատկությունը։

2. առաջարկվել է մշակել ՄԳԳ կառուցվածքավորման մոտեցումների պաշտոնապես հանձնարարվող մեթոդական ցուցումներ, սահմանել դրանց օգտագործման հսկողություն։

«Հետազոտական և ինովացիոն գործունեության մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանական հիմնահարցերը գիտելիքահենք տնտեսության պայմաններում» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ տ. գ. թ. Ա. Մարգարյան)։

1. կատարվել է գիտահետազոտական և ինովացիոն գործունեության արդյունքների մոնիթորինգի և գնահատման միջազգային պրակտիկայում ընդունված հիմնական մոտեցումների, մոդելների ու ստանդարտների ուսումնասիրություն,

2. մշակվել է մտավոր սեփականության և ինովացիոն գործունեության արդյունքների վիճակագրական գնահատման ու հաշվառման վերաբերյալ ամբողջական մեթոդաբանություն։

«Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ու պետական աջակցության համալիր միջոցառումների իրականացումը ՀՀ գյուղատնտեսության ոլորտում» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ տ. գ. դ., պրոֆեսոր Ս. Ղազարյան)։

1. մշակվել է ՀՀ գյուղատնտեսությունում ապահովագրության և ռիսկերի կառավարման բարելավմանն ուղղված հիմնախնդիրների լուծման հայեցակարգ՝ ընդգրկելով ՓՄՁ և գյուղացիական տնտեսությունների ոլորտներն ու դրանց զարգացմանն ուղիները։

«Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ) ՀՀ անդամակցության պարտավորությունների շրջանակներում գյուղատնտեսական գործունեության հարկման և պետական աջակցության հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ տ. գ. դ. Ս. Ավետիսյան)։

1. ներկայացվել են առաջարկություններ՝ ուղղված գյուղատնտեսությունում կոոպերացիայի խթանմանը, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման մեխանիզմների ներդրմանը, տեղեկատվական համակարգի բարելավմանը, մեծածախ շուկաների համակարգի, տոնավաճառների կազմակերպման ծրագրի իրականացմանը։

«ՀՀ քաղցրահամ ջրերի ռեսուրսները, պաշարները և կենցաղում ու գյուղատնտեսության մեջ դրանց արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ երկր. հանք. գ. դ. Հ. Ավագյան)։

1. գնահատվել են ՀՀ քաղցրահամ ջրերի 20 լ/վրկ-ից ավելի դեբիտով աղբյուրների պաշարները և դրանց կանխատեսումային ռեսուրսները,

2. բացահայտվել է, որ կենցաղում և գյուղատնտեսության մեջ օգտագործվող ջրերի կորուստը կազմում է ավելի քան 80%։

«ՀՀ մեքենաշինության զարգացման ուղղությունները և հիմնահարցերը» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ տ. գ. դ., պրոֆեսոր Ա. Նազարյան)։

1. հիմնավորվել է մեքենաշինության վերականգնման համար ձեռնարկու-

թյունների վերակառուցումն ու վերագործարկումը, որոնք կարող են ստեղծվել այդ ձեռնարկությունների և արտասահմանյան զարգացած երկրների ֆիրմաների հետ ինտեգրման, նորամուծության և թողարկվող արտադրանքի արդիականացման միջոցով:

«Հայաստանի Հանրապետության բնակչության կենսամակարդակի և կյանքի որակի բարձրացման ուղիները» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ տ. գ. դ., պրոֆեսոր Ա. Մարկոսյան).

1. բացահայտվել են բնակչության եկամտի կամ սպառման մակարդակի հաշվարկման մեթոդաբանական բարդությունները, տրվել են դրանց հաղթահարման ուղիները,

2. ներկայացվել է ներկա վիճակը՝ ըստ դեցիլային, քվանտիլային, «աղքատ», «միջին» և «հարուստ» խմբերի:

«Հայաստանի Հանրապետության բարձրադից գոտիներում բնակչության զբաղվածության բարելավման հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (գիտ. ղեկ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ. գ. դ., պրոֆեսոր Վ. Խոջաբեկյան)

1. հիմնավորվել են բնակչության նորմալ շարժունակության, հաղորդակցության, գյուղացիական տնտեսությունների կողմից գյուղատնտեսական մթերքների իրացման շուկաների հասանելիության, ինչպես նաև խմբային սեփականությամբ խոշոր ֆերմերային տնտեսություններ կազմավորելու գաղափարի իրագործման հարցերը:

«ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերում բնօգտագործման և բնապահպանության տնտեսագիտական հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ աշխ. գ. թ. Է. Բաբայան)

1. ուսումնասիրվել են Վայոց ձորի և Սյունիքի մարզերում արտանետման վնասակար նյութերի, թափոնների շարժը և տեսակարար ցուցանիշները, օդային և ջրային ավազան վնասակար արտանետումների քանակների և դրանց համար վճարների բաշխվածությունը:

«Տնտեսության ստվերային մասի կրճատման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ տ. գ. թ. Ա. Թամազյան).

1. բացահայտվել են ստվերային տնտեսության տեսական ու մեթոդաբանական հիմքերը, ՀՀ-ում դրանց գործնական կիրառելիության մակարդակները,

2. մասնակի մոդիֆիկացված մեթոդի կիրառմամբ հաշվարկվել են ՀՀ-ում ստվերային տնտեսության ծավալները,

3. մշակվել են ստվերայնության կրճատման հիմնական ուղիները:

«Հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ տ. գ. դ., պրոֆեսոր Վ. Բոստանջյան).

1. ուսումնասիրվել են հարկային վարչարարության իրականացման կազմակերպական և օրենսդրաիրավական հիմքերը,

2. բացահայտվել են դրա արդյունավետությունը նվազեցնող գործոնները,

3. մշակվել է արդյունավետության գնահատման մեթոդաբանություն:

«ՀՀ գյուղատնտեսության արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ տ. գ. դ., պրո-

Ֆետր Ս. Ղազարյան)

1. մշակվել և ներկայացվել են միջոցառումներ՝ ուղղված ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների վերացմանը:

2011

«Հարկման արտերկրյա փորձը և դրա կիրառման հնարավորությունները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ. գ. դ., պրոֆետր Վ. Հարությունյան).

1. ուսումնասիրվել են աշխարհում և ՀՀ-ում հարկային հարաբերությունների ձևավորման առանձնահատկությունները,

2. հիմնավորվել են օֆշորային բիզնեսի հարկման առավելությունները, գնահատվել է ՀՀ հարկային քաղաքականության ազդեցությունը մակրոտնտեսական իրավիճակների վրա,

3. ուսումնասիրվել են տարբեր երկրներում հարկային հաշվետվությունների ներկայացման ընթացակարգերն ու վարչարարական գործընթացների հաշվառման մոտեցումները,

4. հիմնավորվել են ստվերային եկամուտների ձևավորման աղբյուրները ՀՀ-ում՝ ըստ հարկ վճարողների առանձին խմբերի և տարածաշրջանների, և դրանց ստոխաստիկ (հավանականային) կախվածությունը հարկերից խուսափելու հնարավորությունից:

«Հակաճգնաժամային միջոցառումներն աշխարհում և Հայաստանում» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ. գ. դ., պրոֆետր Վ. Հարությունյան).

1. ներկայացվել է առանձին տարածաշրջանների տնտեսությունների անկայունության հավանական ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա,

2. կարևորվել է եվրոպական երկրների տնտեսության մեջ տեղի ունեցող վերջին զարգացումները, կայունացման ֆոնդերից չիրաժարվելու մեխանիզմը և զգուշավոր տնտեսական քաղաքականության իրագործումը,

3. բացահայտվել է, որ որոշ երկրներում ճգնաժամի դեմ պայքարի արդյունավետ միջոցառումների շարքում տեղ են գտել սոցիալական ապահովության ծրագրերը, որոնց կիրառումը ՀՀ տնտեսության մեջ կարող է մի շարք դրական տեղաշարժերի հիմք հանդիսանալ:

«Հանրային ծառայությունների պետական կարգավորման համակարգի կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. ղեկ.՝ տ. գ. թ. Ա. Թամազյան).

1. առաջարկվել է հանրային ծառայությունները կարգավորող պետական անկախ և միասնական մարմնի ձևավորման հայեցակարգ,

2. մշակվել են միջոցառումներ հանրային ծառայությունների սակագնային կարգավորման իրավական հիմքերի և սակագնային վերահսկողության մեթոդոլոգիայի կատարելագործման ուղղությամբ:

«Օրագրային բյուջետավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակներում (գիտ. ղեկ.՝ տ. գ. թ. Գ. Կիրակոսյան).

1. դասակարգվել են բյուջետային գործընթացի արդյունավետության բարձրացման խոչընդոտները, և մշակվել են դրանց վերացմանն ուղղված մոտեցումները,

2. ներկայացվել են հանրապետությունում դրանց կիրառման հնարավորությունները,

3. առաջարկվել են պետական ծախսերի արդյունավետության գնահատման մոտեցումներ,

4. մշակվել են պետական ֆինանսների արդյունավետ կառավարման խնդիրները և դրանց լուծման մոտեցումները:

«ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների բարելավման հիմնախնդիրները ֆինանսական ճգնաժամի պայմաններում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Վ. Խաչատրյան)։

1. բացահայտվել է, որ ճգնաժամի փոխանցման 6 ուղիներից յուրաքանչյուրն էական ազդեցություն է ունեցել ՀՀ տնտեսության վրա, և հնարավոր է, որ դրանց ինտեգրիոն զարգացումները նաև հետագայում դժվարություններ առաջացնեն,

2. կարևորվել է կանխարգելիչ տնտեսական քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը՝ հիմնված տնտեսական զսպողական քաղաքականության սկզբունքների վրա,

3. ներկայացվել են գնային արդյունավետ քաղաքականության, աշխատուժի շուկայում տեղի ունեցող բացասական զարգացումները կանխարգելիչ, ինչպես նաև արդյունավետ պետական եկամուտների և ծախսերի քաղաքականություն իրականացնելու մոտեցումներ:

«ՀՀ գյուղատնտեսության արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծմանն ուղիները» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. դ., պրոֆեսոր Է. Ղազարյան)։

1. իրականացվել է գյուղական զարգացման SWOT վերլուծություն,

2. վերլուծվել է երկրի պարենային անկախության մակարդակը, ուսումնասիրվել են գյուղատնտեսական մթերքների ներմուծման և իրացման բնագավառում իրականացվող սակագնային և հարկային քաղաքականության բարեփոխումների հնարավորությունները,

3. հիմնավորվել է գյուղատնտեսական արտադրությամբ զբաղված գյուղացիական տնտեսությունների խոշորացման համապատասխան մեխանիզմների կիրառումը, գյուղատնտեսական կոոպերացիայի, ինչպես նաև գյուղատնտեսական ապահովագրության միջազգային փորձը:

«ՀՀ լեռնահանքային արդյունաբերության հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ երկրաբանահանք. գ. դ. Ն. Ավագյան)։

1. հետազոտվել են Սոթքի և Մեղրաձորի ոսկեհանքերի շահագործման, ազնիվ մետաղների կորզման և դրանց հետևանքով միջավայր թափված ծանր մետաղների և թունահարույց տարրերի քանակները,

2. տրվել են վերջիններիս վտանգավոր ազդեցության (էկոլոգիական) հետևանքների գնահատականները:

«Հայ-թուրքական առևտրատնտեսական կապերը և հնարավոր հեռանկարային զարգացումները» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. դ., պրոֆեսոր Թ. Թորոսյան)։

1. կատարվել է Հայաստանի և Թուրքիայի մակրոտնտեսական իրավիճակի և արտաքին առևտրի համեմատական վերլուծություն,

2. ուսումնասիրվել են հայ-թուրքական առևտրատնտեսական կապերը, ծառայությունների ոլորտը, միգրացիոն գործընթացները, Եվրամիության ինտեգրման հետ առնչվող հարցերը,

3. գնահատվել են հայ-թուրքական սահմանի վերաբացումից ակնկալվող օգուտներն ու ռիսկերը։

«Էլեկտրոնային ձեռնարկատիրական գործունեության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Հ. Մարկոսյան)։

1. վերլուծվել են էլեկտրոնային ձեռնարկատիրական գործունեության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը,

2. համակարգվել են այդ ոլորտում պետական քաղաքականության իրականացման միջոցառումները, զարգացման ենթակառուցվածքների առկա վիճակը, ինտերնետի միջոցով իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հարկման հիմնախնդիրները,

3. մշակվել են հայեցակարգային միջոցառումներ քննարկված ոլորտներում բացահայտված թերությունների հաղթահարման ուղղությամբ։

«Սոցիալական և ժողովրդագրական զարգացումները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ. գ. դ., պրոֆեսոր Գ. Ղարիբյան)։

1. ուսումնասիրվել են տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամտի, վերջնական սպառման ծախսերի և խնայողությունների փոփոխման միտումները, առևտրային բանկերի կողմից ներգրավված ժամկետային ավանդների և տնային տնտեսություններին տրամադրված վարկերի կառուցվածքն ու դրա վրա ազդող գործոնները,

2. նախագծվել է ժողովրդագրական զարգացման հայեցակարգ, որը պետք է ներառի միգրացիայի կարգավորման, զբաղվածության, սոցիալական աջակցության, սոցիալական ապահովագրության, առողջապահական ու կրթական համակարգերի կատարելագործման ուղղությամբ անհրաժեշտ առաջադրանքներ։

«Բազմակողմ գիտակցված գործունեության հասարակություն (ԲԳԳՀ). գաղափարը, բնութագրերը, ձևավորման հիմքերը» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. դ., պրոֆեսոր Բ. Եղիազարյան)։

1. բացահայտվել են ՄՀ ձևավորման հիմք հանդիսացող պայմանները՝ բնությունը՝ բնությունից մարդակերպին շնորհված առանձնահատկությունների համալիրը, մարդկային հանրություն և մարդկային հասարակություն հասկացությունների բովանդակային տարբերությունները, հանրությունից հասարակությանն անցման անհրաժեշտությունը, մարդկային հանրության, ուստի ՄՀ գոյատևման շարունակականության սկզբունքների ընդունումը, ՄՀ ստեղծումը և զարգացումը

դիտվել է որպես մարդկային հանրության, ինչպես և ձևավորված հասարակության հետագա զարգացման ուղի:

«Հետազոտական և ինովացիոն գործունեության պետական կարգավորման ինստիտուցիոնալ և մակրոտնտեսական մեխանիզմների ձևավորումը» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Ա. Մարգարյան)։

1. կարևորվել են ցանցային և կլաստերային կառուցվածքների ձևավորմանը պետական քաղաքականության բոլոր միջոցներով խրախուսումն ու աջակցությունը,

2. հիմնավորվել է ՀՀ ազգային նորամուծային համակարգի ձևավորման ու զարգացման խնդրի լուծման կարևորությունը, ազգային նորամուծային համակարգի ձևավորման ու զարգացման ծրագրի շրջանակներում փոքր ու միջին բիզնեսի պետական աջակցության հայեցակարգը, արտոնյալ ֆինանսավորման ու վարկավորման շեշտադրումները:

«Արդի հայ տնտեսագիտության տեսություն» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ.գ. դ., պրոֆեսոր Ռ. Սարինյան)

1. ուսումնասիրություններն իրականացվել են հայ տնտեսագիտական մտքի նորագույն շրջանի և նոր շրջանի կտրվածքով: Թեմատիկ տարբեր ոլորտների առումներով ներառված է արդի հայ տնտեսագիտական միտքը, հատկապես կիրառական նշանակություն ենթադրող առաջարկությունների մեջ, բայց սահմանափակ՝ տեսական հարթության դիտարկումներում:

«Բելառուսի և Հայաստանի շուկայի գործունեության միջազգայնացումը՝ ուղղված երկու երկրների տնտեսական համակարգերում նոր տեխնոլոգիաների ներգրավմանը, ադապտացմանը և ներդրմանը» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Ա. Մարգարյան)։

1. կատարվել է ժամանակակաից պայմաններում շուկայի սուբյեկտների գործունեության միջազգայնացման տեսամեթոդական հիմքերի ուսումնասիրություն,

2. իրականացվել է տեխնոլոգիաների փոխանցման միջազգային շուկայի միտումների վերլուծություն, ու այն համադրվել է Հայաստանի և Բելառուսի պայմանների հետ,

3. կատարվել է Հայաստանի ինովացիոն-տեխնոլոգիական փոխանցման ներուժի վերլուծություն,

4. ուսումնասիրվել են Հայաստանում ինովացիոն ոլորտի կարգավորման օրենսդրական խնդիրները, հետազոտական և ինովացիոն ոլորտի քանակական գնահատման մեթոդներն ու ցուցանիշները:

2012

«Հարկման արտերկրյա փորձը և դրա կիրառման հնարավորությունները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ. գ. դ. Վ. Հարությունյան)։

1. ապացուցվել է, որ անուղղակի և ուղղակի հարկերի վերլուծության արդյունքները հիմնավորում են հարկային բեռի օպտիմալացման և ստվերային տնտեսության նվազեցման փոխազդեցությունը՝ կանխատեսելով տնտեսվարող

սուբյեկտների՝ հարկերի վճարումից խուսափելու վարքագծի դրսևորումը,

2. ցույց է տրվել, որ ՀՀ տնտեսության զարգացումն ու ինստիտուցիոնալ բարեփոխումների ուղացումը խորացրին ճգնաժամի բացասական հետևանքները և նպաստեցին արտաքին պարտքի ավելացմանը, հարկային վարչարարության վատթարացմանը, տնտեսությունում ներքին խզումների խորացմանը, ՀՀ-ում հարկային մուտքերի տեսակարար կշռի նվազմանը,

3. հիմնավորվել է, որ ստվերային տնտեսական հարաբերությունների «մեղմացման» պայմաններում տնտեսության պետական կարգավորման լծակների գործադրման արդյունքում հնարավոր է կանխել առաջացման պատճառները և օբյեկտիվորեն գնահատել ստվերային տնտեսության սպառնալիքները՝ հասցնելով ՀՆԱ-ի 5-10%-ի:

«Հակաճգնաժամային միջոցառումներն աշխարհում և Հայաստանում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, տ. գ. դ. Վ. Հարությունյան).

1. բացահայտվել է, որ համաշխարհային տնտեսության զարգացումներն իրենց ազդեցությունն են թողնում ԱՊՀ և ՀՀ տնտեսությունների զարգացման տեմպերի վրա,

2. ներկայացվել է հակաճգնաժամային միջոցառումների համալիր ցանկ՝ ուղղված սոցիալական ապահովության համակարգի և մասնավոր հատվածի նախատեսված ծրագրերի ներդրմանը,

3. հիմնավորվել է առանձին սոցիալական ապահովության ծրագրային փաթեթների մշակումը, դրանց իրագործման համար համապատասխան ենթակառուցվածքների ձևավորումը:

«Ձեռնարկատիրության արդի հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ տ. գ. թ. Ա. Թամազյան)

1. գործարարության միջավայրը բաժանվել է 13 խոշոր մասերի՝ առանձնացնելով այդ միջավայրի սոցիալ-տնտեսական, մակրոտնտեսական, ինստիտուցիոնալ, քաղաքական, օրենսդրաիրավական, արտաքին տնտեսական, և այլ բաղադրիչները:

«Օրագրային բյուջետավորման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Գ. Կիրակոսյան).

1. մշակվել և ներդրվել է բյուջետային միջոցների բաշխման համակարգ՝ ըստ տնտեսական և սոցիալական կարևոր հիմնախնդիրների լուծմանն ուղղված ճյուղային, ոլորտային և գերատեսչական ծրագրերի,

2. հիմնավորվել է, որ բյուջետային ծախսերի կառավարման հիմնական նպատակներն են բյուջետային կարգապահության պահպանումը, ծախսերի բաշխման, ինչպես նաև տեխնիկական (գործառնական) արդյունավետության ապահովումը:

«ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի բարելավման հիմնախնդիրները՝ հակաճգնաժամային արդյունավետ մեխանիզմների մշակման համատեքստում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Վ. Խաչատրյան).

1. գնահատվել է իրականացվող սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, ինչպես նաև հարցումների միջոցով հիմնավորվել են հակաճգնաժամային ար-

դյունավետ ռազմավարություններ ընտրելու մոտեցումները,

2. ուսումնասիրվել է տնտեսական ճկունության ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը, և գնահատվել են դրա փոփոխության միտումները,

3. ՀՀ տնտեսության համար մշակվել են հակաճգնաժամային և տնտեսական բացասական երևույթները կլանող «ադապտեբլերի» (կլանիչներ) արդյունավետ մեխանիզմներ:

«ՀՀ գյուղատնտեսության արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» թեմայի շրջանակներում (գիտ. ղեկ.՝ տ. գ. դ., պրոֆ. Ա. Բայադյան).

1. հիմնավորվել է, որ գյուղացիական տնտեսություններում արդյունավետության բարձրացման ուղին ինտենսիվացումն է,

2. առաջարկվել են գյուղատնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարողներին արտոնյալ վարկերի տոկոսադրույքների նպատակային սուբսիդավորման մեխանիզմներ,

3. ուսումնասիրվել է գյուղատնտեսությունում կոոպերատիվների ձևավորման խթանման և դրանց կարողությունների ուժեղացման հիմնահարցը, հումք արտադրողների ու գյուղատնտեսական մթերք վերամշակողների միջև պայմանագրային հարաբերությունների զարգացման անհրաժեշտությունը:

«ՀՀ լեռնահանքային արդյունաբերության հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը» թեմայի շրջանակներում (գիտ. ղեկ.՝ երկր. հանք. գ. դ. Հ. Ավագյան).

1. ուսումնասիրվել են 5 ոսկի-բազմամետաղային կազմավորման հանքավայրեր՝ Շահումյանի, Արմանիսի, Ազատելի, Գլաձորի և Կաքավասարի,

2. կատարված աշխատանքների արդյունքով պարզվել է, որ գործող լեռնահանքային ձեռնարկություններն աշխատում են շատ ցածր արդյունավետությամբ, իսկ կրած վնասը տարեկան կազմում է սպասվող հասույթի 65-70%-ը: Խտանյութերի վաճառքի պարագայում հիմնական օգտակար տարրերը գնահատվում են 53-56 տոկոսի չափով, իսկ մյուս հարակից բաղադրիչները չեն գնահատվում: Օգտակար տարրերի թերկորզման հետևանքով տարեկան բնական միջավայր (պոչամբարներ) են թափվում հազարավոր տոննաներով ծանր մետաղներ և թունահարույց տարրեր:

«Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային ինտեգրման գործընթացները» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ տ. գ. դ., պրոֆ. Թ. Թորոսյան).

1. վերլուծվել է ՀՀ բնառեսուրսային և մակրոտնտեսական իրավիճակը,

2. տրվել են հանրապետության արտաքին առևտրի զարգացման միտումները, կառուցվածքային տեղաշարժերը,

3. քննարկվել են այդ ոլորտների զարգացման հնարավորությունները հայթորքական սահմանի բացման պարագայում,

4. մշակվել են առաջարկություններ ՀՀ տնտեսական ռիսկերը նվազեցնելու և Թուրքիայի հետ հնարավորինս արդյունավետ համագործակցելու վերաբերյալ:

«Էլեկտրոնային ձեռնարկատիրական գործունեության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (թեմ.

դեկ.՝ տ. գ. թ. 2. Մարկոսյան).

1. հիմնավորվել է ինտերնետից օգտվողների հասկացության հստակ սահմանման կարևորությունը, առաջնահերթ նշանակություն է տրվել ՀՀ տարածքում տեղակայված տվյալների կենտրոնների ստեղծմանը:

2. Հիմնավորվել է, որ Հայաստանում պետական քաղաքականությունը պետք է ուղղված լինի ինտերնետ կապի արագությանն ու հուսալիությանը, այսինքն՝ որակի բարձրացմանը:

«Սոցիալական և ժողովրդագրական զարգացումները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, տ. գ. դ. Գ. Ղարիբյան).

1. ցույց է տրվել, որ անցումային 20 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության սոցիալական ծանր իրավիճակը գործազրկությունը, աղքատությունը, եկամուտների աննախադեպ բևեռացումը, մեծ արտագաղթը, անդրադարձել են ժողովրդագրական զարգացումների վրա,

2. առաջնային խնդիր է նշվել՝ հետազոտել 2011թ. մարդահամարի արդյունքները և բացահայտել վերջին 10 տարիների ՀՀ ժողովրդագրական զարգացումների հիմնական միտումները:

«Ապագա մարդկային հասարակության էության բնութագրումը և ձևավորման մոտեցումները» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ տ. գ. դ., պրոֆ. Բ. Եղիազարյան)

1. հիմնավորվել է, որ ՄՀ հիերարխիկ համակարգում ձևավորվում և գործում են մի շարք կարևորագույն ենթահասարակություններ, որոնց կազմն ու թվաքանակը, ինչպես և էության բնութագրերը զգալիորեն կարող են տարբերվել ըստ տարածաշրջանների:

«ՀՀ տնտեսության երկարաժամկետ ինովացիոն-տեխնոլոգիական արդիականացումը ինստիտուցիոնալ տրանսֆորմացիայի պայմաններում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ տ. գ. թ. Ա. Մարգարյան).

1. հետազոտվել են վերջին երկու տասնամյակների ընթացքում ՀՀ տնտեսության մեջ կատարված տեխնոլոգիական փոփոխությունները, ինստիտուցիոնալ ռեֆորմների ազդեցությունները տնտեսության գիտական, նորարարական և տեխնոլոգիական կառուցվածքների վրա,

2. ուսումնասիրվել են ՀՀ-ում ազատ տնտեսական գոտիների ձևավորման ու զարգացման հնարավորությունները,

3. քննարկվել է ՀՀ ապրանքային նշանների շուկայում տիրող իրավիճակը, բացահայտվել են դրա հետ կապված հիմնախնդիրները, և առաջարկվել են համապատասխան լուծումներ:

«Արդի հայ տնտեսագիտության տեսություն» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ տ. գ. դ. Ռ. Մարինյան)

1. փորձ է արվել համառոտ հանրագիտարանային բառարանի սկզբունքով պատկերացում տալ համաշխարհային և հայ տնտեսագիտական մտքի վերաբերյալ:

«ՀՀ և Բելառուսի շուկաների սուբյեկտների գործունեության միջազգայնացումը՝ ուղղված երկու երկրների տնտեսական համակարգերում նոր տեխնոլոգիաների ներդրմանը, ադապտացմանը և ներդրմանը» թեմայի շրջանակներում

րում (գիտ ղեկ.՝ տ. գ. թ. Ա. Մարգարյան)։

1. հետազոտվել է տեխնոլոգիաների ստեղծման ու փոխանցման համաշխարհային և հայրենական փորձը, գնահատվել են Հայաստանի և Բելառուսի տեխնոլոգիաների փոխանցման ներուժն ու ուղղությունները,

2. Առաջարկվել է ՀՀ տնտեսության ձեռնարկատիրական միջավայրի զարգացման փաթեթ, ուսումնասիրվել են ինովացիոն ոլորտի կարգավորման խնդիրները, Հայաստանի Հանրապետության հետազոտական և ինովացիոն ոլորտի քանակական գնահատման մեթոդներն ու ցուցանիշները։

## 2013

«Հարկման և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. ղեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ. գ. դ. Վ. Հարությունյան)։

1. հիմնավորվել են հարկային ներուժի գնահատման մոտեցումները հարկային բեռի օպտիմալացման տեսանկյունից,

2. վերլուծվել են հարկային պոտենցիալի գնահատման ժամանակակից մեթոդները, առանձնացվել են դրանց մեթոդաբանական մշակման յուրովի մոտեցումներ,

3. մշակվել են հարկային վարչարարության բարելավմանը նպաստող ուղիներ, ինչպես նաև պետության և տնտեսվարող սուբյեկտների հարկային ներուժի գնահատման համալիր մեթոդներ, և առաջարկվել է վերջինիս կարճաժամկետ մոդել, ինչը կնպաստի ՀՆԱ-ի 5-10% ավելացմանն ու 1,5-2% ստվերայնության կրճատմանը ՀՀ տնտեսական բարեփոխումների արդի փուլում։

«Հակաճգնաժամային միջոցառումներն աշխարհում և Հայաստանում» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ. գ. դ. Վ. Հարությունյան)։

1. բացահայտվել է, որ չնայած իրականացված հակաճգնաժամային միջոցառումներին՝ առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք կարող են ռիսկային լինել համաշխարհային տնտեսության համար և իրենց բացասական ազդեցությունը թողնել զարգացող ու փոքր բաց տնտեսություն ունեցող երկրների վրա,

2. հիմնավորվել է, որ ԱՄՆ պարտքային դեֆոլտի վտանգը, ԵՄ-ում պետական պարտքերի աճը և ՌԴ տնտեսությունում տեղի ունեցող աճի տեմպերի դանդաղեցումն իրենց բացասական ազդեցությունը կթողնեն ՀՀ տնտեսության զարգացման տեմպերի վրա,

3. կարևորվել են ՀՀ-ում կառավարության կողմից որդեգրված ծրագրային դրույթների և գերակայությունների իրականացումը, ինչպես նաև դրանց ճիշտ և ժամանակին հակապարբերաշրջանային ուղղվածություն տալու հանգամանքը։

«Ձեռնարկատիրության արդի հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ տ. գ. թ. Ա. Թամազյան)։

1. ուսումնասիրվել են Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության արտաքին միջավայրը ձևավորող հիմնական գործոնները, վերլուծվել են ինովացիաների և վենչուրային ձեռնարկատիրության կարգավորման ծրագրային և օրենսդրական հիմքերը Հայաստանում՝ մշակելով այս խնդիրների լուծման

ուղիներ և միջոցառումներ,

2. պարզվել է, որ ՀՀ-ում ներքին շուկայի տարողունակությունը, հատկապես վերամշակման բարձր մակարդակ պահանջող ապրանքների գծով, շարունակում է մնալ ցածր մակարդակի վրա:

«Հարկային բեռի գնահատման հիմնահարցերը և հավասարաչափ բաշխման խնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ տ. գ. թ. Գ. Կիրակոսյան).

1. բացահայտվել են հարկային քաղաքականության առանձնահատկությունները զարգացող և զարգացած տնտեսությունների պայմաններում,

2. ուսումնասիրվել են ՀՀ-ում հարկային բեռի բաշխման առանձնահատկությունները, հարկային բեռի հավասարաչափ բաշխման խնդիրը և դրա լուծման ընդհանուր մոտեցումները,

3. դիտարկվել են հարկային բեռի գնահատման եղանակները, իրականացվել է տարբեր երկրների կտրվածքով հարկային բեռի մակարդակի համեմատական վերլուծություն:

«ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի բարելավման հիմնախնդիրները՝ հակաճգնաժամային արդյունավետ մեխանիզմների մշակման համատեքստում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ տ. գ. թ., դոցենտ Վ. Խաչատրյան).

1. ներկայացվել են Հայաստանի տնտեսական ներուժն ու ճկունությունն ավելացնելու քաղաքականությանն ուղղված մոտեցումներ,

2. հարցումների արդյունքների վերլուծության շնորհիվ գնահատվել է ՀՀ-ում իրականացված սոցիալ-տնտեսական քաղաքականությունը,

3. հիմնավորվել են Հայաստանի տնտեսական քաղաքականության հիմնական վեկտորին դեպի Ասիա ուղղվածություն տալու և Մաքսային միության շրջանակներում առավել մրցունակ դիրք գրավելու տնտեսական հնարավորությունները:

«ՀՀ ագրարային ոլորտի արտադրական գործընթացների տնտեսավարման ձևերի կարգավորման հիմնախնդիրների լուծման ուղիները» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ տ. գ. դ. Ա. Բայադյան).

1. ուսումնասիրվել են գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման սկզբունքները, կարգավորման խնդիրները, գործող կոոպերատիվների գործունեությունը, կազմավորմանը խոչընդոտող գործոնները, հաղթահարման հնարավորությունները,

2. արվել են մի շարք առաջարկություններ համայնքների տնտեսական զարգացմանն ուղղված աջակցությունների ապահովման, սուբսիդավորման միջոցով մատչելի վարկավորման, խորհրդատվության խորացման, մարքեթինգի զարգացման վերաբերյալ:

«Լեռնահանքային արդյունաբերության հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ երկր. հանք. գ. դ. Հ. Ավագյան)

1. ուսումնասիրվել են 10 մետաղական հանքավայրեր և հանքավայրերի խմբեր: Ցույց է տրվել, որ շահագործվող հանքավայրերից թողարկվում են միայն կիսաարտադրանքներ: Խտանյութերի արտադրության գործընթացներում նպա-

տակադրվում են միայն հիմնական մետաղները, որոնք հանքաքարերից խտանյութերի մեջ կորզվում են ցածր տոկոսներով՝ հիմնականում 60-70: Այդպիսի թերկորզման հետևանքով բնական միջավայր (պոչամբարներ) են թափվում հսկայածավալ ծանր մետաղներ և թունահարույց հատկություններով տարրեր՝ ստեղծելով էկոլոգիական աղետով սպառնացող միջավայր:

«ՀՀ տարածաշրջանային ինտեգրման գործընթացները (Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև առևտրատնտեսական կապերի գնահատականը և հետագա զարգացման միտումները)» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ տ. գ. դ. Թ. Թորոսյան)։

1. ներկայացվել են ԻԻՀ բնառեսուրսային կարողությունները, տրվել է դրանց տնտեսական գնահատումը արտաքին առևտրի զարգացման տեսանկյունից,

2. վերլուծվել են ԻԻՀ մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխության միտումները՝ առանձնացնելով երկրի մակրոտնտեսական իրավիճակը մինչև միջազգային կառույցների կողմից տնտեսական պատժամիջոցների կիրառումը և դրանից հետո:

«Էլեկտրոնային պետության և տեղեկատվական հասարակության ձևավորման տնտեսական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ տ. գ. թ. Հ. Մարկոսյան)։

1. ուսումնասիրվել են տեղեկատվական հասարակության զարգացման և էլեկտրոնային պետության ձևավորման հայեցակարգային մոտեցումները և սկզբունքները, դրա հիմքում ընկած օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները,

2. էլեկտրոնային պետությունը ներկայացվել է որպես տեղեկատվական հասարակության զարգացման նոր փուլ և մակարդակ, որը հնարավորություն է տալիս ոչ միայն բարձրացնել պետական կառավարման համակարգի արդյունավետությունը, այլև նոր հնարավորություններ է ընձեռում տնտեսական գործունեության զարգացման և միջազգայնացման համար:

«Սոցիալական և ժողովրդագրական անվտանգության ապահովման նախադրյալները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ տ. գ. դ. Թ. Մանասերյան)։

1. ուսումնասիրվել են անհատ-ընտանիք-հասարակություն-պետություն կապը և դրա էվոլյուցիան անկախության տարիներին,

2. բացահայտվել են բնակչության կենսամակարդակի վրա ազդող երևույթներն ու գործոնները, դրա բարելավման հնարավոր ուղիները,

3. վերլուծության են ենթարկվել միգրացիոն գործընթացները Հայաստանում անկախության երկու տասնամյակներում,

4. ներկայացվել են բնակչության կազմի փոփոխությունները և դրանք ծնող պատճառները:

«Կանաչ տրանսֆերտային տնտեսությունների առաջնային զարգացումը՝ որպես հասարակության զարգացման և աղքատության հաղթահարման կարևորագույն ուղի» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Բ. Եղիազարյան)

1. հիմնավորվել է, որ «կանաչ տնտեսության» մոդելը ունի մի շարք դրական կողմեր: Աստիճանական անցում կատարելով «կանաչ տնտեսության» մարդկությունը ստանում է իրական տնտեսական, սոցիալական օգուտներ, որոնք

շոշափելի կլինեն ոչ միայն այժմյան սերունդների, այլև ապագա սերունդների կենսագործունեության համար: Երջակա միջավայրի պահպանությունը դիտվում է այս համակարգի հիմնական առանձնահատկություններից մեկը:

«Հայ տնտեսագիտական մտքի հիմնական հոսանքները 19-րդ դարի 70-90-ական թթ.» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Ռ. Սարինյան)

1. լույս է տեսել Ռ.Սարինյանի «Հայ տնտեսագիտական մտքի հիմնական հոսանքները» մենագրությունը: Աշխատության մեջ 19-րդ դարի 70-90-ական թվականների հայ տնտեսագիտական միտքը հետազոտվել է ազատամտական, ազգային-պահպանողական և նարոդնիկական հոսանքների ամբողջության, դրանց հայացքների համակարգը միացնող և բաժանող տիրույթների մեջ:

«ՀՀ և Բելառուսի շուկաների սուբյեկտների գործունեության միջազգայնացումը՝ ուղղված երկու երկրների տնտեսական համակարգերում նոր տեխնոլոգիաների ներգրավմանը, ադապտացմանը և ներդրմանը» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Ա. Մարգարյան):

1. առանձնացվել է տեխնոլոգիաների շրջանակը, որի գծով Հայաստանը առաջիկա տասնամյակներում ի գորու է ապահովել նշանակալի զարգացումներ,

2. փորձ է արվել գնահատել ստեղծվելիք արտադրատեսակների հիմնական տեխնիկա-տնտեսական չափորոշիչները և դրանց իրացման շուկաների հնարավոր շրջանակը,

3. մշակվել են Հայաստանի ինովացիոն քաղաքականության և ներքին շուկայում տեխնոլոգիական փոխանցման հիմնական ուղղություններն ու դրանց հիմնական գործիքները:

«Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ տ. գ. դ. Ա. Բայադյան)

1. ցույց է տրվել, որ ՀՀ պետական պարտքի կառավարման արդյունավետության անհրաժեշտությունը հատկապես սրվել է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներից սկսած՝ հրատապ դարձնելով փոխառու միջոցների տնտեսապես հիմնավորված աղբյուրների փնտրման և կառավարման մոտեցումների մշակման անհրաժեշտությունը:

2014

«Հարկման և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ. գ. դ. Վ. Հարությունյան):

1. գնահատվել է հարկային վարչարարության արդյունավետության մակարդակի բարձրացման համար հարկային բարեփոխումների «արժեքը»,

2. հիմնավորվել է ստվերի առաջացմանը նպաստող հարկային վարչարարության ցածր մակարդակը,

3. առաջարկվել է ՀՀ հարկային համակարգում ներդնել հարկային ներդաշնակեցման քաղաքականություն՝ ըստ հարկատեսակների, հարկային դրույքաչափերի, ինչպես նաև վերանայել ՓՄՁ-ների հարկման մեխանիզմները,

4. ԵՏՄ-ի ինտեգրացիոն գործընթացում հաշվարկվել են գործարար միջավայրի վրա ազդող հարկային վարչարարության ընթացակարգերի նվազեցման հնարավորությունները:

«Հակաճգնաժամային միջոցառումներն աշխարհում և Հայաստանում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ. գ. դ. Վ. Հարությունյան).

1. բացահայտվել է, որ համաշխարհային տնտեսության մեջ առկա են մի շարք ռիսկեր, որոնք ազդում են առանձին տարածաշրջանների և երկրների տնտեսության վրա,

2. ցույց է տրվել, որ համաշխարհային տնտեսությունը մինչև 2020 թ. կգարգանա դանդաղ տեմպերով՝ պայմանավորված նաև Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցներով: Ըստ ԱՄՆ կանխատեսումների՝ ՌԴ տնտեսական աճը 2014 թ. կկազմի 0.2%, իսկ 2015 թ.՝ 0.5%, ինչը հանգեցնելու է ՀՀ տնտեսության մեջ աճի տեմպերի անկման, որը միայն կարող է կոմպենսացվել ԵԱՏՄ անդամակցության դրական զարգացումների արդյունքում,

3. ցույց է տրվել, որ մի շարք տնտեսական ցուցանիշներ կրկնում են 2008-2009 թթ. միտումները, ինչը փաստում է նախաճգնաժամային իրավիճակի մասին:

«Ձեռնարկատիրության արդի հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Ա. Թամազյան).

1. ներկայացվել են ձեռնարկատիրության, մրցակցության և ձեռնարկատիրական ռիսկի հետ կապված մոտեցումներ՝ հիմնարար հասկացությունների սահմանումների և տնտեսական օրենքների ու օրինաչափությունների մեկնաբանության հարցում,

2. առաջարկվել է ձեռնարկատիրական ռիսկի քանակական ու որակական գնահատման ամփոփ մեթոդաբանություն:

«Հարկային բեռի գնահատման հիմնահարցերը և հավասարաչափ բաշխման խնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Գ. Կիրակոսյան).

1. ներկայացվել են այն սկզբունքները և հիմնադրույթները, որոնք պետք է ընկած լինեն հարկային համակարգի ձևավորման հիմքում,

2. գնահատվել է հարկային բեռի ազդեցությունը տնտեսության վրա, և ներկայացվել են դրա հավասարաչափ և արդարացի բաշխման մոտեցումները:

«ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի բարելավման հիմնախնդիրները՝ հակաճգնաժամային արդյունավետ մեխանիզմների մշակման համատեքստում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Վ. Խաչատրյան).

1. մշակվել է «Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի մակրոտնտեսական ազդեցություն՝ խոցելիություն սկզբնական պայմանների առկայությամբ» հայեցակարգային մոդել, որի շրջանակում անդրադարձ է կատարվել դեպի ՀՀ իրական հատված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի փոխանցման հինգ մեխանիզմներին,

2. առաջարկվել է տնտեսական հիմքի բազմազանության ապահովման միջոցով բարձրացնել տնտեսության ճկունության աստիճանը:

«ՀՀ ագրարային ոլորտի արտադրական գործընթացների տնտեսավարման ձևերի կարգավորման հիմնախնդիրների լուծման ուղիները» թեմայի շրջանակ-

ներում (գիտ. ղեկ.՝ տ. գ. դ. Ա. Բայադյան)։

1. վերլուծվել են վերամշակող կազմակերպությունների արտադրական կարողությունները և դրանց ենթակառուցվածքների զարգացման հնարավորությունները,

2. ցույց է տրվել, որ Հայաստանը ներուժ ունի՝ մրցունակ դառնալու սննդամթերք արտադրող մի շարք ոլորտներում, որոնց արտադրանքը պահանջարկ ունի։ Հանրապետությունում ագրարային ոլորտի կարգավորման գործում կարևոր տեղ ունի օրգանական գյուղատնտեսությունը։

«Հազվագյուտ տարրերն ու հողատարրերը Հայաստանի հանքավայրերում, դրանց արդյունահանման ու տնտեսական արդյունավետության հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (գիտ. ղեկ.՝ երկր. հանք. գ. դ. Հ. Ավագյան)

1. հաշվարկվել է, որ շահագործվող և շահագործման պատրաստվող հանքավայրերում առկա 41 հազվագյուտ տարրերի արժեքը (տարեկան) կազմում է 24 մլրդ 69,99 մլն դոլար։ Դրանց գերակշիռ մասը շահագործվող հանքավայրերում փոշիացվում է։ Միայն Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից տարեկան փոշիացման ենթարկվող սկանդիումի քանակը 2013 թ. կազմել է 96,48 տ, որի արժեքը 2011 թ. գներով կազմել է 503,3 մլն դոլար։

«Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային ինտեգրման գործընթացները (ՀՀ – Մաքսային միություն)» թեմայի շրջանակներում (գիտ. ղեկ.՝ տ. գ. դ. Ա. Թավադյան)

1. ներկայացվել են Մաքսային միությանը Հայաստանի անդամակցության ընձեռած հնարավորություններն ու մարտահրավերները։ Հայաստանը կարող է լինել Մաքսային միության համահիմնադիր։ Եվրաինտեգրման գործընթացը ոչ միայն չի հակասում Մաքսային միության շահերին, այլև կարող է օգնել ավելի լավ իրացնելու երկրների մրցակցային առավելությունները, այդ թվում՝ ԵՄ շուկաներում, և է՛լ ավելի ուժեղացնել դիրքերը միջազգային ասպարեզում։

«Էլեկտրոնային կառավարման համակարգի և տեղեկատվական հասարակության զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. ղեկ.՝ տ. գ. թ. Հ. Մարկոսյան)։

1. ուսումնասիրվել են էլեկտրոնային ծառայությունների զարգացման ժամանակակից միտումները, հասարակության և պետության տեղեկատվական զարգացման և պատրաստվածության գնահատման հիմնահարցերը, էլեկտրոնային ծառայությունների օգտագործման ինտենսիվության բնութագրերը։ Հայաստանը 190 երկրների շարքում էլեկտրոնային կառավարման պատրաստվածության 0.4997 ցուցանիշով գրավում է 94-րդ հորիզոնականը՝ հետ մնալով Ադրբեջանից, Ղրղըզստանից, Տաջիկստանից և Թուրքմենիայից,

2. ներկայացվել է միջոցառումների համալիր ծրագիր, որը թույլ կտա զգալիորեն բարելավել դիրքերը վարկանիշային աղյուսակներում։

«Սոցիալական և ժողովրդագրական անվտանգության ապահովման նախադրյալները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. ղեկ.՝ տ. գ. դ. Թ. Մանասերյան)

1. ներկայացվել են Հայաստանում սոցիալական և ժողովրդագրական

անվտանգության ապահովման նախադրյալները: Հայաստանում գործող կենսաթոշակային ապահովության գործող համակարգը գնահատվում է որպես անարդյունավետ և թանկարժեք, կենսաթոշակային ապահովության առումով հանրապետությունում իրավիճակը դեռևս մնում է լարված: Հայաստանում միջին կենսաթոշակը կազմում է հանրապետության միջին աշխատավարձի 24% և կենսամիջոցների նվազագույնի ընդամենը 10% - ը:

«Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակներում (գիտ. ղեկ.՝ տ. գ. դ. Ա. Բայադյան)։

1. ցույց է տրվել, որ վերջին տարիներին արձայնագրված ներքին միջնաժամկետ պետական պարտքի մասնաբաժնի աճը կարող է հանգեցնել պետական պարտքի անկայունությանը,

2. արձանագրվել է, որ արտաքին պետական պարտքի կառուցվածքում կարևորագույն միտումը ճգնաժամային տարիներին երկկողմանի վարկերի մասնաբաժնի ավելացումն է,

3. առաջարկվել է պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներում մեծացնել ներքին փոխառու միջոցների տեսակարար կշիռը, ներդնել ռիսկերի գնահատման համակարգ:

«Պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. ղեկ.՝ տ. գ. թ. Դ. Հարությունյան)։

1. բացահայտվել է միջազգային գների ազդեցությունը ՀՀ և ԼՂՀ գների վրա, ներկայացվել են առկա խնդիրների լուծման ուղիները,

2. կարևորվել է ջերմոցային տնտեսությունների զարգացումը ՀՀ-ում, և ներկայացվել են առաջարկներ և տեխնիկական լուծումներ,

3. անասնապահության ճյուղի տեսանկյունից ներկայացվել են առաջարկներ առկա անասնազվաքանակը ավելացնելու և անասունների մթերատվությունը բարձրացնելու նպատակով:

## 2015

«Հայ ժողովրդի ժողովրդագրական և նյութական կորուստները ցեղասպանության ընթացքում և դրանց փոխհատուցման հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (գիտ. ղեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ. գ. դ. Վ. Հարությունյան)։

1. ցեղասպանության ժողովրդագրական, նյութական և ֆինանսական կորուստները գնահատվել են ըստ ՀՀ ազգային արխիվում պահվող հայտարարագրերի, հետազոտվել են կորուստների հատուցման հնարավոր ձևերը,

2. ուսումնասիրվել են հայոց ցեղասպանության միջազգային իրավական պատասխանատվության հիմնախնդիրները, ինչպես նաև ցեղասպանության ֆոնդի ստեղծման ու հատուցման փաթեթի ձևավորման հիմնահարցերը:

«Եվրասիական տնտեսական միությանը անդամակցության հնարավոր ազդեցությունները ՀՀ տնտեսության վրա» թեմայի շրջանակներում (գիտ. ղեկ.՝ տ. գ. դ. Ա. Թավադյան)։

1. հիմնավորվել է, որ անհրաժեշտ է ճշգրտել և համաձայնեցնել ԵԱՏՄ երկրների տնտեսական քաղաքականության գերակայությունները, որոշել նպա-

տակները.

2. ձևակերպվել են ՀՀ տնտեսության զարգացման ինտեգրացիոն ճանապարհների ընտրության սկզբունքները, հիմնավորվել է, որ ԵԱՏՄ ձևավորման լավագույն սցենարի հավանականությունը բարձր է միայն այն դեպքում, եթե ապահովվում է ԵԱՏՄ պայմանագրի առանցքային պահանջների կատարումը, և իրականացվում է համաձայնեցված հարկաբյուջետային, դրամավարկային և արժույթային քաղաքականություն:

«Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. դ. Ա. Բայադյան).

1. կարևորվել և հիմնավորվել է պետական պարտքի կառավարումն ու քաղաքական որոշումներն իրարից տարանջատելու անհրաժեշտությունը,

2. հիմնավորվել է պետական պարտքի ներգրավման յուրաքանչյուր գործարքի ժամանակ նպատակի սահմանման անհրաժեշտությունը և պարտք ներգրավելու բացառիկ իրավունքի վերապահումը,

3. պետական պարտքի կառավարելիությունը ապահովելու նպատակով առաջարկվել է օրենսդրորեն ամրագրել պետական պարտքի սահմանային լրացուցիչ մեծություններ:

«Ներդրումային ծրագրերի իրականացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ իրական հատվածում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. թ. Բաղդասարյան).

1. գնահատվել են ՀՀ օտարերկրյա ուղղակի ներդրումները և դրանց իրականացման ոլորտները 2007-2014 թթ. վերլուծելով ներդրումային գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտը,

2. գնահատվել է հարկային համակարգի ազդեցությունը ներդրումային գործունեության վրա:

«Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ռիսկերի կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. թ. Ա. Զատիկյան)

1. կարևորվել է կենսաթոշակային համակարգերի ֆինանսական ռիսկերի առաջացման նկատմամբ մշտական վերահսկողության իրականացումը, ռիսկերի կառավարման համապատասխան ռազմավարության մշակումը և իրագործումը, ներդրվող միջոցների ապահովագրումը, ֆինանսական շուկաների զարգացման միտումների մշտական հետազոտությունը և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ներդրման նոր ընձեռված հնարավորությունների օգտագործումը:

«Ֆինանսական միջոցների կազմավորման և օգտագործման բարելավման ուղիները ՀՀ ագրարային ոլորտում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. դ. Ա. Բայադյան).

1. առաջարկվել է գյուղացիական տնտեսություններում արտադրական սպասարկման պարարտանյութերով, թունաքիմիկատներով, այլ նյութական միջոցներով ապահովման խնդրի լուծման նպատակով համայնքներում ստեղծել

վճարովի ծառայություն մատուցող կառույց,

2. կոռպերատիվների հետագա խթանման ու ընդլայնման, նոր ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար առաջարկվել է տրամադրել նախնական կապիտալ՝ գործունեության առաջին հինգ տարիներին ազատելով հարկերից:

«Եվրասիական տնտեսական միությանը անդամակցության հնարավոր ազդեցությունները ՀՀ տնտեսության վրա» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. դ. Ա. Թավադյան).

1. վերլուծվել է ԵԱՏՄ երկրների համաձայնեցված դրամավարկային քաղաքականության ազդեցությունը ազգային արժույթով փոխհաշվարկների վրա,

2. հիմնավորվել է ԵԱՏՄ երկրների մակրոտնտեսական քաղաքականության համաձայնեցման անհրաժեշտությունը,

3. ձևակերպվել են համակարգված քայլեր, որոնք անհրաժեշտ է իրականացնել ՀՀ տնտեսության ինտեգրացիոն էֆեկտները հնարավորինս մեծացնելու համար:

«Հայ տնտեսագիտական մտքի արդի ընթացքի ուրվագծեր: Նորագույն շրջանի հայ տնտեսագիտական միտքը» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. դ. Ռ. Մարինյան)

1. ուսումնասիրություններ են իրականացվել XX դարասկզբի և արդի հայ տնտեսագիտական մտքի պատմության կտրվածքներով: «Բախշի Իշխանյան» գրքում առաջին անգամ համակարգվել են հայ մտավոր պատմության նշանավոր անուններից մեկի տնտեսագիտական հայացքները, ցույց է տրվել, որ նա ընդլայնել է XX դարասկզբի հայ տնտեսագիտական մտքի տեսա-պատմական սահմանները:

«Պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. տ. գ. թ. Դ. Հարությունյան).

1. կատարվել են սննդարդյունաբերության ճյուղի համախառն թողարկված արտադրանքի և արտաքին առևտրի վիճակագրական ցուցանիշների համեմատական վերլուծություններ,

2. վերլուծության արդյունքում առաջարկվել է համապատասխանեցնել ՀՀ ստանդարտները ԵՏՄ միասնական ստանդարտներին:

2016

«Հայ ժողովրդի ժողովրդագրական և կյութական կորուստները ցեղասպանության ընթացքում և դրանց փոխհատուցման հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ. ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ. գ. դ. Վ. Հարությունյան)

1. ներկայացվել են Բուրսայի և Ադանայի նահանգներում բնակված հայերի սեփականության, ինչպես նաև եկեղեցու տնօրինության տակ գտնվող անշարժ գույքի նկարագիրը նախքան 1915 թ., ինչպես նաև կորուստները հայոց ցեղասպանության տարիներին:

«Տնտեսվարող սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեության գնահատման հիմնահարցերը և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում

նակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Ա. Բայադյան)։

1. առաջարկվել է ՀՀ կառավարության կողմից արտադրողներին սուբսիդավորման իրականացում՝ շուկայական գնի և նվազագույն սահմանված գնի միջև եղած տարբերության չափով,

2. արտադրական ռիսկերի կառավարման նվազեցման համար առաջարկվել է ստեղծել համաֆինանսավորման սկզբունքով ապահովագրության նոր համակարգի ձևավորում, որը հետագայում կնպաստի միջհամայնքային միավորումների ստեղծմանը:

«Հայաստանի Հանրապետության ինտեգրացման գործընթացների հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Ա. Թավադյան)։

1. հիմնավորվել է, որ անհրաժեշտ է ձևավորել ՀՀ տնտեսության զարգացման նոր մոդել,

2. փորձ է կատարվել՝ որոնելու ուղիներ ՀՀ տնտեսության զարգացման բոլոր իրատեսական ու անիրատեսական հեռանկարների հանգույցները Եվրասիական տնտեսական տիրույթում շաղկապելու համար,

3. ուսումնասիրվել են Հայաստանի տնտեսական ինտեգրացիայի այլընտրանքային ուղղությունները՝ հայ-իրանական և ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցության զարգացման հեռանկարները:

«Հարկաբյուջետային քաղաքականության բարելավման արդի հիմնախնդիրները ՀՀ -ում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Կ. Սարգսյան)

1. ցույց է տրվել, որ ՀՀ-ում գործարար միջավայրի ակտիվացման, տնտեսական աճի խթանման և սոցիալական լարվածության թուլացման տեսանկյունից առավել մեծ նշանակություն ունեն հարկային բեռի կրճատումը, ԱԱՀ-ի տարբերակված դրույքաչափերի կիրառումը և միաժամանակ հարկման բազայի ընդլայնումը:

«Տնտեսվարող սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեության գնահատման հիմնահարցերը և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. դ. Ա. Բայադյան)։

1. ուսումնասիրվել են տնտեսվարող սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեությունը, դրանց ֆինանսական արդյունքները և դրանից բխող ֆինանսատնտեսական ցուցանիշները,

2. կատարված վերլուծությունների արդյունքում առաջարկվել է բարձրացնել իրացումից ստացած զուտ հասույթի չափը համախառն ներքին արդյունքի կազմում:

«Հայ-իրանական տնտեսական հարաբերությունների հեռանկարներն ու ուղղությունները ժամանակակից աշխարհաքաղաքական պայմաններում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Զ. Մարկոսյան)։

1. առաջարկվել է տարածաշրջանային տրանսպորտային ցանցի մաս կամելու նպատակով ֆինանսական ռեսուրսների կոնսոլիդացմամբ ավարտին հասցնել հյուսիս-հարավ ավտոմայրուղու շինարարությունը, որից հետո միայն անցնել երկաթգծի կառուցման նպատակահարմարության քննարկմանն ու իրականացմանը,

2. ԵՏՄ տարածք վերամշակված գյուղմթերքի անխափան մատակարարում իրականացնելու նպատակով առաջարկվել է կազմակերպել իրանական ծագման գյուղմթերքի ներկրման, վերամշակման և արտահանման աջակցության մեխանիզմներ:

«ՀՀ վերամշակող արդյունաբերական արտադրանքի արտահանման և ներդրումային գործունեության արդի հիմնախնդիրները ԵԱՏՄ ինտեգրացման համատեքստում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Ք. Բաղդասարյան)

1. Բացահայտվել է, որ առկա սահմանափակումները կարող են ճնշել արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների մասով Հայաստանի ակնկալիքները: ԵՏՄ երկրների միջև ՕՈւՆ-ների համար գնալով ավելացող մրցակցությունը ենթադրում է, որ ընդունող երկրները պետք է իրականացնեն ՕՈւՆ ներգրավելու ամենաարդյունավետ ռազմավարությունները:

«Միգրացիոն գործընթացների կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (գիտ. դեկ.՝ տ. գ. թ. Ա. Զատիկյան).

1. ցույց է տրվել, որ աշխատանքային միգրանտների դրամական փոխանցումները լրջորեն ազդում են ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման վրա,

2. բացահայտվել են նաև ընկերությունների ներդրումային գործունեության խթանման միջոցով տնտեսության զարգացման հնարավորությունները,

3. ուսումնասիրվել են գործազրկության մակարդակի կրճատման, կենսամակարդակի բարձրացման և տնտեսության համաչափ զարգացման ապահովման հիմնախնդիրները:

2017

«Հարկային և մաքսային մարմինների գործունեության կատարելագործման հիմնախնդիրները հայաստանի հանրապետությունում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ. գ. դ. Վ. Լ. Հարությունյան).

1. ուսումնասիրվել են հարկային և մաքսային մարմինների գործունեության զարգացման հիմնախնդիրները, հարկային վարչարարության բարելավման տեսական և մեթոդաբանական մոտեցումները, տարածաշրջանային ինտեգրման ազդեցությունը հարկային և մաքսային համակարգերի վրա,

2. բացահայտվել են հարկային և մաքսային մարմինների գործունեության կատարելագործման օպտիմալ ուղիները՝ շեշտադրելով կազմակերպչական կառուցվածքի օպտիմալացումը և հարկային և մաքսային ծառայողի վարվելակերպի կանոնների բարելավումը:

«ՀՀ տնտեսության կայուն աճի ապահովման հիմնախնդիրները և լուծման ուղիները» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ տ. գ. դ. Ա. Բայադյան).

1. ցույց է տրվել, որ ՀՀ-ում սոցիալ տնտեսական վիճակի բարելավումը հնարավոր է մարզային արդյունաբերական համալիրի ձևավորման պարագայում,

2. բացահայտվել է, որ տարածքային համաչափ զարգացման հիմքում պետք է դնել որոշակի տարածքի ռեսուրսային ներուժը՝ պայմանավորված կլաստերների ձևավորմամբ գիտելիքների և նորարարությունների կիրառման հետ,

3. տնտեսության բոլոր ոլորտների զարգացման արդյունավետությունն

ապահովելու համար հիմնավորվել է ապահովագրության արմատավորման կարևորությունը:

«Վերականգնվող էներգետիկայի զարգացման խթանման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակներում (թեմայի ղեկավար՝ Ն. Մարկոսյան)։

1. ցույց է տրվել, որ վերականգնվող էներգետիկայի ենթակառուցվածքների խթանման գործում խիստ արդիական է պետական աջակցության այնպիսի մեխանիզմների ներդրումը, որոնք երկարաժամկետ բեռի չեն վերածվի պետական բյուջեի համար,

2. առաջարկվել է վերականգնվող էներգետիկայի ոլորտում թույլատրել արագացված ամորտիզացիայի կիրառումը և էներգիայի մասնավոր ցրված հզորությունների կառուցման խթանման նպատակով էներգիայի կուտակման կայաններին էլեկտրաէներգիայի վաճառքի և ետգնման գնի երաշխավորված մարժայի սահմանումը, «Գանաչ սերտիֆիկատների» ներդրման արդյունավետությունը և հիդրոակումուլյացիոն հզորությունների գործարկման անհրաժեշտությունը:

«Ռազմարդյունաբերության, նորարարությունների և տնտեսական աճի միջև փոխկապվածությունները փոքր բաց տնտեսությունում (ՀՀ օրինակով)» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ տ. գ. թ. Գ. Հարությունյան)

1. կառուցվել է ազգային տնտեսության և ռազմարդյունաբերության փոխկապվածություններն արտացոլող գծապատկերային մոդել, որով հիմնավորվել է ռազմարդյունաբերության ոլորտի ներուժային համակարգաստեղծ նշանակությունն ամբողջ տնտեսության համար՝ պայմանավորված տնտեսության այլ ճյուղերի հետ համագործակցության լայն հնարավորություններով,

2. ներկայացվել է ռազմարդյունաբերության զարգացման համար միջգիտակարգային համագործակցության նոր կառուցակարգ, առաջարկվել է այն ներդնել ՀՀ գիտության զարգացման ժամանակակից քաղաքականության հիմքում:

«Հարկային վարչարարության և հարկային բեռի բարելավման հիմնախնդիրները կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համատեքստում» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ տ. գ. թ. Բ. Յու. Բաղդասարյան)։

1. հիմնավորվել են հարկային վարչարարության և հարկային բեռի բարելավման առաջարկություններ, որոնք ներկայացվել են երկու առանցքային հարցերի տեսքով՝ ոչ ֆորմալ տնտեսության և կոռուպցիոն ռիսկերի,

2. ըստ եզրակացության՝ Հայաստանում հարկային վարչարարությունը խաթարվում է ոչ ֆորմալ տնտեսությունում հարկային օրենքները կիրարկելու արդյունքում, ինչպես նաև տնտեսաչափական գործիքների կիրառման արդյունքում տրվել է քանակական գնահատական՝ ՀՀ տնտեսության զարգացման վրա ազդող հարկային բեռի, աշխատուժի և կապիտալի վերաբերյալ:

«Ներքին և օտարերկրյա ներդրումային ակտիվության խրախուսումը որպես ՀՀ կայուն տնտեսական աճի ապահովման գործիք» թեմայի շրջանակներում (թեմ. ղեկ.՝ տ. գ. թ. Լ. Սարգսյան)։

1. կատարված էկոնոմետրիկ վերլուծության արդյունքում ցույց է տրվել, որ

1 տարվա ընթացքում ՀՀ-ում ՕՌԻՆ ներհոսքը մեծացնում է տնտեսական աճը 0.14 տոկոսային կետով, իսկ արտահանումը՝ 0.56 տոկոսով,

2. ցույց է տրվել, որ ներդրումներն իրականացվում են արտահանման աճի տեմպը նվազող ոլորտներում, ինչպես նաև այնպիսի արտադրությունների ոլորտներում, որոնք գործունեություն են ծավալում հումքի կամ տեխնոլոգիաների ներմուծման միջոցով,

3. առանձնացվել են ներդրումների իրականացման համար ԵՏՄ շուկա արտահանելու տեսանկյունից հեռանկարային ոլորտները, որոնց շարքում են գյուղատնտեսական և թեթև արդյունաբերության մի շարք արտադրատեսակներ:

«Ժողովրդագրական բարելավմանն ուղղված նորովի մոտեցումների մշակում և ներդրում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ տ. գ. թ. Ա. Ջատիկյան).

1. բացահայտվել է, որ երեխաների ծնելիության աճը կարող է հանգեցնել խնայողություններ/ՀՆԱ հարաբերակցության կրճատմանը, իսկ տարեց բնակչության աճի դեպքում կարող է արձանագրել խնայողությունների աճ,

2. ներկայացվել է աշխատանքային արտազաղթողների տեսանկյունից հետաքրքրություններ ներկայացնող պետությունների գնահատման մեթոդաբանություն՝ համապատասխան մոդելի առաջադրմամբ:

«Հայկական կազմակերպությունների դիրքավորման հնարավորությունների բացահայտումն ու իրացումը վերազգային կորպորացիաների արժեքային շղթային ինտեգրման համատեքստում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ տ. գ. թ. Ա. Մակարյան).

1. բացահայտվել է, որ հագուստի արտադրության ոլորտի ավելի բարձր իրական աճի տեմպեր ապահովելու տեսանկյունից անհրաժեշտ է խթանել խումբ 62-ի ինչպես արտապատվիրված, այնպես էլ սեփական արտադրության հագուստի և հագուստի պարագաների արտահանման ծավալների աճը դեպի ՌԴ և այլ ԵԱՏՄ անդամ երկրների շուկաներ,

2. դեղագործական արտադրանքի արտադրության կտրվածքով կատարված վերլուծության արդյունքում հիմնավորվել է ջեներիք (generic) դեղերի արտադրության կարևորությունը:

## 2018

«Ստվերային շրջանառությունների բացահայտման և հարկերը թաքցնելու հնարավորությունների սահմանափակման ուղիները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ. գ. դ., պրոֆ. Վ. Լ. Հարությունյան).

1. ներկայացվել է հարկային վարչարարության նոր մեխանիզմների և նոր կիրարկվող հարկային օրենսդրության ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների հավաքագրման, ստվերի, կոռուպցիոն ռիսկերի կրճատման վրա շեշտադրում կատարելով հավասար մրցակցային պայմանների ապահովմանը,

2. ուսումնասիրություններ են իրականացվել ստվերային տնտեսության առաջացման և ընդլայնման պատճառների, տնտեսական և քաղաքական գործոնների բացահայտման, ստվերային տնտեսության ծավալների գնահատման և

դրանց կրճատման ուղղությամբ համապատասխան միջոցառումների մշակման համատեքստում,

3. ներկայացվել են ՀՀ ստվերային տնտեսությունը կարգավորող մեխանիզմներ՝ ազգային-պետական շահերին, տնտեսական անվտանգության ապահովման նպատակներին համապատասխան, օրինապահ հարկ վճարողների գործունեությանը չխոչընդոտելու, ինչպես նաև ստվերում գտնվողների բացահայտման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

«Միջուկային էներգետիկայի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ տ. գ. թ. Հ. Ա. Մարկոսյան).

1. ցույց է տրվել, որ ոլորտի զարգացման հեռանկարներն առկա տեխնոլոգիական զարգացումների պայմաններում խիստ անորոշ են՝ պայմանավորված միջուկային տնտեսական էկոլոգիական մի շարք չլուծված հիմնախնդիրներով,

2. ցույց է տրվել, որ միջուկային էներգետիկայի ոլորտում տնտեսապես նպատակահարմար չէ ձեռնարկել ԱԷԿ-ի նոր էներգաբլոկի շինարարությունը,

3. արձանագրվել է, որ Հայաստանի համար ԱԷԿ ունենալու և չունենալու հարցը չի կարող սահմանափակվել միայն տնտեսական հիմնավորումներով: ԱԷԿ-ի գոյությունը վկայում է Հայաստանի միջուկային պետության կարգավիճակը, որը մուտք ունի միջուկային պետությունների ակումբ:

«Արտահանման խթանման և ներմուծման փոխարինման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ տ. գ. թ. Լ. Ն. Մարգարյան).

1. հիմնավորվել է, որ ՀՀ-ում արտահանումը 2000-2016 թթ. ունեցել է բավականին բարձր կենտրոնացվածություն, 4 ապրանքախմբերի միջինում բաժին է ընկել արտահանման 82.9%-ը,

2. արձանագրվել է, որ արտահանման մեջ գերակշռում է միջանկյալ հումքը, որի արտադրությունում ստեղծվող ավելացված արժեքի կշիռը խիստ սահմանափակ է և ենթակա է միջազգային գների նշանակալի տատանումներին, ինչն էլ ավելի է մեծացնում արտահանման խոցելիությունը,

3. հիմնավորվել է արտերկրում հայկական ներկայացուցչությունների ցանցի ընդլայնման, որակի երաշխիք հանդիսացող ապրանքային նշանի ձեռքբերման և արտասահմանյան շուկաներում հնարավոր բոլոր մարկետինգային միջոցներով դրա հետևողական տարածման, միջազգային տոնավաճառներին և ցուցահանդեսներին մասնակցության անհրաժեշտությունը:

«Գյուղատնտեսության ապահովագրության հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ տ. գ. թ. Մ. Գ. Մանուչարյան).

1. կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության հիմնախնդիրների լուծումը ազրարային ոլորտի կայուն ու համաչափ զարգացման հիմնական նախապայմաններից է,

2. ՀՀ ազրարային հատվածում ապահովագրության համակարգի ներդրման գործընթացի դիտարկումների արդյունքում հիմնավորվել է, որ պետության աջակցությունը նշված համակարգի արդյունավետության հիմնական նախապայմաններից է:

«Փոքր և միջին ձեռնարկատիրության խթանման համալիր միջոցառումները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ տ. գ. թ. Ս. Ա. Դալլաքյան)։

1. ցույց է տրվել, որ ՓՄՁ ոլորտում ֆինանսական խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է մշակել ՓՄՁ-ների վարկեր տրամադրելու մեխանիզմներ՝ ընձեռնելով արտոնյալ տոկոսադրույքներ՝ մասնակի կամ լրիվ մարման սկզբունքով, ինչպես նաև մշակել հումքին և նյութերին վերաբերող մաքսատուրքերը արտոնյալ գանձելու ծրագիր, որ ներմուծվում են՝ արտահանման նկատառումով ապրանքների արտադրության համար,

2. կարևորվել է ՓՄՁ ֆինանսավորման հասանելիության դյուրացումը, մասնավորապես՝ նորաստեղծ ձեռնարկությունների ու գյուղմթերք արտադրողների համար։

«Տրանսֆերային գնագոյացման առանձին գործընթացների առավել արդյունավետ համագործակցության հարթակի ձևավորման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ տ. գ. թ., դոցենտ Բ. Յու.Բաղդասարյան)։

1. կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ տրանսֆերային գնագոյացման առումով ԵՏՄ երկրներում վերահսկվող գործարքների սահմանումները գրեթե նույնական են, սակայն այդ երկրներում տարբեր կերպ են սահմանազատում չվերահսկվող և վերահսկվող գործարքները, հետևաբար՝ նաև տրանսֆերային գնագոյացման կանոնները,

2. տրանսֆերային գնագոյացման մասին օրենքը ՀՀ հարկատուների համար կարող է առաջացնել լրացուցիչ պարտավորություններ, սակայն նման կանոնների ներդրումն օտարերկրյա ներդրողների կողմից դրականորեն է ընկալվում։

«ՀՀ ռազմարդյունաբերության նորարարական զարգացման կլաստերային մեխանիզմները» թեմայի շրջանակներում (թեմ. դեկ.՝ տ. գ. թ., դոցենտ Գ. Է. Հարությունյան)։

1. օրենսդրաիրավական դաշտի անկատարությունը ներկայացվել է որպես Հայաստանում ռազմարդյունաբերության ոլորտում կլաստերացման գործընթացին խոչընդոտող հիմնական գործոններից մեկը,

2. առաջարկվել է պետության կողմից նախաձեռնել ռազմարդյունաբերական կլաստերների ձևավորման քայլեր միաժամանակ ՀՀ մի քանի տարածաշրջաններում, մասնավորապես՝ Գյումրիում՝ որպես կլաստերի միջուկ դիտարկելով Ավիավերանորոգման գորամասը (կամ Ավիավերանորոգման գործարանը), Հրազդանում՝ «Պատնեշ ՓԲԸ»-ն, Եղվարդում՝ «65-րդ ռազմական գործարանը», Գորիսում՝ «Գորիսի Գամմա» ԲԲԸ-ն)։

«Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում

Վ. Հարությունյան

Ժամանակակից աշխարհի բոլոր երկրներում տեղի են ունենում տնտեսության արդիականացում, տնտեսության նորացում՝ «տնտեսական բարեփոխումներ» անվանումով, որոնց նպատակն է տնտեսության արագացված կամ թոփփային զարգացումը: Այդ զարգացումները տարբեր երկրներում բնորոշվում են տարբեր եզրույթներով: Հայաստանում այդ եզրույթը ստացել է «տնտեսական հեղափոխություն» անվանումը:

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի կողմից հետազոտվել է աշխարհի ավելի քան 2 տասնյակ մեծ ու փոքր ասիական, եվրոպական ու ամերիկյան երկրների տնտեսական հրաշքների իրականացման փորձը՝ օգտագործելով բազմաթիվ գրքեր, հոդվածներ, կայքեր, և կարևորվել ու արժևորվել են այն մոտեցումները, որոնց գործարկումը հնարավոր կլինի ՀՀ-ում տնտեսական հրաշք իրականացնելու համար: Դրա համար անհրաժեշտ է.

*Առաջին՝* քաղաքական կամք, որն ունեն հանրապետության քաղաքական բարձրագույն իշխանությունները:

*Երկրորդ՝* «հայկական հրաշքի» իրականացման գործիքակազմերը, որոնց փնտրտուքին էլ նպատակաուղղված է այսօրվա գիտաժողովը: Մենք հավակնություններ չունենք գործիքակազմեր հորինելու, քանի որ դրանք եղել են, կան ու կլինեն Եվրոպայում, Ասիայում և Ամերիկայում: Մեզ մնում է վերցնել այն գործիքակազմերը, որոնք գործածական կարող են լինել Հայաստանի Հանրապետությունում:

Տնտեսական հրաշքների իրականացման փորձից կարևորվել և արժևորվել են այն մոտեցումները, որոնց գործարկումը հնարավոր կլինի ՀՀ-ում: Դրանք ներկայացված են ժողովածուի թիվ 2 հավելվածում: Ուստի դրանց մանրամասնորեն չեմ անդրադառնա, այլ կներկայացնեմ լոկ ընդհանուր գծերով և այն էլ ամենակարևորները:

Այսպես, օրինակ,

1. «*տնտեսական վագր*» եզրույթը՝ սկզբնապես օգտագործվում էր Ասիայի տարածքում գտնվող չորս պետությունների տնտեսությունները բնութագրելու համար<sup>1</sup>, հետագայում այն վերագրվեց նաև այլ երկրների: Վերոնշյալ երկրների շարքին դասվում է նաև Իռլանդիայի Հանրապետությունը, որը մարդկային կապիտալ «ազատ

<sup>1</sup> Birdsall, Nancy M.; Campos, Jose Edgardo L.; Kim, Chang-Shik; Corden, W. Max; MacDonald, Lawrence [editor]; Pack, Howard; Page, John; Sabor, Richard; Stiglitz, Joseph E.. 1993. The East Asian miracle: economic growth and public policy: Main report (English). A World Bank policy research report. New York, New York: Oxford University Press.

արտահանող» աղքատ, գործազրկության բարձր մակարդակ ունեցող երկրից վերածվեց գիտելիքահեռք տնտեսություն ունեցող, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի և օտարերկրյա ուղղակի ներդրումների ցուցանիշներով աշխարհում առաջատար դիրքերում գտնվող երկրի՝ շնորհիվ գյուղատնտեսության զարգացման:

2. Իսրայելում նախաձեռնված լայնամասշտաբ բարեփոխումները կոչվեցին «տնտեսական հեղաշրջում», որի հեղինակը ֆինանսների նախարարն էր: Ինչպես և Ինդոնեզիան, Իսրայելը ևս սկսեց մեծ թափով զարգացնել գյուղատնտեսությունը և դարձավ թարմ մթերքների, գյուղատնտեսական տեխնոլոգիաների համաշխարհային շուկայի առաջատար արտահանողներից՝ չունենալով հող և ջուր: Եվ այդ ամենին նրանք հասնում են շնորհիվ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման: Հարկերի հարցում Իսրայելում գերադասում են չկատակել պետության հետ և ժամանակին ու ամբողջությամբ վճարում են հարկերը, քանի որ հարկերից խուսափելու համար պատիժը չափազանց մեծ է: Իսրայելի ուժեղ կողմերից մեկն էլ բժշկությունն է, քանի որ այնտեղ շատ բարձր է գնահատվում յուրաքանչյուր մարդու կյանքը: Իսրայելի մյուս ուժեղ կողմը նրա բանակն է. այնտեղ բոլորը զորակոչվում են զինվորական ծառայության (տղամարդիկ ծառայում են 3 տարի, իսկ կանայք 2 տարի՝ սկսած 18 տարեկանից, նրանց բանակում 50 տարեկանից բարձր գեներալ չկա): Իսրայելում կյանքի մակարդակը ամենաբարձրն է Մերձավոր Արևելքում: Հրեա ժողովուրդն ունի ամուր միասնականություն, նրանք հայրենասերներ են ու սիրում են Իսրայելը, ինչում էլ կայանում է հրեաների ֆենոմենը<sup>1</sup>:

3. Չիլիի տնտեսական հեղափոխությունը կամ «տնտեսական հրաշքը» տեղի է ունեցել Նոբելյան մրցանակակիր Ֆրիդմանի գաղափարների ազդեցության տակ, երբ իրականացվեցին տնտեսության ազատականացման բարեփոխումները, իսկ 1970 թ. ընտրված նոր նախագահը ձեռնամուխ է եղել պղնձի հանքերի, ինչպես նաև օտարերկրացիներին պատկանող այլ սեփականության ազգայնացմանը: Չիլիացիներին ամենամոտ համակարգը, որ կիրառեցին չիլիացիները, Հարավային Կորեայի և Թայվանի փորձն է, որտեղ կրթության համակարգը կարևոր դեր է խաղում, խրախուսվում է ուսումը արտերկրում, հաստիկ ուշադրություն է դարձվում հայրենասիրության և թիմային ոգու զարգացմանը:

4. Վիետնամը բարեփոխումների համար ընտրում է չինական մոդելը՝ չղաղարելով վերլուծել Արևելյան Եվրոպայի երկրների, Ռուսաստանի և ԱՊՀ երկրների փորձը: Տնտեսական աճի տեմպերով (միջին տարեկանը՝ 6-7%) և գործազրկության ցածր մակարդակով (1.9%) Վիետնամը աշխարհի ամենաարագ զարգացող երկրներից մեկն է համարվում:

5. Թաիլանդը աշխարհում աչքի է ընկնում իր գործազրկության ամենացածր ցուցանիշով (2018 թ.՝ 1.2%): Թաիլանդի կառավարությունը ընդլայնել է թվային տեխնոլոգիաների ոլորտում պետական ներդրումները՝ բարձր գիտական հասարակության ստեղծելու համար: Այս համատեքստում առաջնային իրականացվել են արդյունաբերության, ռոբոտաշինության, զբոսաշրջության կազմակերպումը և գործարկման գործընթացը:

<sup>1</sup> <https://mnews.world/ru/video/fenomen-izrailva-v-chem-sekret-uspeha-evreiskogo-gosudarstva/>

6. Ինդոնեզիայի կառավարությունը խրախուսում էր թվային տնտեսության զարգացումը արդյունաբերության և էլեկտրոնային առևտրի միջոցով: Ինդոնեզիայում ևս հատուկ ուշադրություն է դարձվել ազգաբնակչության կրթությանը, քանի որ կառավարությունը գտնում էր, որ պետությունը կկայանա առողջ ու կրթված ժողովրդի միջոցով:

Ինդոնեզիայի նախագահը արգելել էր չմշակված հանքաքարի արտահանումը, ինչը իթանեց ներդրումների ներհոսքը և դրդեց մեծ գումարներ ներդնելու վերամշակման գործարանների շինարարության մեջ:

Տնտեսական հրաշք իրականացրած երկրների զգալի մասը խրախուսել է թվային տնտեսության զարգացումը (Ինդոնեզիա, Վիետնամ, Թաիլանդ):

7. 2003 թ. նոյեմբերին Վրաստանում տեղի ունեցած թավշյա հեղափոխությունն անվանվեց «վարդերի հեղափոխություն», որն էապես ազդեց թե՛ ներքաղաքական և թե՛ աշխարհաքաղաքական զարգացումների վրա: Վրաստանի նոր իշխանությունը Միխեիլ Սաակաշվիլու գլխավորությամբ, ունենալով երկրի ազգաբնակչության հզոր աջակցությունը, կարճ ժամանակում կարողացավ բոլոր ոլորտներում փոխել իրավիճակը: Վրաստանում ընդունվեցին այնպիսի օրենքներ, որոնք դուրացրին կոռումպացված պաշտոնյաների կալանավորումը և նրանց գույքի պետականացումն այն դեպքում, երբ նրանք չկարողացան ապացուցել այդ ունեցվածքի ծագման օրինական աղբյուրները: Արդյունքում ձեռքակալվեցին մեծ թվով նախկին բարձրաստիճան պաշտոնյաներ, քրեական հեղինակություններ:

8. «Ասիական վագրերի», այդ թվում՝ նաև Մալայզիայի բնորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ տնտեսության արդիականացումը իրականացվել է արևմտյան և ազգային զարգացման մոդելների համադրման միջոցով: Որպես Մալայզիայի արդիականացման նախաձեռնող՝ Մահաթհիր Մուհամմադն իրականացրեց բնակչության մտածելակերպի, առևտրի նկատմամբ նրա վերաբերմունքի փոփոխություն, ինչպես նաև կրթության մակարդակի բարձրացմանն ուղղված բարեփոխումներ: Նա որպես թիրախ ընտրեց մի քանի հիմնական ուղղություններ, և դրանց շուրջ սկսեցին իրականացվել մյուս բարեփոխումները:

Ըստ էության, Մահաթհիր Մուհամմադը առաջին հերթին սահմանազատեց կրոնն ու քաղաքականությունը, երկրորդ՝ ձեռնամուխ եղավ երկրի զարգացմանը: Դրա շնորհիվ, ժամանակակից ձեռքբերումներին, տնտեսական աճին և բարձր կենսամակարդակին զուգահեռ, մալայզիական հասարակությանը հաջողվել է պահպանել իր կրոնական ու մշակութային ավանդույթները: Մահաթհիր Մուհամմադը քննադատում է «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը» շեշտելով, որ զարգացող երկրների ժողովուրդներին անհրաժեշտ են, առաջին հերթին, ոչ թե հռչակագրային իրավունքներ, այլ տնտեսության իրական առաջընթաց:

9. «Ճապոնական տնտեսական հրաշքից» (որը համեմատում են Ջորջ Մարշալի պլանի հետ) արժանահիշատակ և ՀՀ-ում գործարկելի են՝

9.1. Ճապոնացիների աշխատասիրությունը և կարգապահությունը, ինչում էլ կայանում է Ճապոնացիների ֆենոմենը,

9.2. Ճապոնական մենեջմենթի ներդրումը, որի էությունը կայանում է նրանում, որ պետական և ազգային նպատակներին հասնելու համար ճապոնացին անձնական շահը զոհում է հանուն պետության ու ազգի,

9.3. որոշումների կայացման գործընթացի համաձայնեցման սկզբունքի ներդրումը, երբ ընդունված որոշումը բխում է բոլորի շահերից, և դրա համար պատասխանատվությունն ընկնում է ոչ թե մեկի, այլ բոլորի վրա, ինչը չի կարող հանգեցնել ընդվզումների ու սթրեսների,

9.4. բնակչության խնայողությունների ուղղորդումը դեպի կապիտալի շուկաներ՝ ներդրումների նպատակով՝ ակտիվացնելով բաժնեմասային ֆինանսավորման մշակույթը, որի արդյունքում երկիրը արձանագրում է լրացուցիչ տնտեսական աճ:

10. Ինդոնեզիայի տնտեսական հեղափոխության փորձից արժանահիշատակ և ՀՀ-ում գործարկելի է այն, որ երկրում արգելվեց չմշակված հանքաքարի արտահանումը, ինչը խթանեց ներդրումների ներհոսքը և շահադրդեց մեծ գումարներ ներդնելու վերամշակող գործարանների շինարարության մեջ:

#### *Կիրառական առաջարկություններ և եզրակացություններ*

Հետազոտելով 20-րդ դարում «տնտեսական հրաշքեր» իրականացրած ավելի քան երկու տասնյակ պետությունների առաջավոր փորձը՝ եկել ենք այն եզրահանգման, որ դրանցում կիրառված հիմնուղիներից ու գործիքակազմերից ՀՀ տնտեսությունում գործարկելի ու արդյունքաստեղծ են հետևյալները.

- 1) հակակոռուպցիոն գործողությունների լայնածավալ ու արդյունավետ կազմակերպումը, ինչպես կատարվեց Սինգապուրում,
- 2) ճապոնական մենեջմենթի և որոշումների կայացման գործընթացի համաձայնեցման սկզբունքի ներդրումը,
- 3) բնակչության խնայողությունների ուղղորդումը դեպի կապիտալի շուկաներ, ինչպես կատարվեց Ճապոնիայում ու Չիլիում,
- 4) չմշակված հանքաքարի արտահանման արգելումը, ինչպես կատարվեց Ինդոնեզիայում,
- 5) բնական ռեսուրսները սահմանադրորեն ընդմիջտ ժողովրդին ընդհանուր սեփականության իրավունքով ամրագրելը, ինչպես կատարվեց Իսլանդիայում,
- 6) հատուկ ուշադրություն պետք է դարձնել հայրենասիրության, միասնականության, թիմային ոգու բարձրացմանը,
- 7) անհրաժեշտ է խրախուսել թվային տնտեսության զարգացումը և ուսումը:

Համոզված եմ, որ վերոնշյալ առաջարկությունների կիրարկումը կբարելավի Հայաստանի Հանրապետության տնտեսության մակրոտնտեսական ցուցանիշները և կամրապնդի երկրի դիրքը տարածաշրջանում:

Վերոնշյալների հետ մեկտեղ պետք է արձանագրել, որ «հայկական հրաշքը» պետք է կառուցվի՝ հաշվի առնելով մեր առավելությունները և թերությունները: Քանի որ յուրաքանչյուր երկիր իր առանձնահատկություններն ունի, միջտ չէ, որ այլ երկրների ձեռնարկած միջոցառումները որևէ երկրում ճշգրտորեն կրկնելը հնարավոր է, կամ այն նույնքան արդյունավետ կլինի: Բայց արտերկրյա առաջավոր փորձի օգտագործումը, անկասկած, տնտեսության մեջ դրական տեղա-

շարժեր արձանագրելու առումով շատ արդյունավետ կարող է լինել, միաժամանակ կարող են բացահայտվել մինչ այդ չերևացող բազմաթիվ խնդիրներ: Ուստի մեծ է հավանականությունը, որ գիտաժողովում հնչեցված առաջարկությունները հաշվի առնելը դրական տեղաշարժեր կառաջացնի ՀՀ տնտեսությունում: Եվ ընդհանրապես բազմաթիվ հարցերի լուծումը այս գիտաժողովից հետո, թույլ տվեք հույս հայտնել, կարող է գոնե մեկ քայլ առաջ գնալ: Հայ ազգն ունի իրեն բնորոշ արժեհամակարգ (մենթալիթետ), պրպտուն մտքի տեր, ստեղծագործ մտածողությամբ որդիներ ու դուստրեր, բավականին արտաքին ներուժ (Սփյուռք), ապրում է արևոտ, անվտանգ, բերրի, չքնաղ ու ազատ երկրում: Մեզ պետք չէ դառնալ նոր Մինգապուր, նոր Ճապոնիա կամ նոր Իսրայել: Մեզ պետք է դառնալ նոր Հայաստան՝ առավել արդիական, ազատ ու հզոր:

«Տնտեսական հրաշք» իրականացրած երկրների փորձը, մասնավորապես թիվ 22 հավելվածի ուսումնասիրություններն ու վերլուծությունները վկայում են, որ «տնտեսական հրաշք» իրականացրած բոլոր երկրներում եղել է հրաշքը իրականացրած ընդգծված հեղինակ, ասենք՝ որևէ նախարարի, բարձր պաշտոնյայի կամ դրսից հրավիրված հայտնի տնտեսագետի, ռեֆորմատորի (բարեփոխչի) կարգավիճակով, որի շուրջ համախմբվել են մյուս բոլորը: Մինչդեռ իմ դիտարկումները ցույց են տալիս, որ Հայաստանում իրականացվող տնտեսական հեղափոխությունը չունի ընդգծված հեղինակ: Ստեղծված իրավիճակում և հատկապես հետվիրուսային շրջանում Հայաստանում անհրաժեշտ է իրականացնել ոչ թե տնտեսական հեղափոխություն, այլ տնտեսական հրաշք, և անհրաժեշտ է, որ Հայաստանում տնտեսական հրաշքի իրականացումը կատարվի կոնկրետ բարեփոխչի ձեռքով, որի համար առաջարկում եմ ստորև բերվող 2 տարբերակ՝ 1-ին տարբերակը հարգարժան վարչապետին, իսկ երկրորդ տարբերակը՝ ինստիտուտի տնօրինությանը:

Տարբերակ 1-ին. փնտրել և կառավարություն հրավիրել բարեփոխչի (ռեֆորմատորի), ընդ որում՝ փոխվարչապետի կարգավիճակով, որը լինի անպայման արտերկրից, բայց ոչ նախկին Խորհրդային Միության հանրապետություններից, քանի որ այդ դաշտի ու նաև Հայաստանի երևելի տնտեսագետները խորհրդային կրթություն են ստացել, և դա նրանց կարող է խանգարել բարեփոխումների տեմպերի հարցում: Ուստի անհրաժեշտ է, որ այդ անձը լինի եվրոպացի կամ ամերիկացի և, բնականաբար, կրի նրանց արժեհամակարգը:

Որպես հավանական բարեփոխչի թեկնածու՝ առաջինը կարելի է նշել Տարոն Աճեմօղլուի անունը: Նա ծնվել է Ստամբուլում, կրթություն է ստացել Լոնդոնում, 2004-ին ստացել է Զիլկազոյի համալսարանի Շուլցի մրցանակ, 2005-ին՝ Կլարկի մեդալ, որը տրվում է մինչև 40 տարեկան ամերիկյան ամենաանվանի տնտեսագետին (այն իր վարկանիշով զիջում է միայն Նոբելյան մրցանակին), 2006-ին ընտրվել է ամերիկյան գիտությունների ակադեմիայի անդամ, 2007-ին արժանացել է Ջոն Նեյմանի մրցանակի: Հայազգի ամերիկյան հայտնի տնտեսագետը տեղ է զբաղեցրել համաշխարհային 100 ինտելեկտուալների ցանկում և ընդամենը 53 տարեկան է:

Կարելի է նշել նաև այլ թեկնածուների անուններ, իսկ նրանց օժանդակողի

դերում կարող են և պետք է հանդես գան՝

1. Հայաստանի տնտեսագիտական էլիտան և մյուս մտավոր սերուցքը,
2. պետական բուհերը,
3. պետական գիտական կազմակերպությունները,
4. պետական կառավարման մարմինները:

Տարբերակ 2-րդ. ինստիտուտի տնօրինությունը Գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ և նրա աջակցությամբ առաջիկա տարում պետք է հնարավորություն գտնի գիտաժողովի նյութերը ռուսերեն ու անգլերեն թարգմանելու և 100-ական օրինակ տպագրելու համար, և դրանք կտրամադրվեն ՀՀ ԿԳՄՍՆ-ին, որպեսզի դրանք գործածվեն՝

ա) ապագա արտասահմանցի բարեփոխչի և նրան օժանդակողների կողմից,

բ) կառավարության անդամների և ԱԺ պատվիրակությունների՝ միջազգային կազմակերպությունների, դեսպանների ու գործարար շրջանների հետ հանդիպումների ընթացքում:

Կարծում եմ, որ այս երկու տարբերակների զուգորդմամբ ու համատեղմամբ հնարավոր կլինի «տնտեսական հրաշք» իրականացնել Հայաստանի Հանրապետությունում, և մենք 3-5 տարի հետո կարձանագրենք իրականություն դարձած «տնտեսական հրաշքի» առաջին պտուղները:

Իսկ այժմ ցանկանում եմ համոզվածությամբ հույս հայտնել, որ ՀՀ ԳԱԱ ՏԻ աշխատանքի արդյունք հանդիսացող գիտաժողովի նյութերը կծառայեն իրենց նպատակին նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի (ընդունված 14.04.2011 թ.) 4-րդ հոդվածի համաձայն՝ ակադեմիան գիտական գործունեության զծով ՀՀ կառավարության պաշտոնական խորհրդատուն է, որի առաջարկները քննարկում են ՀՀ կառավարությունը և պետական կառավարման համապատասխան մարմինները, ինչին էլ նպատակաուղղված է եղել ՀՀ ԳԱԱ ՏԻ նախորդ տարիների գիտական գործունեությունը, որի խոսուն վկաներն են հանդիսանում.

*Առաջին՝ «Ազգային տնտեսություն. ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի հետազոտական հետազոծը (2007-2017 թթ.): Եզրակացություններ, կիրառական առաջարկություններ»* զիրքը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, 504 էջ:

Ժողովածուում ամփոփվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում 10 տարվա ընթացքում կատարված հետազոտական աշխատանքները, որոնցից բխող եզրակացություններն ու առաջարկությունները ամեն տարի ներկայացվել են ՀՀ կառավարությանը: Այն իրենում ներառում է շուրջ 5 տասնյակ կիրառական առաջարկություններ և եզրակացություններ, որոնք վերաբերում են տարբեր բնագավառների ու ոլորտների, իսկ հասցեատերերը եղել են այդ տարիների վարչապետները և համապատասխան ոլորտային նախարարները: Այդ առաջարկություններից երկուսը Տիգրան Սարգսյանի վարչապետության օրոք բարձրացվել է օրենսդրական մակարդակի, ինչի արդյունքում 2009 թ. հունվարի 1-ից ուժը կորցրած են ճանաչվել «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքը և «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթներ, իսկ առանձին կիրառական առաջարկություններ իրենց արտացոլումն են ստացել

կառավարության հայեցակարգային փաստաթղթերում: Սակայն անուշադրության են մատնվել կիրառական և այն էլ արժեքավոր շատ առաջարկություններ (հատկապես հանքարդյունաբերության մասով), որոնք իրենց արդիականությունը պահպանում են մինչ օրս և օգտակար կարող են լինել ՀՀ կառավարությանը տարբեր ստորաբաժանումների ռազմավարական խնդիրները լուծելիս:

*Երկրորդ՝ 2017 թ. գիտահետազոտական աշխատանքների կիրառական արդյունքները, որոնք վերաբերում են՝*

1. ստվերային տնտեսության պատճառների քննական վերլուծությանը,
2. գյուղատնտեսության ապահովագրության հիմնախնդիրներին,
3. միջուկային էներգետիկական զարգացնելու հիմնախնդիրներին,
4. տրանսֆերային գնագոյացման առանձնահատկություններին,
5. արտահանումը խթանելու և ներմուծումը փոխարինելու հիմնախնդիրներին,
6. ռազմարդյունաբերության նորարարական զարգացման կլաստերային մեխանիզմներին,
7. փոքր և միջին ձեռնարկատիրության խթանմանը:

Սրանք թեմաներ են, որոնց արդիականությունը վիճարկելի չէ, քանի որ դրանք վերցված են ՀՀ կառավարության գործունեության ծրագրի ելակետային դրույթներից:

*Երրորդ՝ «Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում»* խորագրով գիտաժողովը, որի 22 գիտական հոդվածները բխում են ՀՀ կառավարության ծրագրի ելակետային դրույթներից (տե՛ս հոդվածների ժողովածուի 348 էջում տեղադրված թիվ 1 հավելվածը), ինչը վկայությունն է այն փաստի, որ գիտաժողովի նյութերի արդիականությունը վիճարկելի չէ: Վերջում ցանկանում եմ հավելել, որ ՀՀ ԳԱԱ ՏԻ կիրառական եզրակացություններն ու առաջարկությունները և նշված 2 գիտաժողովների նյութերն ու ընդհանրապես ինստիտուտի բոլոր հրապարակումները տեղադրված են ինստիտուտի կայքէջում ([economics.sci.am](http://economics.sci.am)):

Ինստիտուտի էլեկտրոնային կայքում տեղադրվելու են նաև սույն գիտաժողովի նյութերը:

## ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

h/h	Անուն, ազգանուն	Գիտական աստիճանը, գիտական կոչումը, աշխատանքի վայրը
1.	Մամվել Բալասանյան	Գյումրու քաղաքապետ
2.	Մամիկոն Ասլանյան	Վանաձորի քաղաքապետ
3.	Դիանա Գասպարյան	Էջմիածնի քաղաքապետ
4.	Գագիկ Մակարյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ, ՀՀ Հանրային խորհրդի անդամ
5.	Վլադիմիր Հարությունյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
6.	Ռոբերտ Սարինյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, բաժնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
7.	Գրիգորի Վահանյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
8.	Վիկտոր Զախարյան	UNIDO-ի միջազգային փորձագետ
9.	Թաթուլ Մկրտչյան	ՀՊՏՀ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
10.	Աշոտ Մարկոսյան	ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի նորարարության տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
11.	Վալերի Միրզոյան	Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
12.	Դավիթ Հախվերդյան	«Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
13.	Էլյանորա Մաթևոսյան	ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի նորարարության տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու
14.	Բեյլա Գաբրիելյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
15.	Դավիթ Պետրոսյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ինստիտուտի ասպիրանտ
16.	Աննա Հարությունյան	ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու

17.	Սևակ Թորգոմյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող
18.	Գևորգ Հարությունյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
19.	Շուշան Մովսիսյան	«Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետ, ՀՊՏՀ հայցորդ
20.	Ռուբիկ Թովմասյան	ՀԱԱՀ ագրարային էկոնոմիկայի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու
21.	Գայանե Թովմասյան	ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող, տնտեսագիտության թեկնածու
22.	Գևորգ Բախշյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
23.	Ռոբերտ Թումանյան	Չինաստանի Բանգոր համալսարանի մակրոէկոնոմիկայի դասախոս, տնտեսագիտության թեկնածու
24.	Լիլիթ Սարգսյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ գիտության գծով փոխտնօրեն, տնտեսագիտության թեկնածու
25.	Դոնարա Գրիգորյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող
26.	Սվետլանա Դալլաբյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, բաժնի վարիչ
27.	Քրիստինե Բաղդասարյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի գիտ. քարտուղար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
28.	Սոնա Մարգարյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող
29.	Տաթևիկ Փարսադանյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
30.	Տաթևիկ Շահինյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ինստիտուտի ասպիրանտ
31.	Արմինե Զախարյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
32.	Գրիգոր Մանուկյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

33.	Մերի Մանուչարյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, բաժնի վարիչ
34.	Մերի Մուրադյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի տնտեսագետ
35.	Վահագն Խաչատուրյան	Տնտեսագետ, փորձագետ
36.	Արամ Խաչատուրյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
37.	Շողեր Պողոսյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
38.	Անուշ Սարգսյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ինստիտուտի ասպիրանտ
39.	Գոհար Ոսկանյան	Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու
40.	Ծաղկանուշ Միրզոյան	Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ասիստենտ
41.	Ռազմիկ Իսահակյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
42.	Եվգենյա Հակոբյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
43.	Լիանա Ազատյան	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող
44.	Աստղիկ Հովհաննիսյան	ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔ» ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ,  
 ԼՐԱՆՑ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՈՒ ՓԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ ՄԱՍԻՆ

№	«Տնտեսական հրաշք» իրականացրած երկրի անվանումը	«Տնտեսական հրաշք» իրականացրած անձի անուն, ազգանունը	«Տնտեսական հրաշք» իրականացրած անձի զբաղեցրած պաշտոնը	«Տնտեսական հրաշքի» իրականացման ժամանակահատվածը	Լրացուցիչ տեղեկություններ
1	2	3	4	5	6
1.	Գերմանիա	Լյուդվիգ Էրիարդ	Էկոնոմիկայի նախարար, ֆեդերատիվ կանցլեր	1948-1966	
2.	Չինաստան	Դեն Սյաոփին	Կուսակցության գլխավոր քարտուղար	1978-2014	
		Ցզյան Ցզեմին	Կուսակցության գլխավոր քարտուղար		
		Հու Չինթաո	Կուսակցության գլխավոր քարտուղար		
		Սի Չինփին	Կուսակցության գլխավոր քարտուղար		
3.	Սինգապուր	Լի Կուան Յու	Վարչապետ	1965-1995	
4.	Ճապոնիա	Հիրոհիտո	Ճապոնիայի կայսր	1950-1973	Ճապոնիայում իրականացված բարեփոխումների հեղինակներն են վարչապետներ 1. Իչիրո Հատոյամա՝ 1956-1960 թթ. «Իկբնություն տնտեսության ստեղծման ծրագրի», 2. Նոբուսուկե Կիսի՝ 1958-1962 թթ. «Նոր երկարաժամկետ տնտեսական ծրագրի» 3. Հայաթո Իկեդա՝ 1961-1964 թթ. «Ազգային եկամուտների կրկնապատկման ծրագրի»
5.	Իսրայել	Դավիդ Բեն-Գուրիոն	Վարչապետ	1952-1963	
		Շիմոն Պերես	Իսրայելի վարչապետ, արտ.	1984-2014	

			գործ. նախարար, փոխվարչապետ, ֆինանսների նախարար, տարածքային զարգացման նախարար, նախագահ		
6.	Մայայգիա	Մահաթհիր Մուհամմադ	Վարչապետ	1981-2003	
7.	Նոր Ջեյանդիա	Ռոջեր Դուգլաս (1984-1990)	Ֆինանսների նախարար	1984-1995	Նոր Ջեյանդիայում բարեփոխումները սկսվեցին 1984 թվականին, երբ արտահերթ ընտրություններում հաղթեց լեյբորիստական կուսակցությունը, իսկ վարչապետ դարձավ Դեյվիդ Լանժը, սակայն որպես «տնտեսական հրաշք» իրականացնող անձինք պատմության մեջ հիշատակվում են երկրում այդ ժամանակ պաշտոնավարած ֆինանսների նախարարները, հետագայում երկրորդ նախարարի իրականացրած քաղաքականությունը պատմության մեջ մտավ որպես «ռուբանազիա»:
		Ռուֆ Ռիչարդսոն (1990-1995)	Ֆինանսների նախարար		
8.	Ինդոնեզիա	Հաջի Մուհամմադ Մուխարտո	Նախագահ	1968-1998	
9.	Իտալիա	Ալբերտո Բենեդուչե	Հանրային հատվածի վարկավորման կոնսորցիումի տնօրեն	1951-1962	Բանկային համակարգի բարեփոխումներ, ֆինանսական շուկայի զարգացում, արդյունաբերական պարտատուների ներդրում
		Պասկուալե Սարասենո	Արդյունաբերական վերակառուցման ինստիտուտի տնօրեն	1951-1962	Բանկային հատվածի բարեփոխումներ
		Դոնատո Մենիչելլա	Կենտրոնական բանկի նախագահ	1951-1962	
10.	Բոլանդիա	Ջոն Բրատոն	Վարչապետ	1994-1997	
		Բերտի Ահերն	Վարչապետ	1997-2008	
11.	Հարավային Կորեա	Պակ Չոն Հի	Ազգային վերակառուցման գերագույն խորհրդի նախագահ (1961-	1961-1979	Երկրում տնտեսության զարգացման հնգամյակները գոյություն են ունեցել մինչև 1984

			1963), երկրի նախագահ (1963-1979)		թվականը Երեք հնգամյակների ընթացքում Հարավային Կորեան իրականացրել է մեծագույն տնտեսական թռիչք: Հաջողության հասնելու կախարդական բանաձևը շատ պարզ էր բռնապետություն + էժան աշխատուժ + օտարերկրյա կապիտալ = հարավկորեական տնտեսական հրաշք
12.	Վրաստան	Մ. Սաակաշվիլի Կ. Բենդուկիձե	Նախագահ Էկոնոմիկայի նախարար	2004-2012	
13.	Չիլի	Աուգուստո Պինոչետ	Կառավարական խունտայի նախագահ (1973-1981), նախագահ (1974-1990), զինված ուժերի գերագույն հրամանատար (1973-1998)	1980-1997	
		Խոսե Պիներա	Հանրադրյունաբերության նախարար (1980-1981), աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարար (1978 -1980)		
		Հերնան Բուչի Բուկ	Ֆինանսների նախարար (1985-1989)		
14.	Հնդկաստան	Ռաջիվ Գանդի	Վարչապետ	1984-1989	
15.	Իսպանիա	Ֆրանցիսկո Ֆրանկո	Պետության ղեկավար (caudillo)	1963-1973	
		Ֆելիպե Գոնսալես	Վարչապետ	1986-1991	
16.	Հատունիա	Յուրի Ռատաս	Մայրաքաղաք Տալլինի քաղաքապետ	2005-2007	ԷՀ-ն Եվրամիության ամենասակավաթիվ բնակչությամբ երկրներից մեկն է. բնակչու- թյունը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ կազ- մում է 1.319.133 մարդ: ԷՀ-ն տարեկան դիմա- վորում է ավելի քան 5.000.000 գրոսաշրջիկնե- րի, ինչը 3-ից 4 անգամ գերազանցում է երկրի բնակչության թվաքանակը և հաճախ համար-

					վում է ռեկորդային ցուցանիշ
			ԷՀ օրենսդիր իշխանության փոխխոսնակ, վարչապետ	2007	
				2016-2020	
17. Ֆինլանդիա	Ուրիո Կեկկոնեն	Նախագահ		1-ին փուլ 1960-ականներ	1960-ական թթ. Ֆինլանդիայում ձեռնարկվեցին հիմնական կառույցների և կառավարման համակարգի բարեփոխումներ Բարեփոխումների առանցքը կրթական համակարգն էր, իսկ 2-րդ փուլում՝ արդեն գիտելիքահենք տնտեսության կառուցումը. տեխնոլոգիական առաջընթացի խթանումը, ազգային նորարարական համակարգը
	Մարտի Ահտիսաարի	Նախագահ		2-րդ փուլ 1990-ականներ	
18. Լեհաստան	Լեշեկ Բալցերովիչ	Ֆինանսների նախարար		1989-1991	Բարեփոխումների սկզբնական ծրագիրը մշակվել է մի խումբ տնտեսագետների կողմից Լեշեկ Բալցերովիչի գլխավորությամբ, իրագործվել են Մագովեցկու կառավարության կողմից: Լեհաստանի տնտեսական հրաշքը պայմանավորված էր ոչ թե անձերով, այլ բարեփոխումների շարունակականությունն ապահովելու իշխանությունների հաստատակամությամբ: Բարեփոխումները կարճաժամկետում բացասական ազդեցություն են ունեցել հասարակության բարեկեցության վրա, ինչը հանգեցրել է իշխանափոխության: Հաջորդ բարեփոխումների նկատմամբ չեզոք իշխանությունները թեն նոր ծրագրեր չեն նախաձեռնել, սակայն


					նախորդ իշխանության կարևոր ծրագրերը չեն չեղարկել և թույլ են տվել, որ դրանք արդյունքներ տան: Հասարակությունը, տեսնելով այդ ծրագրերի երկարաժամկետ դրական արդյունքը, նորից ընտրել է բարեփոխումների հակված կառավարություն, որն էլ ձեռնամուխ է եղել նոր ծրագրերի իրականացմանը:
		Տաղեուշ Մագովեցկի	Վարչապետ	1989-1991	
		Եմի Բուզեկ	Վարչապետ	1997-2001	
19.	Իսլանդիա	Յոհաննա Սիգուրդարդոտիր	Վարչապետ	2009-2011	2008 թ. հունվարին բանաստեղծ և երգիչ Հորդուր Տորֆասոնը խորհրդարանի շենքի դիմաց սկսեց քաղաքական բնույթի երգեր երգել, իսկ հոկտեմբերին դուրս եկավ փողոց խոսափողով և բոլոր ցանկացողներին առաջարկեց խոսել: Մեկ շաբաթ անց սկսվեցին գանգվածային կազմակերպված ցույցերը: Ի վերջո, աջակողմյան լիբերալ կառավարությունը ստիպված եղավ հրաժարական տալ: 2009-ի փետրվարին ձևավորվեց ձախակողմյան նոր կառավարություն:
20.	ՄԱԷ	Շեյխ Խալիֆա իբն Զայեդ ալ Նահյան	Նախագահ	2008-2019	
		Շեյխ Մուհամմադ իբն Ռաշիդ ալ Մակտում	Փոխնախագահ, վարչապետ և Դուբայի ղեկավար		

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔՆԵՐԻ» ԱՐՏԵՐԿՐՅԱ ՓՈՐՁՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ  
ԽԱԲԵՐԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ԵՐԿՐՆԵՐԸ

№	Տնտեսական հրաշք իրականացրած էրկրի անվանումը	Փորձն ուսումնասիրող խմբի անդամների ա. ա.	Գիտական աստիճանը և կոչումը	Աշխատանքի վայրը
1.	Գերմանիա	1. Սարիկյան Ռոբերտ	տ.գ.դ., պրոֆեսոր	ՀՀ ԳԱԱ ՏԻ, գլխավոր գիտաշխատող
		2. Գաբրիելյան Բելլա	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ ՏԻ, ավագ գիտաշխատող
2.	Չինաստան	1. Բախշյան Գևորգ	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ ՏԻ, կրտսեր գիտաշխատող
		2. Թումանյան Ռոբերտ	տ.գ.թ.	Մակրոեկոնոմիկայի դասախոս Չինաստանի Բանզոբ համալսարանում
3.	Մինգապուր	1. Սարգսյան Լիլիթ	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ ՏԻ, գիտության գծով փոխտնօրեն, գիտաշխատող
		2. Գրիգորյան Դոնարա		ՀՀ ԳԱԱ ՏԻ, կրտսեր գիտաշխատող
4.	Ճապոնիա	Դալլաբյան Սվետլանա	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ ՏԻ, բաժնի վարիչ, գիտաշխատող
5.	Իսրայել	1. Մանուչարյան Մերի	տ.գ.թ., դոցենտ	ՀՀ ԳԱԱ ՏԻ, բաժնի վարիչ, ավագ գիտաշխատող
		2. Մուրադյան Մերի		ՀՀ ԳԱԱ ՏԻ, 1-ին կարգի տնտեսագետ
6.	Մալայզիա	1. Բաղդասարյան Քրիստինե	տ.գ.թ., դոցենտ	ՀՀ ԳԱԱ ՏԻ, գիտաբարտուղար, թեմայի ղեկավար, ավագ գիտաշխատող
		2. Մարգարյան Սոնա		ՀՀ ԳԱԱ ՏԻ, 1-ին կարգի տնտեսագետ
7.	Մալայզիա	1. Բաղդասարյան Քրիստինե	տ.գ.թ., դոցենտ	ՀՀ ԳԱԱ ՏԻ, գիտաբարտուղար, թեմայի ղեկավար, ավագ գիտաշխատող
		2. Մարգարյան Սոնա		ՀՀ ԳԱԱ ՏԻ, 1-ին կարգի տնտեսագետ
8.	Նոր Զելանդիա	1. Հակոբյան Եվգենյա	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ ՏԻ, գիտաշխատող
		2. Ազատյան Լիանա		ՀՀ ԳԱԱ ՏԻ, գիտաշխատող
9.	Ինդոնեզիա	1. Փարսադանյան Տաթևիկ	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ ՏԻ, կրտսեր գիտաշխատող
		2. Շահինյան Տաթևիկ		ՀՀ ԳԱԱ ՏԻ, կրտսեր գիտաշխատող
10.	Իտալիա	1. Պետրոսյան Դավիթ		ՀՀ ԳԱԱ ՏԻ, ասպիրանտ, կրտսեր գիտաշխատող
		2. Հարությունյան Աննա	տ.գ.թ.	ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասիստենտ
11.	Իռլանդիա	Թորգոմյան Սևակ	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ ՏԻ, կրտսեր գիտաշխատող
12.	Հարավային Կորեա	Զախարյան Արմինե	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ ՏԻ, գիտաշխատող
13.	Վրաստան	1. Խաչատուրյան Վահագն		Տնտեսագետ, փորձագետ
		2. Խաչատուրյան Արամ	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ ՏԻ, կրտսեր գիտաշխատող
14.	Չիլի	1. Պողոսյան Շողեր	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ ՏԻ, գիտաշխատող
		2. Սարգսյան Անուշ		ՀՀ ԳԱԱ ՏԻ, կրտսեր գիտաշխատող, ասպիրանտ

№	Տնտեսական հրաշք իրականացրած երկրի անվանումը	Փորձն ուսումնասիրող խմբի անդամների ա. ա.	Գիտական աստիճանը և կոչումը	Աշխատանքի վայրը
15.	Հնդկաստան	Մանուկյան Գրիգոր	տ.գ.թ., դոցենտ	ՀՀ ԳԱԱ ՏԻ, գիտաշխատող
16.	Իսպանիա	Հարությունյան Գևորգ	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ ՏԻ, կրտսեր գիտաշխատող
17.	Էստոնիա	Իսահայկյան Ռազմիկ	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ ՏԻ, կրտսեր գիտաշխատող
18.	Ֆինլանդիա	1. Մկրտչյան Թաթուլ	տ.գ.դ.	ՀՊՏ2 գիտության գծով պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
		2. Հովհաննիսյան Աստղիկ		ՀՊՏ2 «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող
19.	Լեհաստան	1. Հախվերդյան Դավիթ	տ.գ.դ., պրոֆեսոր	ՀՊՏ2 «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն
		2. Մովսիսյան Շուշան		«Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետ, ՀՊՏ2 հայցորդ
20.	Իսլանդիա	1. Թովմասյան Ռուբիկ	տ.գ.թ., դոցենտ	ՀԱԱՀ, դասախոս
		2. Թովմասյան Գայանե		տ.գ.թ.
21.	Լատվիա	1. Ոսկանյան Գոհար	տ.գ.թ.	ՀԱԱՀ, դասախոս
		2. Միրզոյան Ծաղկանուշ		ՀԱԱՀ, դասախոս
22.	Միացյալ Արաբական Էմիրություններ	1. Վահանյան Գրիգորի	տ.գ.դ., պրոֆեսոր	ՀՀ ԳԱԱ ՏԻ, գլխավոր գիտաշխատող
		2. Զախարյան Վիկտոր		UNIDO-ի միջազգային փորձագետ

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
2006-2020 ԹԹ. ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՈՂՆԵՐԸ,  
ՈՎՔԵՐ ՏԱՐԲԵՐՎԵԼ ԵՆ ԻՐԵՆՑ ՈՒՆԵՑԱԾ ՆԵՐԴՐՄԱՄԲ



ՎԼԱԴԻՄԻՐ ԼԻՊԱՐԻՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ծնվել է 1957թ. մայիսի 21-ին Լոռու մարզի Քարինջ գյուղում:

Կոնտակտային տվյալներ  
Հեռ. 010 58 19 71, 091 202-075  
Ֆաքս + (37410) 58 19 71 x 123  
Էլ. փոստ harutyunyan@economics.sci.am

**Կենսագրություն**

- Վլադիմիր Հարությունյանը ծագումով և ծնունդով լոռեցի է, իսկ ավելի կոնկրետ Մոսկոբ կոչվող հանդամասի Քարինջ գյուղից, որը գտնվում է Դեբեդ և նրա վտակ Մարց գետերի աջ կողմում:
- Գյուղի աջ կողմում Մեծ լոռեցու՝ Հովհաննես Թումանյանի<sup>11</sup> ծննդավայրը Դսեղ գյուղն է, իսկ ձախ կողմում՝ մեծ արձակագիր Հրանտ Մաթևոսյանի ծննդավայրը Ահնիձորը:
- Գյուղն իր բնության և բնապատկերի գեղեցկության համար 1952 թվականին արժանացել է ժողովրդական նկարիչ Մարտիրոս Մարյանի ուշադրությանը. նա վրձնել է «Քարինջ գյուղի կոլտնտեսությունը Թումանյանի լեռներում» կտավը (պահվում է Մոսկվայի ժողտնտեսության նվաճումների ցուցահանդեսում): Այդ կտավի համար Մ. Մարյանը 1961 թ. արժանացել է ՍՍՀՄ պետական մրցանակի: Գեղեցիկ կտավը երկար տարիներ զարդարում էր 2-րդ և 3-րդ դասարանների մայրենի լեզվի դասագրքի կազմը, իսկ դրանից տասնյակ տարիներ անց՝ արդեն անկախացման տարիներին, այն իր արժանի տեղը գտավ 2-րդ սերնդի 5 հազարանոց թղթադրամի մի կողմում, իսկ մյուս կողմում Մեծ լոռեցու՝ Հովհաննես Թումանյանի դիմանկարն է:
- Գյուղը գտնվում է բարձրադիր և գեղեցիկ Գուգարաց լեռների Չաթին դաղ կոչվող լեռնաշղթայի ստորոտում:

1974 թ. ավարտել է Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) թիվ 1 ֆիզիկամաթեմատիկական թեթումով դպրոցը և նույն տարում ընդունվել ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, իսկ 1979 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը և նույն տարում ընդունվել ասպիրանտուրա: 1979-1981 թթ. ծառայել է խորհրդային բանակում (Աֆղանստան):

<sup>11</sup> «Հազարան բլրովի» 40 տարբերակներից մեկը Թումանյանը Դսեղի մոտակա Քարինջ գյուղի ջրաղացայանի Մակոյի հետ զրոյց անելիս է լսել ու գրի առել (տե՛ս Նվարդ Թումանյան, «Հուշեր և զրոյցներ», Եր., 2009, էջ 181): Ի դեպ, Մակոն Վլադիմիրի հոր պապն պապն է եղել:

**Վ. Հարությունյանի աշխատանքային գործունեությունը մինչև Հայաստանի անկախությունը**

- 1981-1987 թթ.՝ Երևանի քաղաքործկոմի ֆինանսական վարչության ավագ տնտեսագետ,
- 1981-1988 թթ.՝ դասախոսել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտում, իսկ 2003-2011 թթ. ԵՊՀ-ում՝ իր հեղինակած «Հարկաբյուջետային քաղաքականություն», «Պետական և մունիցիպալ ֆինանսներ» և «Հարկային քաղաքականություն» առարկաները,
- 1987-1990 թթ.՝ Երևանի քաղաքործկոմի ֆինանսական վարչության հաստիքային բաժնի պետ,
- 1990-1991 թթ.՝ Երևանի քաղաքործկոմի ֆինանսական վարչության պետի տեղակալ:

**Վ. Հարությունյանի աշխատանքային գործունեությունը Հայաստանի անկախացումից հետո**

- 1991-1992 թթ.՝ Հայագրոբանկ, բաժնի պետ,
- 1992-1993 թթ.՝ Հայարդշին բանկ, մասնաճյուղի կառավարչի տեղակալ,
- 1993-1996 թթ.՝ Երևանի քաղաքործկոմի ֆինանսական վարչության պետ,
- 1996-1997 թթ.՝ Երևանի քաղաքապետարան, ֆինանսական բաժնի պետ,
- 1997 թ.՝ ՀՀ հարկային տեսչության վարչության պետի տեղակալ,
- 1997-1998 թթ.՝ ՀՀ հարկային տեսչության Շենգավիթի ՏՀՏՊ (տարածքային հարկային տեսչության պետ),
- 1998-1999 թթ.՝ ՀՀ հարկային տեսչության Շահումյանի ՏՀՏՊ,
- 1999 թ.՝ ՀՀ հարկային տեսչության Էրեբունու ՏՀՏՊ,
- 1999-2000 թթ.՝ Հայխնայբանկ, բաժնի պետ,
- 2000-2001 թթ.՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ֆինանսական վարչության պետ, «ՀՀ երկաթուղու փոխադրումներ» ՓԲԸ ֆինանսական տնօրեն,
- 2002-2003 թթ.՝ «Արդշին» և «Արդշինինվեստ» բանկեր, ադմինիստրացիայի ղեկավարի գլխավոր խորհրդական, մասնաճյուղի կառավարիչ, վարչության պետ,
- 2003-2005 թթ.՝ «Հայաստան համահայկական հիմնադրամ», ֆինանսական բաժնի պետ,
- 2005-2006 թթ.՝ «Նաիրիտ» ՓԲԸ, ֆինանսական տնօրեն:
- 2006 թ. նոյեմբերից մինչ օրս՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն:

Օգտագործելով իր մասնագիտական փորձը և գործնական գիտելիքներն ու հմտությունները՝ 1988 թ. ապրիլին ԵՊՀ-ում պաշտպանել է թեկնածուականատենախոսություն՝ «Ամորտիզացիոն ֆոնդը սոցիալիստական վերարտադրության մեջ» թեմայով՝ ստանալով «Քաղաքատնտեսություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, 2004 թ. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության տնտեսագիտական հետազոտությունների ինս-

տիտուտում «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտությամբ «Հարկաբյուջետային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: Դա այն տարին էր, երբ նա իր դիմումի համաձայն ազատվել էր տարածքային հարկային տեսչության պետի պաշտոնից և դարձել գործազուրկ, իսկ այնուհետև ճակատագիրը նրան բերել էր գիտության ոլորտ, և 2006 թ. նա ընտրվել էր ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, որտեղ էլ աշխատում է մինչ օրս:

2007 թ. ստացել է պրոֆեսորի կոչում:

2010 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Դասախոսել է Հայաստանի պետական տնտեսագիտական և Երևանի պետական համալսարաններում:

- Վլադիմիր Հարությունյանը 2014 թ., 2016 թ., 2018 թ. և 2020 թ. դարձել է «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթների շահառու: Հեղինակ է 21 մենագրության և 100-ից ավելի գիտական հոդվածների ([economics.sci.am](http://economics.sci.am)), որոնցից 30-ը արտասահմանյան են:
- Տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն աշխատած բոլոր տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարությանն է ներկայացրել կիրառական առաջարկներ, որոնք իրենց ներդրումն են ունեցել Հայաստանի տնտեսական գործունեության արդյունավետության բարելավման գործում:
- Վլադիմիր Հարությունյանի գիտական ղեկավարությամբ ու աջակցությամբ թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել շուրջ 5 տասնյակ ասպիրանտներ և հայցորդներ:
- Նրա պատասխանատվությամբ են պատրաստվել և հրատարակվել գիտական հոդվածների շուրջ 20 ժողովածուներ՝ բաղկացած 4 գիտական ուղղություններից:
- Եղել է գիտական աստիճաններ շնորհող տնտեսագիտության մասնագիտական ինստիտուտում գործող մասնագիտական խորհրդի նախագահ, բազմաթիվ գիտական ամսագրերի խմբագրական խորհրդի անդամ, համաժողովների կազմկոմիտեի անդամ:
- Գիտության և կրթության բնագավառում մատուցած ակնառու ծառայությունների համար 2013 թվականին հանրապետության նախագահի կողմից պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության պետական պարգևով՝ Սովսես Խորենացու մեդալով:

Վլադիմիր Հարությունյանն ունի.

- երկու որդի՝ Դավիթը և Տիգրանը, ովքեր տնտեսագիտության դոկտորներ են և ԵՊՀ-ում տնտեսագիտություն մասնագիտությամբ գիտական աստիճաններն են շնորհող մասնագիտական խորհրդի անդամներ:
- մեկ դուստր՝ Աննան, ով տնտեսագիտության թեկնածու է և դասախոսում է ՀՊՏՀ-ում,
- չորս տղա թոռ և երկու թոռնուհի:

**ՅՈՒՐԻ ՄԻՔԱՅԵԼԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ**  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1945 թ. մայիսի 25-ին Սղնախ գյուղում  
(ներկայումս՝ ԼՂՀ, Ասկերանի շրջան):

**Կոնտակտային տվյալներ**  
Հեռ.՝ 52 17 20, 26 74 41, 091 20 20 83

**Կրթություն**

- 1965 թ.՝ ավարտել է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետը
- 1965-1968 թթ. ԵՊՀ ասպիրանտուրա
- 1984 թ.՝ տնտեսագիտության դոկտոր

**Աշխատանքային գործունեություն**

- 1968-75 թթ. Երևանի պետական համալսարանի դոցենտ,
- 1975-1987 թթ. Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի (հետագայում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան) դոցենտ, պրոֆեսոր,
- 1987-1994 թթ. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական գործերի գծով պրոռեկտոր,
- 1992-93 թթ. ՀՀ վարչապետի խորհրդական,
- 1994 թվականից Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Կառավարման ամբիոնի վարիչ,
- 2006-2011 թթ. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր,
- 2011 թվականից մինչ օրս՝ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար,
- 2011 թվականից մինչ օրս՝ ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական աստիճանաշնորհման մասնագիտացված խորհրդի նախագահ:

**Հրապարակումներ**

Հեղինակ է ավելի քան 293 գիտական հրապարակումների:

**Կոչումներ և պարգևներ**

- 1996 թ.՝ պրոֆեսոր,
- 2000 թ.՝ «Անանիա Շիրակացի» մեդալ,
- 2006 թ.՝ ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ,
- 2007 թ.՝ ԼՂՀ «Մայրական երախտագիտություն» մեդալ,
- 2010 թ.՝ Միջազգային փիլիսոփայական ակադեմիայի «Դավիթ Անհաղթ» մեդալ,

- 2010 թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- 2011 թ.՝ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալ,
- 2014 թ.՝ Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործիչ,
- 2017 թ.՝ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալ:

**ՌՈՔԵՐՏ ՆԵՐՍԵՍԻ ՍԱՐԻՆՅԱՆ**  
 Գիտական թեմայի ղեկավար,  
 տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1940 թ. հունվարի 20-ին ԼՂՀ Ասկերանի շրջանի Սեյտիշեն (այժմ՝ Խաչեն) գյուղում:

Կոնտակտային տվյալներ

Հեռ.՝ +374-581971 (113)

Էլ. փոստ՝ rnsarinyan@yandex.ru

Google Scholar: [https://scholar.google.com/citations?hl=en&user=Fjn\\_L3gAAAAJ](https://scholar.google.com/citations?hl=en&user=Fjn_L3gAAAAJ)

**Կրթություն**

- 1946-1953 թթ.՝ սովորել է գյուղի յոթամյա դպրոցում,
- 1957 թ.՝ ավարտել է Խնձրիստանի միջնակարգ դպրոցը,
- 1958-1963 թթ.՝ Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը,
- 1976 թ.՝ «Ավետիք Արասխանյանի տնտեսագիտական հայացքները» թեմայով պաշտպանել է առենախոսություն և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան «Տնտեսագիտական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ,
- 1985 թ.՝ Մոսկվայում՝ Գ. Պլեխանովի անվան ժողովրդական տնտեսության ինստիտուտում, պաշտպանել է դոկտորական առենախոսություն «Հայ տնտեսագիտական մտքի հիմնական հոսանքները XIX դարի 70-90-ական թվականներին» թեմայով և ստացել տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:

**Աշխատանքային գործունեություն**

- 1965-1968 թթ.՝ աշխատել է ԽՍՀՄ Շինարարական բանկի հայկական գրասենյակում որպես ավագ տնտեսագետ,
- 1968 թվականից՝ աշխատել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) քաղաքատնտեսության (այժմ՝ տնտեսագիտության) ամբիոնում որպես կաբինետի վարիչ, ասիստենտ, ավագ դասախոս,

1979-2014 թթ. նույն ամբիոնի վարիչ,

2003 թվականից՝ համատեղությամբ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում որպես բաժնի վարիչ,

2015 թվականից՝ նույն ինստիտուտի գլխավոր գիտաշխատող:

#### Հրապարակումներ

Հեղինակ է 31 գրքի և ավելի քան 110 հոդվածի: Ռոբերտ Սարինյանի հրապարակումների ամբողջական ցանկին ծանոթանալու համար սեղմել այստեղ:

#### Կոչումներ և պարգևներ

1983 թ.՝ Հայկական ՄՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգիր,

2003 թ.՝ Մովսես Խորենացու մեդալ:

#### Անձնական տվյալներ

Ազգությունը՝ հայ:

Ընտանեկան կարգավիճակը՝ ամուսնացած է, ունի

- երկու որդի,
- երեք թոռնուհի և երկու թոռ:
- 1963-1965 թթ. ծառայել է խորհրդային բանակում:



1946-2018

ԱՇՈՏ ՀԱԿՈՒԲԻ ԲԱՅԱՂՅԱՆ

Ծնվել է 1946 թ. հունիսի 2-ին Սալիտակի շրջանի Մեծ Պարնի գյուղում, աշխատավորի ընտանիքում:

#### Կրթություն

1965 թ.՝ գերագանց առաջադիմությամբ ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1965-1970 թթ.՝ սովորել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի «Տնտեսագիտական կիբեռնետիկա» բաժնում:

1985 թ.՝ ավարտել է Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի հեռակա ասպիրանտուրայի «Վիճակագրություն» բաժինը, որտեղ էլ պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆեսոր Արոն Յա. Բոյարսկու գիտական ղեկավարությամբ և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

## Աշխատանքային գործունեություն

- 1970-1975 թթ.՝ աշխատել է Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում որպես տնտեսագետ ինժեներ,
- 1975-1984 թթ.՝ Հայաստանի գյուղատնտեսական նախարարության հաշվողական կենտրոնում որպես խմբի, այնուհետև՝ բաժնի վարիչ: Զբաղվել է գյուղատնտեսության ոլորտում հաշվապահական և ֆինանսական հաշվետվությունների՝ համակարգիչներով կազմման ու ներդրման հարցերով,
- 1984-1993 թթ.՝ Հայկական գյուղատնտեսական ինստիտուտում (ՀԳԻ) որպես ավագ դասախոս, այնուհետև՝ դոցենտ, համատեղության կարգով՝ նաև Հայաստանի ժողովրդական տնտեսության ինստիտուտում: Դասավանդել է «Հաշվապահական հաշվառում», «Վիճակագրություն» և «Տնտեսական գործունեության վերլուծություն» առարկաները,
- 1993-1996 թթ.՝ ՀՀ նյութական ռեսուրսների նախարարությունում, ՀՀ կենտրոնական բանկում, Հայագրոբանկում՝ համապատասխանաբար զբաղեցնելով ֆինանսական վարչության պետի, հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների վարչության պետի, հաշվառման և մեթոդոլոգիայի բաժնի պետի պաշտոնները, միաժամանակ աշխատելով ՀԳԻ-ում որպես դոցենտ՝ «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» ամբիոնում,
- 1996-1998 թթ.՝ Հայկական գյուղատնտեսական ակադեմիայում որպես դոցենտ՝ համատեղելով Ֆինանսատնտեսագիտական վարչության պետի պաշտոնը,
- 1998 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թ. հուլիսի 25-ը նորաստեղծ «Ֆինանսներ և վարկ» ամբիոնի վարիչն էր, դասավանդում էր հիմնականում մասնագիտական առարկաներ՝ «Ֆինանսների ընդհանուր տեսություն», «Կազմակերպությունների ֆինանսներ», «Ֆինանսական մենեջմենթ» և «Բանկային մենեջմենթ»:
- 2012 թվականից մինչև 2018 թ. հուլիսի 25-ը աշխատել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտում որպես բաժնի վարիչ,
- 2013 թվականից մինչև 2018 թ. հուլիսի 25-ը «Ֆինանսներ և էկոնոմիկա» ամենամյա հանդեսի գլխավոր խմբագիրն էր:
- 2002 թ.՝ պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Տնտեսվարող սուբյեկտների ֆինանսական դրության գնահատման մեթոդաբանական հիմնահարցերը» թեմայով՝ ստանալով տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:
- 2004 թ.՝ ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում:

## Հրատարակումներ

Ավելի քան 170 գիտական հոդվածների, մենագրությունների, ուսումնական ձեռնարկների, տնտեսագիտական բացատրական բառարանների և մեթոդական ցուցումների հեղինակ է:

Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտության զծով եղել է թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների պաշտպանության խորհրդի անդամ: Միաժամանակ Հայաստանի ազգային ազրարային համալսարանում եղել է Ը.00.03 մասնագիտության որակավորման քննական հանձնաժողովի նախագահ:

Նրա գիտական ղեկավարությամբ տնտեսագիտության թեկնածուներ են դարձել 35 ավելի ասպիրանտներ, հայցորդներ, ինչպես նաև եղել է խորհրդատու մեկ դոկտորական ատենախոսության:

Տարիներ շարունակ մի շարք ուսումնական հաստատությունների «Ֆինանսներ և վարկ», «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մասնագիտությունների զծով եղել է պետական քննական հանձնաժողովի նախագահ:

Դեռևս խորհրդային տարիներին, որպես տնտեսագետ, լինելով տեղերում, մեծ օգնություն է ցուցաբերել տնտեսություններին տնտեսավարկային և վարձակալական գործընթացի ներդրման գործում, որի համար պարգևատրվել է շնորհակալագրերով և պատվոգրերով:

1986-1991 թթ.՝ որպես ակտիվ հասարակական աշխատող, կատարել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի տնտեսագիտական ֆակուլտետի արհմիության նախագահի և կուսակցական կազմակերպության քարտուղարի պարտականությունները:

- Ուսումնական փորձի առումով՝
- 1997-1998 թթ.՝ եղել է ԱՄՆ-ի Ֆրեզնոյի համալսարանում,
  - 2000 թ.՝ Լոնդոնի տնտեսագիտական քոլեջում,
  - 2001 թ.՝ Հոլանդիայի,
  - 2005, 2008 և 2010 թթ.՝ Գերմանիայի ու Հունաստանի գյուղատնտեսական համալսարաններում,
  - 2006 և 2010 թթ.՝ ՀՀ կրթության և գիտության ոլորտում ներդրած ավանդի համար, Հայաստանի պետական ազրարային համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ, պարգևատրվել է «Ոսկե հուշամեդալով», 2015 թ., ՀՀ վարչապետի որոշմամբ, «Շնորհակալագրով»,
  - 2013-2015 թթ.՝ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող «ՀՀ պետական պարտքի կարգավորման ուղիները» թեմայով գիտական հետազոտության ղեկավար,
  - 2014 և 2016 թթ. ճանաչվել է ՀՀ ԿԳՆ Գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Արդյունավետ գիտաշխատող-2014» և «Արդյունավետ գիտաշխատող-2016» մրցույթների հաղթողներից մեկը:

**ՀՐԱՉԻԿ ՍԱՐԳՍԻ ԱՎԱԳՅԱՆ**



Օնվել է 1930 թ. մայիսի 22-ին ՀՀ Տավուշի մարզի Պառավաքար գյուղում:

1930-2016

**Կրթություն**

- 1949-1954 թթ.՝ սովորել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի լեռնային ֆակուլտետը, ստացել է ճարտարագետ-երկրաբանի որակավորում «Օգտակար հանածոների հանքավայրերի որոնում և հետախուզում» մասնագիտությամբ:
- 1968 թ.՝ Հայաստանի երկրաբանական վարչության կազմում աշխատանքային գործունեության ընթացքում, պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Саригюхское месторождение бентонитовых глин (генезис и перспективы применения сырья)» թեմայով:
- 1989 թ.՝ պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Цеолит-бентонитовая формация Соьхето-Кафанской структурно-формационной зоны Малого Кавказа и ее прогнозная оценка» թեմայով:

**Աշխատանքային գործունեություն**

- 1954-1992 թթ.՝ աշխատել է Համամիութենական տնտեսագիտական միության Հայաստանի Հանրապետության վարչության նախագահի տեղակալ,
- 1954-1956 թթ.՝ Հանքավանի երկրաբանահետախուզական պարտիայում,
- 1956-1959 թթ.՝ Ղազմայի արշավախմբի գլխավոր ինժեներ, տեխնիկական ղեկավար,
- 1960-1963 թթ.՝ Սարիգյուղի բենթոնիտային կավերի հետախուզական պարտիայի պետ,
- 1964 թ.՝ Արևիսի ոսկու հանքավայրի հետախուզական պարտիայի պետ,
- 1965-1970 թթ.՝ Սիսիանի երկրաբանական արշավախմբի պետ,
- 1970-1971 թթ.՝ Ալժիրի Ժողովրդադեմոկրատական Հանրապետությունում՝ որպես խորհրդային երկրաբան մասնագետների խմբի ղեկավար,
- 1972-1975 թթ.՝ Հայաստանի բնական ջեոլիտների որոնողական արշավախմբի պետ,
- 1975-1977 թթ.՝ Իջևանի քարածխի հանքաերևակման հետախուզական արշավախմբի գլխավոր երկրաբան,
- 1976-1980 թթ.՝ Հայաստանի երկրաբանական վարչության արշավախմբում՝ որպես երկրաբան,
- 1980-1994 թթ.՝ Հայաստանի գունավոր մետալուրգիայի վարչության երկրաբանահետախուզական տրեստի Ազատեկի արշավախմբի պետ և ապա նույն տրեստի բաժնի վարիչ,

1994 թվականից մինչև 2016 թ. մարտի 18-ը՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, «Բնօգտագործման և բնապահպանության» բաժնի վարիչ:

Անձնական տվյալներ

Ազգությունը՝ հայ:

Ընտանեկան կարգավիճակը՝ ամուսնացած, ունի 1 դուստր և 1 որդի և չորս թոռ:



**ԳՐԻԳՈՐԻ ԱՐՇԱԼՈՒՅՄԻ ՎԱՀԱՆՅԱՆ**  
Տնտեսագիտության դոկտոր,  
տեխնիկական գիտությունների թեկնածու

Ծնվել է 1953 թ. Երևանում:

Կոնտակտային տվյալներ  
Հեռախոս՝ +374 91 950 741

Էլ. փոստ՝ [gregorv@mail.ru](mailto:gregorv@mail.ru)

Google scholar: <https://scholar.google.ru/citations?hl=ru&user=DxBC7acAAAAJ>  
<http://www.iatp.am>, <http://www.rau.am>  
<http://imht.rau.am/uploads/blocks/0/0/9/files/vahanyan-cv-rus-new.pdf>  
<http://eua.am/wp-content/uploads/2019/06/Գրիգորի-Արշալույսի-Վահանյան.pdf>  
<http://ru.hayazg.info/Ваганиян Григорий Аршалуйсович>  
<http://www.iatp.am/iidf/docs/cv/vahanyan-en.pdf>  
<https://www.scopus.com/freelookup/form/author.uri>

#### Կրթություն

1960-1970 թթ. Երևանի թիվ 34 միջնակարգ դպրոց (գերազանցությամբ),

1970-1975 թթ. Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ, մասնագիտությամբ՝ ինժեներ-էլեկտրամեխանիկ (կարմիր դիպլոմ),

1977-1980 թթ. Ճարտարապետաշինարարական ավտոմատացման համակարգերի կենտրոնական գիտահետազոտական և նախագծային ինստիտուտի ասպիրանտուրա (Մոսկվա),

1987-1988 թթ.՝ ՄՄԿԿ Կենտրոնական կոմիտեին կից Հասարակական գիտությունների ակադեմիայի «Սոցիալ – տնտեսական կառավարման» ամբիոնի դոկտորանտուրա (Մոսկվա):

#### Մասնագիտական վերապատրաստումներ

- Online courses “Telecommunication and Distance Learning”. Connected Education Inc., Notepad Inc. (New-York, USA), 1989-1992,
- The Training Sessions for Liaison officers for using CODICES (the database – InfoBase of the Venice Commission, Council of Europe), 2002, Cyprus, 2003, Norway, 2004, 2005, 2007, 2010 Venice, Italy, 2008, Albania, Turkey, Germany and Romania (2011-2016):

## Գիտական աստիճաններ

- 1981 թ. տեխնիկական գիտությունների թեկնածու՝ 05.13.06 «Կառավարման և տեղեկատվության մշակման ավտոմատացման համակարգեր» և 05.13.12 «Ավտոմատացված նախագծման համակարգեր»,
- 1991 թ. տնտեսագիտության դոկտոր՝ 08.00.05. դոկտորական թեման՝ «Սոցիալ-տնտեսական պրոցեսների ինտերակտիվ մոդելավորում և կառավարում»:
- ## Աշխատանքային գործունեություն
- 1975-1977 թթ. Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի «Արտադրական պրոցեսների ավտոմատացման» ամբիոնի ավագ լաբորանտ, ավագ դասախոս,
- 1980-1982 թթ. Ճարտարապետաշինարարական ավտոմատացման համակարգերի գիտահետազոտական և նախագծային կենտրոնական ինստիտուտի ավագ գիտական աշխատող (Մոսկվա), մրցութային կարգով,
- 1982-1983 թթ. Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի Երևանի ավտոմատացման կառավարման համակարգերի գիտահետազոտական ինստիտուտի համակարգչային գրաֆիկայի բաժնի հիմնադիր և ղեկավար,
- 1983-1987 թթ. Հայաստանի կոմերիտմիության ԿԿ գիտական երիտասարդության բաժնի վարիչ, գիտության և տեխնիկայի բնագավառում մրցանակների հանրապետական հանձնաժողովի քարտուղար,
- 1983-1991 թթ. Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի «Ճարտարապետության» ամբիոնի ղոցենտ, համակարգչային նախագծման դասընթացների հիմնադիր,
- 1989-1997 թթ. Հայաստանի հանրապետական հեռահաղորդակցման տեղեկատվական «Որոնում» կենտրոնի հիմնադիր և ղեկավար, Հայաստան – ԱՄՆ – Սփյուռք (այդ թվում՝ Հայաստան – Ղարաբաղ) համակարգչային, ռադիոթվային տեղեկատվական կապի համակարգող (1989-1992 թթ.), «Hayknet & ArcaLer» վիրտուալ կրթական ինտերնետային շտեմարանի, Հայաստանում էլեկտրոնային համալսարանի նախագծի համակարգող,
- 1998-2018 թթ. ՀՀ սահմանադրական դատարանի միջազգային կապերի բաժնի ղեկավար, խորհրդական (սահմանադրական և մարդու իրավունքների մոնիտորինգի ռազմավարական մեթոդաբանության համահեղինակ), արդարադատության առաջին դասի պետական խորհրդական (2007 թ.),
- 1999-2004 թթ. Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիայի «Համակարգչային գեղարվեստական նախագծման, արտմենեջմենթի և գովազդի» ամբիոնի հիմնադիր և վարիչ, պրոֆեսոր, նոր կրթական ստանդարտի (0504 – «Համակարգչային գեղարվեստական նախագծում») հեղինակ,
- 1999-2003 թթ. ԱՄՆ-ի պետդեսպարտամենտի Կրթության և մշակութային կապերի բյուրոյի, միջազգային կորպորացիայի (IREX/IATP, Internet Access

- and Training Program) Հայաստանյան ծրագրի համակարգող, 1999-2011 թթ.՝ Մոսկվայի տնտեսագիտության, վիճակագրության և ինֆորմատիկայի պետական համալսարանի էլեկտրոնային ուսուցման դասախոս-կոնսուլտանտ (սերտիֆիկացված տյուտոր), Հայաստանյան մասնաճյուղի տնտեսագիտության ամբիոնի պրոֆեսոր, 2003 թվականից՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի, ինֆորմատիկայի և տնտեսագիտության ֆակուլտետների պրոֆեսոր, Շարունակական կրթության ինստիտուտի տնօրեն (2005-2006 թթ.), 2004 թվականից՝ ArcaLer Scorecard վիրտուալ ինտելեկտուալ կապիտալի ռեյտինգային պորտալի հիմնադիր՝ համակարգող ([www.iatp.am/arcaler\\_scorecard](http://www.iatp.am/arcaler_scorecard)), 2005-2006 թթ.՝ Ռուսաստանի կրթության և գիտության նախարարության Պետական ինովացիայի ակադեմիայի պրոֆեսոր, պրոռեկտոր, «Ռուս-Իսրայելական ինովացիոն և գիտատեխնիկական համագործակցության միջազգային կենտրոնի» տնօրեն, միջազգային կենտրոնի ռազմավարական ծրագրի գիտական ղեկավար (“Научно-методическое обеспечение создания центра научно-технического и инновационного сотрудничества России и Израиля, исследование механизма трансфера российских технологий в Израиль”. Москва, 2005, Государственный контракт от 03.10.2005 № 02.453.11.7010, Министерство образования и науки Российской Федерации), 2011 թվականից՝ Եվրոպական տարածաշրջանային կրթական ակադեմիայի/Եվրոպական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսոր, 2019 թվականից՝ Մոսկվայի տնտեսագիտական համալսարանի Երևանյան մասնաճյուղի պրոֆեսոր, SS և Հումանիտար գիտությունների ամբիոնի վարիչ (01.09.2019 – 01.11.2019):

Գիտական, ստեղծագործական և այլ միությունների և կազմակերպությունների անդամակցություն

- 1980-1992 թթ.՝ Համամիութենական երիտասարդ գիտնականների և մասնագետների խորհրդի անդամ, 1983-1992 թթ.՝ ՍՍՀՄ ԳԱ «Կիբեռնետիկա»-ի կոմպլեքսային հարցերով գիտական խորհրդի «Շինարարության սիստեմատեխնիկա» սեկցիայի անդամ, 1985-1992 թթ.՝ ՍՍՀՄ Սոցիոլոգիական ասոցիացիայի հայկական մասնաճյուղի խորհրդի անդամ, 1989-1994 թթ.՝ Միջազգային համակարգչային ակումբի հայկական մասնաճյուղի հիմնադիր նախագահ, Արցախում՝ Ստեփանակերտում, ակումբի բաժանմունքի հիմնադիր, 1990-1993 թթ.՝ “Journal of Social and Evolutionary Systems” (JAI PRESS INC., London, England) միջազգային ամսագրի խմբագրական խորհրդի անդամ, 1993-1996 թթ.՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ազգային կոմիտեի անդամ, SS հանձնաժողովի նախագահի տեղակալ,

- 1996-2003 թթ.՝ Հայաստանի Հանրապետության ստանդարտացման, սերտիֆիկատների և մետրոլոգիայի վարչության ինֆորմացիոն տեխնոլոգիաների հանձնաժողովի անդամ,
- 1997-2004 թթ.՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության ինֆորմատիկայի հանձնաժողովի փորձագետ,
- 1999 թվականից՝ Հայաստանի Ինտերնետ հասարակության միության խորհրդի անդամ,
- 1999-2018 թթ.՝ Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) լիազոր ներկայացուցիչ,
- 2008–2014 թթ. և 2018 թվականից՝ Հայաստանի պետական ազրարային համալսարանի ՀՀ ԲՈԿ-ի թիվ 002 («Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում») մասնագիտական խորհրդի անդամ, **2019 թվականից՝** Երևանի պետական համալսարանի ՀՀ ԲՈԿ-ի մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալ,
- 2008 թվականից՝ Հնագույն արվեստի և մշակույթի ուսումնասիրման միջազգային կենտրոնի անդամ, Վալկամոնիկա (Իտալիա),
- 2012 թվականից՝ Հայաստանի նորարարության և արդյունաբերության զարգացման հիմնադրամի հիմնադիր, նախագահ (2015-2017 թթ.), Էլեկտրոնային ուսուցման եռալեզու “Armkurs” վեբինարի Հայ-ավստրիական ծրագրի համակարգող,
- 2013 թվականից՝ ՄԱԿ-ի UNIDO-ի՝ նորարարական մենեջմենթի և տեխնոլոգիաների տրանսֆերի գծով միջազգային փորձագետ (Ռուսաստան),
- 2014 թվականից՝ Եվրոպական տարածաշրջանային կրթական ակադեմիայի «Գիտական հողվածների ժողովածու»-ի խմբագրական խորհրդի անդամ,
- 2014 թվականից՝ Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի և Եվրոպական տարածաշրջանային կրթական ակադեմիայի ՀՀ ԲՈՂ-ի թիվ 002 («Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում») համատեղ մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալ, Եվրոպական համալսարանի ՀՀ ԲՈՂ-ի մասնագիտական խորհրդի նախագահ (2015-2018 թթ.),
- 2018 թվականից՝ «Большая Евразия: развитие, безопасность, сотрудничество» տարեգրքի և համանուն կայքի խմբագրական կոլեգիայի անդամ, ИНИОН РАН, Москва.

Միջազգային գիտական կոնգրեսների, սիմպոզիումների, կոնֆերանսների կազմկոմիտեների անդամ, մասնակից (ՀՀ, Չեխոսլովակիա, Ռուսաստան, Մեքսիկա, Ֆրանսիա, Վրաստան, Ուկրաինա, Իտալիա, Շվեդիա, Ղազախստան, Ավստրիա, Նորվեգիա, Գերմանիա, Թուրքիա, Ռումինիա, Ալբանիա, Հունգարիա):

#### Հրատարակումներ

Ավելի քան 300 հոդվածների, 17 մենագրությունների, ուսումնական ձեռնարկների և հանրագիտարանների (ՌԴ, Գերմանիա, Հայաստան, Իտալիա) հեղինակ և համահեղինակ է:

## Պարգևներ

- 1977-1987 թթ.՝ դիպլոմներ և պատվոգրեր, Համամիութենական երիտասարդական գիտատեխնիկական մրցույթների դափնեկիր,
- 1985 թ.՝ Արծաթե մեդալ՝ նոր համակարգչային ինտերակտիվ կառավարման տեխնոլոգիաների մշակման համար, Ռուսաստան,
- 1986 թ.՝ ՀՀ ԳՏՄ Գիտության և տեխնիկայի մրցանակի դափնեկիր,
- 1990 թ.՝ ՀՀ Նախարարների խորհրդի մրցույթի դափնեկիր (լավագույն հայալեզու համակարգչային ծրագրային փաթեթի ստեղծման համար),
- 1998 թ.՝ Հատուկ պատվոգիր Մեքսիկայի Մեխիկոյի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի և Մեքսիկայի մարդու իրավունքների (օմբուդսմենի) հանձնաժողովի կողմից (ռազմավարական ծրագրի մշակման, իրավական ինֆորմատիկայի դասընթացների կազմակերպման համար),
- 2002 թ.՝ «Հայկական թվային արվեստը Ինտերնետում» նախագծի միջազգային մրցանակ Ավստրիայի Գրացի համալսարանի կողմից,
- 2007 թ.՝ ՀՀ սահմանադրական դատարանի պատվոգիր,
- 2009 թ.՝ Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) շքանշան:

## Լեզուների իմացություն

Հայերեն, ռուսերեն, գերմաներեն, անգլերեն

## Այլ տեղեկություններ

SS ոլորտի ծրագրային փաթեթների իմացություն:



ԴԱՎԻԹ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
Տնտեսագիտության դոկտոր

Ծնվել է 1985 թ. փետրվարի 26-ին Երևանում:

Կոնտակտային տվյալներ

Հեռ.՝ +374 10 538005, +374 94 470804

Էլ. փոստ՝ [davitharutyunyan@yahoo.com](mailto:davitharutyunyan@yahoo.com)

Google scholar: [https://scholar.google.ru/citations?hl=en&view\\_op=list\\_works&gmla=AjsN-F6CaVXh-kb-CHI.no1WUTb6l-Kl.Lmf-p4UGmV0voU773x5F4BZnIG2yh1ctcLqve4At4oYQ-dRub5qym7sBm-NfrWfE:y5C67c-WZ2DDRRtbww-hyGQgflag&user=yRhO\\_nIAAAA1](https://scholar.google.ru/citations?hl=en&view_op=list_works&gmla=AjsN-F6CaVXh-kb-CHI.no1WUTb6l-Kl.Lmf-p4UGmV0voU773x5F4BZnIG2yh1ctcLqve4At4oYQ-dRub5qym7sBm-NfrWfE:y5C67c-WZ2DDRRtbww-hyGQgflag&user=yRhO_nIAAAA1)

## Կրթություն

1991-2001 թթ.՝ սովորել է Երևանի թիվ 88 միջնակարգ դպրոցում,

2001-2006 թթ.՝ սովորել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտում, որն ավարտել է գերազանցությամբ՝ ստանալով տնտեսագիտության մագիստրոսի աստիճան,

- 2006 թ.՝ ընդունվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ասպիրանտուրա,
- 2008 թ.՝ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Գործարարության ծավալման տնտեսական խթանները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով և Ը.00.02 «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան,
- 2009 թ.՝ ավարտել է Ֆլետչերի իրավաբանական և դիվանագիտական դպրոցը (ԱՄՆ, ք. Բոստոն),
- 2013 թ.՝ դարձել է ՀՀ գիտության պետական կոմիտեի կողմից «Երիտասարդ գիտաշխատողների ծրագրի» մրցույթի հաղթող՝ «Պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով,
- 2015 թ.՝ պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Վճարային հաշվեկշռի պետական կարգավորման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով և Ը.00.02 -«Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» ու Ը.00.03 - «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտություններով ստացել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:

**Վերապատրաստումներ, դասընթացներ, այլ գործունեություն**

- 2007՝ New Economic school of Georgia and Foundation for Economic Education (Georgia – Tbilisi) Developed countries and the principals of market economy («Ազատ շուկա, ազատ մարդ ու ազատ միտք» (Վրաստան, 2007)),
- 2007՝ Cato Institute (Ukraine – Alushta) Free economy, free mind and free person («Համաշխարհային կապիտալիզմ և անձնական ազատություն» (Ուկրաինա, ք. Ալուշտա, 2007)),
- 2009՝ Foundation for Economic Education (USA – New York) Austrian economic («Ավստրիական տնտեսագիտական դպրոցը և դրա դերը ժամանակակից տնտեսագիտության մեջ» (ԱՄՆ, Նյու Յորք, 2009)),
- 2009՝ Japan International Cooperation Agency (Japan – Tokyo, Nagoya, Sapporo) Business management for Caucasus countries («Ձեռնարկությունների կառավարումը Կովկասյան երկրներում» (Ճապոնիա, ք. Սապպորո, 2009)):

Դավիթ Հարությունյանը մասնակցել է նաև տարբեր երկրներում կազմակերպված դասընթացների (Իտալիա, Լեհաստան, Հունգարիա, Ռուսաստան, Չեխիա, Ղազախստան, Գերմանիա, Շվեյցարիա) տարբեր թեմաներով, ներառյալ՝ տրանսֆերային գնագոյացում, միջազգային հարկեր, ուղղակի և անուղղակի հարկում, գործարար միջավայր և այլն:

ՀՀ հաշվապահների ու աուդիտորների ասոցիացիայի լիիրավ անդամ է, ինչպես նաև ասոցիացիայի խորհրդի անդամ է, ներքին աուդիտորների ասոցիացիայի տնօրենների խորհրդի անդամ, Գործարարների միության տնտեսական հանձնաժողովի անդամ:

Ունի աուդիտորի և հաշվապահի որակավորման լիցենզիաներ:

ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ (մինչև 35 տարեկան) հավելվածարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթում հաղթող է ճանաչվել, որը բացառիկ երևույթ է տնտեսագիտության ինստիտուտի վերջին 15 տարվա պատմության մեջ:

Դավիթ և Տիգրան Հարությունյանները պայմանագրային հիմունքներով հայ-ցորդների և ասպիրանտների գիտական ղեկավար են հանդիսանում:

**Աշխատանքային գործունեություն**

2004-2005 թթ.՝ ASK ՍՊԸ, հաշվապահ,

2005-2007 թթ.՝ KPMG Armenia, հարկային և իրավաբանական ծառայությունների խորհրդատու,

2007-2011 թթ.՝ PricewaterhouseCoopers (PWC) Armenia, հարկային և իրավաբանական ծառայությունների ավագ խորհրդատու,

2011-2013 թթ.՝ PricewaterhouseCoopers (PWC) Armenia, հարկային և իրավաբանական ծառայությունների մենեջեր (հարկային բաժնի ղեկավար),

2013-2017 թթ.՝ Grand Thorton Armenia հարկային և հաշվապահական ծառայությունների գծով գործընկեր,

2017 թ.՝ GM Holding, ֆինանսական տնօրեն:

**Դասավանդման փորձ**

2008-2011 թթ.՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (մենեջմենթ, ռիսկ-մենեջմենթ, ֆինանսներ),

2011-2013 թթ.՝ Հայաստանի Ֆրանսիական համալսարան (միջազգային հարկեր),

2011 թ.՝ Հայաստանի Ամերիկայն համալսարան (Taxation and Business Decision):

**Հրապարակումներ**

Հեղինակ է 5 մենագրության և 55 գիտական հոդվածների (այդ թվում՝ 10-ը միջազգային):

**Լեզուների իմացություն**

Հայերեն, ռուսերեն, անգլերեն

Ընտանեկան կարգավիճակը՝ ամուսնացած է, ունի երկու դուստր:



**ՀԱՅԿ ԱՇՈՏԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ**  
Տնտեսագիտության թեկնածու

Ծնվել է 1981 թ. ապրիլի 3-ին Երևանում:

Կոնտակտային տվյալներ  
Հեռ.՝ 055 31 36-23  
hayk@markosyan.am

**Կրթություն**

- 1996 թ.՝ ավարտել է Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի միջին դպրոցը,
- 1998 թ.՝ ավարտել է Երևանի թիվ 1 գիմնազիան,
- 2002 թ.՝ գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2004 թ.՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրայի «Կառավարում և տնտեսական քաղաքականություն բաժինը»,
- 2004-2007 թթ.՝ սովորել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտուրայի առկա համակարգում,
- 2007 թ.՝ պաշտպանել է թեկնածուականատենախոսություն «Նորարարական քաղաքականության իրականացման և գնահատման մեխանիզմները (ՀՀ դեղագործական արդյունաբերությունում)» թեմայով:

**Աշխատանքային գործունեություն**

- 2002-2003 թթ.՝ «Տրանս Ալյանս» ՍՊԸ, բեռնափոխադրումների մենեջեր, էքսպեդիտոր,
- 2003-2004 թթ.՝ Երևանի քաղաքապետարան, փոխքաղաքապետի օգնական,
- 2004 թ.՝ «Հայանտառ» ՊՈԱԿ, գլխավոր տնօրենի խորհրդական,
- 2004-2009 թթ.՝ ԴԱՐԱՆ Ինֆորմացիոն համակարգեր ՍՊԸ, հիմնադիր-տնօրեն,
- 2007-2019 թթ.՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, ասպիրանտուրայի բաժնի վարիչ, ավագ գիտաշխատող, փոխտնօրեն,
- 2019-2020 թթ.՝ ԻՄԵՔՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ, նախագծերի ղեկավար,
- 2020 թ.՝ Գրեական Էյ Էմ ՍՊԸ, հիմնադիր-տնօրեն:

**Դասավանդման փորձ**

- 2011-2013 թթ.՝ դասախոսել է ՀՀ ԳԱԱ ՄԳԿԿ-ում (նորարարությունների և ներդրումների կառավարում, ռազմավարական կառավարում):

**Գիտական գործունեություն**

Հեղինակել է 2 գիրք և շուրջ 3 տասնյակ գիտական հոդված:

**Պարգևատրումներ**

ՀՀ ԳԱԱ համակարգում ունեցած անբասիր աշխատանքի համար պարգևատրվել է «ՀՀ ԳԱԱ Գովեստագրով»:

## Այլ մասնագիտական գործունեություն

- ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում գործած ՀՀ ԲՈՀ-ի գիտական աստիճաններ շնորհող 008 մասնագիտական խորհրդի քարտուղար (2010 թ.),
- ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհրդի անդամ,
- «Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գիտական հոդվածների ժողովածուի խմբագրական խորհրդի անդամ,
- ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ,
- ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի արհեստակցական միության նախագահ:

## Անձնական տվյալներ

Ազգություն՝ հայ:

Ամուսնական կարգավիճակ՝ ամուսնացած է, ունի մեկ որդի և մեկ դուստր:



**ՔՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԻԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**  
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ծնվել է 1982 թ. Երևանում:

Կոնտակտային տվյալներ

Հեռ.՝ +374 10 548671

Էլ. փոստ՝ [christinbaghda@gmail.com](mailto:christinbaghda@gmail.com)

Google Scholar: [https://scholar.google.com/citations?hl=en&view\\_op=list\\_works&gmla=AJsNF70pv0bO\\_BR9i64RoSIb3uqmc1ZSdM75hgBaig5tyuJ5d6tfXeyiYuKWk\\_Ct9kYE\\_ZxftTOCExNfVGrVkJkrvJ9Dd5iH7EEVQbGK6uxs7uWz8XQRRA1DAeRHrhn4gQhn9Mrt&user=AojNEZIAAAA](https://scholar.google.com/citations?hl=en&view_op=list_works&gmla=AJsNF70pv0bO_BR9i64RoSIb3uqmc1ZSdM75hgBaig5tyuJ5d6tfXeyiYuKWk_Ct9kYE_ZxftTOCExNfVGrVkJkrvJ9Dd5iH7EEVQbGK6uxs7uWz8XQRRA1DAeRHrhn4gQhn9Mrt&user=AojNEZIAAAA)

## Կրթություն

- 1999-2004 թթ.՝ սովորել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի «Ընդհանուր տնտեսագիտության» ֆակուլտետում, ավարտել է գերազանցության դիպլոմով.
- 2004-2006 թթ.՝ սովորել է ՀՀ ՖԷՆ տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտի ասպիրանտուրայում, որն ավարտել է 2008 թ. ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում, պաշտպանել է «Ներդրումային գործունեության և հարկային քաղաքականության փոխազդեցությունը ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը՝ ներկայացված Ը.00.02 – «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» և Ը.00.03 – «Ֆինանսներ,

դրամաշրջանա- ռություն և վարկ» մասնագիտություններով, և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, 2008 թվականից մինչ օրս՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհրդի անդամ:

Աշխատանքային գործունեություն

2004-2006 թթ.՝ «Դերժավա-Ս» ՓԲԸ, հաշվապահ-տնտեսագետ,

2006-2007 թթ.՝ «Սլավ-Ֆուդ Ինտերնեյշնլ» ՓԲԸ, հաշվապահ – տնտեսագետ,

2007-2008 թթ.՝ «Գլաձոր» համալսարան, դասախոս,

2009-2015 թթ.՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող,

2009 թվականից մինչ օրս՝ ԵՊՀ, դասախոս,

2009-2015 թթ.՝ Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի «SS գործարար կառավարում» ամբիոնում որպես դասախոս,

2010 թվականից մինչ օրս՝ Ֆրանսիական համալսարանի «Ֆինանսներ և վերահսկողություն» ֆակուլտետում որպես դասախոս,

2011 թվականից մինչ օրս՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտքարտուղար,

2015 թ. հունիսից մինչ օրս՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող,

2016 թվականից մինչ օրս՝ ՀՊՏՀ-ի «Կոմերցիայի և բիզնեսի կազմակերպման» ամբիոնում որպես դասախոս:

Կարդացվող դասընթացներ

- Միջազգային ֆինանսների հիմունքներ
- Ներդրումային քաղաքականություն
- SS տնտեսագիտություն
- Բիզնես միջավայրի վերլուծություն
- Միջազգային բիզնեսի հիմունքներ
- Միջազգային հարկեր
- Հարկային քաղաքականություն և հարկային հաշվառում

Նախընտրած գիտական ուղղությունները

Հարկաբյուջետային քաղաքականություն

Ներդրումային միջավայր և ներդրումային նախագծեր

Հրատարակումներ

Հեղինակ է 4 մենագրության և 47 գիտական հոդվածի: Քրիստինե Բաղդասարյանի հրատարակումների ամբողջական ցանկին ծանոթանալու համար սեղմել այստեղ:

Լեզուների իմացություն

Ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն

Անձնական տվյալներ

Ազգություն՝ հայ:

Ընտանեկան կարգավիճակ՝ ամուսնացած չէ:



**ԼԻԼԻԹ ՆՈՐԱՅՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ**  
Տնտեսագիտության թեկնածու

Օնվել է 1985 թ. հոկտեմբերի 26-ին Երևանում:

Կոնտակտային տվյալներ

Հեռ.՝ 010-581971 (105),

Էլ. փոստ՝ [sarg.lilit@yahoo.com](mailto:sarg.lilit@yahoo.com)

Google scholar: <https://scholar.google.com/citations?hl=en&user=mcyTCbwAAAAJ>

Orcid ID: <https://orcid.org/0000-0002-5562-633X>

**Կրթություն**

2002 թ.՝ գերազանցությամբ ավարտել է Երևանի թիվ 153 ավագ դպրոց-վարժարանը,

2006 թ.՝ գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2008 թ. նույն ֆակուլտետի մագիստրատուրայի «Միջազգային տնտեսական հարաբերությունների բաժինը»,

2012 թ.՝ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Արտահանման դերը տնտեսական աճի ապահովման գործում (ՀՀ օրինակով)» թեմայով:

**Վերապատրաստումներ և դասընթացներ**

- Միջազգային առևտուր. տեսություն և պրակտիկա (տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Չարլզ Ռ. Չիտլ, ԱՄՆ, Քենթուկի նահանգի Բոուլինգ Գրին համալսարան),
- Միջազգային առևտուր. տնտեսական ազատականացում, զրոբալիզացիա և տարածաշրջանային ու բազմակողմանի մոտեցումներ (տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Չարլզ Ռ. Չիտլ, ԱՄՆ, Քենթուկի նահանգի Բոուլինգ Գրին համալսարան),
- Միջազգային տնտեսագիտություն. առևտրի իրավունք և առևտրային դիվանագիտություն (տ. գ. թ. Արման Գաբրիելյան, ԵՊՀ),
- Վիճակագրական և էկոնոմետրիկ վերլուծությունների հիմունքները՝ SPSS փաթեթի կիրառմամբ (դասախոս՝ Ռ. Գևորգյան):

**Աշխատանքային գործունեություն**

2006-2007 թթ.՝ «Էքսպոնեդիա» ՍՊԸ, ցուցահանդեսների նախագծման և կազմակերպման մենեջեր,

2007-2008 թթ.՝ «Սպորտ պլանեթ» հայկական մարզական ամսագրում որպես մարքեթինգի բաժնի մենեջեր,

2010 թվականից առ այսօր՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի որպես գիտաշխատող, Ներդրումների և արտահանման խթանման հիմնահարցերի բաժնի վարիչ, «Ծառայությունների ոլորտի զարգացում և սոցիալ-ժողովրդագրական հիմնա-

խնդիրներ» գիտական ուղղության ղեկավար, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» հոդվածների ժողովածուի խմբագրական խորհրդի անդամ, փոխտնօրեն,

2019 թ. առ այսօր՝ ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի թիվ 015 մասնագիտական խորհրդի անդամ:

Դասավանդման փորձ

2013-2017 թթ.՝ դասախոսել է ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում (ՄՏՀ ամբիոնի դասախոս):

Նախընտրած գիտական ուղղությունները

Արտաքին առևտուր, ՕՈՒՆ, գործարար միջավայր, մրցունակություն, ծառայությունների ոլորտի զարգացում

Հրապարակումներ

Հեղինակ է 2 գրքի և 50-ից ավել գիտական հոդվածների: Լիլիթ Սարգսյանի հրապարակումների ամբողջական ցանկին ծանոթանալու համար [սեղմել այստեղ](#):

Լեզուների իմացություն

Ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն

Անձնական տվյալներ

Ազգություն՝ հայ:

Ամուսնական կարգավիճակ՝ ամուսնացած չէ:

**ՍՎԵՏԼԱՆԱ ԱՐԿԱԴԻԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ**

Տնտեսագիտության թեկնածու



Ծնվել է 1982 թ. Երևանում:

Կոնտակտային տվյալներ

Հեռ.՝ +37496710999

Էլ.փոստ՝ [svetnadallakyan82@gmail.com](mailto:svetnadallakyan82@gmail.com)

Google scholar: <https://scholar.google.com/citations?user=by2eoD8AAAAI&hl=ru>

Researchgate: [https://www.researchgate.net/profile/Svetlana\\_Dallakyan](https://www.researchgate.net/profile/Svetlana_Dallakyan)

ORCID id: 0000-0002-1391-8887

Կայք <https://sites.google.com/aspu.am/svetlanadallakyan/home>

Կրթություն

1988–1999 թթ.՝ Էջմիածնի Ներսիսյան վարժարան (գերազանցությամբ),

1999-2004 թթ.՝ Երևանի պետական տնտեսագիտական համալսարան, կառավարման ֆակուլտետ, որակավորումը՝ մենեջեր (գերագանցությամբ),  
2009-2013 թթ.՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, կառավարման ֆակուլտետի ասպիրանտ (հեռակա):

**Վերապատրաստումներ և դասընթացներ**

- Ժողովրդագրության վիճակագրություն (CRRC), 02-26.2013 թ.,
- Քանակական տվյալների վերլուծություն SPSS ծրագրային փաթեթի կիրառմամբ (CRRC), 28.02-1.03.2014 թ.,
- Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսումնառության գործընթացի արդյունավետության բարձրացում (ՀՀ ԿԳՆ), 20.04-22.04.2015 թ.,
- Լրացուցիչ և շարունակական կրթությունը որպես կարողությունների հզորացման նախապայման (ՀՀ ԿԳՆ), 25.03-27.03.2016 թ.,
- Լրացուցիչ և շարունակական կրթությունը որպես կարողությունների հզորացման նախապայման (ՀՀ ԿԳՆ), 25.03-27.03.2016 թ.,
- Հաշմանդամություն ունեցող մարդկանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով (LIEF) և մասնագիտական կրթություն և զբաղվածություն հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար (SIVÉE), 2016 թ.:

**Աշխատանքային գործունեություն**

2007-2016 թթ.՝ Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ, դասախոս, «Բանկային գործ» ամբիոնի վարիչ,  
2016 թվականից մինչ օրս՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, գիտաշխատող,  
2016 թվականից մինչ օրս՝ Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, դասախոս (համատեղությամբ),  
2018 թվականից՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի «Բարձր տեխնոլոգիական տնտեսության ձևավորման և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» բազային թեմայի ղեկավար:

**Գիտական հետաքրքրության շրջանակները**

- Բարձր տեխնոլոգիական տնտեսություն և նորարարությունը ՀՀ-ում և աշխարհում
- Սոցիալ-ժողովրդագրական իրավիճակը և աշխատանքային միզրացիան ՀՀ-ում
- ՓՄՁ Հայաստանի Հանրապետությունում
- Կառավարումն արվեստում  
Հետազոտական թեմաներ՝ «Նորարարական գործունեությունը և բարձր տեխնոլոգիական տնտեսությունը», «ՀՀ միզրացիոն քաղաքականությունը և կարգավորման հեռանկարները», «ՀՀ սոցիալ-ժողովրդագրական վիճակի բարելավմանն ուղղված նորովի մոտեցումների մշակում և ներդրում», «ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության խթանման համալիր միջոցառումները ՀՀ-ում»:

## Հրապարակումներ

Հեղինակ է երեք տասնյակ գիտական հոդվածների, այդ թվում՝ միջազգային գրախոսվող գիտական հանդեսներում, երկու մենագրության և մեկ կոլեկտիվ մենագրության: Սվետլանա Դավաթյանի հրապարակումների ամբողջական ցանկին ծանոթանալու համար [սեղմել այստեղ](#):

## Լեզուների իմացություն

Հայերեն, ռուսերեն, անգլերեն

## Անձնական տվյալներ

Ազգություն՝ հայ:

Ամուսնական կարգավիճակ՝ ամուսնացած է, ունի մեկ որդի և մեկ դուստր:



ՄԵՐԻ ԳԱԳԻԿԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ  
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ծնվել է 1982 թ. Կապան քաղաքում:

Կոնտակտային տվյալներ

Հեռ.՝ +374 91471930

Էլ.փոստ՝ [meri.g.manucharyan@gmail.com](mailto:meri.g.manucharyan@gmail.com)

Google scholar: [https://scholar.google.com/citations?view\\_op=list\\_works&hl=ru&authuser=1&user=IdelCuoAAAAJ](https://scholar.google.com/citations?view_op=list_works&hl=ru&authuser=1&user=IdelCuoAAAAJ)

## Կրթություն

- 1999 թ.՝ ոսկե մեդալով ավարտել է Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցը,  
1999-2003 թթ.՝ Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի տնտեսագիտական ֆակուլտետ,  
2003-2005 թթ.՝ ՀԳԱ մագիստրատուրայի տնտեսագիտական ֆակուլտետ,  
2014 թ.՝ ՀՊՏՀ Տնտեսագիտության-014 խորհրդում պաշտպանել է «Գույքային ապահովագրության վիճակը և զարգացման ուղիները Հայաստանի Հանրապետության ագրարային համակարգում» թեմայով թեկնածուական ատենախոսություն և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

## Վերապատրաստումներ և դասընթացներ

- 22.10.2019 թ. – 29.11.2019 թ. «Աշխատակազմի կառավարման հարցերով զբաղվող մասնագետների վերապատրաստում», ՀՊՏՀ, Երևան, Հայաստան,  
17-19.10.2019 թ. Գիտության ոլորտի կանանց առաջնորդության դպրոց, UNDP, UKaid, British Embassy Yerevan, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Ծաղկաձոր, Հայաստան,  
16-22.05.2019 թ. Իտալիայի Տուշայի համալսարանում 8 ժամ անգլերեն լեզվով դասավանդում «Աշխատանքի էկոնոմիկա» դասընթացին վերաբերվող թեմաներով, Վիտերբո, Իտալիա,

- 17 May - 7 June, 2019` The FAO-Unitar e-Learning Course on “Agriculture in international trade agreements”, FAO, UNITAR,
- 29.04.2019 թ. – 03.05. 2019 թ.՝ «Ուսանողակենտրոն կրթության ուսուցում և զարգացում» Topas Էրազմուս + ՀԳ2 ծրագրի շրջանակներում, ՀԱԱՀ, Երևան, Հայաստան,
- 23-25.04.2019 թ.՝ GIST Կովկասյան տարածաշրջանի ստարտ-ափ թրեյնինգ, ԱՄՆ Պետդեպարտամենտ, Թբիլիսի, Վրաստան,
- 25-27.02.2019 թ.՝ «Հայաստանում գյուղատնտեսական ապահովագրության ոլորտի վնասի գնահատման փորձագետների ուսուցում», KFW, MF STRATEGY, Երևան, Հայաստան,
- 24-27.10.2018 թ.՝ մասնագիտական որակավորման բարձրացում, «Անձնակազմի աշխատանքի վարձատրություն և նորմավորում», Համառուսական գիտահետազոտական կենտրոն, «Ժամանակակից կրթական տեխնոլոգիաներ», Լիպեցկ, ՌԴ,
- 29.11.2017 թ.՝ «Լեհաստանի քաղաքական և տնտեսական ռազմավարությունը և աշխարհաքաղաքական իրավիճակը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում», Erasmus + KA1 ICM ծրագրի շրջանակներում, Երևան, Հայաստան,
- Ապրիլ-հունիս 2016 թ.՝ մասնագիտական որակավորման բարձրացում, ՀՊՏՀ, Աշխատանքի տնտեսագիտության ամբիոն, Երևան, Հայաստան:

**Աշխատանքային գործունեություն**

- 2003-2005 թթ.՝ տնտեսագետ-հաշվետար, «Ճարպիկ» շինարարական ՍՊԸ,  
 2005-2006 թթ.՝ տնտեսագետ, «Նաիրի ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ,  
 2011 թ. սեպտեմբերի 1-ից մինչև օրս՝ ասիստենտ, ապա՝ դասախոս, Ագրարային էկոնոմիկայի ամբիոն, Հայաստանի ազգային ագրարային համալսարան (ՀԱԱՀ),  
 2015 թ. սեպտեմբերի 1-ից - 2019 թ. հուլիս՝ դասախոս, Ագրարային քաղաքականության և խորհրդատվության ամբիոն, Հայաստանի ազգային ագրարային համալսարան (ՀԱԱՀ, համատեղությամբ),  
 2015 թ. նոյեմբերից մինչ օրս՝ կրտսեր գիտաշխատող, գիտաշխատող, ավագ գիտաշխատող, թեմայի ղեկավար, Տնտեսության իրական հատվածի բարեփոխումների բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ,  
 2018 թ. մարտից մինչ ղեկտեմբեր՝ «Տեսական ուղղվածությունից անցում դեպի գործնական կրթության ագրարային ոլորտում (TOPAS) Էրազմուս + ՀԳ2» ծրագրի կատարող, ՀԱԱՀ,  
 2019 թ. մինչև օրս՝ ասիստենտ, Աշխատանքի տնտեսագիտության ամբիոն, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ, համատեղությամբ):

**Դասավանդվող առարկաները**

- Աշխատանքի էկոնոմիկա
- Ագրոարդյունաբերական համալիրի էկոնոմիկա

Զրային տնտեսության էկոնոմիկա  
Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն  
Ապահովագրական գործ  
Գյուղատնտեսության ապահովագրություն  
Սոցիալական ապահովություն և ապահովագրություն

**Հետազոտության ոլորտները**

Աշխատանքի էկոնոմիկա

Ագրարային էկոնոմիկա

Ապահովագրություն (Գյուղատնտեսության ապահովագրություն և այլն)

Նորարական զարգացման հիմնախնդիրները ՀՀ գյուղատնտեսության ոլորտում  
Զրային տնտեսության էկոնոմիկա

Վարկավորման դերը ՀՀ ագրարային ոլորտում

**Հրապարակումներ**

Հեղինակ է շուրջ 59 գիտական հրապարակումների, որից 1-ը մենագրություն, 3-ը մեթոդական ցուցումներ, իսկ 55-ը գիտական հոդվածներ, (այդ թվում 30-ը միջազգային գրախոսվող ամսագրերում): Մերի Մանուչարյանի հրապարակումների ամբողջական ցանկին ծանոթանալու համար սեղմել այստեղ:

**Լեզուների իմացություն**

Հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն

**Անձնական տվյալներ**

Ազգություն՝ հայ:

Ամուսնական կարգավիճակը՝ ամուսնացած է, ունի մեկ որդի:



**ԱԼՎԱՐԴ ԹԵՎՈՍԻ ԶԱՏԻԿՅԱՆ**

Ծնվել է 1948թ.-ի ապրիլի 25-ին Արթիկի շրջանի Սարատակ գյուղում, ծառայողի ընտանիքում:

**Կրթություն**

1966 թ. ավարտել է Երևանի №77 ռուսական միջնակարգ դպրոցը

1971 թ. Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսներ և վարկ» բաժինը

1971-1974 թթ. սովորել է ԵՊՀ-ի տնտեսագիտության ֆակուլտետի քաղաքատնտեսության ամբիոնի ասպիրանտուրայում:

**Աշխատանքային փորձը**

1974-1976 թթ. ՀՍՍՌ պետականի էկոնոմիկայի պլանավորման գիտահետազոտական ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող

- 1976-1991 թթ.՝ ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտում կրտսեր գիտաշխատող, գիտաշխատող և ավագ գիտաշխատող
- 1988 թ.՝ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան
- 1991-1992 թթ.՝ ՀՀ-ում Միջազգային տնտեսագիտական ընկերակցության նախագահի տեղակալ
- 1992-2011 թթ.՝ ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտում որպես գիտական քարտուղար, ավագ գիտաշխատող
- 2011-2018 թթ.՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի փոխտնօրեն գիտական գծով: Ա. Ջատիկյանը նաև նշյալ ինստիտուտի գիտական խորհրդի անդամ է:
- 2018-2020 թթ.՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Ա. Ջատիկյանը հեղինակ է շուրջ 90 գիտական հոդվածների և չորս մենագրության: Գիտական գործունեության ընթացքում ուսումնասիրվել են բնակչության կենցաղային սպասարկման ոլորտի սոցիալ-տնտեսական էությունը, սահմանվել է նրա ազդեցությունը արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման և կատարելագործման վրա, ցույց է տրվել ճյուղի ազդեցությունը սոցիալ-տնտեսական խնդիրների իրացման, բնակչության կենսամակարդակի հետագա աճի և զարգացման վրա:

Ա. Ջատիկյանի կողմից ուսումնասիրվել և մշակվել են տնտեսության կարևորագույն հիմնախնդիրներն անցումային ժամանակաշրջանում և ներկայացվել առաջարկություններ ձեռնարկատիրության, փոքր և միջին բիզնեսի զարգացման հարցերում: Մանրակրկիտ ուսումնասիրության են ենթարկվել անցումային տնտեսության նորարարական համակարգի առանձնահատկությունները, դրա կայացման յուրահատկությունները ժամանակակից փոքր ձեռնարկության պայմաններում: Ներկայացվել են հատուկ առաջարկություններ արդյունավետ արտադրական ենթակառուցվածքներ ստեղծելու ուղղությամբ, որոնք կխթանեն փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը:

Ուսումնասիրվել են ՓՄՁ-ների գործունեության դաշտը և դրա բարելավման անհրաժեշտությունն ու հիմնախնդիրները ՀՀ-ում, համընդգրկուն կերպով վերլուծության են ենթարկվել ՓՄՁ-ների գործունեության հիմնական ֆինանսատնտեսական ցուցանիշները, ինչպես նաև վերլուծվել են պետության կողմից ՓՄՁ-ների գործունեության կարգավորման մեխանիզմները ճգնաժամային և հետճգնաժամային ժամանակաշրջանում: Ուսումնասիրությունների արդյունքում 2014թ. հրատարակել է «ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության կարգավորման ուղիները ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում» աշխատությունը:

ՀՀ-ում ժողովրդագրական ներկայիս իրավիճակի՝ բնակչության ծնելիության և մահացության դեպքերի, գրանցվող ամուսնությունների և ամուսնալուծությունների քանակի, բնակչության թվաքանակի, միգրացիոն, մասնավորապես, աշխատանքային միգրացիոն հոսքերի հիմնական ցուցանիշների հա-

մակոդմանի ուսումնասիրության և վերլուծության միջոցով հետազոտվել է ժողովրդագրական իրավիճակի ազդեցությունը սոցիալ-տնտեսական գործոնների վրա, մասնավորապես՝ ներքին պահանջարկի կրճատման, պետական բյուջեի ծախսերի ավելացման, ինչպես նաև ՀՀ-ում աշխատաշուկայի փոփոխության վրա: Այդ հետազոտությունների հիման վրա 2017թ. հրատարակվել է «ՀՀ սոցիալ տնտեսական զարգացման ժողովրդագրական գործոնները» գիրքը:

ԱՄՆ-ում, Սինգապուրում, Եգիպտոսում, Չինաստանում, Ճապոնիայում, Իտալիայում, Իսպանիայում, Ֆրանսիայում, ինչպես նաև Ռուսաստանում, Վրաստանում, Բելառուսում, Ղազախստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և վիճակի վերլուծության ու այդ երկրների փորձի ուսումնասիրության հիման վրա մշակվել են առաջարկություններ ՓՄՁ սուբյեկտների համար սեփականատիրության տարբեր ձևերի և Հայաստանում օտարերկրյա ներդրումների ներգրավման համար բարենպաստ պայմանների ստեղծման վերաբերյալ: Վերլուծվել են ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության ինովացիոն զարգացման առանձնահատկությունները, տվյալ ոլորտի դերը երկրի տնտեսության մեջ, տնտեսական աճի դանդաղման հիմնական գործոնները: Ներկայացվել է ՓՄՁ ոլորտի արդի վիճակի և արագ տնտեսական աճի ապահովման գնահատումը: Դիտարկվել են վենչուրային կապիտալի առանձնահատկությունները, ուսումնասիրվել է նրա յուրահատկությունը որպես ինովացիոն գործունեության ֆինանսավորման աղբյուր:

Այդ հետազոտությունների հիման վրա 2019թ. հրատարակվել է «ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության ակտուալ հիմնախնդիրները և զագացման հեռանկարները» գիրքը:



## ԷԲԱ ԱՐԿԱԴԻԻ ԲԱԲԱՅԱՆ

Աշխարհագրական գիտությունների թեկնածու

Ծնվել է 1939 թ. Ստեփանակերտում, ծառայողի ընտանիքում:

Կոնտակտային տվյալներ  
Հեռ.՝ 093 44 10 64, 58 94 81

### Կրթություն

1947-1957 թթ.՝ սովորել է Շուշիի թիվ 3 դպրոցում, որն ավարտել է գերազանցությամբ և ստացել ոսկե մեդալ:

1957-1962 թթ.՝ սովորել է Երևանի պետական համալսարանի աշխարհագրության ֆակուլտետում: Ավարտելուց հետո աշխատանքի է անցել Ձորաղբյուրի միջնակարգ դպրոցում:

## Աշխատանքային գործունեություն

1963-1967 թթ.՝ աշխատել է ՀՍՍՀ ժողտնտխորհի «Հրուշակեղենի և հացաբուլկեղենի» գլխավոր վարչության հացաթխման կենտրոնական լաբորատորիայում որպես ինժեներ-տնտեսագետ:

1967-2007 թթ. աշխատել է ՀՍՍՀ պետականի Տնտեսագիտության և պլանավորման գիտահետազոտական ինստիտուտում, որը 1991 թ. վերանվանվել է ՀՀ ՖԷՆ ՏՀԻ, որպես կրտսեր գիտաշխատող, կրտսեր գիտաշխատող-տնտեսագետ, մրցութային կարգով ընտրվել է ավագ գիտաշխատող, այնուհետև՝ ժողովրդական լայն սպառման առարկաների արտադրության տնտեսագիտության բաժնի վարիչ, ՀՀ ՖԷՆ ՏՀԻ գիտական քարտուղար:

1975 թ.՝ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1984 թ.՝ ստացել է ավագ գիտաշխատողի կոչում՝ «Ժողովրդական տնտեսության կառավարման կազմակերպում և պլանավորում» մասնագիտությամբ:

2004 թվականից՝ ղեկավարել է պետական բյուջեից ֆինանսավորվող «Բնօգտագործման և բնապահպանական տնտեսագիտական հիմնախնդիրները ՀՀ-ում մարգային կտրվածքով» թեման, իսկ ներկայումս՝ «Բնօգտագործման ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և բնապահպանական հիմնախնդիրները հյուսիսային մարզերում (Շիրակ, Լոռի, Տավուշ)» գիտական թեմայի ղեկավարն է:

2006 թվականից՝ գիտական աշխատանքին զուգընթաց, համատեղության կարգով զբաղվել է նաև գիտամանկավաժական աշխատանքով Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտում, Երևանի պետական ճարտարագիտական ինստիտուտում, Մոսկվայի ձեռներեցության միջազգային ակադեմիայի մասնաճյուղում, իսկ 2003-2004, 2004-2005, 2005-2006 ուս. Տարիներին՝ ՀՊՏՀ-ի «Բնօգտագործման տնտեսագիտություն» մասնագիտության գծով պետական քննական հանձնաժողովի նախագահ:

Եղել է Բուլղարիայում, Հունգարիայում, Լեհաստանում, Գերմանիայում, Չեխոսլովակիայում, Հնդկաստանում, Հարավսլավիայում, Վիետնամում, Չինաստանում, Բարայելում:

## Հրատարակումներ

Հեղինակ է ավելի քան 131 գիտական հոդվածների և 4 մենագրության:

## Կոչումներ և պարգևներ

1. Է. Բաբայանին ՀՀ ԲՈՂՀ-ի կողմից շնորհվել է պրոֆեսորի կոչում:
2. 1984 թ.՝ ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության պատվոգիր՝ հանրապետության ժողովրդական տնտեսության պլանավորման բնագավառում կատարած բազմամյա աշխատանքի համար:
3. Պատվոգիր ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝ բարձրագույն գիտական որակավորման բնագավառում 10-ամյա բարեխիղճ աշխատանքի համար:

տանքի համար:

4. Վկայագիր (12.04.2004 թ.) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի և CFP ծրագրի կողմից կազմակերպված Երիտասարդ տնտեսագետների 2-րդ հանրապետական գիտաժողովին (7-11 ապրիլի 2004 թ.) ակտիվ մասնակցության համար:
5. Վկայագիր «Անանիա Շիրակացի» ՄՀՀ-ի կողմից տրված 2010 թ. ապրիլի 21-27-ին կազմակերպված գիտաժողովին ակտիվ մասնակցության համար:
6. Ծնորհակալագիր տրված 05.10.2011 թ. ԳԵՀԿ («Գարդմանա երկիր» ՀԿ) և ԺԱԿ-ի (Ժողովրդավարություն և աշխատանք կուսակցություն) կողմից աճող սերնդի կրթության և դաստիարակության գործում ներդրված ավանդի և մանկավարժական բարեխիղճ աշխատանքի համար:
7. Վաստակագիր տրված 2013 թ. ՀՀ ԳԱԱ կողմից ՀՀ ԳԱԱ համակարգում ունեցած խոշոր վաստակի համար:

Անձնական տվյալներ

Ազգությունը հայ:

Ընտանեկան կարգավիճակը՝ ամուսնացած է, ունի

- մեկ որդի,
- մեկ դուստր,
- երեք տղա թոռ:



ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ  
Գիտահրատարակչական բաժնի ղեկավար

Ծնվել է 1959 թ. Ախուրյանի շրջանի Կառնուտ գյուղում:

Կոնտակտային տվյալներ

Հեռ.՝ +37410 538005 (104)

Էլ. փոստ՝ economics@economics.sci.am

Կրթություն

1977 թ.՝ ավարտել Կառնուտ գյուղի միջնակարգ դպրոցը,

1981 թ.՝ ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը:

Աշխատանքային գործունեություն

1981-1987 թթ.՝ «Աստրո» գիտաարտադրական միավորում, ինժեներ տնտեսագետ,

1987-1990 թթ.՝ «Աստրո» գիտաարտադրական միավորում, ավագ տնտեսագետ,

1990-1990 թթ.՝ Երևանի Խորհրդային շրջանի սոցապ բաժին, տեսուչ,

1990-1994 թթ.՝ Խորհրդային շրջանի ֆինանսական բաժին, 1-ին կարգի տնտեսագետ,

1996-1996 թթ.՝ Խորհրդային շրջանի ֆինանսական բաժին, 1-ին կարգի մասնագետ,

1996-1997 թթ.՝ Խորհրդային շրջանի զանապետական բաժանմունք, 1-ին կարգի մասնագետ,

- 1997-1999 թթ.՝ Խորհրդային շրջանի գանձապետական բաժանմունք, առաջատար տնտեսագետ,
- 1999-2003 թթ.՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, 2-րդ դասի առաջատար ծառայող,
- 2003-2012 թթ.՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, գլխավոր մասնագետ,
- 2004-2012 թ.՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, 1-ին դասի առաջատար ծառայող,
- 2012 թ. – մինչ օրս՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, գիտահրատարակչական բաժնի վարիչ: Բոլոր հոդվածագիրներից (թե՛ ներսի, թե՛ դրսի) հավաքագրում է գիտական հոդվածները և փոխանցում խմբագրման, այնուհետև դրանք հետ է վերադարձնում հոդվածագիրներին՝ արված դիտողությունների հաշվառմամբ հոդվածը լրամշակելու և վերադարձնելու համար: Տեսքի բերված հոդվածները փոխանցում է իր բաժնի օպերատորին՝ դրանք հրատարակման պատրաստվող ժողովածուում ներառելու համար: Այնուհետև կազմակերպում է ժողովածուների հրատարակումը տպարանում, դրանց տեղափոխումը ինստիտուտ և բաշխումը հոդվածագիրների ու շահագրգիռ կազմակերպությունների միջև (տե՛ս հավելված 17):

**Անձնական տվյալներ**

Ազգությունը՝ հայ:

Ընտանեկան կարգավիճակ՝ ամուսնացած է, ունի

- երկու որդի,
- մեկ դուստր,
- չորս թոռ և երկու թոռնուհի:



**ԵՎԳԵՆՅԱ ԱՐՏԱՇԵՍԻ ՀԱԿՈԲՅԱՆ**  
Տնտեսագիտության թեկնածու

Ծնվել է 1988 թ. Աշտարակ քաղաքում:

Կոնտակտային տվյալներ

Հեռ.՝ +374 93272016

Էլ. փոստ՝ [evahakobyan@bk.ru](mailto:evahakobyan@bk.ru)

Google Scholar:

<https://scholar.google.com/citations?user=PX7-4ZUAAAAI&hl=ru>

**Կրթություն**

- 1994-2003 թթ.՝ սովորել է Սմբատ Շահագիսի թիվ 2 միջնակարգ ուսական դպրոցում, այնուհետև
- 2004թ.՝ Նորայր Միսակյանի անվ. թիվ 5 միջնակարգ դպրոց, ֆիզիկամա-

թեմատիկական թեքումով դասարան  
2004–2008 թթ.՝ Հայաստանի ազգային ազրարային համալսարան (բակալավրիատ)  
2008-2010 թթ.՝ Հայաստանի ազգային ազրարային համալսարան (մագիստրատուրա),  
2010-2015 թթ.՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ (հայցորդ):

Աշխատանքային գործունեություն

2009 թվականից մինչ օրս՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, թեմաներում կատարող, գիտաշխատող, առաջատար մասնագետ:

2019թ. հոկտեմբերից մինչ օրս՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, Ասպիրանտուրայի բաժնի պատասխանատու

Հրապարակումներ

Հեղինակ է 22 գիտական հոդվածների: Եվգենյա Հակոբյանի հրապարակումների ամբողջական ցանկին ծանոթանալու համար սեղմել այստեղ:

Լեզուների իմացություն

Հայերեն, ռուսերեն, անգլերեն

Անձնական տվյալներ

Ընտանեկան կարգավիճակը՝ ամուսնացած է, ունի երկու որդի:

ԿԱՐԻՆԵ ԳԵՂԱՄԻ ՀԱԿՈՒՅԱՆ

Գլխավոր հաշվապահ

Ծնվել է 1962 թ. ապրիլի 18-ին Դոնի Ռոստովում

Կոնտակտային տվյալներ

Հեռ.՝ +374 77408004

Էլ. փոստ՝ [karinegegamovna@rambler.ru](mailto:karinegegamovna@rambler.ru)



Կրթություն

1979 թ.՝ ավարտել է Երևանի թիվ 164 միջնակարգ դպրոցը,

1985 թ.՝ ավարտել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի «Էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ» ֆակուլտետը, ինժեներ-սիստեմատեխնիկ:

Աշխատանքային գործունեություն

1979-1980 թթ.՝ աշխատել է «Բազալտ» գործարանում որպես մոդուլավորող,

1985-1994 թթ.՝ Երևանի Մ. Մերգեյանի անվան մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում որպես ինժեներ,

1994 թ.՝ ՀՀ ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի և իխտիոլոգիայի ինստիտուտում որ-

պէս տնտեսագետ,  
1994 թվականից առ այսօր՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտում որպէս գլխավոր հաշվապահ:  
Լեզուների իմացություն  
Հայերեն, ռուսերեն, անգլերեն

Անձնական տվյալներ

Ազգությունը՝ հայ:

Ընտանեկան կարգավիճակ՝ ամուսնացած չէ:



ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՄԵՆԱԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ  
Կադրերի բաժնի ղեկավար

Ծնվել է 1970 թ. հոկտեմբերի 12-ին Երևանում

Կրթություն

1987 թ.՝ ավարտել է Երևանի Վ. Դավթյանի անվան թիվ 149 միջնակարգ դպրոցը,  
1991 թ.՝ ավարտել է Երևանի Ֆինանսատնտեսագիտական տեխնիկումի «Բյուջե-  
տային հաշվառում» բաժինը, հաշվապահ-ֆինանսսիստ:

Աշխատանքային գործունեություն

1987-1988 թթ.՝ աշխատել է ՀՍՍՀ շինարարության նախարարության հաշվողա-  
կան կենտրոնում որպէս օպերատոր,

1989-1991 թթ.՝ «Մուստանգ» կոոպերատիվում որպէս հաշվետար,

2000-2007 թթ.՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության Գյուղատնտեսական  
էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտում որպէս գան-  
ձապահ, կադրերի բաժնի վարիչ,

2007 թվականից առ այսօր՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտում որպէս կադրերի բաժնի վարիչ:

Լեզուների իմացություն

Հայերեն, ռուսերեն, անգլերեն

Անձնական տվյալներ

Ազգություն՝ հայ:

Ընտանեկան կարգավիճակ՝ ամուսնացած է, ունի մեկ որդի և մեկ դուստր:



**ԴԻԱՆՆԱ ԳԵՎՈՐԳԻ ՍԱՐԱՅՅԱՆ**  
օպերատոր

Ծնվել է 1953 թ. ապրիլի 13-ին Երևանում:

Կոնտակտային տվյալներ  
Հեռ.՝ +374 93947250  
Էլ. փոստ՝ [dsarafyan@yahoo.com](mailto:dsarafyan@yahoo.com)

**Կրթություն**

- 1960-1963 թթ.՝ ընդունվել է Երևանի Ղ. Աղայանի անվան թիվ 63 միջնակարգ դպրոց,
- 1963-1970 թթ.՝ ուսումը շարունակել է Երևանի Ն. Զարյանի անվան թիվ 130 դպրոցում,
- 1970-1974 թթ.՝ սովորել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետում՝ ստանալով մաթեմատիկոսի որակավորում:

**Աշխատանքային գործունեություն**

- 1975-1990 թթ.՝ աշխատել է Էներգետիկայի հայկական գիտահետազոտական ինստիտուտում որպես ծրագրավորող, ավագ ծրագրավորող,
- 1991-2007 թթ.՝ ՀՀ ՖԷՆ տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտում՝ որպես 1-ին կարգի տնտեսագետ, ապա՝ առաջատար տնտեսագետ,
- 2007 թվականից մինչ օրս՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում՝ որպես օպերատոր:

**Լեզուների իմացություն**

Հայերեն, ռուսերեն, անգլերեն

**Անձնական տվյալներ**

Ազգություն՝ հայ:  
Ընտանեկան կարգավիճակ՝ ամուսնացած չէ:

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2020 Թ.  
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաշվետու ժողովի հարգելի՛ մասնակիցներ:

Երբ 2017 թվականի փետրվարին ինստիտուտի կոլեկտիվն ինձ առաջադրեց ինստիտուտի տնօրենի թափուր պաշտոնի թեկնածու, իսկ նույն թվականի ապրիլին ՀՀ ԳԱԱ նախագահությունն ինձ ընտրեց ինստիտուտի տնօրեն 5 տարի ժամկետով, և ես հոգուս խորքում պարտավորվեցի ավելի լավ աշխատել ու ավելի շատ աշխատեցնել նաև կոլեկտիվի անդամներին և հաշվետու ժողովներում ավելի մանրամասնորեն ի ցույց դնել կոլեկտիվի կատարած աշխատանքը և ի դեկավարում ընդունել ժողովում հնչող հնարավոր դիտողություններն ու առաջարկությունները՝ հաջորդող տարում կոլեկտիվի գործունեությունը կատարելագործելու ակնկալությամբ: Եվ այսպես. «Ով որ ականջ ունի լսելու, թող լսի», «Ով որ աչքեր ունի տեսնելու, թող տեսնի»:

Առաջին, որ 2020 թ. բավական ծանր ու անկանխատեսելի իրադարձություններով լի տարի էր բոլորիս համար, ինչի արդյունքում էլ ինստիտուտի ողջ անձնակազմը այս ժամանակահատվածում աշխատել է ուժերի գերլարման պայմաններում:

Երկրորդ, որ 2020 թ. մարտի 13-ից հայտարարված արտակարգ դրության արդյունքում ինչպես բոլորը, այնպես էլ տնտեսագիտության ինստիտուտի գիտական անձնակազմը ստիպված է եղել անցնել հեռավար աշխատանքի՝ ինստիտուտում սահմանելով հերթապահություն աշխատանքային ժամերի համար, որի ընթացքում պահպանվել են պարետատան ցուցումները, իսկ 2020 թ. սեպտեմբերի 27-ից Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում հայտարարված ռազմական դրության արդյունքում տնտեսագիտության ինստիտուտում սահմանվել է շուրջօրյա հերթապահություն՝ բոլոր այն աշխատակիցների մասնակցությամբ, ովքեր չէին մեկնել ռազմաճակատ կամ չէին հիվանդացել կորոնավիրուսով:

Այդուհանդերձ, այս դժվարին իրավիճակներում ինստիտուտի կոլեկտիվը 2020թ. արձանագրել է գիտակազմակերպչական մի շարք նշանակալի հաջողություններ միջազգային հարթակներում, որոնց, մասնավորապես, վերաբերում են.

Առաջին. ինստիտուտի կողմից ամեն տարի հրատարակվող «Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով հոդվածների ժողովածուի խմբագրական խորհրդի կազմի ընդլայնումը՝ ներառելով նաև միջազգային փորձագետների՝ Սերգեյ Դոխտյանին և Ռուսաստանից և Վիկտոր Զախարյանին Ավստրիայից:

Երկրորդ: Միջազգային համագործակցության տեսանկյունից մեկ այլ կարևոր ձեռքբերում էր նաև այն, որ ՌԴ ԳԱԱ Հասարակական գիտությունների գիտական տեղեկատվության իստիտուտի հետ 12.02.2020 թ. կնքվել է համագործակցության հուշագիր, որի շրջանակներում ինստիտուտի ավելի քան 10 գիտաշխա-

տողներ 2020 թ. մասնակցել են մի շարք միջազգային գիտաժողովների՝ անվճարության սկզբունքով հրապարակելով նաև գիտական հոդվածներ:

**Երրորդ:** Միջազգային համագործակցության ձեռքբերումներից է նաև այն, որ 2020 թ. ինստիտուտի կողմից ամեն տարի հրատարակվող «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» հոդվածների ժողովածուում հոդվածներ են ներկայացրել տպագրության նաև օտարերկրյա քաղաքացիություն ունեցող մեր հայրենակիցներ Վիկտոր Զախարյանը Ավստրիայից և Ռոբերտ Թումանյանը Չինաստանից, ինչը վկայում է միջազգային հանրության կողմից ժողովածուի ընդունելի լինելու հանգամանքի մասին:

**Չորրորդ:** Եվ ի վերջո, միջազգային համագործակցության տեսանկյունից ինստիտուտի ամենանշանակալի ձեռքբերումն այն է, որ 2020 թ. «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» հոդվածների ժողովածուում, որն ուներ բացառիկ յուրահատուկ թեմատիկ ուղղվածություն, այն է՝ «Տնտեսական հրաշքեր». գործարկման ուղիները Հայաստանում», ներկայացվեց SCOPUS միջազգային գիտական ինդեքսավորման համակարգին՝ դրանում ներառվելու ակնկալությամբ: Եվ փառք Աստծո մեր ակնկալիքները արդարացան և այսօր արդեն ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կողմից հրատարակվող «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» հոդվածների ժողովածուում միակ տնտեսագիտական հանդեսն է, որ համապատասխանում է SCOPUS միջազգային գիտական ինդեքսավորման չափանիշներին և ընդգրկված է այդ ցանկում: Դեռ ավելին «Սկոպուս»-ի թիմի կողմից հետաքրքրություն է առաջացել մասնակցելու 2021 թ. վերոգրյալ թեմայով պլանավորվող գիտաժողովին: Սա բացառիկ երևույթ է Հայաստանի տնտեսագիտության պատմության ողջ ընթացքում:

Հայաստանի գիտական ոլորտի պատկերն առավել հստակ հնարավոր կլինի ներկայացնել համեմատական վերլուծության արդյունքում: Վերլուծելով ՀՀ գիտական արդյունավետությունն ըստ ոլորտների կարող ենք փաստել, որ Հիրշի ինդեքսի ամենաբարձր ցուցանիշներ արձանագրվել է ատոմային ֆիզիկայի ոլորտում (30-րդ տեղ): Այս ցուցանիշով Հայաստանն առաջինն է բոլոր 4 հարևանների շարքում: Սակայն մյուս բոլոր ոլորտներում Հայաստանը ետ է մնում բոլոր հարևան երկրներից: Մասնավորապես կիրառական մաթեմատիկայի ոլորտում Հայաստանը գրավում է 87-րդ տեղը ետ մնալով հարևան Իրանից 24-րդ տեղ, Թուրքիայից 28-րդ տեղ, Վրաստանից 77-րդ տեղ և անգամ Ադրբեջանից 80-րդ տեղ: Տեխնոլոգիաների և նորարարությունների կառավարում բնագավառում Հայաստանը զբաղեցնում է 103-րդ տեղը հետ մնալով Թուրքիայից 29-րդ տեղ, Իրանից 41-րդ տեղ, Վրաստանից 68-րդ տեղ և Ադրբեջանից 98-րդ տեղ: Համակարգչային գիտությունների գծով հարևան երկրների շարքում կրկին առաջատարը Թուրքիան է 23-րդ տեղ, իսկ վերջինը Հայաստանը՝ 102-րդ տեղ: Վատագույն ցուցանիշը Հայաստանն արձանագրել է գյուղատնտեսական և բիոլոգիական գիտությունների գծով 142-րդ հորիզոնական, իսկ առաջատարն այս ոլորտում

մեր հարևան երկրներից կրկին Թուրքիան է՝ 35-րդ հորիզոնական: Հատկանշական է նաև, որ ի համեմատ մյուս ոլորտների Հայաստանում ամենավատ ցուցանիշներն արձանագրվել են տնտեսագիտական, տնտեսաչափական և ֆինանսական գիտություններում (142-րդ տեղ) և գյուղատնտեսական և բիոլոգիական գիտություններում (144-րդ տեղ):

Անդրադառնալով առանձին պարբերականներին նշենք, որ «Սկոպուս»-ի շտեմարանում 2019 թ. դրությամբ ներառված են 558 ռուսական, 239 թուրքական, 211 իրանական, 9 բելառուսական, 8 ադրբեջանական, 7 վրացական, 5 ղազախական և ընդամենը 3 հայկական հանդեսներ: Դրանք են՝ «Նոր հայկական բժշկական ամսագիր»-ը, որի Հիրշի ինդեքսը 5 է, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանին կից հրապարակվող «Իմաստություն» հանդեսը և «Մաթեմատիկայի հայկական ամսագիրը», որոնց Հիրշի ինդեքսը՝ 1 է: Համեմատության համար նշենք, որ Կիրատական և համակարգչային մաթեմատիկայի ադրբեջանական ամսագրի Հիրշի ինդեքսը 14 է, մաթեմատիկայի ամսագրինը 10, Վրաստանի գիտությունների ակադեմիայի պարբերականինը՝ 9:

Հայաստանն անմխիթար վիճակում է նաև գիտական կազմակերպությունների դասակարգման տեսանկյունից: Հայաստանի գիտակրթական կազմակերպություններից Սկոպուսում գրանցված են միայն 3-ը՝ Ալիխանյանի անվան ազգային լաբորատորիան (գրադեցնում է 605-րդ տեղը), ՀՀ ԳԱԱ-ն (գրադեցնում է 815-րդ տեղը) և ԵՊՀ-ն (գրադեցնում է 830-րդ տեղը): Մինչդեռ, օրինակ, Վրաստանի ԳԱԱ-ն, լինելով հասարակական կազմակերպություն, գրադեցնում է 808-րդ տեղը, Վրաստանի պետական համալսարանը 781-րդ տեղը և այլն: Եվ այս ամենից հետո, ինչպես հպարտությամբ չբարձրաձայնենք, որ տնտեսագիտության ինստիտուտի այս հրաշք կոլեկտիվն այնպիսի նշաձող է սահմանել, որը չի ունեցել Հայաստանի տնտեսագիտությունն իր ողջ պատմության ընթացքում: Այս պատմական իրողությունից հետո Հայաստանի գիտական կազմակերպություններից SCOPUS-ում գրանցված են դարձել 4-ը՝ Ալիխանյանի անվան ազգային լաբորատորիան, ՀՀ ԳԱԱ-ն, ԵՊՀ-ը և ՀՀ ԳԱԱ-ի տնտեսագիտության ինստիտուտը: Դեռ ավելին, SCOPUS-ի թիմի կողմից հետաքրքրություն է առաջացել մասնակցելու 2021 թվականին ինստիտուտի կողմից պլանավորվող գիտաժողովին: Ի դեպ, իմ համեստ գնահատումներով պետք չէ գիտական բարձր արդյունքների ստացումը կապել մեծ գումարների ստացման հետ: Դրա վատ ապացույց են հանդիսանում SCOPUS-ի ցանկում հայաստանյան 4 կազմակերպությունների՝ Ալիխանյանի անվան ազգային լաբորատորիան, ՀՀ ԳԱԱ-ն, ԵՊՀ-ը, ՀՀ ԳԱԱ-ի ՏԻ-ը, որոնք բոլորն էլ ՀՀ պետական բյուջեից քիչ գումարներ են ստանում: Բացի դրանից, երբ վերլուծում ենք գիտական արդյունավետությունն ըստ ոլորտների, ապա տեսնում ենք, որ Հիրշի ինդեքսի ամենաբարձր ցուցանիշը աստմային ֆիզիկայի ոլորտում տարածաշրջանում ունի Հայաստանը, որտեղ գիտությանը հատկացվում է ՀՆԱ-ի ընդամենը 0.2 տոկոսը, իսկ օրինակ Թուրքիայում՝ ՀՆԱ-ի 2%-ը: Սա ևս մեկ ապացույց է այն բանի, որ փողն ու գիտական արդյունքը ուղիղ համեմատական կապի մեջ չեն գտնվում: Ավարտելով խոսքս կարող եմ արձանագրել, որ ոչ թե փողն է գիտական արդյունք տվողը, այլ խելքն ու աշխատասի-

րությունը: Եվ եթե խելքը Աստծո օրհնանքն է, ապա աշխատասիրությունը մարդու նպատակասլացության և ձգտման արդյունքն է: Ուստի ես կոչ եմ անում ՏԻ գիտաշխատողներին աշխատել նպատակասլաց և ձգտել արդյունքի հասնել, իսկ փողը կլինի դրանց հետևանքը և համոզված եղեք, որ այն անպայման կլինի:

Ինստիտուտը ձեռքբերումներ և հաջողություններ է ունեցել նաև ներպետական և հանրապետական մակարդակով, որոնց, մասնավորապես, վերաբերում են.

**Առաջին:** ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթում ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Հարությունյանի հաղթող ճանաչվելը 4 անգամ անընդմեջ, այն է՝ 2014 թ., 2016 թ., 2018 թ. և 2020 թ., որը նույնպես բացառիկ երևույթ է Հայաստանի տնտեսագիտության պատմության ողջ ընթացքում:

**Երկրորդ:** 2019 թ. ինստիտուտն առաջինն էր հանրապետությունում և մինչ օրս միակը գիտական ու բուհական համակարգերում, որ, արձագանքելով ժամանակի պահանջներին, կազմակերպել և անցկացրել է «Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում» խորագրով հանրապետական գիտաժողով, որին մասնակցում էին ՀՀ վարչապետը, ՀՀ կառավարության անդամներ և ՀՀ ԳԱԱ նախագահության անդամները: Գիտաժողովի արձանագրած հաջողությունը ինստիտուտին պարտավորեցրել է այդուհետ պահպանել ձեռքբերված մակարդակը և այս միջոցառումը դարձնել շարունակական ինստիտուտի գործունեությունում: Արդյունքում 2021 թ. Ինստիտուտը նախատեսում է քաղաքական հանդարտության պայմաններում կազմակերպել «Տնտեսական հրաշքներ». գործարկման ուղիները Հայաստանում» խորագրով գիտաժողով, որին նախատեսվում է հրավիրել Կառավարության անդամների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ և մի շարք երկրների դեսպաններ, ՀՀ ԳԱԱ ղեկավարությանը, գործարարների և բանկերի ներկայացուցիչներ, ինչպես նաև տնտեսական ուղղվածության բուհերի ռեկտորներ, դեկաններ և դասախոսներ, որը նույնպես բացառիկ երևույթ է Հայաստանի տնտեսագիտության պատմության ողջ ընթացքում: Ինստիտուտի կողմից կազմակերպված գիտաժողովը կունենա ընդգծված գիտագործնական նշանակություն, զեկուցողների շարքում, ի թիվս գիտական համայնքի ներկայացուցիչների, ելույթ կունենան նաև Գյումրու և Էջմիածնի քաղաքապետները ու Վանաձորի համայնքապետը, ինչպես նաև մեկ փորձագետ, ինչը նույնպես բացառիկ երևույթ է Հայաստանի տնտեսագիտության պատմության ողջ ընթացքում:

**Երրորդ:** Գիտաժողովի նյութերում իրենց մասնակցությունն են բերել ոչ միայն տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատողները, այլև ՀՊՏՀ, ՀՊԱՀ, ԵՊՀ, Չինաստանի Բանգոթ համալսարանի դասախոսները, միջազգային և հայաստանյան փորձագետներ՝ Վիկտոր Զախարյանն ու Վահագն Խաչատրյանը, Գյումրի, Վանաձորի, Էջմիածնի քաղաքապետները, գործարարների հանրապետական միության նախագահ, ՀՀ հանրային խորհրդի անդամ Գագիկ Մակարյանը, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, նախկին պատգամավոր Վա-

լերի Միբգոյանը, ով ինստիտուտում կազմակերպված գիտաժողովում զեկուցում կարդացողների համար կազմակերպել և անցկացրել է նաև «հոբետորական արվեստի հիմունքները» երկամսյա դասընթացներ, որը նույնպես բացառիկ երևույթ է Հայաստանի տնտեսագիտության պատմության ողջ ընթացքում:

**Չորրորդ:** Գիտաժողովի արդյունքում 100 օրինակ տպաքանակով հրատարակված գիտական հոդվածների ժողովածուն և էլոյթների ու զեկուցումների համառոտագրված տարբերակները՝ դրանց թղթային և էլեկտրոնային տարբերակներով, փոստային առաքմամբ կուղարկվեն ՀՀ Նախագահին, ՀՀ կառավարության անդամներին, Ազգային ժողովի ղեկավարությանը, ԱԺ հանձնաժողովների նախագահներին, խմբակցությունների ղեկավարներին, Արցախի ԱԺ նախագահին, Արցախի ԱԺ տնտեսական բլոկի հանձնաժողովների նախագահներին, Արցախի տնտեսական բլոկի նախարարներին, ՀՊՏՀ, ՀԱԱՀ ռեկտորներին, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ղեկանին և մյուս բոլոր հրավիրյալներին, ինչպես նաև հոդվածների հեղինակներին, ինչը նույնպես բացառիկ երևույթ է Հայաստանի տնտեսագիտության պատմության ողջ ընթացքում:

**Հինգերորդ:** «Տնտեսական հրաշքներ» գործարկման ուղիները Հայաստանում՝ խորագրով գիտաժողովի նյութերի վերլուծությանը նվիրված հոդվածներ ու գրախոսականներ են հրապարակվել «Գիտություն» թերթի սեպտեմբերի համարում, «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի 3-րդ համարում, «Ազգ» շաբաթաթերթի ղեկտեմբերի 11-ի համարում:

**Վեցերորդ:** 2020 թ. ինստիտուտի ձեռքբերումներից է նաև նորացված էլեկտրոնային կայքը, որը հնարավորություն է տալիս առավել ինտենսիվ կերպով շփման մեջ գտնվել տնտեսագետների, կառավարության և միջազգային գիտական կենտրոնների հետ: Ի դեպ կայքը լավագույններից մեկն է ՀՀ ԳԱԱ համակարգում:

**Յոթերորդ:** Տնտեսագիտության ինստիտուտը վերջին տարիներին բազային թեմաների ընտրությունը կատարում է հիմքում ունենալով կառավարության գործունեության ծրագիրը, որն ավելի արդիական է դարձնում ինստիտուտի հետազոտական աշխատանքները: Ի դեպ, այսպիսի մոտեցումը բացառիկ է հանրապետությունում և բացակայում է մյուս գիտահետազոտական ինստիտուտներում ու բուհերում: Հարկ է փաստել, որ այս տարվա հաշվետվության կտրվածքով ինստիտուտը կատարել է ավարտել է 7 գիտահետազոտական թեմա, որոնք բխում են կառավարության ծրագրի էլակետային դրույթներից: Թեմաների կատարման ընթացքի ու արդյունքների մասին իմ զեկուցումից հետո կներկայացնեն իրենք՝ թեմաների ղեկավարները:

**Ութերորդ:** Ընդհանուր առմամբ, հաշվետու տարում ինստիտուտը հրատարակել է՝

- 41 տեղական հոդվածներ,
- 134 արտասահմանյան հոդվածներ,
- 5 գիրք:

**Իններորդ:** Ինստիտուտի գիտական ձեռքբերումները զգալիորեն հանրայնացվել ու հրապարակայնացվել են՝

1. մամուլում հաղորդումների,

2. հրատարակված աշխատանքները համապատասխան մարմիններին հասցեական փոստային առաքմամբ ուղարկելու ձևերով, որոնք բարձրացրել են ինստիտուտի ճանաչելիությունը, ինչը նոր մշակույթ է հայաստանյան իրականությունում:

Տասներորդ: Ինստիտուտը շարունակում է իր նախորդ 14 տարիների ավանդույթը և կատարում է իր պատմական և օրենսդրական առաքելությունը, այսինքն՝ շարունակում է կիրառական առաջարկություններ ներկայացնել ՀՀ կառավարությանը, ինչը նույնպես բացառիկ երևույթ է ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտների ու բուհերի գործունեության մեջ:

Տասնմեկերորդ: 2020 թ. առանձնահատուկ էր նաև նրանով, որ սեպտեմբերի 27-ին սկսված Արցախյան պատերազմը ստիպեց ողջ հանրապետությունում վերանայել առկա ապաստարանների վիճակն ու պայմանները: Ի կատարումն ՀՀ ԳԱԱ նախագահության հանձնարարականի՝ տնտեսագիտության ինստիտուտի միջոցներով ու կազմակերպմամբ իրականացվեցին շենքի նկուղային հատվածում գտնվող բոլոր ապաստարանների մաքրման աշխատանքները, որոնց ընթացքում 7 բեռնատար արք տեղափոխվել է համապատասխան աղբավայր, ինչպես նաև իրականացվել է տնտեսագիտության ինստիտուտի ապաստարանի հիմնանորոգում. տեղադրվել է 2 դուռ՝ մուտքի և ելքի, հողապատ հատակը բետոնապատվել է, նորացվել է ապաստարանի սանհանգույցի կահավորումը, տեղադրվել է հայելի, չորացման սարք և օճառի աման, ապաստարանն ամբողջությամբ ապահովվել է լուսավորությամբ, հեռախոսագծով և ինտերնետ հասանելիությամբ, անհրաժեշտ քանակի նստարաններով, սառնարանով, հեռուստացույցով, ինչպես նաև առաջին բուժօգնության համար անհրաժեշտ պարագաներով ու կրակմարիչներով, էլեկտրական թեյնիկով ու սրճեփով, բաժակներով, պատառաքաղներով, սուրճի բաժակներով, ափսեներով և գդալներով, որոնք դասավորված են այդ նպատակով տեղադրված սեյֆում: Ապաստարանն ունի նաև զազօջախ:

Ապաստարանի կառուցապատման ու նորմալ կենցաղավարման տեսքի բերելու և լիաթոք կարելի է անվանել ապաստարան, որի համար ինստիտուտի կոլեկտիվի անունից թույլ տվեք հատուկ շնորհակալություն հայտնել ինստիտուտի այն տղաներին, որոնց ֆիզիկական ջանքերի շնորհիվ (հատուկ ցանկանում եմ շեշտել անվճարության հիմունքներով) տարածքը դարձավ, անգլերեն բնորոշմամբ, smart city ապաստարան:

Տասներկուերորդ: Ստեղծված պատերազմական իրավիճակում ինստիտուտի աշխատակիցներն ամենաքիչը, որ կարող էին անել Արցախի համար դա «Մենք ենք մեր սահմանները» հաշվին գումարի փոխանցումն է: Այդ հմատեքստում ինստիտուտի աշխատակիցներն իրենց անձնական միջոցներից հավաքագրել և հոկտեմբեր ամսին «Մենք ենք մեր սահմանները» հաշվին են փոխանցել 500 հազար ՀՀ դրամ, իսկ նոյեմբեր ամսին 998 000 ՀՀ դրամ, որը գրեթե կրկնակի անգամ գերազանցում է հոկտեմբերի ամսվա փոխանցվածին: Բացի դրանից ինստիտուտի տնտեսված միջոցներից 5.6 մլն դրամ ետ է վերադարձվել ՀՀ պետական բյուջե և «Մենք ենք մեր սահմանները» հաշվին է փոխանցվել նաև ինստիտուտի աշխա-

տակիցների սոցիալական փաթեթի մնացորդ ամբողջ գումարը, որը բացարձակ մեծությամբ կազմել է 1 մլն 872 000 ՀՀ դրամ: Ի դեպ գումարների տրամադրման վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունն ըստ աշխատակիցների տեղադրված է ինստիտուտի հայտարարությունների տախտակին: Ընդհանուր առմամբ ինստիտուտի կողակտիվը հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին «Մենք ենք մեր սահմանները» հաշվին փոխանցել է 3 մլն. 284 000 ՀՀ դրամ, որի 70%-ը վճարել են ինստիտուտի թվով 10 հետևյալ աշխատակիցները հետևյալ չափերով (անձնական ու սոցիալական փաթեթը միասին):

		կամ %-ով
1. Հարությունյան Վլադիմիր	416 000 ՀՀ դրամ	12.7
2. Ազատյան Լիանա	380 576 ՀՀ դրամ	11.6
3. Մարկոսյան Անահիտ	303 000 ՀՀ դրամ	9.2
4. Սարիսյան Ռոբերտ	287 953 ՀՀ դրամ	8.8
5. Սարգսյան Լիլիթ	251 657 ՀՀ դրամ	7.7
6. Հակոբյան Կարինե	240 000 ՀՀ դրամ	7.3
7. Մանուկյան Վլադիկ	121 000 ՀՀ դրամ	3.7
8. Փարսադանյան Տաթևիկ	114 878 ՀՀ դրամ	3.5
9. Հակոբյան Եվգենյա	100 000 ՀՀ դրամ	3.0
10. Զախարյան Արմինե	88 000 ՀՀ դրամ	2.7
Ընդամենը	2 մլն. 303 000 ՀՀ դրամ	70%

Տասներեքերորդ: Անդրադառնալով աշխատանքային պայմաններին՝ նշենք, որ ինստիտուտի բոլոր սենյակները ապահովված են անհրաժեշտ կահավորանքով՝ օդորակիչներով, հայելիներով, կախիչներով, գրապահարաններով: Բոլոր սենյակներում տեղադրված են եվրալուսամուտներ, իսկ աշխատակիցներն ապահովված են ժամանակակից տեխնիկայով՝ ստացիոնար և առանձին դեպքերում դյուրակիր համակարգիչներով և տպիչ սարքերով: Ինստիտուտում ստեղծված են բոլոր պայմանները անխափան և արդյունավետ աշխատանքի համար: Ինստիտուտում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, որը նպաստում է առավել արդյունավետ աշխատանքին: Նշենք, որ անվտանգության նկատառումներից ելնելով՝ ինստիտուտում տեղադրվել է նաև տեսահսկման համակարգ՝ 24-ժամյա տեսագրման ռեժիմով, որն իրականացվել է ինստիտուտի աշխատակիցների ջանքերով, այսինքն՝ առանց գումարի, ինչպես և ապաստարանի նստարանների պատրաստման պարագայում:

Գալիք 2021 թվականի համար ծրագրել ենք իրականացնել հետևյալները.

1) շարունակել խորացնել ինստիտուտի կանոնադրությամբ հաստատված ուղղություններով իրականացվող աշխատանքները,

2) ակտիվացնել աշխատանքներն ինստիտուտի աշխատողներին դրամաշնորհային և առաջին հերթին արտասահմանյան ծրագրերում ընդգրկվածության ուղղությամբ,

3) շարունակել միջազգային համագործակցությունը՝ պահպանելով արդեն ձեռք բերված հաջողություններն ու արձանագրելով նորերը,

4) շարունակել ինստիտուտի ձեռքբերումներն ու հաջողությունները ներպետական և հանրապետական մակարդակով:

5) Ինստիտուտի կոլեկտիվը դարձնել ինստիտուտի նվիրյալների ու երկրի հայրենասերների մի կոտ ամբողջություն՝ անկախ տարիքից ու ունեցած գիտական աստիճանից: Այլևս կոլեկտիվի շվաքի տակ յուրա գնացող աշխատողներ չպետք է լինեն, որ օգտվեն ակադեմիական արտոնություններից, ինստիտուտին ու հայրենասիրական գործողություններ չդրսևորեն: Ինստիտուտը և Հայաստան երկիրը չպետք է դառնա զբոսավայր ու աշխատավայր, իսկ հետո էլ գիտական հիմնարկում աշխատանքային ստաժ կուտակեն ու հետո մեր գլխին դառնան պատուհաս ու անբան:

Հաշվետու զեկուցումից պարզ է դառնում, որ տնտեսագիտության ինստիտուտի գործունեությունը 2020 թվականին բացառիկ երևույթների մի ամբողջ շարք է եղել, որոնք ամփոփ ձևով ներկայացվում է ստորև բերվող 8 խոշորացված խմբերով:

Առաջին: Տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Հարությունյանը միակ տնտեսագետն է Հայաստանի տնտեսագիտության պատմության ողջ ընթացքում, ով ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթում հաղթող է ճանաչվել չորս անգամ անընդմեջ, այն է՝ 2014, 2016, 2018 և 2020 թվականներին:

Երկրորդ: Տնտեսագիտության ինստիտուտի կողմից հրատարակվող «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» հոդվածների ժողովածուն միակ տնտեսագիտական հանդեսն է հանրապետությունում, որ համապատասխանում է SCOPUS միջազգային գիտական ինդեքսավորման չափանիշներին և ընդգրկված է այդ ցանկում:

Երրորդ: ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտը միակն է հանրապետությունում գիտական և բուհական համակարգերում, որ իր կազմակերպած գիտաժողովի նյութերը փոստային առաքմամբ ուղարկում է ՀՀ կառավարության անդամներին, ԱԺ ղեկավարությանը և ԱԺ հանձնաժողովների նախագահներին, բուհերի գրադարաններ և մյուս գրադարաններ, ինչպես նաև հայտնի տնտեսագետներին ու հոդվածագիրներին: Սա նոր մոտեցում է հայկական իրականությունում:

Չորրորդ: ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտը միակն է հանրապետությունում գիտական և բուհական համակարգերում, որ գիտաժողովների ընթացքը տեսանկարահանվում և լուսաբանվում է մամուլում և համացանցում, ինչը բարձրացնում է ինստիտուտի ճանաչելիությունը:

Հինգերորդ: Տնտեսագիտության ինստիտուտը միակն է ՀՀ ԳԱԱ համակարգում, որ 15 տարի շարունակ կատարում է իր պատմական և օրենսդրական առաքելությունը, այսինքն՝ շարունակում է կիրառական առաջարկություններ ներկայացնել ՀՀ կառավարությանը, որի խոսուն վկաներն են հանդիսանում.

1) 2019 թ. նոյեմբերին, 2019 թ. մայիսին կազմակերպված և անցկացված գիտաժողովները և որպես դրանց հետևանք ներկայացված բազմաթիվ կիրառական առաջարկությունները:

2) 2017 թ. գիտահետազոտական աշխատանքների կիրառական արդյունքները / գիտ. խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ. գ. դ., պրոֆ. Վ. Հարությունյան, Եր., ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ, 2018, 104 էջ (տեղադրված է ինստիտուտի կայքում):

3) Ազգային տնտեսություն, ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի հետազոտական հետազոտող (2007-2017 թթ.). Եզրակացություններ, կիրառական առաջարկություններ, կազմվել է՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ. գ. դ., պրոֆ. Վ. Լ. Հարությունյանի գլխավորությամբ, Եր., «Գիտություն» հրատ., 2017, 504 էջ (տեղադրված է ինստիտուտի կայքում):

Վեցերորդ: Տնտեսագիտության ինստիտուտը միակն է ՀՀ ԳԱԱ համակարգում և ընդհանրապես հանրապետությունում, որ բազային հետազոտական թեմաների ընտրությունը կատարում է հիմքում ունենալով կառավարության գործունեության ծրագիրը, որը ավելի արդիական է դարձնում ինստիտուտի հետազոտական աշխատանքները:

Յոթերորդ: Տնտեսագիտության ինստիտուտի ձեռքբերումներից են.

1) նորացված էլեկտրոնային կայքը, որը լավագույններից մեկն է ՀՀ ԳԱԱ համակարգում:

2) Նորմալ կենցաղավարման տեսքի բերված և կառուցապատված ապաստարան ունենալը, որը լավագույններից մեկն է ՀՀ ԳԱԱ համակարգում:

3) Ինստիտուտի խիստ բարվոք աշխատանքային պայմանները, որը լավագույններից մեկն է ՀՀ ԳԱԱ համակարգում, և որի արդյունքում է նաև, որ ինստիտուտի կոլեկտիվը տարեցտարի բարձրացնում է գիտական գործունեության արդյունավետությունը: Եվ պատահական չէր, որ հրապարակումների թվով (գրքեր, հոդվածներ) 2018 թ. հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքում տնտեսագիտության ինստիտուտը զբաղեցրել է 1-ին պատվավոր հորիզոնականը, որի համար օգտվելով առիթից ես իմ շնորհակալությունն եմ հայտնում ինստիտուտի գիտական անձնակազմին:

Վերոնշյալները խոսում են այն մասին, որ ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտը կենսագրություն է կերտում և գալիք սերունդներին թողնելու բան ունի ինչպես մտավոր արժեքների, այնպես էլ անշարժ գույքի տեսքով: Իսկ թե ինչ է արել տնտեսագիտության ինստիտուտի կոլեկտիվը նախորդ 15 տարիների ընթացքում, պարզ ու հստակ կդառնա 2020 թվականի վերջում հրատարակվելիք ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2006-2020 թթ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության արդյունքների մասին 512 էջանոց հաշվետվությունից, ինչը համընկնում է Վլադիմիր Հարությունյանի տնօրեն աշխատելու տարիների հետ: Ուստի ես չեմ ուզում խոսքս ավարտել առանց իմ երախտագիտությունը հայտնելու բոլոր նրանց, ովքեր իմ կողքին են եղել անցած 15 տարիներին:

Շնորհակալություն եմ հայտնում տնտեսագիտության ինստիտուտի բոլոր տարիների բոլոր աշխատակիցներին անկախ զբաղեցրած պաշտոններից, ինստիտուտ, որտեղ վերջին 15 տարում գործում է «Մեկը՝ բոլորի, բոլորը՝ մեկի համար» հայտնի սկզբունքը, որտեղ այդ մեկը ես եմ, իսկ բոլորը տնտեսագիտության ինստիտուտի ողջ անձնակազմն է, ինչպես առանձին-առանձին վերցրած, այնպես էլ որպես մեկ օրգանական ամբողջություն: 2020 թվականի հաջողություններով մենք չպետք է հրապուրվենք ու տարվենք, որ գալիք 2021 թվականին կամ հաջորդող տարիներին ունենանք անհաջողություններ: Այնպես, ինչպես Ղարաբաղյան 1-ին պատերազմի հաղթանակով մեր պետությունը այնքան տարվեց ու հպարտացավ, որ ունեցավ պարտություն: Մա մեծ դաս էր մեր ազգի ու նաև մեր կուլեկտիվի համար:

Հանրապետության արդի կացությունը ենթադրում է նոր մոտեցումներ: Հատկապես տնտեսության ոլորտում: Տնտեսագիտության ինստիտուտի կուլեկտիվը պետք է շարունակի իր ակտիվ մասնակցությունը հետազոտական նոր մշակումներին, ի նպաստ ազգային տնտեսության զարգացման:

Ես ունեմ նոր աշխատառճ, որը պետք է գնալով էլ ավելի զարգացնեմ, ես անընդհատ երիտասարդ աշխատակիցներ եմ ընդգրկելու կուլեկտիվում, որն առողջ մրցակցություն կստեղծի կուլեկտիվում: Ես և կուլեկտիվը գիտակցում ենք որ ներկայացնում ենք մի ամբողջ հետազոտական ինստիտուտ և այն էլ ՀՀ ԳԱԱ-ի: 2020 թվականին նշանակալի հաջողություններ ինստիտուտը կերտեց, որի գլխավոր դերերում են ինստիտուտի գիտաաշխատողները նաև սպասարկող անձնակազմը:

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ  
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2006-2020 ԹԹ.  
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հրատ. խմբագիր՝

Շարվածքը՝

Էջադրումն ու ձևավորումը՝

Ա. Հովակիմյան

Դ. Սարաֆյանի

Մ. Համբարձումյանի

Չափսը՝ 70×100 <sup>1/16</sup>: 30 տպ. մամուլ:  
Տպաքանակը՝ 100 օրինակ:





[5000.77.]

ՉԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0656548

A <sup>π</sup>  
104608